

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱՄԱՆՍԱՐԱՆ

Գայանե Միմոնյան

ՆՊՎՆԱՆՆԵՍ
ԱՄՐԿԱՎԱԳԵ
ԵՎ ԻՐ
«ԱԵԿՆՈՒԹԻՒՆ
ՏՈՒՄԱՐԻԱ
ՆԱՅԿԱԶՆԵԱՅ»
ԺՊՊՎԱԾՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱՅԱՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԸ
ԵՎ ԻՐ**

**«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՄԱՐԻՍ
ՀԱՅԿԱԶՆԵԱՅ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ**

(պատմաբանասիրական և տոմարագիտական
ուսումնասիրություն)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2026

ՀՏԴ 27:94(479.25)
ԳՄԴ 86.37+63.3(5Ը)
Ս 504

*Հրատարակության է երաշխավորվել
ԵՊՀ գիտական խորհրդի կողմից:*

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ
ԵՊՀ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
30-ԱՄՅԱԿԻՆ

Մաս. խմբագիրներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Վարդանյան,
պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Եպս. Ժամկոչյան
Գրախոսներ՝ փիլ. գիտ. դոկտոր Հ. Քյոսեյան,
պ.գ.թ. Լ. Թումանյան

Սիմոնյան Գայանե

Ս 504 Հովհաննես Սարկավազը և իր «Մեկնություն տումարիս Հայկազնեայ» ժողովածուն (պատմաբանասիրական և տոմարագիտական ուսումնասիրություն), մենագրություն / Գ. Սիմոնյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2026, 264 էջ:

Հովհաննես Սարկավազը և իր «Մեկնություն տումարիս Հայկազնեայ» ժողովածու մենագրությունը վերաբերում է 11-12-րդ դարերի բազմավաստակ աստվածաբանի՝ Հովհաննես Սարկավազի կյանքին, ստեղծագործական վաստակին, հատկապես մեզ հասած տոմարական ժառանգությանը, նրա խմբագրած հայոց առաջին անշարժ՝ Սարկավազադիր տոմարի դժվարամատչ խնդիրների վերլուծությանը:

Մենագրությունը նախատեսված է պատմաբանների, բանասերների, մշակութաբանների, տեսական ու կիրառական աստվածաբանության խնդիրներով զբաղվող կրթական կազմակերպությունների և ընթերցող լայն հասարակության համար:

ՀՏԴ 27:94(479.25)
ԳՄԴ 86.37+63.3(5Ը)

ISBN 978-5-8084-2753-2
<https://doi.org/10.46991/YSUPH/9785808427532>

© ԵՊՀ հրատ., 2026
© Սիմոնյան Գ., 2026

Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում
այն բոլոր մարդկանց, ովքեր նպաստեցին այս գրքի
լույս աշխարհ գալուն:

Հայագիտությունը հարստացավ ևս մի կարևոր հետազոտությամբ: ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի աստվածաբանության ամբիոնի բազմամյա դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Սիմոնյանի «Հովհաննես Սարկավագը և իր «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» ժողովածուն» մենագրությունը, որը հեղինակի երկար տարիների անխոնջ աշխատանքի արդյունքն է: Հայագիտական հետազոտություններում ընդունված կարգի համաձայն՝ Գ. Սիմոնյանը նախ ներկայացնում է սկզբնաղբյուրները, որից հետո սարկավագագիտական ուսումնասիրությունները, տալիս դրանց մասնագիտական գնահատականը: Թեպետ հետազոտության գլխավոր նպատակը Հովհաննես Սարկավագի տոմարագիտական ժառանգության լուսաբանումն է, սակայն հեղինակը, հավատարիմ հայոց միջնադարագիտության ավանդներին, չի անտեսում մեծանուն գիտնականի հանրագիտարանային ժառանգության մաս կազմող բազմաբնույթ երկերը: Ըստ այսմ՝ ուսումնասիրողը պատշաճորեն անդրադառնում է աստվածաբանական բարոյախրատական երկերին, «Առ ձագ...» նշանավոր պոեմին և մյուս գործերին, գնահատում դրանց հոգևոր բովանդակությունը: Սակայն հետազոտության մեջ գլխավոր շեշտը դրված է Սարկավագի տոմարագիտական վաստակի լուսաբանմանը, ինչը և կատարված է գիտական օրինակելի բարեխղճությամբ, այդ բնագավառը ներկայացնող բնագրերի և ուսումնասիրությունների ընդգրկումով, դրանց համակողմանի վերլուծությամբ: Աշխատությունը, անտարակույս, իր արժանի տեղը կզբաղեցի սարկավագագիտական գրադարանում:

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր՝ ՀԱԿՈՒ ՔՅՈՍԵՅԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Հովհաննես Սարկավազը հայ մշակույթի պատմության բացառիկ, արտասովոր երևույթներից է՝ իր արտակարգ ընդունակությունների ու ձիրքերի արգասիքը դարձած աստվածաբանական մատենագրության հարուստ ժառանգությամբ: Նա Հայ առաքելական ս. եկեղեցու այն վարդապետներից է, որի՝ մեզ ավանդված համեստ անունը՝ «Սարկավազ», իր արժանավոր տեղը պետք է զբաղեցնի հայոց գիտության ու մշակույթի թագակիրների շարքում՝ իբրև համաքրիստոնեական միջմշակութային արժեք:

Նա այն հեղինակներից է, ում կյանքն ու գործունեությունը, ինչպես և ստեղծագործությունները դեռևս հիմնովին մեկնված ու յուրացված չեն: Թեպետ մինչ օրս բազմաթիվ հեղինակներ են հետազոտել նրա կյանքը, գործունեությունն ու ստեղծագործական բազմաբնույթ ժառանգությունը, այդուամենայնիվ գիտական ճանաչողության տեսանկյունից դեռևս լիովին չեն ուսումնասիրվել, բացահայտվել ու կանոնակարգվել նրա տոմարական ժառանգությունը, ինչպես և կյանքի ու գործունեության որոշակի խնդիրներ, որոնք այլ կերպ են մեկնաբանվել նախորդ ուսումնասիրողների կողմից:

Հովհաննես Սարկավազը՝ հայ մշակույթի այդ «հսկան», ապրեց ու ստեղծագործեց 11-րդ դարի 2-րդ կեսից մինչև 12-րդ դարի 30 թվականը՝ ռազմական, քաղաքական ու տնտեսական առումով անբարենպաստ մի ժամանակաշրջանում, երբ հայոց բնօրրանն ամբողջովին ասպատակվում էր, ժողովուրդը ջլատվում ու պատակտվում ոչ միայն սելջուկների ու հավատակից Հռոմեական կայսրության, այլև այլամետ տեղական ուժերի կողմից: Սակայն նկատենք, որ այդ ծանրագույն բարդ ժամանակաշրջանը միանգամայն հակադարձ ազդեցություն գործեց հայոց մշակույթի վրա՝ խթանելով դրա բուռն զարգացումը՝ որպես գոյատևման ու ազգապահպանության միջոցի:

Հայ առաքելական ս. եկեղեցին, ապավինելով իր ժողովրդի ներքին հոգևոր ուժերին, զարկ տվեց կրթությանն ու գիտությանը՝ դրա մեջ տեսնելով իր ու հայ ժողովրդի ինքնության պահպանման ու փրկության երաշխիքը: Քաղաքական իշխանության բացակայության պայմաններում հոգևորականությունը երբեմն ոչ ապարդյուն փորձեր կատարեց մեր երկիրն ազատագրելու սելջուկ թուրքերի լծից ու քաղկեդոնական դավանաբանության հետևորդ Հռոմեական եկեղեցու մեծապետական ոտնձգություններից: Եվ ահա այս ծանրագույն ժամանակաշրջանի կարկառուն ներկայացուցիչը դարձավ Հովհաննես Սարկավազը՝ այն հանրագիտակ հեղինակը, ում կյանքի ու գործունեության, թողած ստեղծագործական ժառանգության հանդեպ չի խամրում հետաքրքրությունը ցայսօր:

Հովհաննես Սարկավազը, ասես, կյանքի էր կոչվել ժամանակի հրամայականով՝ լուծում տալու համար Հայ առաքելական ս.եկեղեցու (իմա՝ երկրի ու ժողովրդի) առջև ծառայած հրատապ խնդիրներին:

Նույնիսկ այսօր զարմանք է հարուցում, թե որքան առատաշնորհ է եղել այս հեղինակը, որ կարողացել է թողնել աստվածաբանության, մանկավարժության, գիտության ու արվեստի տարբեր բնագավառներ ներառող բազմաթիվ ստեղծագործություններ, որոնցով էլ հաղթահարել է ժամանակների անանցանելի պատվարը, կրթել, առաջնորդել բազմաթիվ սերունդների ու հասել մեզ:

Ի դեմս յուր երկերի՝ մեր առջև հառնում է իրապես վիթխարի կերպար՝ ժամանակի իմացությունները հնարավորինս ամբարած ու սերմանող, որի ցանած հունդերը բազմակի հունձք են տվել հայոց միջնադարյան գիտության ու մշակույթի անդաստանում:

Ժամանակն անգույթ է եղել նրա կենսագրական տեղեկությունների պահպանման հարցում, սակայն բավականին բարեհաճ՝ ստեղծագործական ժառանգության փոխանցման դեպքում, որի միակ պատճառը, բնականաբար, նրա երկերի աստվածաբանական, գիտական ու գեղարվեստական կատարյալ ու մնայուն արժեքն է:

Հովհաննես Սարկավագից պահպանված ողջ ստեղծագործական ժառանգությունը միտված է Հայ առաքելական ս. եկեղեցու (իբրև հայրենիք, մշակույթ, կրթություն, գիտություն և հավատ) դերի ու նշանակության պանծացմանը՝ դառնալով ժամանակի տարաբնույթ մարտահրավերների հաղթահարման կարևորագույն կռվան ու առիավատյալ:

Հովհաննես Սարկավագը՝ իբրև միջնադարյան հայ մշակույթի կարկառուն ներկայացուցիչ և հանրագիտակ հեղինակ, մշտապես գրավել է թե՛ հայ, թե՛ այլազգի հեղինակների ուշադրությունը, իսկ նրա մշակութային ժառանգությունն արժանացել է տարբեր ժամանակների հեղինակների հիացմունքին ու բարձր գնահատանքին:

Նրա թողած գրավոր ժառանգությունը մինչ օրս ուսումնասիրում են և՛ պատմաբաններն ու բանասերները, և՛ մաթեմատիկոսներն ու աստղագետները, և՛ փիլիսոփաներն ու եկեղեցու պատմության տեսաբանները:

Թեև մեր գրքի գլխավոր նպատակը Հովհաննես Սարկավագի տոմարական ժառանգության էության ու առանձնահատկությունների բացահայտումն է, սակայն կարևորել ենք նաև (թեկուզև հպանցիկ) անդրադառնալ նրա մյուս՝ տարաբնույթ երկերին, քանզի դրանք պատմության, գրականության, երաժշտության, մաթեմատիկայի, փիլիսոփայության ու մանկավարժության հարցերով զբաղվողների համար անսահման հետաքրքրություն են ներկայացնում, և որոնց ուսումնասիրությունը բացահայտում է ոչ միայն անհատի կատարած գործն ու նրա թողած ժառանգությունը, այլև պատկերացում տալիս միջնադարյան հայ աստվածաբանական մտքի, գիտության, մանկավարժության ու մշակույթի զարգացման մակարդակի մասին: Այդ ստեղծագործությունների ուսումնասիրությունը միաժամանակ հնարավորություն է ընձեռում լրացնելու հեղինակի որոշ կենսագրական փաստերի բա-

ցակայությունը և ստեղծելու նրա թեկուզ պատմագրական դիմանկարը՝ իբրև Հայ առաքելական ս. եկեղեցու բացառիկ ներկայացուցիչ:

Նախ ասենք, որ, իբրև պատմական փաստ, պահպանվել են միայն նրա մահվան թվականը՝ Հայոց մեծ թվականի ՇՀԸ (578) տարին, և որոշ բնագրերի ստեղծման ժամանակը, սակայն նրա երկերի ու պատմական տեղեկությունների համադրությամբ հնարավոր է դարձել վերականգնելու ու թվագրելու կենսագրական հատուկենտ դրվագներ, որոնք կներկայացվեն իրենց տեղում:

Այս գրքում փորձ է արվել ոչ միայն ի մի բերել այն ամենը, ինչ կատարվել է Հովհաննես Սարկավագի հատկապես կենսագրության ու ստեղծագործությունների ուսումնասիրության բնագավառում, այլև նրա կենսագրությունը հարստացվել է արդեն հայտնի փաստերի նորովի մեկնաբանությամբ, իսկ ամենակարևորը՝ լուծում է տրվել նրա տոմարական ժառանգության հետ առնչվող խրթին հարցերին:

Քննելով Հովհաննես Սարկավագի կյանքի ու գործունեության մասին եղած սակավ տեղեկությունները՝ առաջարկել ենք նրա ծննդյան (մոտավորապես՝ 1057) ու մահվան (1130) թվականները: Կենսագրությունը փորձել ենք հարստացնել իր իսկ ստեղծագործություններում տեղ գտած որոշ իրողություններով:

Գրքում հատկապես արժևորել ենք նրա՝ տոմարագիտության բնագավառում կատարած ներդրումը: Տոմարական ու տոնացույցային նորագույն եղանակներով ու պատմահամեմատական մեթոդներով ու սկզբնաղբյուրների տեղեկությունների համակարգված վերլուծությամբ ցույց ենք տվել, որ իբրև առանձին-առանձին երկեր մեզ հասած բնագրերը նրա տոմարական ժողովածուի մասերն են: Ճշգրտել ենք ոչ միայն ժողովածուի վերնագիրը՝ «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ», հաստատել ենք դրա ստեղծման ժամանակի՝ 1094 թվականի հիմնավորումը, ներկայացրել ժողովածուի մոտավոր կառուցվածքը, ինչպես նաև, մանրամասնորեն անդրադառնալով տոմարական ժողովածուի առանձին մասերին ու տոմարական խնդիրներին, մեկնաբանել դրանք, ապա վերակազմել ու վերականգնել Հայոց փոքր թվականության համակարգի հիմքը դարձած՝ նրա ստեղծած՝ ՇԼԲ-ամյա գառկացուցակները (հռոմեացուց և Սարկավագադիր հայոց անշարժ տոմարներով), «Ազգաց ազնուականոնները» ևն:

Ստեղծագործական վաստակը աշխատել ենք ներկայացնել համակողմանիորեն՝ միայն հպանցիկ անդրադառնալով գրական, պատմագրական, մաթեմատիկական, աստվածաբանական երկերին ու հեղինակի փիլիսոփայական որոշ հայացքներին, և որպես մատենագրական վաստակի կարևորագույն մաս՝ առանձին գլուխ ենք նվիրել նրա տոմարագիտական ժառանգությանը:

Հովհաննես Սարկավագի երկերի բովանդակային վերլուծությամբ միաժամանակ փորձել է բացահայտել Հայ առաքելական ս. եկեղեցու կատարած պատմական կարևորագույն դերակատարությունը, այն է՝ եկեղեցու ընդերքում ձևավորված մշակույթի, գիտության ծառայեցումը հայ ժողովրդի տարանջատված բեկորների ներքին միավորմանը ոչ միայն իր շուրջը, այլև հայրենի հողի վրա, ազգային ինքնության պահպանմանը, համաշխարհային նմանատիպ գործընթացներում իր առանձնահատկությունների ու յուրօրինակության արտացոլմանը:

Հովհաննես Սարկավագի երկերում դրսևորված ենք գտնում մի դեպքում՝ Հայ առաքելական ս. եկեղեցու՝ քրիստոնեական աստվածաբանության ու վարդապետության հնամենի ավանդների հանդեպ ունեցած խիստ պահպանողական ու հավատարիմ վերաբերմունքը, մյուս դեպքում՝ նոր ժամանակներին համահունչ՝ դրանց նորովի կիրարկումն ու զարգացումը, այլ դեպքերում՝ միտվածությունը դեպի ապագա:

Ուսումնասիրությունն ունի կիրառական նշանակություն: Գրքում հիմնավորվել են տոմարագիտական մի շարք խնդիրներ, առանց որոնց անհնար է հարաբերակցել հայ մատենագրությամբ մեզ ավանդված Հայոց մեծ և փոքր՝ Սարկավագադիր, ինչպես նաև հայոց ու տարբեր ազգերի քրիստոնեական թվականները:

Գրքի չորրորդ գլխում ներկայացված են Հովհաննես Սարկավագի՝ մեր վերակազմած ու վերականգնած Շ-եակ զատկացուցակները՝ «Ազնուականոնք ՇԼԲ-ամաց՝ ըստ Հռոմեացուց տոմարի և Ազնուականոնք ՇԼԲ-ամաց՝ ըստ Հայոց անշարժ տոմարի (Սարկավագի)», որոնք զուգադրված են միմյանց, ինչպես նաև տասնհինգ ազգերի տոմարների զուգադրությունը՝ «Ազգաց ազնուականոնները» կամ «Խառնախորանները», որոնց մեջ տոմարական կանոնների համաձայն ուղղումներ ենք կատարել:

Գրքում ներկայացված են նրա կյանքի ու մատենագրական վաստակի մեկնությանը նպաստող սկզբնաղբյուրները, ինչպես և դրանց ուսումնասիրության պատմությունը:

Ցավով պետք է արձանագրել, որ այնքան էլ հարուստ չեն Հովհաննես Սարկավագին վերաբերող սկզբնաղբյուրները: Ոչ միայն հարուստ չեն դրանք, այլև՝ համառոտաբան, երբեմն նույնիսկ՝ հակասական, ինչը ուսումնասիրողներին բերել է իրարամերժ կարծիքների ու եզրահանգումների:

Մեր ուսումնասիրության սկզբնաղբյուրներն են 1378 թվականին Մատթեոս երեցի ընդօրինակած՝ Հովհաննես Սարկավագի Վարքը¹, Մատթեոս Ուռհայեցու (1138-1144 թթ.)², Սամուել Անեցու (12-րդ դ. սկիզբ -1173 - 80-ական

¹ «Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Սարկավագին կենաց եւ մահուն եւ այլոց սրբոց հուպ յայն ժամանակս» (Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Եր., 1956, էջ 119-124):

² **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 240:

թթ.)³, Վարդան Արևելցու (1198–1271 թթ.)⁴, Կիրակոս Գանձակեցու (– 1271 թ.)⁵, Մխիթար Այրիվանեցու (1222–1289/91 թթ.)⁶ պատմությունները, այլ պատմիչների գործերը, «Քարթլիս ցխովրեբա»-ն⁷, ինչպես նաև հեղինակից պահպանված՝ բնագրեր պարունակող հետևյալ՝ ՄՄ 817^{հմր}, ՄՄ 1971^{հմր}, ՄՄ 1973^{հմր}, ՄՄ 1999^{հմր}, ՄՄ 2001^{հմր}, ՄՄ 2017^{հմր}, ՄՄ 2068^{հմր}, ՄՄ 2180^{հմր}, ՄՄ 2762^{հմր}, ՄՄ 6731^{հմր} և այլ ձեռագրերը:

Հովհաննեսի Վարքը՝ ժանրին բնորոշ առանձնահատկություններով, ամենավաղ ստեղծված երկն է, որտեղ կան իրական տեղեկություններ ինչպես նրա ծննդավայրի, ծնողների, ուսուցչի և գործունեության մասին, այնպես է՝ նրա շուրջը ստեղծված հրաշապատումներ: Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հետագայի պատմիչները օգտվել են այս Վարքից, որը կներկայացվի գրքի առաջին գլխում:

Մատթեոս Ուռհայեցին առաջին հեղինակն է, ով տեղեկություն ունի Սարկավագի մասին, սակայն առանց անվանելու նրան. «*Բարձեալ ի թուականութեանս Հայոց ի յանս ՇԼԹ (539) յարուցեալ հայրապետն Հայոց Տէր Բարսեղ և գնացեալ առ փիեզերակալ սուլտանն Մելիք-Շահն, խորհեցաւ գնալ առ բարի և քաղցր թագաւորն Պարսից և ամենայն հաւարացելոցն Քրիստոսի, առ ի ծանուցանել նմա զայս ամենայն. և առեալ ընդ իւր նուէրս սուլտանին իբրև զբիրս ոսկոյ և արծաթոյ և դիպակաց, և հանդերձ ազաւորք և եպիսկոպոսօք և քահանայիք՝ առեալ վարդապետ զհետ իւր և գնաց ի Պարսիկս առ ասորւածաւէր սուլտանն*»⁸:

Մատթեոս Ուռհայեցու տեղեկության շնորհիվ ձշտվում է՝ Սարկավագն այն վարդապետն էր, ով եղել է Մելիքշահի մոտ գնացած՝ Բարսեղ Ա-ի պատվիրակության կազմում: Այս տեղեկությամբ հիմնավորել ենք, որ Սարկավագը Բարսեղ Անեցու հետ գնացել է նաև Ջահան գավառ (Հոնի), ապա՝ Ուռհա՝ Հայոց մեծ ՇԽ (540) = 1091 թվականին, և Անի է վերադարձել Հայոց մեծ ՇԽԱ (541) = 1092 թվին:

«Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրաց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոյ մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ» երկում գտնում ենք Հովհաննես Սարկավագի մասին (ու նրան առնչվող) մի քանի ուղղակի և անուղղակի տեղեկություններ⁹.

³ Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոյ մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Վաղարշապատ, ս. էջմիածին, 1893:

⁴ Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, 1862, Ի Վենետիկ, Ի Սուրբ Ղազար, Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Եր., 2001:

⁵ Պատմութիւն հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, Թիֆլիս, 1910:

⁶ Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն հայոց, Մոսկվա, 1860:

⁷ Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, Եր., 1934:

⁸ Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, էջ 256:

⁹ Սամուէլ Անեցի, նշվ. աշխ., էջեր 97, 128, 119, 120, 129:

1. «Իսկ յետ նոցա Սկիւթացոցն առնուլ զբռնակալութիւն այսպիսի պատճառաւ¹⁰: Ընթերցաք գրեալ վարդապետին մեծի որ Սարկաւագ վերակոչի անուանեալ»¹¹:
2. «ՌՂԷ (ուղղել՝ ՌՂԴ (1094) = ներկա 1092 թ.¹²): Յայսմ ամի մեռաւ Մելիքշահ Սուլտանն բարի: Իսկ զի յաւուրս թագաւորութեան սորա առաւել խաղաղացաւ աշխարհն ամենայն մանաւանդ երկիրս Հայոց, որ ի նախնի բռնակալացն ի սպառսպում զկործանման բաժակն արբեալ էր յանցեալ ժամանակս, ախորժելի եղև բանիւք դրուատիւք վարդապետին սրբոյ գրել և խոստանալ դարձեալ և երկայն ճառիւք»¹³:
3. «ՌՂԶ (1096).Սկիզբն շրջանի Շ. եկին»¹⁴:
4. «ՌՂԷ: Սպանաւ Դրդուշն արքայ Դամասկոսի և Պաղեստինացոց և նոցա մերձաւորացն ի Բեքիարութէն Իսպահան պատերազմաւ ի ՇԽԴ թվին:
Հռոմեացիք ելին ընդ Թիրակ ի կողմանս Ասիացոց խնդրել զքէն վրիժուց տառապանաց քրիստոնէից՝ ի Սկիւթացոց և ի Պարսից՝ հանդերձ Տաճկաստանու: Եւ բազում կրեցին նեղութիւն յորդոյն սատանայի Ալէքս կոչեցելոյ, որ էր թագաւոր Յունաց ի Կոստանդնուպօլիս՝ գաղտնի և յայտնի նենգութեամբ, մահաբար կերակրօք և ի ծովու նենգելով իւրովքն. Յորս վստահեցուցանէր զնոսա և բարբարոսացն խորամանկութեամբ զինքն ունողօք վարդապետ, որում հատուցէ Տէր, քանզի և չէր իսկ քրիստոնէայ, որպէս և լուաք ի յոլովից, որպէս և ոչ մայր սորա: Եւ այս բանքս գրեալ էր վարդապետին Սարկաւագի»¹⁵:
5. «Ի ՇՀԸ. Թվին փոխի յաշխարհէս մեծ վարդապետն Սարգիս, որ է ի Փառիստոյ՝ որդի քահանայի միոյ, և աշակերտ սորա Երեմիա, որ եւ յասելն վարդապետին թէ լուռ լեր ամս Գ. լուռ եկաց՝ ընդ միտս և ընդ Աստուծոյ խօսէր, որ և Անձն կոչեցաւ: Եւ ընկերք սորա՝ Տէր Խաչատուր և Գրիգոր և Յովհաննէս և Սամուէլ. ամենեքեան սորա Անեցիք»¹⁶:
6. «ՌՃԼԱ: Ի ՇՀԸ. Ամին փոխեցաւ ի Քրիստոս մահուամբ վարդապետն մեծ որ Սարկաւագ կոչիւր՝ ի Հաղբատ»¹⁷:

Հովհաննէս Սարկավագին առնչվող Սամուէլ Անեցու հաղորդած տեղեկությունները վերաբերում են սկյութների (սելջուկների) բռնակալության

¹⁰ Շարունակության մեջ «այսպիսի պատճառաւ» կրկնվող արտահայտությունից հետո բերված է Հովհաննէս Սարկավագից արված քաղաքումը:

¹¹ **Սամուէլ Անեցի**, նշվ. աշխ., էջ 97:

¹² Անեցու մոտ Մելիքշահի մահը զուգարկված է նրա հազարապետի՝ Հասանի [Նիզամ ալ-Մուլք] մահվան թվականի հետ, դրանից 28 օր հետո՝ Հայոց մեծ ՇԽԼ թ.: 541 + 553 = 1094 – 2 – 1092 թ.:

¹³ **Սամուէլ Անեցի**, նշվ. աշխ., էջ 119:

¹⁴ Նույն տեղում, էջ 120: Քրիստոնէական թվականի երրորդ տարբերակի՝ 1096 թ. = 1094՝ ներկա թ.:

¹⁵ Նույն տեղում, էջ 120:

¹⁶ Նույն տեղում, էջ 128:

¹⁷ Նույն տեղում, էջ 129:

Ժամանակաշրջանի և Խաչակիրների պատմությանը, ոմն Սարգսի մահվան թվականին և ոմն Հովհաննեսի՝ նրա աշակերտը լինելուն (ընդմիջարկություն է), Հովհաննես Սարկավագի մահվան թվականին: Սամուել Անեցին առանց անունը նշելու մեկ անգամ էլ է անդրադարձել Հովհաննես Սարկավագին Մելիքշահ սուլթանի մահվան թվականի փաստագրման ժամանակ և այլն: Սամուել Անեցին սելջուկների պատմության մասին գրելիս օգտվել է Սարկավագի պատմական գրվածքներից, որոնք մեզ չեն հասել և պահպանվել են միայն իր միջնորդությամբ:

Հովհաննես Սարկավագի ազդեցությունն ակնհայտ է Սամուել Անեցու վրա ոչ միայն իբրև պատմագրի, այլև որպես տոմարագետի: Նրա պատմությունը կառուցված է Սարկավագի տոմարական համակարգի սկզբունքով, այն է՝ Սամուել Անեցու 1 թվականը համընկնում է Հայոց մեծ՝ ՇԼԴ (554) կամ ներկա 1085 թվականին, ինչը ցույց է տալիս, որ Սարկավագի անշարժ տոմարի ստեղծումից անմիջապես հետո այն լոկալ տարածքներում (Անի, Հաղբատ) կիրառություն է ստացել, իսկ Սամուել Անեցու «Պատձենի» հիմքում Սարկավագի «Պատձեններն» են և այլն:

Վարդան Արևելցին Սարկավագի մասին հաղորդել է երկու տեղեկություն¹⁸.

1. «Դաւիթ...Խնամածեալ և անիմաստ ազգին Վրաց, ընտրեալ մանկունս քառասուն առաքեաց ի Յոյն ուսանել լեզու, և առնել թարգմանութիւնս և բերել. գոր և արարին իսկ. երեք ի նոցանէ լաւագոյն գտան և մտաւոր. զարդարին զազգն անզարդ: Եւ ոչ էր նա երկմիտ յեկեղեցոյ և յաղօթից մերոց. վասն որոյ բազում անգամ դնէր զգլուխ իւր ի ներքոյ ձեռաց մերոցն՝ խնդրելով օրհնութիւն»¹⁹:
2. «Էին և վարդապետք յայնմ ժամանակի՝ Յովհաննէս, որ և Սարկաւագ՝ ի գաւառէն Փառիսոսայ ի քահանայական ազգէ, որոյ յիշատակք ճառագայթիցն փայլին մինչև ցարդ ի բանս իւր և ի նմանէ աշակերտեալսն. **Երեմիա, որ և Անձրեիկ**, որ և զամս երեսուն չորակետ եղև, և այնչափ **հլու** եղեալ վարդապետին իւրոյ, որ ի սաստելն երբեմն, թե՛ «**լուռ լե՛ր**», զամս երիս ընդ այլ մարդ ոչ խօսեցաւ, բայց եթէ ընդ վարժիչս իւր ի կարիս. – Սամուել երեց աշխարհի, որ զգաւազանսն յօրինեաց զՔրոնիկոնին՝ Անեցին. – և նախ քան զսոսա Անանիա, որ զՌաքեալսն համառօտեաց հրամանաւ կաթողիկոսին՝ Պետրոսի՝ Սանահնեցին: Իսկ **Սարկաւագ վարդապետն կացեալ ի ժիր մշակութեան գաւուրս իւր՝** հանգեաւ ի հինգ հարիւր վաթսուն և ութ²⁰ և զկնի ամի միոյ՝ լծակիցն իւր Ալաւկա որդին Դաւիթ, որ Կանոնքն գրեաց դիւրահաս. – և Թորքակերայ որդին կոչեցեալ աշակերտ նորին, և այլ արք ճգնաւորք ի

¹⁸ Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջեր 123 (գրաբար), 125 (աշխարհաբար):

¹⁹ Նույն տեղում, էջ 123:

²⁰ Վենետիկի տպագրության մեջ՝ հինգ հարիւր ութսուն և ութ թուին = 1139/1140 թթ.:

յԱղուանս, որպէս Պետրոս Խոնդկայ որդին և Յակոբ սքանչելին Էին և կանայք թագաւորագունք կրօնաւորեալք կուսութեամբ ի Քոբայրն՝ Խորասու և Մարիամ, առ որս գրէր սուրբ վարդապետն Սարկաւագ զգուշական խրատս»²¹:

Վարդան Արևելցու առաջին տեղեկությունն անուղղակի է, սակայն Հովհաննես Սարկավագին վերաբերելը կտեսնենք ոչ միայն անանուն հեղինակի գրած՝ Հովհաննես Սարկավագի Վարքի և Կիրակոս Գանձակեցու տեղեկությունները մեկնաբանելիս, այլև վրաց աղբյուրներում պահպանված տեղեկությունը ներկայացնելիս: Մյուս կողմից էլ այստեղ փաստված է, որ վրաց արքունիքը՝ հանձինս Դավիթ Շինարարի, չափավորել է թշնամական վերաբերմունքը Հայ առաքելական ս. եկեղեցու դավանաբանության հանդեպ:

Վարդան Արևելցին թեև որոշակիորեն կրկնում է վարքագրի տեղեկությունները, որոնք առավել մանրամասն կքննարկվեն իրենց տեղում, սակայն դրանք հնարավորություն են ընձեռում հանգելու հիմնավոր եզրակացությունների:

Կիրակոս Գանձակեցուց ևս քաղել ենք կարևոր տեղեկություններ նրա ստեղծագործական ժառանգության մասին, իբրև սելջուկ-թուրքերի տիրապետության շրջանի պատմագիր²².

1. «Զի մինչև ցՄելիքշահ սուլթանն գրեալ էր պատճառս տիրելոյն նոցա մեծիմաստ վարդապետն, որ Սարկաւագ կոչէր և երկրորդեալ էր Սամուէլ քահանայ, այլև զհոր նորա զարիւնախսանձին Ալփաւանայ և զնորին հոր և հաւուց, զոր Տուղրիլ բէկ և Մահմուտ և Սալչուկ անուանք են նոցա»²³:
2. «Իսկ յԱրևելս արք անուանիք և գիտնականք լուսաւորիչք եկեղեցւոյ՝ Անանիա վարդապետ ի Սանահինն, յաւուրս Դիոսկորոսի, այր մտաւոր և հանձարեղ, գիտող **տոմարական արհեստի**²⁴ և աստուածային գրոց մեկնող: Սորա ասեն հաւաքեալ ի մեկնութիւն առաքելոյ զբանսն Եփրեմի և Յոհաննու Ոսկերեբանին և Կիրղի և այլոց սրբոց, արարեալ համառօտ վասն դիւրահասութեան ընթերցողաց, արար և խորհրդական և մտաւոր տեսութիւն և համեմատութիւն աւետարանացն առ օրինակս...»²⁵:

²¹ **Վարդան Արևելցի**, նշվ. աշխ., էջ 125:

²² Պատմութիւն հայոց արարեալ **Կիրակոսի վարդապետի Գանձակեցու**, էջ 84, 104-105:

²³ Նույն տեղում, էջ 84:

²⁴ Նկատենք, որ, ինչպէս նշում է **Հ. Քյոսեյանը**, Անանիա Սանահնեցու անունով մեզ է հասել «Վկայութիւնք վասն Ծննդեան Քրիստոսի եւ Մկրտութեան՝ տանել ի միում աւուր ի յունուարի վեցն» խորագրով տոմարագիտական հատուկտորների ժողովածուի մեջ պահպանված մի հատված՝ «Եւ արդ, տեսցուք զայն, որ ասեն յոյնք... սկսվածքով», որի աղբյուրը, ամենայն հավանականությամբ, Ա. Շիրակացու «Ի Յայտնութիւն Տեան» ձառն է: Տե՛ս **Հ. Քյոսեյան**, Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին, 2000, էջ 111-112:

²⁵ Պատմութիւն Հայոց արարեալ **Կիրակոսի վարդապետի Գանձակեցու**, էջ 84, 104:

3. «Սոյնպէս և մեծիմաստն գիտութեամբ քան զյոլովս և հանձարեղն յամենայնի՝ մտահարուստն Յոհանէս, Սարկաւագն կոչեցեալ, ի Հաղբատ. սա բազում ինչ աշխատասիրեաց ի գիրս, յիշատակ բարի թողեալ. սա զբազմաց փափաքելին, և ո՛չ ձեռնհաս, զհաստատ և զանշարժ տոմարն կարգեաց Հայոց փոխանակ շարժականին և անհասատատնոյն. արար և միաբանութիւն ամենայն ազգաց տոմարի ընդ Հայոց: Վասն զի յոյժ իմաստուն էր այրն և աստուածային շնորհօք զարդարեալ. սորա բանքն ամենայն իմաստասիրական ոճով, որպէս զԳրիգորի Աստուածաբանին, և ո՛չ գեղջուկ. սա գրեաց ճառս ներբողականս ի մեծագոր արքայն Տրդատ, և ի սուրբ հայրապետն Ներսէս, և ի սքանչելին Սահակ և Մեսրոպ. արար և շարական Ղևոնդեանցն քաղցր եղանակաւ և յարմար բանիւ, որոյ ըսկիզբն է այս. «Պայծառացան այսօր սուրբ եկեղ.» գրեաց սա և գիրս աղօթից, գրեաց և օրինակ ստոյգ գրոց. ...»²⁶:

Կիրակոս Գանձակեցու մոտ պահպանվել են նաև վրաց Դավիթ թագավորի հետ ունեցած հարաբերության մասին վկայությունը և մի քանի հրաշապատումներ. «...կարի յոյժ սիրէր զսա (Հովհաննես Սարկավագին – Գ. Ս.) թագաւորն Վրաց Դաւիթ, հայրն Դեմետրեայ, պապն Դաւթի և Գէորգայ այնքան, զի մինչ լսէր զգալուստ նորա, յոտն առնէր ընդ առաջ նորա, և խոնարհեցուցեալ զգլուխն՝ խնդրէր ի նմանէ օրհնութիւն, և նա եղեալ զձեռն ի վերայ նորա, և ասէր զսաղմոսս զայս. «Գտի զԴաւիթ ծառայ իմ իւղով սրբով իմով օծի զնա: Ձեռն իմ ընկալցի զնա և բազուկ իմ զօրացուցէ զնա, Մի մեղիցէ նմա թշնամի և որդի անօրէնութեան մի չարչարեցէ զնա» (Սաղմ. 2Ը, 21-23) – և ի պատճառս սորա սիրէր թագաւորն զազգս Հայոց»²⁷:

Նրա թողած տեղեկությունները կարևոր սկզբնաղբյուր են ոչ միայն Հովհաննես Սարկավագի կենսագրության որոշ հարցերի պարզաբանման, այլև թողած գրավոր ժառանգությունը գատորոշելու համար:

Հաջորդ հեղինակը, ում երկում հանդիպում ենք Հովհաննես Սարկավագի մասին տեղեկությունների, Մխիթար Այրիվանեցին²⁸ է: Նրա պատմության «Պատմագիրք ի սկզբանէ» ենթավերնագրի տակ մարդկային պատմությունը սկզբից գրած պատմագիրների շարքում հիշատակվում է նաև «Յոհաննէս Սարկաւագ վարդապետը»²⁹: Սակայն Այրիվանեցին այստեղ նկատի պետք է ունեցած լինի Հովհաննես Սարկավագի ժամանակագրությունը, որն սկսում է այսպես. «Եթէ կամիցիս յեղանելոյ Ադամայ ի դրախտէն գիտել զժամանակն...»³⁰:

²⁶ Պատմութիւն Հայոց արարեալ **Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ**, էջ 104-105:

²⁷ Նույն տեղում, էջ 105:

²⁸ **Մխիթարայ Այրիվանեցոյ** Պատմութիւն հայոց, էջ 69:

²⁹ Նույն տեղում, էջ 23:

³⁰ **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 131:

Մխիթար Այրիվանեցու մյուս տեղեկությունը վերաբերում է Հովհաննես Սարկավագի կարգած անշարժ տոմարին՝ «1085 (*Ամբ Կրէտն*) *Սկիզբն նոր թուականին, որ կարգեցաւ ի Յոհաննէս վարդապետի է Հաղբարացոյ, որ Սարկաւագ կոչեցաւ: Սա արար անշարժ փոմար ըստ այլոց ազգաց*»³¹: «1094 – Սկիզբն շրջանի հինգհարիւրեկին»³²: 1085 թվականը Շ-եակի 2-րդ շրջապտոյտի առաջին տարին է՝ հաշվելու իմաստով, իսկ 1094-ը՝ նույն շրջապտոյտի առաջին տարին՝ 19-ամյակի իմաստով, և այդ թվականին էլ Հովհաննես Սարկավագն ստեղծել է իր տոմարական ժողովածուն ու կատարել տոմարական բարեփոխությունը:

Մխիթար Այրիվանեցին անորոշ է դրել Հովհաննես Սարկավագի մահվան թվականը՝ 1111-1121 թվականների միջակայքում:

Մխիթար Այրիվանեցին տասնամյակներով է բերում պատմական տեղեկությունները, և, իրավամբ, այստեղ առկա է Գևորգ Մեղրիկի անունը, իսկ Հովհաննես Սարկավագի անունն այս միջակայքում լինել չէր կարող, այլ՝ 1121-1131 թվականների տասնամյակում: Մեր հաշվումներով՝ Գևորգ Մեղրիկը մահացել է 1114, Հովհաննես Սարկավագը՝ 1130, իսկ Դավիթ վարդապետը՝ 1131 թվին:

Մխիթար Այրիվանեցու մի տեղեկություն էլ պարզապես առնչվում է Սարկավագի աշակերտներին՝ «*Ամբ Կրէտն 1131-1141 – Աստ Պետրոս Խոնթկա որդին, և Յակոբ Սքանչելին, իսկ Խորասու և Մարիամ ի Քոբայրին կային կուսութեամբ*»³³:

Մխիթար Այրիվանեցին տեղեկությունը, հավանաբար, քաղագրել է Վարդան Արևելցու պատմությունից, ում մոտ գուցե արդեն աղարտված է եղել Հովհաննես Սարկավագի մահվան թվականը: Վերջին տեղեկությամբ հնարավոր է դառնում պարզելու, որ Սարկավագի Վարքը գրվել է 1139-1141 թվականից ոչ շատ ուշ, քանի որ վարքագիրը փաստերը ձշտել է Թորակերի որդու կամ Խոնթկա որդու և Յակոբ Սքանչելու միջոցով:

Սարկավագի մահվան **ՇՀԸ** թվականն է փաստել Ստեփանոս Օրբելյանը՝ «*ՇՀԸ փոխեցաւ ի Քրիստոս մեծ վարդապետն Սարկավագ ի Հաղբար*»³⁴:

Թեև անանուն վարքագիրն ու ժամանակի և մոտակա դարերի պատմիչները սակավ տեղեկություններ են թողել նրա կյանքի ու գործունեության մասին, սակայն, այդուհանդերձ, հիմնական կողմերով ներկայացրել են նրա կատարած լայնածավալ աշխատանքը՝ իբրև միջնադարի համայնագետ վարդապետ, պոետիկոս, սոփեստոս, իր ժամանակի կարևոր իրադարձությունների պատմագիր, ուղղափառ աստվածաբան ու հայոց տոմարի բարեփոխիչ:

³¹ **Մխիթարայ Այրիվանեցոյ** Պատմութիւն հայոց, էջ 60:

³² Նույն տեղում:

³³ Նույն տեղում, էջ 62-63:

³⁴ Ժամանակագրութիւն **Ստեփանոս Օրբելյանի**, Եր., 1912, էջ 17:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Հովհաննես Սարկավազի կենսագրության ուսումնասիրողը և ստեղծագործությունների առաջին գնահատողը Ղևոնդ Ալիշանն է: Բազմավեպում առաջին անգամ տպագրվել է «Բան իմաստութեան ի պատճառս զբոսանաց առ ձագն որ զաղօթանցաւ նորա ճրոուողէր քաղցրաձայն որ կոչի սարիկ» երկը՝ Ղևոնդ Ալիշանի՝ «Հ. Ղ. Ա.» ստորագրությամբ և «Յովհաննէս Սարկաւազ» նախորդող հոդվածով³⁵, որը վերահրատարակվել է նաև նրա «Յուշիկք հայրենեաց Հայոց»-ի Բ հատորում³⁶:

Ղ. Ալիշանը շատ բարձր է գնահատում նրա գիտակրթական գործունեությունը. «Արդ անտարակուսաբար կրնանք ըսել որ Սարկավազ Վարդապետը շար մեծ արդյունք ունեցավ այսպիսի ջանքով և գործերով, որոնց բովանդակությունն է՝ ըլլալն իր ժամանակին և երկրին մեջ նորոգ ուսուցմանց և ընտիր ախորժակ մրցնող ինչ որ ԺԵ դարուն մեջ սկսան Եվրոպացիք՝ ինքը մեղասաներորդին սկսեր էր, կամ թե իրեն ժամանակակից դպրոցական ըսվածներուն հեղ»³⁷:

Նրան բնութագրում է իբրև ոչ միայն սուրբ և Աստվածաշունչ գրոց, այլև արտաքին գրյանց բազմահմուտ մեկնիչ՝ «Ամենևին բազմահմուտ պարտ է գոլ ձեռնարկողին այսմ, ոչ միայն սրբոց և աստուածաշունչ գրոց, այլ և արքայքն»³⁸:

Հայոց տոմարի հնության ու սկզբնավորման խնդրի կապակցությամբ Ղ. Ալիշանն օգտագործում է հենց Սարկավազի անշարժ տոմարի համակարգը, ըստ որի՝ Նաւասարդի 1-ը գուգադրված է հուլյան տոմարի օգոստոսի 11-ին:

Ղ. Ալիշանի վրիպումն այն է, որ նա Հովհաննես Սարկավազի տոմարական նախագծի Նաւասարդի 1-ն ընդունել է իբրև Հայոց անշարժ տոմարի տարեսկիզբ՝ օգտագործելով Հայոց շարժական տոմարի 1461 (1460)-ամյա պարբերաշրջանը: Բացի այդ, Հայկյան կամ Բուն թվական հայոցը նույն՝ Հայոց մեծ թվականության համակարգն է՝ ձևավորված Էասյան 532-ամյա զատկացուցակի վրա: Ասենք նաև, որ Սարկավազադիր տոմարը, որը հայոց շարժական տոմարի վրա հիմնված անշարժ տոմարի տեղական մի տարբերակ էր³⁹, թյուրիմացության պատճառ է դարձել այլ հեղինակների համար ևս:

Հաղբատի ու Սանահնի վանքերին նվիրված իր աշխատության մեջ Ե. Տեր - Մինասյանը⁴⁰ ոչ միայն անդրադարձել է նրա գործունեությանը Հաղ-

³⁵ «Բան իմաստութեան ի պատճառս զբոսանաց առ ձագն որ զաղօթանցաւ նորա ճրոուողէր քաղցրաձայն որ կոչի սարիկ»-ը առաջին անգամ տպագրվել է «Բազմավեպ»-ում հուլիս 15-ին, Վենետիկ, 1847, էջ 221-225:

³⁶ Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, Կ. Բ, Վենետիկ, 1870, էջ 279-307:

³⁷ Նույն տեղում, էջ 295:

³⁸ Նույն տեղում:

³⁹ Անշարժ տոմարի տարբերակ ստեղծեց նաև Ստեփանոս Մեծրկա որդին:

⁴⁰ Ե. Տեր-Մինասեան, Հաղբատի դպրոց եւ Յովհաննէս Սարկաւազ, Արարատ, 1901, հուլ.-օգոստոս, էջ 340-344:

բատում, այլև ներկայացրել մինչ այդ ընթերցողին անծանոթ՝ Հովհաննես Սարկավազի մի քանի նոր աշխատությունները՝ շատ հակիրճ և առանց գնահատման: «Մեկնություն տոմարի», «Բանք վասն հինգհարիւրից», «Տոմար ժամանակաց և թուականաց» բնագրերը նա հիշատակում է Հովհաննեսի աշխատությունների ցանկում: Հարկ է նշել, որ դրանք առանձին աշխատություններ չեն, այլ իր տոմարական ժողովածուի՝ «Մեկնություն տոմարիս Հայկազնեայ»-ի մասեր:

Հայագիտությանն արդեն հայտնի և հրատարակված աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությամբ **Հ. Ոսկյանը**⁴¹ բացահայտել է Հովհաննես Սարկավազի կյանքի ու ստեղծագործությունների հետ կապված հարցեր և հրատարակել Վենետիկի մատենադարանում գտնվող «Սարկավազ վարդապետին է բանս» վերնագրված ժամանակագրական համառոտ ցուցակը⁴²:

Լևոն Մելիքսեթ-Ֆեկը⁴³ հրատարակել է Հովհաննես Սարկավազ վարդապետ Հաղբատացու «Վասն շարժման եւ սասանութեան երկրի» աշխատության երկու խմբագրությունները՝ ընդարձակ՝ հիմնական, ու համառոտ տարբերակները, համեմատել ու հանգել այն եզրակացության, որ համառոտը բխում է ընդարձակից:

Նա վրաց աղբյուրներից հայտնի Հովհաննես Քարթլեցի կաթողիկոսին նույնացրել է Հովհաննես Սարկավազի հետ⁴⁴:

Մ. Աբեղյանը⁴⁵ առաջին ուսումնասիրողներից է, ով առավել հանգամանորեն քննեց Հովհաննես Սարկավազի կյանքն ու թողած գրական ժառանգությունը:

«Հովհաննես Սարկավազ վարդապետ» ենթավերնագրի տակ և առաջին հավելվածում՝ «Սարկավազ վարդապետի կենսագրության շուրջ»⁴⁶, Մ. Աբեղյանը Հովհաննես Սարկավազին դիտում է իբրև 11-12 դդ. հայ գրականության մեջ «վերածնության նոր մտավոր հոսանքի» առաջին արտահայտիչներից մեկը:

Մ. Աբեղյանը կարևորում է, որ բնածին շնորհների և մեծ պատրաստության արդյունք են դառնում իր բազմաթիվ աշխատասիրությունները, լուծում է ստանում ժամանակի ամենահրատապ խնդիրներից մեկը՝ Հայոց անշարժ

⁴¹ **Հ. Ոսկեան**, Յովհաննէս Սարկավազի կեանքը, Հանդէս ամսօրեայ, ԼԹ տարի, 1925, էջ 27-40 և Յովհաննէս Սարկավազի գրութիւնները, նույն տեղում, էջ 117—125, 233-248:

⁴² **Հ. Ոսկեան**, Յովհաննէս Սարկավազի գրութիւնները, էջ 238-239:

⁴³ **Լ. Մելիքսեթ-Ֆեկ**, Պատմաբանասիրական պրպտումներ, Հովհաննէս Սարկավազ վարդապետ Հաղբատացու «Վասն շարժման եւ սասանութեան երկրի», Էջմիածին, 2010, էջ 55-67:

⁴⁴ **Լ. Մելիքսեթ-Ֆեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Եր., 1934, էջ 219:

⁴⁵ **Մ. Աբեղյան**, Վերածնությունը հայոց հին գրականության մեջ, Տեղեկագիր ՍՍՌՄ ԳԱ հայկ. ֆիլիալ, 1941, թիվ 4-5, Հովհաննէս Սարկավազ վարդապետ, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, 1944, թիվ 1-2, Երկեր, հ. Դ, 1970, էջ 63-82:

⁴⁶ **Մ. Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, հ. II, Եր., 1946, էջ 531-536:

տոմարի կարգումը: Այս մասին Մ. Աբեղյանը գրում է. «...Սարկավագ Վարդապետի ձեռով 1084 թվականից ընդունվում է անշարժ փոխարը նահանջ փոխում»⁴⁷:

Մ. Աբեղյանը վրիպում է անշարժ տոմարի ստեղծման թվականի (1084) հարցում: Այն ստեղծվել է 1094 թվականին, սակայն հետադարձ հաշվով՝ սկիզբը 1085 թվականն է:

Լ. Սեմյոնով⁴⁸ Հայոց շարժական տոմարը թյուրըմբռնաբար պատկերացնում է Սարկավագադիր տոմարի կտրվածքով, որի պատճառով արժանացել է Հ. Բադալյանի, Բ. Թումանյանի, Գ. Բրուտյանի քննադատությանը:

Մենք Լ. Սեմյոնովի տեսակետներին անդրադարձել ենք մեր հոդվածներից մեկում⁴⁹:

Ա. Աբրահամյան⁵⁰ այն ուսումնասիրողն է, որ առաջին անգամ փորձեց ի մի բերել Հովհաննես Սարկավագի մատենագրությունը և հրատարակեց 1956 թվականին: Նա Հովհաննես Սարկավագի հեղինակած տոմարական, բանաստեղծական, մաթեմատիկական, կրոնաբարոյախոսական բովանդակությամբ երկերը տեսակավորել է՝ կենսագրական, պատմական, մաթեմատիկական, տիեզերագիտական, գրական, փիլիսոփայական: Բաց է թողել միայն Հովհաննեսի կրոնաբարոյախոսական բովանդակություն ունեցող երկերը՝ դրանք առանձին հրատարակելու նպատակով: Ա. Աբրահամյանն իր «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը» երկում լուծում է տվել հետևյալ խնդիրներին՝ 1. Հովհաննես Սարկավագի վերոնշյալ աշխատություններն ի՞նչ ձեռագրերով են հայտնի, 2. մինչ այդ հրատարակված եղե՞լ են, թե՞ ոչ, 3. տվյալ բնագրում ի՞նչ հարցեր են շոշափված, 4. տեքստը կազմելիս ի՞նչ աղբյուրներ է օգտագործել, 5. երկերի արժեքը գրականության, պատմության կամ բնական գիտությունների համար:

Հեղինակը խուսափել է այս կամ այն բնագիրը նեղ մասնագիտական քննության ենթարկելուց, քանի որ դրանով պետք է զբաղվեն համապատասխան մասնագետները՝ տոմարագետները, փիլիսոփաները, գրականագետները, մաթեմատիկոսները ևն:

Նա՛ որպես պատմաբան-աղբյուրագետ, իր գրքում փորձել է ներկայացնել Հովհաննես Սարկավագի աշխատությունների ճշտված տեքստերը և դրանց հետ կապված անհրաժեշտ բանասիրական ուսումնասիրությունները⁵¹:

Ա. Աբրահամյանի այս՝ «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը» երկը Հովհաննես Սարկավագի և նրա ստեղծագործությունների մասին եղած ամենաձավալուն գիտական աշխատություններից մեկն է:

⁴⁷ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, էջ 47: Անշարժ տոմարի ընդունման տարեթվի մասին կխոսենք առանձին՝ համապատասխան հատվածում:

⁴⁸ Լ. Սեմյոնով, Սարկավագադիր տոմար, Էջմիածին, Ա, 1951, էջ 46-49:

⁴⁹ Գ. Սիմոնյան, Հովհաննես Սարկավագի անշարժ տոմարի ուսումնասիրությունների պատմությունից, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Է, Եր., 2012, էջ 217-235:

⁵⁰ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Եր., 1956:

⁵¹ Նույն տեղում, էջ 8-10:

Թեև հետագայում պարզ դարձավ, որ Ա. Աբրահամյանը վրիպելով Սարկավագին է վերագրել որոշ ստեղծագործություններ, երբեմն անձտու-
թյուններ է թույլ տվել այս կամ այն խնդրի պարզաբանման հարցում, սա-
կայն դա ամենևին չի նսեմացնում այն շնորհակալ աշխատանքը, որ կատա-
րել է նա՝ գիտական հիմքերի վրա դնելու Սարկավագի ստեղծագործական
ժառանգությունն ու դրա ուսումնասիրությունը:

Ա. Աբրահամյանը, ում վաստակն անգնահատելի է Հովհաննես Սարկա-
վագի մատենագրությունը հավաքելու և լույս աշխարհ հանելու առումով,
նրա տոմարը գնահատելիս ևս թույլ է տալիս որոշ վրիպումներ. կարծում է,
թե Սարկավագադիր տոմարի 1-ին տարին 1084 թվականն է՝ 1085-ի փոխա-
րեն, և ավարտվում է 1615⁵² թվականին՝ 1616-ի փոխարեն: Թեև մի քանի տող
հետո, հակասելով ինքն իրեն, ասում է, թե նահանջից նահանջի պատճառով
կրկնել է 1084 թվականը և այն դեն նետել, 532-ամյակի 2-րդ շրջապտույտն
սկսում է 1085 թվականին⁵³: Սարկավագադիր տոմարի նահանջը տեղադրում
է Ավելեաց ամսի 5-ից հետո⁵⁴: Նա նաև տոմարական ժողովածուի առանձին
մասերը դիտում է իբրև տարբեր ժամանակներում ստեղծված առանձին աշ-
խատություններ, ինչը խոշոր թերություն է աղբյուրագետի համար:

Հայոց փոքր՝ Սարկավագադիր թվականին միջանկյալ ձևով անդրա-
դարձել են Մ. Օրմանյանը⁵⁵, Վ. Գրյումելը⁵⁶, Է. Դյուլորիեն (Année fixe, Petit
ère et Calendrier de Jean Diacre⁵⁷) և այլք:

Ասենք, որ Ա. Աբրահամյանից հետո մեծ հետաքրքրություն է նկատվում
Հովհաննես Սարկավագի ու նրա տոմարի նկատմամբ:

Առավել հանգամանակից Հովհաննես Սարկավագի տոմարին անդրա-
դարձել են Հ. Բադալյանը⁵⁸, Բ. Թումանյանը⁵⁹, Է. Աղայանը⁶⁰, Ռ. Վարդանյա-
նը⁶¹, Գ. Բրուտյանը⁶², Գ. արք. Սերայդարյանը⁶³, որոնց առավելություններին
ու անձտություններին անդրադարձել ենք մեր հոդվածներում⁶⁴:

⁵² Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 82:

⁵³ Նույն տեղում:

⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Պեյրուօ, 1959:

⁵⁶ V. Grumel, La Chronologie, Paris, 1958.

⁵⁷ Recherches sur la Chronologie Arménienne, par Ed. Dulaurier, Paris, 1859.

⁵⁸ Հ. Բադալյան, Հովհաննես Իմաստասերի տոմարի շուրջ, Էջմիածին, մարտ, 1970, էջ 40-46, Օրացույցի պատմություն, Եր., 1970 և Հայոց տոմարի պատմություն, Եր., 1976:

⁵⁹ Բ. Թումանյան, Տոմարի պատմություն, Եր., 1972:

⁶⁰ Է. Աղայան, Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Եր., 1986:

⁶¹ Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը (4-18-րդ դարեր), գլուխ ԺԵ՝ Սարկավագադիր տոմարը և ՇԼԲ-ն, Եր., 1999, էջ 230-267:

⁶² Գ. Բրուտեան, Օրացույց հայոց, ս. Էջմիածին, 1997:

⁶³ Գ. արքեպիսկոպոս Սերայդարյան, Եկեղեցական տոմարագիտություն, ս. Էջմիածին, 2004:

⁶⁴ Գ. Սիմոնյան, Ռ. Վարդանյան, Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տոմարիս Հայկազ-
նեայ» տոմարական ժողովածուն, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք Ա, Եր.
2006, Գ. Սիմոնյան, Հովհաննես Սարկավագի ՇԼԲ-ամյա զատկացուցակները, ԵՊՀ աստ-
վածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք Զ, Եր., 2011, նույնի՝ Հովհաննես Սարկավագի

Այս հեղինակները փորձել են պատասխան տալ հետևյալ հիմնախնդիրներին՝ ինչպե՞ս է նա անշարժացրել հայոց տոմարը, որտե՞ղ է հավելել նահանջ տարվա 1 օրը, ո՞րն է նրա կազմած տոմարի տարեսկիզբը և այլն, որոնց առավել մանրամասն կտեսնենք մեր գրքի՝ տոմարին վերաբերող գլխում:

Հովհաննես Սարկավազի կյանքին ու վաստակին համակողմանիորեն են անդրադարձել Կ. Միրումյանը⁶⁵, Փ. Անթապյանը⁶⁶, իսկ առանձին հարցերի շուրջ նրանք հանդես են եկել հոդվածներով:

Փ. Անթապյանը պահպանված տոմարական բնագրերը՝ ժամանակագրություն, Խառնախորան, «ՇԼԲ» (532) աղյուսակ, Տոմարի պատձեն, Հայ տոմարի մեկնություն և այլն, դիտում է որպես առանձին աշխատություններ⁶⁷:

Ս. Արևշատյանը⁶⁸, Հ. Միրզոյանը, Ա. Մաղոյանն⁶⁹ ու Փ. Անթապյանը⁷⁰ որոշ բնագրերի մանրակրկիտ քննությամբ պարզել ու հիմնավորել են դրանց պատկանելության հարցը:

Հետագայում տարբեր հեղինակներ⁷¹ ժամանակի ընթացքում արդեն նեղ մասնագիտական տեսանկյունից են քննել նրա ստեղծագործությունները և անդրադարձել կյանքին ու գործունեությանը:

«Ազգաց կանոնները», ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք է, Եր., 2012, էջ 49-57, **նույնի՝** Հովհաննես Սարկավազի անշարժ տոմարի ուսումնասիրությունների պատմությունից, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք է, Եր., 2012, էջ 217-235, կլն: **Գ. Սիմոնյան, Ռ. Վարդանյան**, Հովհաննես Սարկավազի տոմարական ժառանգության մեջ առկա թվականության համակարգերը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, հ. Ը, Եր., 2013, ԵՊՀ հրատ., էջ 48-65, **Գ. Սիմոնյան**, Հովհաննես Սարկավազի աստվածաբանական ու բարոյախրատական երկերը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, հ. Թ, Եր., 2014, ԵՊՀ հրատ., էջ 34-51, **Գ. Սիմոնյան**, Հովհաննես Սարկավազի գրական երկերն իբրև հեղինակի կենսագրության սկզբնաղբյուր, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, հ. Ժ, Եր., 2015, ԵՊՀ հրատ., էջ 72-91, **Գ. Սիմոնյան**, Քրիստոսի Հայտնության տոնը և նրա ծննդյան թվականը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, հ. ԺԱ, Եր., 2016, ԵՊՀ հրատ., էջ 7-15:

⁶⁵ **Կ. Միրումյան**, Հովհաննես Սարկավազի աշխարհայացքը, Եր., 1984, **նույնի՝** Հովհաննես Սարկավազի երկու իմաստասիրական գրվածքները և նրանց արժեքը, Պատմա-բանասիրական հանդես, 1979, թիվ 2, էջ 154-162:

⁶⁶ **Փ. Անթապյան**, Հովհաննես Սարկավազ Իմաստասեր, Եր., 2001 և Հովհաննես Սարկավազին վերագրված «Լուծմունք եօթնից գրոցն Փիլոնի» բնագրի առնչությամբ, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1983, թիվ 1 (100), էջ 177-190:

⁶⁷ **Փ. Անթապյան**, Հովհաննես Իմաստասեր Սարկավազ, Եր., 2001, էջ 19:

⁶⁸ **Ս. Արևշատյան**, Նովիսալիզմի առաջացումն ու զարգացումը միջնադարյան Հայաստանում, Բանբեր Մատենադարանի, № 6, Եր., 1962, էջ 23-34, **նույնի՝** «Յաղագս խրատու մանկանց» գրվածքը և նրա հեղինակի հարցը, [Գրիգոր Մագիստրոսի նամակը՝ ուղղված Սյունյաց քահանայապետ, արքեպիսկոպոս Հովհաննեսին՝ նրա թեմում տեղի ունեցած աղանդավորական խլրտումների առթիվ], Բանբեր մատենադարանի, № 11, 1973, էջ 33-45:

⁶⁹ **Ա. Մաղոյան, Հ. Միրզոյան**, Դավիթ Անհաղթի «Սահմանաց գրքի» անանուն մեկնությունը, Բանբեր Երևանի համալսարանի, 1980, թիվ 1:

⁷⁰ **Փ. Անթապյան**, Հովհաննես Սարկավազին վերագրված «Լուծմունք եօթնից գրոցն Փիլոնի» բնագրի առնչությամբ // Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1983, թիվ 1 (100):

⁷¹ **Մանես Էռնա Շիրիյան**, Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը (հայկական և հունական դասական ու բյուզանդական աղբյուրների բաղադատությամբ), Եր., 2005: **Մ. քին. Արամեան**, Յովհաննէս Սարկավազի «Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիական 3ԺԸ-ցն» ժողովածուն, «Գանձասար» աստված. հանդես, հ. 2, Եր., 1996, էջ 44-78: **Տ. քին. Ուզունեան**, Յովհաննէս Սարկավազ վարդապետ, «Գանձասար» աստված.

Հիշատակելի են նաև Հովհան Դրիմեցու⁷², Գ. քահանա Աղանյանցի⁷³, ինչպես և վերջին շրջանի ուսումնասիրողներից Զ. Էյնաթյանի⁷⁴, Կ. Մաթևոսյանի⁷⁵, Վ. Վարդանյանի⁷⁶ աշխատությունները:

Հարկ է նշել, որ Հովհաննես Սարկավազն ու իր ստեղծագործական ժառանգությունը ըստ արժանվոյն են գնահատվել պատմության, մշակույթի խնդիրներին նվիրված և ընդհանուր բովանդակությամբ բազմաթիվ հայերեն, ռուսերեն մենագրություններում ու հանրագիտարաններում⁷⁷:

հանդես, հ. 2, Եր., 1996, էջ 298-304: **Հ. Գաբրիելյան**, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 2, Եր., 1958, Հայ փիլիսոփայության պատմություն, Եր., 1976, История армянской философии, Ер., 1972, Узловые проблемы средневековой армянской философии, Ер., 1981: **Գ. Գրիգորյան**, Հովհաննես Իմաստասերի փիլիսոփայական հայացքները, Պատմա-բանասիրական հանդես, 1958, թիվ 3: **Վ. Չալոյան**, Հայկական ռենեսանս, Եր., 1964, Հայոց փիլիսոփայության պատմություն, Եր., 1975, История армянской философии, Ер., 1959, Развитие философской мысли в Армении (древний и средневековый периоды), Москва, 1974: **Ս. Ա. Զարարյան**, Մարդու և բնության փոխհարաբերության հարցը Հովհաննես Սարկավազի Կոն իմաստութեան քերթվածում // Բանբեր Եր.-ի համալսարանի, 2002, 2 (107), էջ 19-26: **Ա. Կծոյան**, Բժշկագիտությունը Հայաստանում XI-XIV դարերում, Եր., 1968: **Ավ. Տեր-Պողոսյան**, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև XVIII դարը, Եր., 1960: **Գ. Պետրոսյան**, Հովհաննես Սարկավազի «Անկյունավոր թվերը», Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ: Հասարակական գիտ., 1946, թիվ 4, Մաթեմատիկական Հայաստանում հին և միջին դարերում, Եր., 1959: **Ն. Թահմիզյան**, Հովհաննես Սարկավազ Իմաստասերը և հայ միջնադարյան երաժշտական մշակույթը, Բազմավեպ, 1978, թիվ 3-4: **С. Аревшатын, Н. Тагмизян**, Вступ. Статья к разделу «Армения» – Музыкальная эстетика стран Востока, М., 1967: **Վ. Ա. Հովսեփյան**, Գեղագիտական ուսմունքի պատմություն, Եր., 1979, էջ 184-190: **Սարգիս Մխիթարյան**, 11-րդ դարի հայ բանաստեղծության յուրահատկությունները, «Կանթոն» գիտական հոդվածների ժողովածու, 2(23), Եր., 2005, էջ 3-8: **Լ. Լաճիկեան**, Խաչատուր Էրզրումցին եւ հայկական կլասիցիզմի գեղագիտությունը, Հանդես ամսօրեա, Վիեննա, 2001, էջ 91:

⁷² **Յովհաննու Դրիմեցույ** Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին, Վիեննա, 1965, էջ 14:

⁷³ **Գ. քին. Աղանեանց**, Տոմար և տօնացոյց Հայաստանեայց Ս. Եկեղեցույ, Վաղարշապատ, 1890:

⁷⁴ **Զ. Էյնաթյանի** աշխ.՝ Հին հայկական տոմարը (Է-ԺԵ դդ.), Եր., 2002, Պատճէն տոմարի (Է-ԺԵ դդ.), Եր., 2002:

⁷⁵ **Կ. Մաթևոսյան**, Հովհաննես Սարկավազի գործունեությունն Անիում, Էջմիածին, 2005, Է-Ը, էջ 59-72, Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները, Եր., 2009:

⁷⁶ **Վ. Վարդանյան**, Հովհաննես Սարկավազը պատմագիր և դավանաբան, Պատմա-բանասիրական հանդես, 2009, թիվ 2 – 3, էջ 158-166:

⁷⁷ Հիշատակենք դրանցից՝ Մայ ժողովրդի պատմություն, 8 հատորով, հ. 3, Եր., 1976: **Ա. Առաքելյան**, Հայ ժողովրդի նաակոր մշակույթի զարգացման պատմություն, Եր., 1959, էջ 518-528: Հայ մշակույթի նշանավոր գործիչները, V-XVIII դարեր, խմբ.՝ **Էդ. Աղայանի, Էմ. Պիվազյանի, Հ. Ժամկոչյանի**, Եր., 1976, էջ 223-234:

Философская энциклопедия, т. 2, М., 1962, с. 308, Педагогическая энциклопедия, т. 1, М., 1964, с. 115, Советская историческая энциклопедия, т. 6, М. 1965, с. 174-175, Эстетика и искусство. Из истории домарксистской эстетической мысли (Мыслители Закавказья об искусстве и красоте (XI-XII вв.))–**Апресян Г. З.**, М., 1966, Большая советская энциклопедия, 3-е изд., т. 18, М., 1974, с. 270, Эстетическая мысль народов Закавказья, М., 1968, История философии в СССР в 5-и томах, т. 1, М., 1968, с. 110-111, Антология мировой философии в 4-х томах, т. 1, ч. 2, М., 1969, Очерки развития эстетической мысли в Армении. Редактор **Я. Хачикян**, М., 1976, **Джохадзе Д. В., Стяжкин Н. И.**, Введение в историю западноевропейской средневековой философии, Тбилиси, 1981:

ԳԼՈՒԽ Ա

«Սակաւութի գվարս կենաց նորա»

Հովհաննես Սարկավագի կենսագրության վերաբերյալ հատուկնաւ տեղեկությունները հաղորդել են՝ Միսիանի Անգեղակոթ գյուղում 1378 թվականին Մատթեոս երեցի ընդօրինակած՝ Հովհաննես Սարկավագի Վարքը՝ **«Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Սարկաւագին կենաց եւ մահուն եւ այլոց սրբոց հուպ յայն ժամանակս»**⁷⁸, Սամուել Անեցին⁷⁹, Վարդան Արևելցին⁸⁰, Կիրակոս Գանձակեցին⁸¹, Մխիթար Այրիվանեցին⁸², Ստեփանոս Օրբելյանը⁸³, ինչպես և՝ վրաց սկզբնաղբյուրներից «Քարթլիս ցխտվրեբա»-ն⁸⁴ (վրաց.՝ ქართველთა ცხოვრება՝ «Քարթլիի կյանքը») ու հեղինակի երկերը:

Հովհաննես Սարկավագի բեղմնավոր ու վաստակաշատ բազմամյա կյանքից պահպանված այդ բեկորները վերաբերում են նրա մահվան թվականին, ծննդավայրին, կրթությանը, ընկերներին ու աշակերտներին, նրա շուրջ ստեղծված ավանդապատումներին, ապա թողած գրավոր ժառանգությանը, որոնց շնորհիվ կարելի է վերականգնել հեղինակի միմիայն պատմագրական դիմանկարը:

Հաճախ, երբ պատմությունը լռում է կամ սակավախոս է որևէ հեղինակի կենսագրության վերաբերյալ, ուսումնասիրողին օգնության ձեռք են մեկնում այդ հեղինակի ստեղծագործությունները⁸⁵ և փոքրիշատե լրացնում այն բացը, որ թողնում է պատմությունը:

Հովհաննես Սարկավագի մասին ամենածավալուն տեղեկությունները պահպանված են նրա Վարքում, որը, ինչպես կներկայացնենք հետագա շարադրանքում, ստեղծվել է նրա մահից անմիջապես հետո՝ մոտավորապես մինչև 1139–1141 թվականներին, և օգտագործվել հետագայի պատմագիրների կողմից:

Վարքը հայտնի է եղել Լ. Մելիքսեթ-Բեկին⁸⁶, Ա. Մովսիսյանին⁸⁷:

⁷⁸ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 119–124:

⁷⁹ Սամուելի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրաց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոյ մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Վաղարշապատ, ս. Էջմիածին, 1893:

⁸⁰ Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Եր., 2001:

⁸¹ Պատմություն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, Թիֆլիս 1910:

⁸² Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմություն հայոց, Մոսկվա, 1860:

⁸³ Ժամանակագրություն Ստեփանոս Օրբելեանի, Եր., 1912:

⁸⁴ Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, Եր., 1934:

⁸⁵ «Նորին (Յովհաննես) առ Սարգիս. Ողբք», «Ամբաստանություն զանձնէ» և «Առ կոյրն աչագեղոյ», Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 325–326 և 328–329:

⁸⁶ Լ. Մելիքսեթ-Բեկ, Վարդապետը Հայոց հյուսիսային կողմանց (վրացերեն), Թիֆլիս, 1928: Տե՛ս Վարդապետը Հայոց հյուսիսային կողմանց և նրանց ինքնությունը, Էջմիածին, 2016, էջ 288:

⁸⁷ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 18:

Առաջին անգամ այն հրատարակել է Գ. Հովսեփյանցը⁸⁸, ապա ՄՄ 2680^hը ձեռագրից՝ Ա. Աբրահամյանը⁸⁹:

Հովհաննես Սարկավազի ծննդան տարեթվի մասին սկզբնաղբյուրներում ոչ մի հիշատակություն չի պահպանված: Ծննդյան տարեթիվը տարբեր ուսումնասիրողներ փորձել են որոշել մոտավոր՝ հետադարձ հաշվարկով, ելնելով մահվան թվականից, այն է՝ Հայոց մեծ թվականի ՇՀԸ (1129/30)⁹⁰ տարուց, և նրա տարիքի մասին եղած ակնարկներից:

Հ. Ոսկյանը, անդրադառնալով այդ խնդրին, կարծում է, որ նա ծնվել է 1045-1055 թվականների ժամանակահատվածում⁹¹:

Մ. Աբեղյանը, հիմնվելով վրաց աղբյուրների վրա⁹², որոնք օգտագործել է նաև Լ. Մելիքսեթ-Քեկը⁹³, կարծում է, որ նա մահացել է շատ ծեր՝ առնվազն 80-85 տարեկանում, եզրակացնելով, որ կարող էր ծնված լինել 1045-1050 թվականներին, հավանորեն՝ ավելի ևս վաղ⁹⁴:

Մ. Աբեղյանը, չգիտես, թե ինչու, անտեսել է հայկական աղբյուրների տեղեկությունը, ինչը նրան հանգեցրել է առավել անձտության:

Ա. Աբրահամյանը հակված է կարծելու, որ շատ ճիշտ են Հ. Ոսկյանի հաշվումները⁹⁵:

Հովհաննեսի տարիքի մասին կարող ենք հետևություններ անել՝ ելնելով մեկ-երկու իրարամերժ տեղեկություններից:

Հայկական աղբյուրները նշում են՝ 1. «Եւ այսպէս **բարուք կացեալ ի ժիր մշակութեան** (ընդգծումը մերն է- Գ. Ս.), չոգաւ առնուլ զվարձն ի յաւիտենական ժառանգութեան...»⁹⁶ և 2. «...իսկ Սարկաւազ վարդապետն կացեալ **ի ժիր մշակութեան** զաւուրս իւր՝ հանգեաւ...»⁹⁷:

Վրաց աղբյուրները նրան ներկայացնում են իբրև «**հոտյալ ու գառամյալ**» ծերունի:

Վրաց տարեգրության («Քարթլիս ցխովրեբա») 12-րդ դարում կատարված հայերեն թարգմանության մեջ ներկայացված է Հովհաննես Սարկավազի և Դավիթ Շինարար թագավորի (1089-1125 թթ.) երկխոսությունը: Երբ Հովհաննես Սարկավազի ընդունելության ժամանակ Դավիթը, ընդառաջ

⁸⁸ Գարեգին Ա կաթողիկոս, Հիշատակարանք ձեռագրաց, հատոր Ա, Անթիլիաս, 1951, էջ 335-342:

⁸⁹ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 18-19:

⁹⁰ Այս գուգադրումը մերն է:

⁹¹ Հ. Ոսկեան, Հովհաննես Սարկավազի կյանքը, էջ 28:

⁹² Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 449-450:

⁹³ Տե՛ս Լ. Մելիքսեթ-Քեկ, Պատմաբանասիրական պրպտումներ, Հովհաննես Սարկավազ վարդապետ Հաղբատացու «Վասն շարժման եւ սասանութեան երկրի», Էջմիածին, 2010, էջ 57:

⁹⁴ Հովհաննես Սարկավազ վարդապետ, տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ., էջ 63:

⁹⁵ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 22:

⁹⁶ «Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Սարկաւազին...», Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 119:

⁹⁷ Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 125:

գալով, դիմավորում է նրան ու փարվում պարանոցին, Սարկավագն ասում է. «*Լուծեալ և հոբեալ եմ ի ծերութենէս, ի բաց գնա յինէն, զի մի աշխատ լիցիս*»: Իսկ թագավորը համբուրում ու պատասխանում է. «*Անպակաս լիցի հոբս այս յինէն, հա՛յր պատուական*»⁹⁸:

Տեղեկությունն առավել վկայում է մարդկային ջերմ ու անմիջական հարաբերության ու զրույցի մասին, որ կարող էր տեղի ունենալ մտերիմների կամ որոշակի հարցերի նկատմամբ շահագրգիռ անձանց միջև, քան թե վրաց արքայի ու հայ վարդապետի: Մեր կարծիքով, ավելի ուշադրության է արժանի Դավթի պատասխանը, քան հայ հոգևորականի՝ համեստորեն իրեն ուղղված՝ «Լուծեալ և հոտեալ եմ ի ծերութենէս» «ամբաստանութիւն գանձնէն»: Իսկ Դավթի գնահատանքը միանգամայն այլ է և չի խոսում քայքայված ու գարշահոտ ծերունու մասին, այլ մշտապես սպասված՝ ցանկալի բույրով պատվական հոր: Մյուս կողմից՝ Սարկավագի ասած «զի մի աշխատ լիցիս»-ը, այն է՝ «չչարչարվես», «նեղություն չկրես», որքան հավուր պատշաճի ասված լիներ, խոսում է այն մասին, թե Դավիթն այնքան երիտասարդ չի եղել Սարկավագից, կամ Սարկավագն այնքան ծեր չի եղել, որ Դավիթ թագավորն իրեն ընդառաջ գնար: Մյուս կողմից՝ 16 տարեկանում թագադրվելով (1089 թ.)՝ Դավիթը մահացել է 52 տարեկանում՝ 1125 թվականին, և նրա համեմատությամբ 70-ամյա մարդն էլ կարող էր դիտվել ծեր: Այնպես որ, խոսքը 80-85 տարեկանի մասին լինել չի կարող:

Կիրակոս Գանձակեցու հաղորդած ավանդապատումներից մեկը ևս կարևորություն է ձեռք բերում Հովհաննես Սարկավագի տարիքը ճշգրտելու հարցում:

«Իէպ եղև զի յաւուր միում նսարէին երեքեան արքս սքանչելի»⁹⁹, եկն անդ ոմն շինական այր մի և ասէ ցնոսա՝ երանի՛ որ գիտէ ո՞ իմաստնազոյն իցէ. զայս իբրև ծաղրական ասաց. պատասխանի եր Թոքակերի որդին և ասէ. ես ասեմ քեզ. մինչ դեռ էաք ի մերում աշխարհին»¹⁰⁰, ես կտրող և կարող, իսկ սարկաւագս՝ կտրել միայն գիտէր, իսկ այժմ սա կտրէ և կարէ, և բազում նկարս յաւելու ի վերայ. զայս առակաբար վասն իմաստութեան նորա ասաց. ...»¹⁰¹:

Կիրակոս Գանձակեցու հիշատակած այս երկխոսությունից, թեև այլաբանորեն՝ առակաբար ասված, պարզ է դառնում, որ այս երեք սրբակենցաղները դեռևս իրենց երկրում (Փառիստում), արդեն ստացել էին նախնական հոգևոր կրթություն, թերևս Սարկավագն ավելի փոքր է եղել, քանի որ Թոքակերի որդին «կտրել ու կարել» է իմացել, իսկ Սարկավագը միայն «կտրել»: Սակայն նա՝ «ուսման նկատմամբ փութեռանդության» շնորհիվ է, որ տարիներ անց արդեն գերազանցում է իր ընկերներին:

⁹⁸ Լ. Մելիքսեթ-Ֆեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Եր., 1934, էջ 219:

⁹⁹ Խոսքը Հովհաննես Սարկավագի, Գրիգոր Թոքակերի որդու և Դավիթ Ավակա որդու մասին է: Գանձակ կամ Փառիստ:

¹⁰¹ Պատմություն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցու, էջ 107:

Վարքի մի տեղեկություն ևս թույլ է տալիս մտածել, որ Հովհաննեսն ուսանել է իրենից ավելի մեծ սաների հետ. «*Եւ ի փղայական փիոց անփի եցոյց զանհաւասարութիւն առ նմանիս իւր: Եւ ամենայն փոփոխման հասակաց գերագանցեալ գրավ առ հասակակիցսն յառաջափրոյթեամբ աստուորական,...*»¹⁰²:

Եթե հաշվի առնենք, որ Գրիգորը՝ Թոքակերի որդին, մահացել է 1139 թվականին¹⁰³, խոր ծերության հասակում և մի քանի տարով մեծ է եղել Սարկավագից, դարձյալ համոզվում ենք, որ նրանից 9 տարի առաջ մահացած Սարկավագը, ով նաև փոքր էր նրանից, չէր կարող լինել հոտյալ ու գառամյալ, այլ՝ առավելագույնը 70 – 75 կամ միջին հաշվով՝ 73 տարեկան, և հայկական սկզբնաղբյուրների վկայությունն առավել հավաստի է դառնում, այսինքն՝ մահացել է «**բարոք կացեալ ի ժիր մշակութեան**»:

Ինչպես ցույց կտրվի իր տեղում, Հովհաննես Սարկավագը մահացել է 1130 թվականին և ապրել մոտավորապես 73 տարի, ուստի կարող ենք ասել, որ նա ծնվել է մոտավորապես 1057 թվականին:

«Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Սարկաւագին կենաց եւ մահուն եւ այլոց սրբոց հուպ յայն ժամանակս» բնագիրը վարք է:

Վարքը՝ իբրև հոգևոր գրականության յուրօրինակ ժանր, որի նպատակն անձի սրբագործումն է ու նրա համար տոնացույցում կամ ավելի ստույգ՝ Յայսմաւորքում, ըստ արժանվույն տեղ պատրաստելը, չի ներկայացնում «հերոսի» կենսագրությունն ամբողջությամբ, այլ, իրականի ու հրաշապատումի շաղախմամբ, որոշակի դրվագներ նրա կյանքից: Այսպիսին է նաև Հովհաննես Սարկավագի Վարքը՝ գրված չափածոյի բնորոշ ռիթմով ու պատկերավոր լեզվամտածողությամբ¹⁰⁴:

Կարծում ենք, որ Սարկավագի Վարքը՝ իբրև անմիջապես նրա մահից հետո ստեղծված գործ, ամենահավաստին է ու հավատարժանը՝ նաև պատմական որոշ ստույգ փաստերի հաղորդման առումով:

Վարքն սկսվում և ավարտվում է Հովհաննես Սարկավագի մահվան թվականի հաղորդումով, որի մանրակրկիտ քննությունը կտրվի Վարքի վերջում:

Անանուն հեղինակը, սկսելով «պատկերն ճշմարութեան» և «քանոն կարգաց» վարդապետ Հովհաննես Սարկավագի մահվան թվականի հաղորդումով (ի ՇՀԸ = 1129/30 թ.)¹⁰⁵, պարտ ու պատշաճ է համարում սակավիկ

¹⁰² Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Սարկաւագին, Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 119:

¹⁰³ Այս թվականին կանոնադառնանք հետագա շարադրանքում:

¹⁰⁴ **Քնարիկ Տեր-Ղավթյան**, XI-XV դարերի վարքագրությունը, Եր., 1980, էջ 60–65:

¹⁰⁵ Հայոց մեծ թվականը ներկա թվականով արտահայտելու համար, եթե ամիս-ամսաթիվ չի հիշատակվում, անհրաժեշտ է օգտագործել երկու թվական, քանի որ Հայոց մեծ թվականի առաջին տարին համապատասխանում էր հուլյան տոմարի 552 թվականի հուլիսի 11-ից մինչև 553 թվականի հուլիսի 10-ը: Եվ որոշ գուգադրություն կազմողներ այս նրբությունն

ներկայացնել նրա Վարքը և տեղեկություններ հաղորդել նրա մասին «մեր աղքատամիտներին» և «սուղ խոսքի տերերին»:

Բուն Վարքն սկսում է այսպես. «Սա ի մանկական փոքր և ի խանձարոք, ըստ սրբոյն Սամուէլի, նուիրեալ ասարածոյ և կուսութեան, յարենէ և յարգանդէ քահանայից, սնեալ և դաստիարակեալ առ սրբասնունդ քեռոյն իւրոյ ի վանս Հաղբատ՝ գաւառաւ ի Փառիսոսոյ: Յառաջագոյն փուսա ի վարժս երաժշտական հոգևոր ուսմանց և ապա յերևման մեծին ի նմա ծածկելոյ գանձին, աւանդեցաւ և յանձնարարեցաւ ի քեռոյն իւրմէ Ոռճացի վարդապետին»¹⁰⁶:

Ըստ վարքագրի՝ նա՝ «**գաւառաւ ի Փառիսոսոյ**»¹⁰⁷, դեռևս խանձարոքից և մանուկ հասակից **Աստու և կուսութեան նվիրյալ էր, քահանայական արյունից և արգանդից, սնվել և դաստիարակվել էր** իր սրբասնունդ քեռու մոտ «ի վանս Հաղբատ», վարդապետը եղել է **Ոռճացին**:

Վարքի այս հատվածը բառ առ բառ քննել են ուսումնասիրողները, և այն բազմաթիվ տարակարծությունների պատճառ է դարձել, որոնց մենք ևս մեկ առ մեկ կանդրադառնանք՝ հիմնավորելով նաև մեր ուսումնասիրության արդյունքներով: Վարքագիրը հաղորդում է՝ ծննդավայրը՝ Փառիսոս:

Նրա ծննդավայրը Փառիսոս¹⁰⁸ է հաղորդել նաև Վարդան Արևելցին¹⁰⁹. «Էին և վարդապետք յայնմ ժամանակի՝ **Յովհաննէս**, որ և **Սարկաւագ՝** ՚ի գաւառէն Փառիսոսայ ի քահանայական ազգէ»¹¹⁰:

Մ. Աբեղյանը, հիմնվելով Վարքի՝ «*Բերէր ի քաղաք իւր և փեղի սննդեան՝ ի քաղաքամայրս Անի*» արտահայտության վրա, հետևեցնում է. «Սարկավագ վարդապետն անեցի է եղել»¹¹¹: Սակայն «տեղի սննդեան»-ը չի նշանակում ծննդավայր, քանի որ Հաղբատն էլ է համարվել նրա համար «տեղի սննդեան»:

Կ. Գանձակեցին Սարկավագի, Թոքակերի որդի Գրիգորի և Դավիթ Ալավկա որդու մասին ասում է. «... **սոքա երեքեանս էին յաշխարհէն Գանձակայ, ուսրի և ես**»¹¹²:

անտեսել են՝ թվականներն ստանալու համար հիմնականում ընդունելով 551 հաստատունը: Հովհաննէս Սարկավագի մահվան թվականի՝ 1129/1130 երկու թվականների օգտագործումը մերն է:

¹⁰⁶ **Ա. Աբրահամյան**, Հովհաննէս Իմաստասերի մատենագրությունը, էջ 119:

¹⁰⁷ Աղվանից երկրում, որ կոչվում էր Խորին աշխարհ Հայոց, սուրբ առաքյալ Թադեոսի աթոռանիստը, որտեղ այժոռի բաժանում տեղի չունեցավ, մնաց անսասան՝ հայրապետով ու թագավորով: Առաքելական Աթոռը հայոց Պարտավ քաղաքում էր (Փայտակարան), ապա տեղափոխվեց Գանձակ (**Մատթեոս Ոռնայեցի**, Ժամանակագրություն, Եր., 1991, էջ 247):

¹⁰⁸ Ա. Աբրահամյանը, ըստ Թ. Հակոբյանի «Հայաստանի պատմական աշխարհագրության», գրում է. «Փառիսոսը Արցախի գավառներից մեկն է, Սևանա լճից դեպի հյուսիս-արևելք»: Փառիսոսի մասին տե՛ս նաև **Ս. Բարխուդարյան**, Страницы из истории Арцаха и Армянно-Албанских отношений, Եր., 2011, էջ 91-92:

¹⁰⁹ **Վարդան Արևելցի**, Տիեզերական պատմություն, Երևան, 2001, էջ 125:

¹¹⁰ «Ի քահանայական ազգէ» արտահայտությունը Հ. Ոսկյանը հասկացել է, որ «Վարդանի ավանդության համեմատ անոր հայրն ամուսնացած երեց մըն էր»:

¹¹¹ **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Դ, էջ 446:

¹¹² Պատմություն Հայոց արարեալ **Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ**, էջ 107:

Վերոբերյալ տեղեկությունների հիման վրա ուսումնասիրողները տարբեր կարծիք են հայտնել Սարկավագի ծննդավայրի մասին, այն է՝ ծնվել է Փառիսոսում, Գանձակում, գուցե Անիում:

Համաձայն վարքագրի ու Վարդան Արևելցու տեղեկությունների՝ Սարկավագը ծնվել ու նախնական կրթությունն ստացել է Փառիսոսում:

Կիրակոս Գանձակեցու մոտ մեր ընդգծած արտահայտությունն առաջ է բերում նրա ծննդավայրի մյուս տարբերակը՝ Գանձակ: Սակայն Փառիսոսը, որը մնացել էր Գանձակ աշխարհի սելջուկյան հատվածում, մինչև 1076 թվականը դեռևս պահպանել է իր հոգևոր ու քաղաքական կարևոր կենտրոն լինելու հանգամանքը, այլապես Փիլարտոս Վարաժնունին չէր ցանկանա հայրապետական աթոռը տեղափոխել այնտեղ, ինչի խնդրանքով էլ դիմել էր Գրիգոր Վկայասերին ու մերժում ստացել¹¹³:

Կիրակոս Գանձակեցու՝ Հովհաննես Սարկավագին իր աշխարհից համարելը ոչ այնքան տեղական փառասիրության արդյունք է¹¹⁴, որքան պատմաքաղաքական այն իրադարձության հետևանք, ինչի մասին փաստել է դեռևս Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը. «Այս նույն ժամանակներում, **(*սծբ*¹¹⁵)** չորս հարյուր հիսուներկու թվականին, Փառիսոսի իշխանները, որոնք ծագումով Հայկազյան զարմից էին, մահացան եւ իսպառ վերացան՝ գոյապետելով մինչևեւ Սենեքերիմն ու Գուրգենը: Նրանց երկիրն էլ հակառակությամբ իրենց մեջ բաժանեցին Հայոց արքա Գագիկն ու Գանձակի Փալլոուն ամիրան»¹¹⁶:

Սա նշանակում է, որ դեռևս հայոց 452 թ. (= 1003/04 թթ.) երկու մասի էր բաժանված Փառիսոսը, որոնցից մեկը Փալտունը միացրել էր Գանձակին, որը, բնականաբար, կորցրել էր վարչական ինքնուրույնությունը, սակայն պահպանել ավանդական անվանումը: Եվ քանի որ Փալտունի նստավայրը եղել է Գանձակը, ապա նրա ողջ տիրույթը կարող էր Գանձակ աշխարհ¹¹⁷ կոչվել: Այդ իսկ պատճառով էլ Կիրակոսը Սարկավագին համարում է իր՝ Գանձակ¹¹⁸ աշխարհից, մանավանդ որ նույնիսկ ինքը՝ Կիրակոսը, Գանձակ քաղաքից չէր:

Կիրակոս Գանձակեցու Հայոց պատմության Առաջաբանում Կիրակոսի կապակցությամբ Կ. Մելիք-Օհանջանյանն¹¹⁹ անդրադառնում է նաև Սարկավագի փառիսոսցի լինելուն կամ ծննդավայրին: Եվ պարզաբանում,

¹¹³ Մ. Չամչյան, Պատմություն Հայոց, հ. 2, Վենետիկ, 1785, էջ 889-996:

¹¹⁴ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 446:

¹¹⁵ ՆԾԲ (462) = 1003/04 թթ. (551/552 + 462):

¹¹⁶ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, Եր., 2000, էջ 345:

¹¹⁷ Մ. Աբեղյանը այլ կարծիքի է այս հարցում, այն է՝ «... Ոչ Արցախը և ոչ իսկ Փառիսոս գավառը չէին կարող կոչվել «աշխարհ Գանձակայ», որ է Գանձակ քաղաքի շուրջն եղած գավառները (Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 446):

¹¹⁸ Հ. Ոսկյանն առանց հիմնավորման նույնացնում է Գանձակը Արցախի հետ, որի մի գավառն էլ համարում Փառիսոսը: (Հ. Ոսկյան, Հովհաննես Սարկավագի կյանքը, էջ 28, ծան.):

¹¹⁹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ Զ-Ը:

որ «յաշխարհէն Գանձակայ» միանգամայն չի նշանակում Գանձակ քաղաքից, որտեղից չէր նաև Կիրակոս Գանձակեցին: Այլ երկուսի ծննդավայրն էլ, ինչպես Թորակերի որդի Գրիգորինն ու Ալավկա որդի Դավթինը, Փառիսոսն է:

Ծնվելով ու նախնական կրթությունն ստանալով Փառիսոսում՝ հետո Հովհաննեսը տեղափոխվել է Հաղբատ և ապրել ու դաստիարակվել քեռու մոտ: Նա «յարենէ» և «յարգանդէ» եղել է քահանայական ընտանիքից: Հայրը ևս կարող էր ամուսնացյալ քահանա եղած լինել¹²⁰: Իսկ մայրական կողմից էլ, փաստորեն, քեռին էր Հաղբատի միաբանության սրբասնունդ հոգևորական, այլապես Հաղբատում նրա մոտ դաստիարակվելը կմնար անհասկանալի:

Ծնողների մասին «Նորին (Յովաննու) ամբաստանութիւն զանձնէ»¹²¹ արձակ բանաստեղծության մեջ հիշատակում է նաև ինքը՝ բանաստեղծը, իբրև բարեպաշտ և իմաստուն մարդկանց. «Ի նախնեաց բարեպաշտից և յիմաստուն ծնողաց բուսեալ,որք սնուցին զիս օրինաւք հոգւոյն կենաց.....»¹²²:

Վարքում կարևորենք մի արտահայտություն ևս՝ «**բստ սրբոյն Սամուէլի**¹²³ **կուսության նվիրյալ էր**», ինչը բացառում է, որ նա ունեցել է զավակ (Ստեփանոս երեց տոմարագետ), ինչպես փորձել է ներկայացնել Ա. Աբրահամյանը¹²⁴, հիմնվելով այն փաստի վրա, որ նրա ստեղծագործություններից շատերի վրա նշվում է Հովհաննես քահանա, իսկ Մարկոս գրիչը վկայում է. «...գրեցի փանաք գրով՝ յընտիր և յազնիւ արիւնակէ, զոր Սարկուազ քահանայ¹²⁵, սպասաւոր սուրբ Կաթողիկէի Մեծի՝ որ յԱնի», և ինքն էլ քահանայական ընտանիքից էր¹²⁶:

Սակայն չպետք է մոռանալ, որ քահանան կարող էր լինել և՛ կուսակրոն, և՛ ամուսնացյալ: Իսկ վարքագիրը հստակորեն գրում է՝ «կուսության նվիրյալ էր» Սամուել մարգարեի նման: «Բան իամաստութեան...» բանաստեղծության մեջ ևս կան տողեր, որոնք խոսում են հեղինակի աշխարհիկ կյանքից

¹²⁰ Տե՛ս նաև **Հ. Ոսկեան**, Հովհաննես Սարկավագի կյանքը, էջ 28:

¹²¹ Ա. Աբրահամյանն այն հրատարակել է Երևանի մատենադարանի 7 հմր (6 հմր) ձեռագիր աղոթամատյանից, որը գրվել է ՔԲ-ը (Քրիստոսատուր) 1111 թվին Ծիծռան քար անապատում (**Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 128):

¹²² Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Սարկուագին ..., **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 127:

¹²³ **ՍԱՄՈՒԷԼ**-Հին կուսակարանի մարգարե՝ «Ի ծննդենէ ձօնեալ Աստուծոյ և նուիրեալ յուխտավորութիւն, սկսաւ ընդունել աստուածուստ պատգամ՝ ի տղայութեան իսկ.....» (Աստվածաշնչի բառարան, Մ.-Եր., 1992, էջ 482):

¹²⁴ **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 28-29:

¹²⁵ Այս Սարկավագ քահանան ամենևին էլ Հովհաննես Սարկավագը չէ, այլ 1195 թվականին «ի բազմաց օրինակաց, ի ձեռն և այլոց գիտնականաց զօգտակարսն առաւել հաւաքեաց ի մի դիր» կատարողը և իր ձեռքով գրողը, ով կարող էր լինել Սամուել Անեցու որդին:

¹²⁶ **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 27:

հեռացած լինելու մասին: Ըստ այդ բանաստեղծության՝ նա արդեն վարդապետ է, գտնվում է անապատում և կրում է մաշկեկ վերարկու, որը դիտում է իբրև ապացույց «մեռելության»¹²⁷ և իրեն «համունակ»՝ նույնօրինակ:

Այս ամենից բացի՝ հայ եկեղեցական պատմության մեջ վարդապետն ամենից առաջ **քահանայական ձեռնադրություն ունեցող վանական** է կա՛մ «Ցարդ մեր առաջ բերած բոլոր աղբյուրներուն մեջ վարդապետը վանական եկեղեցականն է»¹²⁸, իսկ «Մաշտոց» ծիսամատյանում բազմիցս է հիշատակվում, որ վարդապետական աստիճանը պատկանում է միայն կուսակրոններին¹²⁹: Հետևապես՝ նրա կուսակրոնությունն այլևս երկմտելու տեղիք չի տալիս. նա ամուսնացյալ քահանա չի եղել:

Հովհաննես Սարկավագն առավելապես ճանաչված է իբրև Հովհաննես Սարկավագ մականունով *վարդապետ*: Իր երկերի վերնագրերի վերագրումներում Հովհաննեսի անվան հետ հանդիպում են ինչպես Սարկավագ, այնպես էլ՝ քահանա, վարդապետ բնութագրումները, որոնք, մեր կարծիքով, ցույց են տալիս նրա հոգևոր զարգացման աստիճանները միայն, այն է՝ սարկավագ-վարդապետից մինչև կուսակրոն եկեղեցական՝ քահանա-վարդապետ: Ինչպես կրոնական տարբեր աստիճաններ՝ հայրապետ, տերտեր, տիրացու, քահանա, վարդապետ, ժամանակի ընթացքում դարձել են անձնանուններ՝ այդպես էլ նույն՝ սարկավագ հասարակ անունից առաջացել է Սարկավագ անձնանունը¹³⁰: Հովհաննեսը Սարկավագ մականունը կարող էր ստացած լինել քահանայական ձեռնադրության ժամանակ:

Շարունակենք Վարքի քննությունը: Երբ քեռին նրա մեջ հայտնաբերում է «թաքնված գանձերը», նրան «ավանդում», «հանձնարարում» է Ուռձացի վարդապետին՝ «Յառաջագոյն Կրուա ի վարժս երաժշտական հոգևոր ունանց և սպա յերևման մեծին ի նմա ծածկելոյ գանձին, աւանդեցաւ և յանձնարարաւ ի քեռոյն իւրմէ Ուռձացի վարդապետին»¹³¹: Թեև այստեղից Ա. Աբրահամյանը եզրակացրել է, որ Ուռձացի վարդապետն¹³² է Սարկավագի քեռին,

¹²⁷ Մեռելություն բառն այստեղ պետք է հասկանալ աշխարհիկ կյանքից մեկուսացած, աշխարհիկի համար մեռած և մարդկային ցանկություններից զերծ լինելը:

¹²⁸ **Բ. ծ. վրդ. Կիլէսէրեան**, Վարդապետութեան աստիճանները Հայ եկեղեցւոյ մէջ, Անթիլիաս, 1980, էջ 70:

¹²⁹ **Հ. Տաճատ ծ. վրդ. Եարտըմեան**, «Վարդապետը» հայ եկեղեցական մտածողության մեջ, Վենետիկ, 2001, էջ 15:

¹³⁰ **Հր. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Եր., 1948, էջ 462: ԵՊՀ հր., էջ 683: Հ. Աճառյանը Սարկավագ անվան համար բերել է 21 օրինակ, որոնցից շատերում այն զուգադրված է կա՛մ որևէ հատուկ անվան, կա՛մ տարբեր հոգևոր աստիճանի (Սարկաւագ Սոփեստոս՝ Յովհաննէս Սարկաւագ, Սարկաւագ քորեպիսկոպոս Ստեփանոս, Սարկաւագ քահանա, Սարկաւագ վարդապետ ևն: Սարկավագի հետ հիշատակվում է նաև երկրորդ անունը՝ Յովհաննէս, Ստեփանոս, կա՛մ էլ հոգևոր աստիճանը՝ քահանա, վարդապետ, արեղա, կա՛մ մասնագիտությունը՝ ուսուցիչ, գրիչ, ինչը վկայում է, որ Սարկաւագն այս դեպքերում արդեն հատուկ անուն է, և այն իբրև եկեղեցական աստիճանակարգության «միավոր» դիտել չի կարելի:

¹³¹ Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Սարկաւագին ..., **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 119:

¹³² **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 23:

բայց այս տեղեկությունը պետք է հասկանալ, որ քեռին Հովհաննեսի ուսուցումը հանձնարարել է Ուռձացի վարդապետին¹³³, և ոչ թե ինքն է եղել այդ վարդապետը:

Ուռձացի վարդապետը Գեորգ Ուռձացին է՝ 11-րդ դարի նշանավոր գիտնական վարդապետ և երաժիշտ¹³⁴ (մահը՝ 1093/94 թթ.), ում Ղ. Ալիշանը կոչում է Թառիճեցի կամ Թառճեցի, իսկ Ազգապատումում նույնացվել է Գեորգ Ուծեցու հետ: Սակայն Գեորգ Ուծեցին 12-րդ դարի նշանավոր վարդապետներից էր¹³⁵, իսկ Հովհաննես Սարկավագի կյանքի միայն վերջին 29-30 տարին է համընկնում 12-րդ դարին, և վստահաբար կարելի է ասել, թե այդ ժամանակ արդեն Հովհաննես Սարկավագն ինքն էր հռչակավոր վարդապետ, ու բացառել՝ այդ երկու անվանումները միևնույն մարդուն են վերաբերում, կամ պետք է փոխել վերջինիս ժամանակը, այն է՝ 11-րդ դարով:

Քանի որ Ուրձ, Ուռձ կամ Ուծ անվանյալ տեղանուն գտնելու մեր փնտրտուքը ոչ մի արդյունք չտվեց, կարելի է ենթադրել, որ Ուռձացի բառաձևը հայերենին բնորոշ ծ > ճ հնչյունափոխության արդյունք է. այն նախապես եղել է Ուրծեցի, որը հնչյունափոխվելով կամ գրչական սխալի հետևանքով է դարձել մեզ հասած բառաձևերը:

Ուռձացի Գեորգի մասին տեղեկանում ենք Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրությունից. «Դարձեալ յայսմ ամի (հայոց 542 թվ. = 23-փետրվար 1093-25 փետրվար 1094 թթ.) մեռանէր վարդապետն Հայոց Գեորգ՝ որ կոչեցաւ Ուռձացի, որ էր լուսավորիչ Կրիստոս Հայոց և աղբիւր մշտնջենարողիս վաստակաց և լեզու հրեղէն հրովն ներկեալ. սա ուսմամբ և աստուածային շնորհօքն էր հասասարեալ գիտութեամբն իւրով առաջին աստուածախօս սուրբ վարդապետացն Յունաց՝ Գրիգորի Աստուածաբանի ասեմ և Յովհան Ոսկեբերանի, Բարսղի և այլ նմանեաց նոցա, սա սքանչելի վարուք կարարեաց զընթացս իւր, և էր ամաց հարիւրից, և թաղեցալ ի մեծ անապարն Կամրջաձոր, մօտ ի գերեզմանն Սամուէլի վարդապետին և Խաչկայ, որ էր երաժիշտ ի վերայ ձայնատր եղանակաց. և եղև սուգ ի վերայ ամենայն երկիւղածան Աստուծոյ, զի զրկեալ եղէն յայնպիսի լուսատր վարդապետէն»¹³⁶:

Բնական բացառիկ ընդունակություններով օժտված երեխան այս լուսավոր վարդապետի ուսուցչությամբ է, որ կարող է լիովին դրսևորել ու զարգացնել իր բնատուր ձիրքերը: Բնականաբար, Գեորգ Ուռձացին ոչ մի ջանք չի խնայել իր աշխատասեր ու ուշիմ աշակերտից արժանի հետևորդ պատրաստելու, նրան ևս դարձնելով «երաժիշտ ի վերայ ձայնատր եղանա-

¹³³ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, էջ 8, տողատակ**:

¹³⁴ Տե՛ս նույն տեղում, ինչպես և Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Եր., 1942, հ. Ա, էջ 461:

¹³⁵ Տե՛ս Հ. Աճառյան, նույն տեղում, էջ 461:

¹³⁶ Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 262:

կաց», ով հետագայում փաստորեն ոչ միայն ոչնչով չի զիջում իր ուսուցչին¹³⁷, այլև գերազանցում է:

Կենսագրի անորոշ ասած «թաքնված գանձեր» արտահայտությունը միայն այս դեպքում է ստանում որոշակիություն, երբ նա իր կրթությունը շարունակում է երաժիշտ, գիտնական, լուսավորչալ վարդապետի մոտ, առաջին հերթին՝ երաժշտական բացառիկ կարողություններ, որոնք հետագայում պիտի դրսևորվեին շարականների և հոգևոր երաժշտության այլ ժանրերում, ապա՝ գիտական՝ մաթեմատիկայի, տոմարի, պատմագրության, աստվածաբանության, փիլիսոփայության և այլ բնագավառներում:

Ն. Թահմիզյանը, շատ բարձր գնահատելով Սարկավագին իբրև երաժիշտ, նրան համարում է «պաշտոներգության նորոգման և երգաստեղծության նոր ճաշակի կերտող»¹³⁸, ով հսկել ու հետևել է ամենօրյա ժամերգություններին ու պատարագին¹³⁹, ում «երաժշտական-բանաստեղծական կոթողները հարստացնում են մեր պատկերացումները՝ Անիից դեպի Կիլիկիա անցումն իրագործած արվեստի յուրահատկությունների մասին»¹⁴⁰:

Հովհաննեսը դեռևս մանուկ հասակից, ապա տարիքի փոփոխությանը զուգընթաց, գիտելիքներով գերազանցել է իր հասակակիցներին. «*Եւ ի տղայական տիղոց անտի եցոյց զանհաւասարութիւն առ նմանիս իւր: Եւ ամենայն փոփոխման հասակաց գերազանցեալ գտաւ առ հասակակիցսն յառաջարկութեամբ աստուորական, արտաքոյ զբոսանաց և ընդ վայրայած տղայական խաղոց, պարտացեալ պէտս արտաքին մարդոյն՝ տնտեսաբար յարդարելով ի պիտանութիւն ներքին մաքրութեանն*»¹⁴¹:

Հովհաննեսը դեռ մանուկ հասակից, ամեն բան ծառայեցնելով իր ներքին մաքրությանը, այն ամենին, ինչը «վայրաքարշ» էր ու «երկրային», «մնաս բարով» էր ասել, «մոլել ողջախոհ մի մոլությանը»¹⁴², այն է՝ «*սրբության սիրով ու իմաստության խոկմամբ, որ քաղցրացնում ու համեղացնում էին իր քիմքը*»: Նա հաղթահարել էր մարդկային ցանկությունները, դարձել չափազանց սակավապետ, բազում օրեր առանձնացել լեռների այր-գրադարաններում՝ կարդալու և ուսանելու համար, ինչի շնորհիվ քիչ-քիչ առաջադիմել ու ժամանակից շուտ էր սկսել վարդապետներից լսել մեկնություններ ու խորին

¹³⁷ Հմմտ՝ Ուռհայեցու՝ Գեորգ Ուռձացուն և Կիրակոս Գանձակեցու՝ Հովհաննես Սարկավագին տրված բնութագրումները:

¹³⁸ Ն. Թահմիզյան, Հովհաննես Սարկավագ Իմաստասերը և հայ միջնադարյան երաժշտական մշակույթը, Բազմավէպ, 1978, թիվ 3-4, էջ 339:

¹³⁹ Նույն տեղում, էջ 341:

¹⁴⁰ Նույն տեղում, էջ 355:

¹⁴¹ Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Սարկաւագին ..., Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 119:

¹⁴² Հեղինակը Դավիթ Անհաղթի բառերով է բնութագրում Հովհաննեսին (տե՛ս Գ. Անհաղթ, Երկեր, Եր., 1980, էջ 35), ինչը միաժամանակ վկայում է մեզ հասած անանուն հեղինակի (Հ. Միրզոյանի բացահայտմամբ՝ Հովհաննես Սարկավագի)՝ «Լուծմունք Սահմանաց գրոց»-ին, ինչպես նաև՝ Դավիթ Անհաղթի «Փիլիսոփայության սահմանումները» երկին ծանոթ լինելու մասին:

առակներ: Եվ ուսման հանդեպ սաստիկ սիրո ու ցանկության պատճառով էր, որ ութ օր փակվել էր այր-գրադարանում՝ բավարարվելով միայն հոգևոր սննդով՝ ընթերցանությամբ: Ուսմանն անսահման նվիրվածության ու մոլեռանդ ընթերցասիրության ու աշխատասիրության մասին հրաշալի վկայություն է ավանդագրույցներից մեկը, որ հաղորդում է. «... *զի այնպէս փոյթ էր այրն յուսումն, զի պարահեաց յաւուր գնալ նմա յայրն, ուր գրեանն էին, և այլք ընդ նմա. իբրև ելին՝ որ ընդ նմայն էին, և փակեցին զդուռն, նա թաքոյց զանձն ի ներքս, յայսպէս զհրելով նոցա եթէ նախ ել նա: Իբրև անցին աւուրք բազումք ի վերայ դարձեալ գնացին յայրն ի պէտքս ինչ, տեսին զնա և սքանչացան. հարցանէին զնա՝ թէ ո՞րպէս ապրեցար առանց կերակրոյ և ըմպելոյ. և նա եցոյց նոցա զգրեանն, զոր ընթերցեալ էր. և այս է, ասէ, իմ կերակուր և ըմպելի, զոր կերայ և արբի զաւուրս զայսոսիկ»¹⁴³:*

11-12-րդ դարի հայ մանկավարժությունը կարելի է բնութագրել որպես անտիկ ու հելլենիստական գիտական ու մանկավարժական մտքի ձեռքբերումներով սնված ու հարստացած իրողություն¹⁴⁴: Հետևաբար, Հաղբատի հոգևոր դպրոցում, որտեղ դասավանդել է Գեորգ Ուռձացին, ուսուցումն իրականացվել է եռաստիճան կարգով, իսկ դասավանդման հիմքում եռյակ ու քառյակ գիտություններն էին, ինչպես արմատավորել էր Գրիգոր Մագիստրոսը: Դեռևս իր Թղթերում Գր. Մագիստրոսը, անդրադառնալով Արիստոտել ուսուցանելու հարցին, գտնում է. «...Նախ պարտ է զքերականութիւնն հանդերձ թարգմանութեամբն ուսանել տիրապէս մակստացականութեամբ, և զկնի այսր զհռետորականն երիւք հանդիսիւք անսխալ տրուհութեամբ, և ապա զսահմանացն պարունակել և պղատոնական և արիստոտելական և դարձեալ պիթագորական կարակնակերտութեանն բացորոշմանց և դատողութեանց. նախուստ քան զայսոսիկ կրթեցելովք ներկուռ վերածնութեամբ զՀին և զՆոր Կտակարանս, և առասպելավարժութիւնս ի բազում և զանազան տեղիս զետեղեալ զորքանութեամբ արտայայտել հաւանիմք...»¹⁴⁵:

Հետևում է, որ Սարկավագը ևս նախապես հմտացել է Հին և Նոր կտակարանների և առասպելների իմացության մեջ, ապա սովորել քառյակ գիտությունները՝ թվաբանություն, երաժշտություն, երկրաչափություն, աստղաբաշխություն, ապա անցնել եռյակ գիտություններին՝ քերականություն, դիալեկտիկա, հռետորական արվեստ, որից հետո միայն կարող էին զբաղվել աստվածաբանությամբ: Կամ հակիրճ՝ նախ սովորել է Աստվածաշունչն ու

¹⁴³ **Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 107-108:

¹⁴⁴ **Մ.-Է. Շիրինյան**, Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը (հայկական և հունական դասական ու բյուզանդական աղբյուրների բաղդատությամբ), Եր., 2005:

¹⁴⁵ **Ս. Մխիթարյան**, Գր. Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Եր., 2001, էջ 25:

բնական գիտությունները, ապա տեսական, իսկ այնտեղից աստվածաբանական. «...Պարտ է նախ ի բնաբանականն յուսումնականն ամբառնալ և անտուստ աստուածաբանականն»¹⁴⁶:

Վարքագրի տեղեկություններից մեկը խոսում է ոչ միայն այն մասին, որ նույն կրթական համակարգով դասավանդել է նաև ինքը՝ Հովհաննես Մարկավագը, այլև պատկերացում տալիս նրա մանկավարժական գործունեության, դպրոցի ու ուսուցման մեթոդների մասին. «Շուրջ բակ բոլորեալ զմանկունս զիրեալ՝ խոնարհաբար և ախորժելի սիրով ուսուցանէր **գիրթին և գիրթին իրս**: Նախ՝ **գրեթականութին**, զբանալին գիտութեան և զդաստիարակն վերծանութեան, և զաղբերն փասնեակ առոգանութեանց, յորմէ և որով փրոհին միքք և ճանաչին ոյնք քաջացն, և հեշտանան լսելիք ունկնդրացն, փեղեկանան ...: Որոյ զկնի կրթէր, արկանէր ի գիրս **նորբս և դժուարալորս**, և ըստ առոգանութեանց խրատու ի վար արկեալ պատրաստաբար խուզելով զմիտս, և զբախն և զբառս, առելով համարս, ստուգիվ պահանջէր: Յեք այսորիկ ի **խոյզ և ի քնին ընթացից լուսավորացոյ մտեալ, փալ գումարել ի միատեսակ և յանստերիւր թիւս փոմարի, զուշ և զակն ոգոյ**: Եւ փեղեակ առնէր փոնից կարգաւորաց, և փոփոխմանց ամսոց և ամանակաց, և եղանակաց քառաբաժին փարսպմամբ: Եւ որ ինչ ի **քառեակս և ի բոլորիս** եղեալ են երկասիրացն կաճառք, զպիտանիս և զարդիւնարար իրս, ի **նրհանջաւոր յառաջդիմեցմունս և զեղեղաւոր անշարժ կառուցմունս**: Եւ ի շրջընթաց իւրակի կողսն՝ ինն և փասնեակաց, և քան և ութեակ բոլորապարտ պարունակաց, զառակախաւս բանս Արիստոտելի, և զթուականաչափ խորոցս Փիլոնի... Յայստսիկ և ի սոցին ազգական իրաց կրթարանս, մղէր, կրթէր զամանս իրաց, զքսակ մտաց մանկանց, մարզիչ և մաքրիչ և հալիչ՝ լավին և վատթարին պատրաստելով»¹⁴⁷:

Ինչպես տեսնում ենք, առանձնակի ուշադրություն է դարձվել աստղագիտությանը, թվաբանությանը, տոմարին ու տոնացույցին, փիլիսոփայությանը ևլն:

Ավելացնենք՝ ուսուցման կարգերից էին հլու-հնազանդությունն իրենց վարդապետին, սաների մեջ ունկնդրելու, մտածելու (մտքում և Աստծու հետ խոսելու) կարողությունների մշակումը, ինչպես ցույց է տալիս վարքագրի բերած Երեմիա Անձրևի օրինակը. «Եվ անչափ հլութիւն և հնազանդութիւն ունէր առ վարդապետն իւր, մինչ զի վասն դոյզն մի քանի առ նմա սաստելոյ և ասելոյ՝ «Լուռ լեր» զամս երիս լռեալ կայր ափիքերան, ընդ միտս և ընդ սստուծոյ խաւսելով խոնարհաբար՝ ունկնդրութեան պարսպելով»¹⁴⁸:

¹⁴⁶ **Գրիգոր Մագիստրոսի** Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 8:

¹⁴⁷ Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Մարկաագին..., **Ա. Արքահամյան**, նշվ. աշխ., էջ 121:

¹⁴⁸ Նույն տեղում:

Հեղինակը լռելու իմաստով օգտագործել է «ափիբերան» բառը, որը ոչ միայն ուղղակի նշանակությունն է դրա, այլև հիշեցնում է հելլենիստական Աթենքի փիլիսոփայական դպրոցների սաների կեցվածքը՝ աջ ձեռքը սրտին, ձախը՝ ծնոտին և հայացքը՝ ոտքերի ծայրին:

Նշենք, որ դեռևս 5-րդ դարում, ըստ Եղիշեի «Յաղագս միանձանց» երկի տեղեկության. «5 Մանաւանդ ի պարս շրջագայ անդադար պաշտամանն՝ երգս հոգևորս հաւրն բոլորեցուն մատուցանեն զուարթ հոգւով: 6 Կան ընդդէմ միմեանց զաչս ի վայր արկեալ՝ զծայրս ոտից մատանցն նկատելով, իբր թէ մի կէտ տեսակի ամենեքեան հայեացին. զաջ ձեռն ի վերայ ծնաւտին եղեալ եւ զահեակն ի վերայ կրծիցն, որպէս կարծեմ ուսեալ ի բնական հարցն»¹⁴⁹, այն նկատվում է իբրև ճգնակյաց հայրերի սաներին պատշաճող կեցվածք:

Նշանակում է, որ հայ միջնադարյան վարդապետարաններն ընդօրինակել են հելլենիստական դպրոցների ուսուցման ոչ միայն բովանդակությունը, այլև ձևը¹⁵⁰:

Հասկանալի է, որ գիտելիքների անհագուրդ ամբարումը մի տեսակ ինքնաբավ ու ինքնանպատակ կարող էր դառնալ, եթե Սարկավագը չզբաղվեր վարդապետությամբ ու գրական գործունեությամբ, ինչպես գրում է նաև «Բան իմաստութեան... առ ձագն...» բանաստեղծության մեջ՝ դիմելով սարեկին. «... ըստացիր զիս աշակերտ. Զի հատուցից քեզ **փոխարեն ընդ ուսելոյ իմաստութեանն... թողից զկնի** անապական ներբողեան, յորդորականս... **յորմէ օգտին իմաստնացեալքն**»¹⁵¹:

Ապա վարքագիրը Հովհաննես Սարկավագին ներկայացնում է իբրև մարդկային կատարելություն. «Սա ի մանկական անտի տիոց, մինչև ցվերջին որոշումն հոգւոյն, յերկրորդէն ո՛չ երբէք շեղեալ սայթաքեցոյց երբէք զուշ ոգւոյն ի նպատակէ՝ ընթերցման, ուսանելոյ և ուսուցանելոյ, գրելոյ և ընթերնելոյ, հսկելոյ և աղաթելոյ՝ զտիւ և զգիշեր, արտաքոյ ամենայն զբաղանաց և վայրաքարշ իրաց: Էր և բարեւոլողէլ՝ վ – Գ. Ս. յարոյ, քաղցրահայեաց և զուարթարեսիլ, պարկեշտագնաց և համեղախաւս, առ մեղուցեալս գրթած և առ ծանրաբերոցնս իմաստուն բժիշկ: Այնչափ համբաւեալ ի բարիս, մինչ զի ի դրոշոյթ տուեալ ի բացագոյն սահմանաց՝ առնուլ սպեղանիս ըստ իւրաքանչիւր խրդիսայթեալ վիրի»¹⁵²:

Թեև վարքագիրը, ելնելով իր երկի առանձնահատկությունից, աշխատում է սրբի լուսապսակով զարդարել Հովհաննես Սարկավագին, սակայն

¹⁴⁹ Եղիշէ, Բան խրատու յաղագս միանձանց, Մատենագիրք հայոց, Ա հատոր, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 931-935:

¹⁵⁰ Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Սարկաւագին..., Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 121:

¹⁵¹ Բան իմաստութեան..., Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 320:

¹⁵² Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Սարկաւագին ..., Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 120:

նրա բանաստեղծություններում առկա են տողեր, որ հուշում են, թե Սարկավագը երիտասարդ տարիքում «տհասութեան»¹⁵³ պատճառով ունեցել է նաև որոշ մոլորություններ՝ հետևել «չար ու վատաբարո ուսմունքների», «անօրինություն գործել» կամ «օտարացել» և այլն: «Նորին (Յովաննու) ամբաստանութիւն զանձնէ» արձակ բանաստեղծության մեջ նա գրում է. «Ո՛վ անգգայութեան, ինչ մոլորութեան իմոյ բարութ. ո՛չ անգիտութեամբ ինչ գայթակղեալ սխալեցի, և ո՛չ խաբեալ յումեքէ ըստ որում յոլովք մոլորեցան. ի նախնեաց բարեպաշտից և յիմաստուն ծնողաց բուսեալ, **ձեռայդէմ գործեցի....** Եւ **հանդիպեցաւ այլ ընդ այլոյ չար ուսմանցս և վատաբարոյից ընդունելութեամբ և յարութեամբ խեղկեալ գնոյն մակստաբանութիւն**, քանզի ընդ սուրբս ի մանկութենէ կենցաղավարեալ զարգանայի: **Եւ արդ ընդէ՛ր պատահեաց ինձ անարիւնութիւնք գործուց**»¹⁵⁴: Իսկ «Առ Սարգիս. Ողբք»¹⁵⁵–ում հստակորեն արտացոլված են տհասության պատճառով մեղանշած մարդու՝ ախտահարվածի հոգեկան տառապանքները, իր սխալների խորը, ցավագին ըմբռնումն ու ինչ–որ ժամանակով ձջմարիտ ուսմունքից հեռացածի ողբերգությունն ու ներման սպասումը¹⁵⁶:

Գուցեն առժամանակ կորցրե՞լ է հավատը Տիրոջ հանդեպ, *ճոխանալով «դիրապարեհ փարթանութիւնէն»՝ աղքատացե՞լ է Աստու որդուց*¹⁵⁷:

Միգուցե այդ է պատճառը, որ հետագայում նա պետք է խրատեր իր սաներին. «Արդ՝ զգոյշ լե՛ր մանուկ դու ուսումնասէր, քանզի ամենայն ուսումնութիւն, նուազ և անարգ է առանց երկիւղի աստուծոյ»¹⁵⁸:

Գուցե թե երիտասարդ տարիների այդ «տհասության» արձագանքն է սպրդել վարքագրի մոտ, երբ գրում է. «*Է և այլ ինչ յոլով սքանչելիք առնն աստուծոյ, զոր դանդաղեցի գրել և պարերազմ առնել լսելեաց, մանավանդ զի մախացող է ազգս և անգոսնող*»¹⁵⁹, կամ Կիրակոս Գանձակեցու մոտ. «...և բազում քրթմնջին էր վասն այնորիկ, որպէս թէ անաժան էր, և նա **կաշառս էառ** և եմոյծ զնա յեկեղեցի....»¹⁶⁰:

Կարելի է ենթադրել, որ Սարկավագը որոշ ժամանակ զրկվել է նաև իր զբաղմունքից կամ ծառայությունից և վերստին ստացել այն, ինչի մասին կա հենց իր վկայությունը. «Աւա՛ղ գործոյս՝ որոյ **վերստին ստացումն** յետ ավագանին գեղեցկագործութեանն ոչ է այժմ»¹⁶¹:

¹⁵³ Նորին (Յովաննու) Ամբաստանութիւն զանձնէ, **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 127:

¹⁵⁴ Նույն տեղում, էջ 127:

¹⁵⁵ Առ Սարգիս. Ողբք, **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 325–326:

¹⁵⁶ Այս երկու գործերին կանդրադառնանք իրենց տեղում:

¹⁵⁷ Նորին (Յովհաննու) Ամբաստանութիւն զանձնէ, **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 127:

¹⁵⁸ Յաղագս ըստ հռոմոց ամսոց, և ԴԺ–երորդ լուսնոյ զատկաց, և փոփոխմանց իրաց, և անուանց և յարակայից, **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 250:

¹⁵⁹ Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Սարկաւագին...., **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 123:

¹⁶⁰ **Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 106:

¹⁶¹ Նորին (Յովհաննու) Ամբաստանութիւն զանձնէ, **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 127:

Մակայն, այս ամենով հանդերձ, որն առավել է ընդգծում նրա անգու- գականությունն ու անփոխարինելիությունը Հայ առաքելական ս. եկեղեցու ու հայոց մշակույթի պատմության համար, ի վերջո, ըստ Վարքի, Հովհաննես Սարկավագը ձեռք է բերել սրբակենցաղ, համեղաբան իմաստունի համբավ, ում շուրջն են հավաքվել նույնիսկ ժամանակի «իմաստության գանձի վաճառականները»՝ լուսավորելու իրենց մտքի աչքը, ցնծալու և հարստանալու նրա պարզևած «գանձերով»։ Նա իր թե՛ բանավոր խոսքով, թե՛ աշխատա- ջան երկերով կարողանում է վերակենդանացնել տգիտության, ծուլության ու խավարամտության հետևանքով նսեմացած ու խամրած գիտությունները։

Հովհաննես Սարկավագի գործունեության շրջանում մեծ զարգացում է ապրել Հաղբատի գրչության կենտրոնը։ Սարկավագը գտնում էր թարգմանա- չագիր հին ձեռագրեր, սրբագրում, լրացնում և ընդօրինակում, որոնց արդ- յունքում հաջորդ սերունդներին են ավանդվում Սաղմոսարանի ու Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկի ձգգրիտ օրինակները¹⁶²։ Գրել է նաև բնագրագիտական բնույթի աշխատություններ՝ «Տեառն Յոհաննիսի արարեալ ծաղկաքաղ համարագիրս Սաղմոսի ի խնդրոյ Թէոփիլոսի աշա- կերտի» կամ «Բացատրութիւն սաղմոսաց»¹⁶³։

Եվ նրա թողած գրական ժառանգությունն է պատճառը, որ ժամանակի մեջ հիշվել է իբրև ամենակարկառուն դեմքերից մեկը՝ աստվածաբան, տոմարագետ, պատմաբան, սոփեստոս-պոետիկոս, Հայ առաքելական ս. եկեղեցու սյուներից մեկը, ով իր մահից հետո անմիջապես դասվեց սրբերի կարգը, և նրա վարքն ու հիշատակի օրը փետրվարի 11 ամսաթվով (Եպիփ. Կիպր. 68. Որոտ. Պօղ. 89)¹⁶⁴ անցան Յայսմաուրք ժողովածու, ում մասին ժամանա- կակիցներն ու հետագա պատմիչները չեն խնայել գովաբանական մակդիր- ներ ու համեմատություններ՝ «իմաստասէրն աստուածային»¹⁶⁵, «վարդա- պետն մեծ»¹⁶⁶, «...որոյ յիշատակք ճառագայթիցն փայլին մինչև ցարդ ի բանս իւր և ի նմանէ աշակերտեալսն»¹⁶⁷, «...մեծիմաստն գիտութեամբ քան զյովս և հանձարեղն յամենայնի, իմաստուն..., որպես Գրիգոր Աստուածաբան, շնորհօք զարդարեալ...»¹⁶⁸ ևն։

Նրա գործունեությունն ու երկերը եղել են բազմաբնույթ՝ «Յամենայն դէմս բանի և գործոյ, տեսութեան և յառաջբերութեան, գրելոյ և ընթեռնելոյ, պատմագրութեան և վարդապետական վերլուծութեան, մարգարէականին և

¹⁶² Գ. Թերգյան, Հաղբատի գրչության կենտրոնը, Բանբեր Մատենադարանի, № 26, 2018, էջ 138։

¹⁶³ Հ. Քյոսեյան, Ներածություն..., էջ 339։

¹⁶⁴ Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 572։

¹⁶⁵ Պատմության հատվածը Սամուել Անեցուց, Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 129։

¹⁶⁶ Ս. Անեցի, նշվ. աշխ., էջ 129։

¹⁶⁷ Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Երևան, 2001, ԵՊՀ, հրատ., էջ 125։

¹⁶⁸ Պատմութիւն հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, Թիֆլիս, 1910, էջ 104։

առաքելականին այնպէս կատարելագոյն գրաւ, որպէս ոչ որ ի մինն միայն համբաւեալ՝ կամ ի գործս, կամ արդիւնս»¹⁶⁹:

Հովհաննէս Սարկավագի, նրա գործունեության ու ստեղծագործությունների մասին որոշակիորեն հաղորդում է նաև Կիրակոս Գանձակեցին¹⁷⁰: Ըստ Կիրակոս Գանձակեցու տեղեկությունների՝ Հովհաննէս Սարկավագն այսպիսին է՝ «գիտութեամբ շատերից մեծիմաստ ու ամենահանձարեղ», «մտահարուստ», «բազմաց փափագելի»: Նա բազմաթիվ երկեր է ստեղծել, շատերի համար ոչ ձեռնհաս գործն է իրականացրել՝ կատարելով տոմարական բարեփոխություն. Հայոց շարժական և անհաստատ տոմարի փոխարեն կարգել է անշարժ տոմարը, Սարկավագը Հայոց տոմարի հետ միաբանել է բոլոր ազգերի տոմարները (խոսքը նրա տոմարական ժողովածուի՝ «Ազգաց ազնուականոններ» և տոմարի՝ «Պատճէներ» մասերին է վերաբերում): Գրել է Տրդատ Գ-ին (287–330 թթ.), Ներսես Ա Մեծին (353–373 թթ.), Սահակ Պարթևին (384–441 թթ.) ու Մեսրոպ Մաշտոցին (362–442 թթ.) նվիրված ներբողական ձառեր և ղևոնդյաններին նվիրված շարականի բառերն ու երաժշտությունը¹⁷¹, աղոթքներ և սուրբգրական ստույգ օրինակներ:

Թեև Կիրակոս Գանձակեցին գրում է, թե շատերի համար ոչ ձեռնհաս գործն է իրականացրել նա. Հայոց շարժական և անհաստատ տոմարի փոխարեն կարգել է անշարժ տոմարը («*գհաստարս և զանշարժ քոմարն կարգեաց Հայոց փոխանակ շարժականին և անհաստարսոյն.*»), սակայն այստեղ գույները մի փոքր խտացրել է, քանի որ Հովհաննէսը միաժամանակ օգտագործել է նաև Հայոց շարժական տոմարը՝ մեկնելով այն ու ստեղծելով դրա՝ իր ժամանակի համապատասխան կանոնները, որոնց առավել մանրամասնաբար կանդրադառնանք գրքի համապատասխան գլխում:

Հովհաննէս Սարկավագը ներդրումներ ունի Հայոց տոնացույցի հարստացման ու զարգացման բնագավառում ևս. Տրդատ Գ-ին, Սահակ Պարթևին, Մեսրոպ Մաշտոցին ու Ներսեսին, Ղևոնդյաններին նվիրված ներբողյան ձառերն ու շարականը հատկապես հուշում են, որ արդեն ձևավորված են եղել նրանց նվիրված տոները, սակայն գուցե առանց ընթացվածքի կամ աղքատիկ ընթերցվածքով, և նրանց նվիրված տոնական օրերին ընթերցելու համար են ստեղծվել դրանք:

Կիրակոս Գանձակեցու վկայություններով ամփոփ պատկերացում ենք կազմում Հովհաննէս Սարկավագի ոչ միայն ստեղծագործական ժառանգության, այլև ժամանակակիցների ու մերձակա ժամանակներում ապրողների՝ նրա նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին:

¹⁶⁹ Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Սարկաւագին, **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 120:

¹⁷⁰ **Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 104–105:

¹⁷¹ Հայ միջնադարյան երաժշտության բնագավառում Սարկավագի ներդրումների մասին տե՛ս **Ն. Թահմիզյան**, Հովհաննէս Սարկավագ Իմաստասերը և հայ միջնադարյան երաժշտական մշակույթը, Բագնավէպ, 1978, թիվ 3–4, էջ 328–355:

Հովհաննես Սարկավազը «...իբրև զինասարուն մեղու՝ բարձեալ յանդամս մրաց զծաղիկս յերանգոց գունոց և հոյոց և համոց, բերէր ի քաղաք իւր և տեղի սննդեան՝ ի քաղաքամայրս Անի, և լի առնէր զգրունն ի փարթամութենէ անտրի:....Եւ ծաղկաւերեալ արձակեաց բողբոջս, և բուսոյց բոյսս արդինսաւար»¹⁷²:

Վարքագրի՝ Սարկավագին մեղվի հետ համեմատելը թույլ է տալիս մտածել, որ նա նաև շրջագայել է ու շփվել տարբեր քաղաքակրթությունների հետ (ինչի մասին ուղղակի տեղեկություններ չեն պահպանվել), ապա իր հետ բերել բազմազան գրական արժեքներ ու լիացրել «փարթամություններով» Անիի վարդապետարանը: Անին դեռևս Գագիկ Ա-ի (990-1020 թթ.) ժամանակ, երբ Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսը (992-1020 թթ.) Արգինայից կաթողիկոսարանը տեղափոխեց այնտեղ, «ստացավ այնպիսի դեր, ինչպիսին ունեին քրիստոնեական Հայաստանի առաջին մայրաքաղաքներ Վաղարշապատն ու Դվինը, որոնք և՛ թագավորանիստ, և՛ կաթողիկոսանիստ էին»¹⁷³:

Խաչիկ Անեցու մահից հետո (1065 թ.), որքան էլ բյուզանդացիները ջանք չեն խնայում ընդհանրապես վերացնելու Հայոց կաթողիկոսությունը՝ արգելելով նոր կաթողիկոսի ընտրությունը, 1066 թվականին հայ ազնվականությանը մեծ ձիգերի գնով և «հրամանաւ եւ կամաք Մանուչէի եւ ամենայն հայոց»¹⁷⁴ հաջողվում է նոր կաթողիկոս ընտրել Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամ-Գրիգորին (Վկայասեր) (1066 – 1106 թթ.), սակայն նա հեռու էր կաթողիկոսական վարչական գործերից և ամբողջովին տարված էր սուրբգրական և վարքագրական-թարգմանական աշխատանքով: Իսկ այդ շրջանում կաթողիկոսն ու կաթողիկոսարանը գտնվում էին Կիլիկիայի սահմաններում, և Հայոց կաթողիկոսությունը Գրիգոր Վկայասերի «թեթև ձեռքով» թվում էր, թե տրոհվում է, և հայկական առանձին վարչական տարածքներից յուրաքանչյուրն ուներ իր «կաթողիկոսը», և Գրիգոր Վկայասերի գործունեությունը՝ առաջին հայացքից անհասկանալի ու խուսափողական, առնվազն դատապարտելի պետք է համարվեր թե՛ իր և թե՛ մեր ժամանակակիցների կողմից:

Սակայն չնոռանանք, թե ինչ ընտանիքից էր սերում նա, և ինչ կրթություն ու դաստիարակություն էր ստացել: Առանց խորանալու հանրահայտ իրողությունների մեջ, նկատենք, որ իր հոր՝ Գրիգոր Մագիստրոսի մոտ նա պիտի անցած լիներ «դիվանագիտական» կարևոր դպրոց: Նա թողնելով ընտանիքը, համաձայնում է նախ կաթողիկոս դառնալ (1066 թ.)՝ փորձելով, հավանաբար, հայ ժողովրդին միավորել գոնե հոգևոր իշխանության ներքո: Սակայն, մի կողմից, Բյուզանդական կայսրության ու սելջուկների վարած

¹⁷² Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Սարկաւագին, Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 120-121:

¹⁷³ Կ. Մաթևոսյան, Անի, Էջմիածին, 1997, էջ 12: Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, եր., 2001:

¹⁷⁴ Վարդանայ Բարձրբերդեցոյ պատմութիւն տիեզերական, Մոսկուա, 1861, էջ 138:

հայաստյաց քաղաքականությունը՝ հոգևոր ու տնտեսական բռնություն, ավեր ու թալան, մյուս կողմից՝ երկրի քաղաքական պառակտվածությունը, որի հետևանքով տարածքային ամեն իշխան իրեն առանձին անթագակիր արքա էր համարում իր տիրություն (Վեստ Սարգիս, Թոռնիկ Մուշեղյան) և թշնամանքով էր վերաբերվում ինչպես ազգակից այլ իշխանություններին, այնպես էլ սոցիալական խմբերին (արհեստավորներ, առևտրականներ), նույնիսկ մահմեդականություն էր ընդունում իր իշխանությունը պահելու համար (Փիլարտոս Վարաժնունի) և ձգտում գերիշխանության, ծնունդ են տալիս ժողովրդի զանգվածային արտագաղթին: Այս դրդապատճառները, կարծում ենք, մղում են Գրիգորին անցնելու նոր քաղաքականության, այն է. արտաքուստ հրաժարվել հոգևոր մենիշխանությունից¹⁷⁵, առանձին վայրերում նոր աթոռակից կաթողիկոսներ ձեռնադրելով՝ սիրաշահել ու շոյել տեղական իշխանների փառասիրությունը և, շրջելով հայաշատ վայրերում, որոնք քաղաքական ուժ էին նաև իրենցից ներկայացնում, իրագործել **հայա-հավաք**¹⁷⁶ ու «միարարական» գործունեություն, որն առաջին հերթին ուղղված պիտի լիներ օրեցօր ահագնացող այլադավանների գերիշխանության ու հայերի՝ բնիկ երկրից արտագաղթի դեմ՝ հանուն ազգի միաբանության ու հայրենիք վերադարձի:

Անին գրավված էր սելջուկների կողմից, Մայր տաճարը վերածվել էր մզկիթի, սակայն քաղաքի երիտասարդ ամիրա Մանուչեն, ում մայրը հայ էր, փորձում է սիրաշահել հայերին, մանավանդ որ նրա կյանքը անձնագոհաբար փրկել էր հետագայում կաթողիկոսացած Բարսեղ Անեցու եղբայր Գրիգոր իշխանը: Ահա այս պայմաններում 1072 թվականին Անի է գալիս Գրիգոր Վկայասերը՝ մորը տեսակցելու, և եպիսկոպոս է ձեռնադրում իր քրոջ որդուն՝ Բարսեղին, և օժտում հայկական գավառների վրա ընդարձակ իշխանությամբ՝ իբրև կաթողիկոսական փոխանորդ: Եվ դրանից մոտ մեկ տասնամյակ հետո՝ 1082 թվականին, Գրիգոր Վկայասերի համաձայնությամբ, Բարսեղ Առաջինը Հաղբատում ձեռնադրվում է փոխանորդ կաթողիկոս և ուղևորվում Անի: Անիում նորոգվում է ս. Գրիգորի աթոռը, որ խափանվել էր հռոմների չարանենգ քաղաքականության հետևանքով:

Թեև Հովհաննես Սարկավագին նախորդած ժամանակաշրջանում Անին արդեն կորցրել էր երկու բնութագրերն էլ՝ ո՛չ թագավորանիստ էր (1045 թ.), ո՛չ էլ կաթողիկոսանիստ (1047 թ.), սակայն հայ ժողովրդի գիտակցության մեջ այն շարունակում էր երկրի օրինական կաթողիկոսանիստ հա-

¹⁷⁵ 1068 թվականին Վկայասերը որոշեց մենակյաց դառնալ և հրաժարվել հայրապետական աթոռից (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1489): Սամուել Անեցին նշում է՝ 1072 թվին:

¹⁷⁶ Մեծ վտանգ էր դարձել Անիի ու հայկական այլ տարածքների օրեցօր ահագնացող հայաթափությունը: Այդ շրջանում է հավանաբար սկիզբ առել հայերին հայրենիք վերադարձնելու գաղափարախոսությունը, որն արձագանք է գտել նաև Հովհաննես Սարկավագի դեռնորդյանց նվիրված շարականում՝ դառնալով հայրենասիրական բանաստեղծության նախա-կարապետ:

մարվել, որն իրավամբ այդպիսին դարձավ միայն Բարսեղ Ա Անեցու կաթողիկոսության օրոք (1106–1113 թթ.):

«Բարսեղի՝ Անիում կատարած կարևորագույն գործերից մեկը կաթողիկոսարանի վարդապետարանի վերաբացումն էր: Դեռևս Արգինայից սկզբնավորվող, ապա Սարգիս Սևանցու և Պետրոսի ժամանակ մայրաքաղաքում գործող բարձրագույն հոգևոր դպրոցն էր, որ կրկին կյանք առավ Բարսեղի հոգածությամբ և ժամանակի նշանավոր վարդապետ Հովհաննես Սարկավագի ուսուցչապետությամբ»¹⁷⁷:

Հովհաննես Սարկավագի Անի տեղափոխվելը պայմանավորված է Բարսեղ Անեցու՝ Հաղբատում Գրիգոր Վկայասերի, Կյուրիկեի և, մեր կարծիքով, նաև Մելիքշահի¹⁷⁸ համաձայնությամբ Արևելյան կողմանց կաթողիկոսական տեղապահ ձեռնադրվելու իրողության հետ: Հաղբատում ձեռնադրվելուց հետո Բարսեղն է Հովհաննես Սարկավագին տարել Անի:

Քանի որ Հովհաննես Սարկավագի կյանքի ու գործունեության մի զգալի հատված կապված է Բարսեղ Անեցի կաթողիկոսի անվան հետ, կարևորեցինք համառոտ անդրադառնալ Բարսեղի կաթողիկոսական տեղապահության ժամանակին ու հանգամանքներին, Բարսեղի կյանքի կարևոր իրադարձություններից՝ Մելիքշահի մոտ կատարած ուղևորություններին, Թեոդորոսին¹⁷⁹ կաթողիկոսական իրավասություններից զրկելուն, Ուռհա գնալու և Անի վերադառնալու իրողություններին:

Մատենագրական տեղեկությունները թույլ են տալիս ձևակերպել մի քանի խնդիր՝

- Ա) ե՞րբ է ձեռնադրվել Բարսեղ Առաջինը,
- Բ) արդյոք առ Մելիքշահ մե՞կ ուղևորության մասին է խոսքը,
- Գ) ո՞վքեր են եղել այդ ուղևորությունների մասնակիցները:

Հայ մատենագիրների տեղեկություններով՝ Բարսեղի՝ կաթողիկոսի տեղապահ ձեռնադրվելու թվականը Հայոց մեծ թվականի ՇԼ (530), ՇԼԱ (531) կամ ՇԼԲ (532)¹⁸⁰ և ներկա 1081–84 թվականների միջակայքում է, իսկ ուղևորությունները՝ Հայոց մեծ թվականի ՇԼԶ կամ ՇԼԸ (536 կամ 538)¹⁸¹, ՇԼԹ (539) տարիներին:

Մատթեոս Ուռհայեցի՝ 1. «Դարձեալ ի թուականութեանն Հայոց ի յամի **ՇԼ (530)** արքեպիսկոպոսն Շիրակայ՝ որ էր ի քաղաքն Անի, որոյ անունն ասէին

¹⁷⁷ Կ. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 53:

¹⁷⁸ Կարծում ենք՝ ինչպես Գրիգոր Վկայասերի կաթողիկոս դառնալու ժամանակ անհրաժեշտ էր Մանուչեի համաձայնությունը, այնպես էլ Բարսեղի կաթողիկոս դառնալու համար Մելիքշահի համաձայնությունն էր անհրաժեշտ, մասնավորապես, ինչպես կտեսնենք մեր աղբյուրներից մեկում, Կյուրիկեի հետ Մելիքշահի մոտ գնացածների թվում հիշատակվում է նաև Բարսեղը:

¹⁷⁹ Հայոց ՇԻԶ (1077/78 թթ.) թվականին, Թեոդորոսը Տեր Պետրոսի քրոջ որդուն՝ Տեր Սարգսի մահից հետո հաջորդել էր նրան Հոնիում:

¹⁸⁰ Սամուել Անեցի, նշվ. աշխ., էջ 117–118:

¹⁸¹ Նույն տեղում:

Տէր Բարսեղ, յարուցեալ գնայր յաշխարհն հայոց ի յԱղուան գաւառի՝ ի Լոռէ քաղաք առ թագաւորն Հայոց Կիրիկէ՝ որդի Անհողին Դաւթի, և խնդրէր Բարսեղ առնել ձեռնադրութիւն կաթողիկոսութեան Հայոց: Զոր ժողովեալ թագաւորն Կիրիկէ զեպիսկոպոսունս Աղուանից աշխարհին և բերեալ զՏէր Սրեփանոս կաթողիկոսն Աղուանից ի վանքն, որ կոչի Հաղբաթ, ձեռնադրեցին զՏէր Բարսեղ կաթողիկոս յաթոռ սրբոյն Գրիգորի՝ ի վերայ ամենայն աշխարհին հայոց հրամանաւ Կիրիկէ թագաւորին և Տեառն Սրեփանոսի՝ որ ունէր զաթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի: Յայսմ ժամանակի նորոգեալ եղև աթոռ սրբոյ Գրիգորի ի քաղաքն Անի, որ ի վաղուց ժամանակաց հետքէ իսփանեալ էր մահաւանջ նենգաւորութեամբ չար և դառնացեալ ազգին Հոռոմոց: Եւ ելեալ զայր Բարսեղ կաթողիկոսն հայոց ի թագաւորաբնակ քաղաքն Անի, և ելեալ ամենայն րունն Շիրակայ գալ ընդ առաջ նորա. և ահա զայր Վասակ՝ հայրն Տէր Բարսեղի և եղբայրք նորա՝ Հասան և Գրիգոր և Այլջապակ, արք քաջք և հզորք՝ հանդերձ եպիսկոպոսօք, և նստուցին զՏէր Բարսեղ յաթոռ Տեառն Պետրոսի (Գեարդարձի – Գ.Ս.): Եւ եղև օրն այն օր մեծ և ուրախութիւն ամենայն րանն Հայոց, վասն զի րեսին նորոգեալ զաթոռ հայրապետութեանն ի քաղաքն յԱնի»¹⁸²:

2. «Դարձեալ ի թուականութեանս Հայոց ի յամի **ՇԼԹ** (= 1091 թ.) յարուցեալ հայրապետն Հայոց Տէր Բարսեղ և գնացեալ առ րիեզերակալ սուլրանն Մելիք-շահն, ... և առեալ ընդ իւր նուերս սուլրանին իբրև բիրս ոսկոյ և արծաթոյ և դիպակաց, և հանդերձ ազապօք և եպիսկոպոսօք և քահանայիք՝ **առեալ վարդապետ գհետ իւր** և գնաց ի Պարսիկս առ ասպուածասէր սուլրանն»¹⁸³:

Սամուել Անեցի՝ «**ՌՁԵ (1085)**. Տէր Բարսեղ ամս ԼԱ. կամ Լ. **ՇԼԲ (532)**. **Թրին նստաւ րէր Բարսեղ յաթոռ հայրապետութեան՝** որդին Վասակայ՝ և զամենայն հսկառակորդն հնագանդեցուցանէ՝ որք էին յայսմ ժամանակի Զ. կաթողիկոսք, **գնացեալ առ մեծ սուլրանն Մելիքշահ, որ ի Խորասան բազում համարձակութեամբ ընդ քաղաքամեջն պարսից ձիով և խաչալամով, որ առաջի ամբարձեալ էին ի ձողի**»¹⁸⁴:

«**ՌՁԸ (1088)**. ի ՇԼԶ (576)՝ [ուղղել՝ ՇԼԶ (536)] (այլ ձեռագրում՝ ՇԼԸ (538)) թվին ի սուլրանն գնացին **Հայոց և Վրաց թագաւորն՝ Կիրիկէ և Գօրգի**»¹⁸⁵:

Վարդան Արևելցի՝ 1. «ԿԱ. Ի հինգհարիւր երեսուն և եօթն **(537)** թուին Պուզան ամիարայն հրամանաւ Մելիք-շահին առ զԳանձակ ի Փապլնեանցն, որ Շարպարիկք կոչէին: Իսկ Վրաց թագաւորն Բագարայր դարձեալ ի կայսերէ՝

¹⁸² Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Եր., 1991, էջ 236–238:

¹⁸³ Նույն տեղում, էջ 236–238:

¹⁸⁴ Սամուել Անեցի, նշվ. աշխ., էջ 117–118:

¹⁸⁵ Նույն տեղում:

առնու զհայրենիսն իւր. և զկնի նորա առնու **Գէորգի** որդի իւր. որ և գնացեալ **զկնի Կիրիկէի ի Խորասան** առ Մելիք շահն, դարձան պատրուով»¹⁸⁶:

2. Վարդան՝ «Կր. Ի **հինգ հարիւր քառասուն թվին** Բարսեղ ... ընկէջ զկաթողիկոսն Թէոդորոս յաթոռոյն, եկն Անրիոք, և անտի Ուռհա»¹⁸⁷, իսկ 541 թ. վերադառնում է Անի¹⁸⁸:

Մխիթար Այրիվանեցին Խորասան ուղևորությունը դնում է 1081–1101 թթ. միջակայքում՝ առանց հիշատակելու Բարսեղի անունը պատվիրակության կազմում, միայն թե անմիջապես դրան հաջորդում են Բարսեղի ձեռնադրությունն ու 1085 թ.-ին Նոր թվականի կարգելը Հովհաննես վարդապետի՝ Սարկավագի կողմից և 1094 թթ.՝ «սկիզբն շրջանի հինգհարիւրեկին». «Թագաւորն հայոց **Կիրիկէ և վրաց Դեմետրէ և կաթողիկոսն Հայոց Կէր Բարսեղ** գնացին առ Մելիք Շահ սուլտանն և դարձան պատրուով»¹⁸⁹:

Ցույց տանք, որ Բարսեղը կաթողիկոսական տեղապահ է դարձել 1082 թվականին, 1083 թ. առաջին անգամ Կյուրիկէի հետ է գնացել Մելիքշահի մոտ, իսկ 2-րդ ուղևորության ժամանակ (1091 թ.) նրա պատվիրակության մեջ է գտնվել նաև Հովհաննես Սարկավագը:

Մատթեոս Ուռհայեցին Հայոց մեծ թվականի և ներկա թվականի տարբերությունը համարում է 552 տարի¹⁹⁰: Նշանակում է, որ Բարսեղ Առաջինի կաթողիկոսի տեղապահ դառնալու տարին նա համարում է **1082** թվականը (530 + 552): Իսկ նրա 2-րդ ուղևորությունը՝ Հայոց մեծ թվականի ՇԼԹ (539) տարում (1090 թվականի փետրվարի 27–1091 թվականի փետրվարի 26), ըստ իր հաշվումների՝ ներկա 1091 (539 + 552) թվականին¹⁹¹, որին զուգահեռ է նաև հայոց ՇԽ թվականի սկիզբը, երբ Բարսեղի պատվիրակությունը հասել էր Ուռհա:

Բարսեղի կաթողիկոսական տեղապահությունը 1082 թվականին լինելու օգտին է վկայում նաև Սարգսին Հաղբատի առաջնորդ կարգելու թվականը, քանի որ նույն թվականին է եղել. «**Սարգիս առաջին, աւագ երէջ արքունի դրան Կիրիկեայ արքայի որդոյ Անհողինին Դաւթի ի ՇԼԱ. թուականին հայոց, յամի Տեսռն 1082. հրամանաւ նորին Կիրիկեայ ձեռնադրեալ ի կրկին կաթողիկոսաց արքեպիսկոպոս Հաղբատայ, ... նստի առաջնորդ**»¹⁹²:

¹⁸⁶ Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 111:

¹⁸⁷ Նույն տեղում, էջ 112:

¹⁸⁸ Նույն տեղում:

¹⁸⁹ Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 60:

¹⁹⁰ «Եւ ահա այսօր արձակեցաւ սատանայ ի հազար ամէ կապանաց իւրոց, որ հայոց թուականն և **ՆՀԸ (478)** ամ է և կալ գառաջին **ՇԾԲ (552)**, որ լինի **ՌԼ** ամ. գերեսուն ամն տուր յառաջ քան գմկրտութիւնն և կալ զհազարն մինչև ցայսօր» (478 + 552 = 1030–30 = 1000) (Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 60–61):

¹⁹¹ Ըստ Մատթեոս Ուռհայեցոյ հաշվումների՝ 1092 թվականը պետք է լիներ, սակայն Հայոց մեծ թվականի **ՇԽ** տարվա տարեսկիզբը ցույց է տալիս, որ ասվածը վերաբերում է 1091 թվականի փետրվարի 27-ից հետո եկող ամիսներին՝ մարտ–ապրիլ:

¹⁹² **Յովհաննու Արիմեցոյ** Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին, Վիեննա, 1965, էջ 99 նն:

Մամուել Անեցին Բարսեղի կաթողիկոսական տեղապահության տարին համարել է 1084 կամ 1085 և 532 Հայոց մեծ թվականները, որը որոշ ձեռագրերում բացակայում է, այսինքն՝ Հայոց մեծ թվականի և Քրիստոնեական թվականի տարբերությունը 553 տարի է, ուստի Մամուել Անեցին օգտագործել է քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակը¹⁹³, որը 2 տարով ավելի է ներկա թվականից, ուստի Բարսեղի տեղապահության տարին դրել է 1082 կամ 1083 ներկա թվականին:

Հետևապես, Բարսեղի կաթողիկոսական տեղապահության տարին կա՛մ 1082 թվականն է, կա՛մ 1083-ը, որոնցից նախընտրում ենք 1082 թվականը, իսկ 1083-ը համարում ենք Մելիքշահի մոտ գնալու և տեղապահությունը հաստատելու տարին՝ հիմք ունենալով Այրիվանեցու տեղեկությունն այն մասին, որ հայոց թագավոր Կյուրիկեն, Բարսեղ կաթողիկոսը և վրաց թագավոր Գեորգն ու Դեմետրե կաթողիկոսը սուլթանի մոտ են գնացել մինչև 1085 թվականը, այսինքն՝ 1081-1084 թթ. միջակայքում, այն է՝ միջին հաշվով 1083 թվին:

Հայկական աղբյուրները վկայում են նաև, որ հայոց պատվիրակությանը հետևել է վրաց պատվիրակությունը՝ Գեորգ թագավորի (1072-1089 թթ.) ու Դեմետրեի՝ վրաց կաթողիկոսի գլխավորությամբ:

Վրաց պատմաբանները Գեորգի և Դեմետրեի ուղևորությունը դնում են 1083 թ.-ին¹⁹⁴:

Հնարավոր է, որ առաջին ուղևորության ժամանակ Մելիքշահն առաջարկած լիներ Բարսեղ Անեցուն տոմարական բարեփոխություն կատարել, քանի որ իր սուլթանության մեջ արդեն իրականացվել էր այդ գործընթացը, ինչը լիովին համապատասխանում էր հայոց ցանկությանը, քանի որ ավարտին էին մոտեցել 532-ամյակի առաջին շրջապտույտը և Անանիա Շիրակացու 550-ամյա զատկացուցակը, այն է՝ հայոց թվականության հիմքերը:

Ըստ Մատթեոս Ուռնայեցու առաջին տեղեկության՝ Բարսեղ Անեցին կաթողիկոսական տեղապահ ձեռնադրվելուց հետո վերադարձել է Անի:

Կարծում ենք, որ այս վերլուծությունից հետո կարելի է ասել, որ քրիստոնեական ներկա 1082 թվականին է Բարսեղ Անեցին Հաղբատում կաթողիկական տեղապահ ձեռնադրվել, որից հետո Հովհաննես Սարկավագին, ով առաջիկա տարիներին պետք է իրագործեր տոմարական բարեփոխությունը, իր հետ տարել է Անի: Այստեղ նա ժամանակի ընթացքում ստանձնել է Անիի կաթողիկոսարանի՝ վերաբացված վարդապետարանի ուսուցչապետությունը¹⁹⁵:

Կարծում ենք՝ Սարկավագն անմիջապես չէր կարող նշանակվել ուսուցչապետ, քանի որ դեռևս շատ երիտասարդ էր՝ մոտավորապես 25 տարեկան:

¹⁹³ Քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակի մասին կկարդաք մեր գրքի 3-րդ գլխում:

¹⁹⁴ **Мераб Вачнадзе, Вахтанг Гурули, Михаил Бахтадзе**, История Грузии (с древнейших времен до наших дней), էլեկտրոնային տարբերակ՝ <https://bit.ly/438RSnI>:

¹⁹⁵ **Կ. Մաթևոսյան**, Անի, Ս. Էջմիածին, 1997, էջ 53:

Ինչպես Հովհաննեսի Վարքը, այնպես էլ ստեղծագործական ժառանգությունը թույլ են տալիս ասելու, որ երիտասարդ տարիքում հայտնվելով Անիում՝ նա զբաղվում է բուն գրական, գիտամանկավարժական ու եկեղեցական գործունեությամբ, որի մասին հստակորեն երևում է իր անմիջական աշակերտի՝ Սամուել Անեցու մոտ պահպանված հիշատակություններից:

Սարկավագին առնչվող՝ Սամուել Անեցու պատմության հաղորդած տեղեկությունները վերաբերում են սելջուկների բռնակալության ժամանակաշրջանի, ինչպես և Խաչակրաց առաջին արշավանքների պատմությանը:

Սամուելի պատմության՝ սելջուկների ժամանակաշրջանին վերաբերող տեղեկություններն¹⁹⁶ արժեքավոր են նրանով, որ փաստում են, թե Հովհաննես Սարկավագն է գրել սելջուկներին վերաբերող պատմական իրադարձությունների ու Մելիքշահ սուլթանի, ապա հույների թագավոր Ալեքսի մասին, ինչը Սամուել Անեցու ձեռքի տակ է եղել, և դրանցից օգտվելով է ինքը ներկայացրել իր պատմության համապատասխան ժամանակաշրջանը:

Տեղեկություններում Սամուել Անեցին երբեմն անանուն՝ սուրբ վարդապետ բնորոշումով, երբեմն հանվանե է ներկայացնում նրան, ով պատմել ու միայն դրվատանքով է խոսել Մելիքշահ սուլթանի մասին, և խոստացել է առավել **«արվեստարան և երկայն ճառիք»** գրել: Եվ, Ա. Աբրահամյանը չի սխալվել, որ Սամուել Անեցու այդ հատվածը՝ որպես Հովհաննես Սարկավագից փոխառյալ, տեղադրել է վերջինիս մատենագրական ժառանգության մեջ¹⁹⁷:

Սամուել Անեցու՝ Սարկավագից օգտվելու մասին հիշատակում է նաև Կիրակոս Գանձակեցին. *«Զի մինչև ցՄելիքշահ սուլթանն գրեալ էր պատրճառս փրկելոյն նոցա մեծիմաստր վարդապետին, որ Սարկաւագն կոչէր, և երկրորդեալ էր Սամուէլ քահանայ, այլ և զհօր նորս զարիւնախանձին Ալիսալանայ և զնորին հօր և հաւուց, զոր Տուղրիլ և Մահմուր և Սարչուկ անուանք են նոցա»*¹⁹⁸:

Մատթեոս Ուռհայեցու և Սամուել Անեցու տեղեկություններով կարելի է ենթադրել, որ Հովհաննես Սարկավագը մասնակցել Բարսեղ Անեցու գլխավորած հայոց պատվիրակության՝ առ Մելիքշահ կատարած 2-րդ ուղևորությանը: Հովհաննես Սարկավագն է եղել այն վարդապետը, ում մասին առանց անվանելու¹⁹⁹ հիշատակում է Մատթեոս Ուռհայեցին, երբ պատմում է Բարսեղ Ա կաթողիկոսի՝ Խորասան ուղևորության և Մելիքշահի հետ հանդիպման մասին²⁰⁰:

¹⁹⁶ **Սամուել Անեցի**, նշվ. աշխ., էջ 97, 119, 120, 128, 129:

¹⁹⁷ Պատմության հատվածը Սամուել Անեցուց, **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 129-130:

¹⁹⁸ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, աշխ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 84:

¹⁹⁹ Բարսեղի գործերը ենթավերնագրի տակ Մատթեոս Ուռհայեցու այս հատվածը հիշատակել է նաև **Մ. արք. Օրմանյանը**: Տե՛ս Ազգապատում, հ. Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 1537:

²⁰⁰ **Մատթեոս Ուռհայեցի**, ժամանակագրություն, էջ 256:

Ուշադրություն դարձնենք այն փաստին, որ Բարսեղի հետ բազմաթիվ եպիսկոպոսների ու քահանաների խմբում Մելիքշահի մոտ գնացածների մեջ հիշատակվել է միայն մեկ վարդապետ²⁰¹, ինչը նշանակում է, որ նա պետք է լիներ ժամանակի բացառիկ դեմքերից մեկը և կաթողիկոսի ընտրյալը, նա, ում հեղինակությանն ու, գուցե, լեզվական իմացություններին կամ առավել ևս տոմարական խնդիրների կատարյալ իմացությանն է վստահել կաթողիկոսը, քանի որ իր սուլթանության տարածքում տոմարական բարեփոխություն էր իրականացնում Մելիքշահը, որով և զբաղված էր նաև Հովհաննես Սարկավագը:

Տեղեկությունները նույնացնում են Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» անանուն ու Սամուել Անեցու պատմության խոստում տվող վարդապետին, ով հենց ինքը՝ Հովհաննես Սարկավագն է, ում դեռևս 1082 թվականին՝ Հաղբատում ձեռնադրվելուց հետո, իր հետ Անի էր տարել Բարսեղ կաթողիկոսը:

Մատթեոս Ուռհայեցու տեղեկությունը վկայում է մի իրողության մասին ևս, այն է՝ Հովհաննես Սարկավագը 1091 թվականին արդեն ձանաչված է եղել իբրև վարդապետ, ինչը նշանակում է, որ չէր կոչվում միայն Հովհաննես քահանա, համենայն դեպս ուղևորության ժամանակ արդեն ուներ մեծ հոչակ, այլապես նա չէր առանձնացվի եպիսկոպոսներից ու քահանաներից:

Ըստ Մատթեոս Ուռհայեցու տարեթվերի՝ ուղևորությունը կատարվել է 1091 թվականին:

Պատմական տեղեկությունները թույլ են տալիս հասկանալ, որ պատվիրակության Խորասան գնալու նպատակներից են եղել հայ ժողովրդին այլադավանների ապօրինի շահագործումից, հալածանքներից ու բռնությունից զերծ պահելու, Հայոց եկեղեցին խիստ ծանր հարկերից ազատելու և Թեոդորոսին կաթողիկոսական պատվից շնորհագրելու հիմնախնդիրները:

Միանգամայն պատճառաբանված կարող ենք համարել նաև Հովհաննես Սարկավագի գտնվելը Մելիքշահի մոտ գնացող պատվիրակության կազմում, քանի որ Մելիքշահն իր սուլթանության տարածքներում իրականացնում էր գիտակրթական, ինչպես և տոմարական բարեփոխություն, որը ոչ միայն պետք է հետաքրքրեր, այլև վերաբերեր նաև հայերին:

Իսկ Հայաստանի տարածքում ո՞վ առավել լավ կարող էր իրականացնել այդ բարեփոխությունները, եթե ոչ Հովհաննես Սարկավագը, ով, հավանաբար, արդեն (1091 թ.) վարդապետաց վարդապետ էր կամ Անիի վարդապետարանի ուսուցչապետը: Այսպիսով, Հովհաննես Սարկավագի՝ Մելիքշահի մոտ գնացած պատվիրակության կազմում գտնվելու պատճառներից մեկն էլ տոմարական բարեփոխիչ լինելու հանգամանքն էր:

Հայաստանի՝ սելջուկների տիրապետության տակ անցնելու պատճառով, քնականաբար, պետք է համապատասխանություն ստեղծվեր հայոց ու պարսից, ինչպես նաև հայոց ու տաճկաց տոմարների միջև, թեկուզև միայն

²⁰¹ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 256:

հարկահավաքությունը ժամանակին կատարելու նպատակով: Հետևում է, որ պետք է ձեռք բերվեին նաև Պարսից ու Տաճկաց տոմարների «Պատճենները»: Եվ, ինչպես տեսնում ենք, Սարկավագի տոմարական ժողովածուի մեջ առկա են ոչ միայն Պարսից ու Տաճկաց տոմարի «Պատճենները»²⁰², այլև «Մեկնություն տոմարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուի «Ազգաց ազնուականոններ»²⁰³ մասում արտացոլված են նաև պարսից տոմարի տվյալները, որոնք բացակայում էին նախորդ շրջանի «Պատճեններում»:

Մյուս կողմից՝ Հովհաննես Սարկավագը՝ գլխավորելով Անիի վարդապետանոցը, ժամանակի տարբեր գիտությունների ձեռքբերումներին ծանոթանալու և դրանք իր վարդապետանոցում ներդնելու համար անհրաժեշտաբար պետք է լիներ առ Մելիքշահ գնացած պատվիրակների կազմում, քանի որ Մելիքշահն արդեն համարվում էր ամենայն գիտությանց հովանավոր և արդեն իր իշխանության տարբեր քաղաքներում բաց էր արել Նիզամիե²⁰⁴ կոչված կրթարանները, իսկ Խորասանում՝ նաև աստղադիտարան²⁰⁵:

Կարելի է մտածել նաև, որ Սարկավագը պետք է որ ծանոթ լիներ նաև Օմար Խայամի գործունեությանը, ում Մելիքշահը հանձնարարել էր կատարել Պարսից տոմարի բարեփոխությունը և կարելի է ասել՝ Խայամիին ոչնչով չէր զիջում Հովհաննեսը, իսկ նրանց տոմարական համակարգերի միջև կան որոշակի ընդհանրություններ:

1091-ին Բարսեղ Անեցու գլխավորած պատվիրակության ուղևորությունը շարունակվել է դեպի Ջահան գավառ, որտեղ շնորհագուրկ է արվում Հոնիի Թեոդորոս կաթողիկոսը, ապա՝ Ուռհա և Անտիոք:

Պատվիրակությունն Ուռհա է հասել 1091 թվականի մարտ-ապրիլ ամիսներին (Հայոց մեծ թվականի ՇԽ (540 = 1091/1092) թվի տարեսկիզբ):

Բարսեղի հետ Ջահան, Ուռհա, ապա Անտիոք է գնացել նաև Հովհաննես Սարկավագը, քանի որ պատվիրակության Անի վերադառնալու մասին խոսք չկա²⁰⁶: Նրանց մեծ ոգևորությամբ են ընդունել Ուռհայի հայերը, բնականաբար, նաև հոգևորականությունը, որոնցից մեկի անունը՝ Ստեփանոս արքեպիսկոպոս, հիշատակում է Մատթեոս Ուռհայեցին հայոց ՇԾԷ թվին (1108/09 թթ.) Ուռհայի հայտնի դեպքերի նկարագրության ժամանակ²⁰⁷, երբ «զայլոց զանմեղաց զաչսն ի լուսոյ խաւարեցուցին»²⁰⁸. կուրացվածների թվում էր նաև Ստեփանոսը:

²⁰² Պատճեն տոմարի (Է-ԺԵ դդ.), աշխ.՝ **Ջ. Էյնաթեանի և Գ. Տէր-Վարդանեանի**, էջ 281:

²⁰³ Ազգաց կանոններ, տե՛ս **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 160:

²⁰⁴ Նիզամիե են կոչվել Մելիքշահի հազարապետ Նիզամ ալ-Մուլքի անունով:

²⁰⁵ Աստղադիտարանի կառուցմանը մասնակցել են ժամանակի լավագույն աստղագետները՝ Օմար իբն Իբրահիմ ալ-Խայամը, Աբու-լ Մուզաֆֆար ալ-Իսֆազարին, Մայմուն իբն Նաջիբ ալ-Վասիդին և այլք:

²⁰⁶ **Մատթեոս Ուռհայեցի**, նշվ. աշխ., էջ 320:

²⁰⁷ Նույն տեղում, էջ 336:

²⁰⁸ Նույն տեղում, էջ 309:

Մտածում ենք, որ Հովհաննես Սարկավազն այստեղ կարող էր ծանոթացած լինել Ստեփանոս արքեպիսկոպոսին, ում կուրացվելուց հետո, մեր կարծիքով, թուրք է գրել («Առ կոյրն աչագեղոյ»²⁰⁹) ինքը: Եվ այդ դեպքում Հովհաննեսի Ուռհա գնացած լինելը դառնում է ավելի համոզիչ:

Կարծիք կա, որ Անիից Կիլիկիա անցում են կատարել նաև հայ երաժշտաբանաստեղծական կոթողները²¹⁰, որի իրականացնողներից մեկը կարող էր լինել հենց Հովհաննես Սարկավազն անձամբ:

Հովհաննես Սարկավազը Բարսեղ Անեցու հետ մնացել է Ուռհայում մինչև հայոց ՇԽԱ = 1092 թվականը՝ Մելիքշահի մահը, որն էլ նրանց հապշտապ Անի վերադարձի պատճառ է դառնում:

Հովհաննես Սարկավազի տոմարական ժառանգության ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ հետագա մի քանի տարիներին նա առավելապես զբաղված է եղել հայոց տոմարի բարեփոխության խնդիրներով, քանի որ 1094 թվականին ստեղծել է իր «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուն:

Կենսագրական տեղեկություններն ամբողջացնելու համար դարձյալ դառնանք Սարկավազի Վարքին:

Դեռևս իր կենդանության ժամանակ Սարկավազը համարվել է մարգարե և սքանչելագործ: Այսպես, «*Ունէր վարդապետն վարդապետաց պարզև ի հոգւոյն սրբոյ մարգարէութեան և սքանչելեաց, զորս ի բազմացն սակաւ սակաւ ինչ ծանուցից՝ բազմաց վկայեալ*»²¹¹: Մերձավորներից շատերն են վկայել, որ միայնակ աղոթքի պահին նրա վրա «հայտնվել են հոգու փայլատակման բոցերը»:

Սքանչելագործություններից մյուսը, որի մասին պատմում է վարքագիրը, «հավաստի» պատմություն է, քանի որ հեղինակն ասում է. «*Ձայս ինչ գրով խնդրեալ իմ, և նոցա, ի բերանոյ առնն, որ **ականաարեան էր և սպասարոր, սյուզեալ գրեցին առ մեզ, զոր գրեցաք***»²¹²:

Հովհաննեսի սպասավորի ու ականատեսի գրածի համաձայն՝ վարքագիրն այն ավանդապատումն է պատմում ոմն զղջացող կրոնավորի մասին, որ խոստովանության է գալիս **Անապատ**, որտեղ աշակերտների հետ գտնվում էր վարդապետը, և սատանան մոլորեցնում է կրոնավորին ու հետ դարձնում: Սուրբը՝ Հովհաննես Սարկավազը, աշակերտներին ուղարկում է նրա հետևից, բռնությամբ հետ բերում և աղոթքով ազատում նրան սատանայի ազդեցությունից:

Վարդան Արևելցու մի վկայությունից բխում է, որ այդ հրաշագործության ականատեսներն էին Թորքակերի որդի Գրիգորը, Աղվանքում ձգնող

²⁰⁹ Այս նամակին անդրադառնալու ենք Հովհաննես Սարկավազի գրական երկերը քննելիս:

²¹⁰ **Ն. Թահմիզյան**, Հովհաննես Սարկավազ Իմաստասերը և հայ միջնադարյան երաժշտական մշակույթը, Բազմավեպ, 1978, թիվ 3-4, էջ 355:

²¹¹ Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Սարկաւագին...., **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 121:

²¹² Նույն տեղում, էջ 123:

Խոնթկա որդի Պետրոսն ու Հակոբ Սքանչելին, որոնց միջոցով վարքագիրը ձշտել է տեղեկությունները. «...և Թոքակերայ որդին կոչեցեալ աշակերտը նորին, և այլ արք ճրգնաւորք 'ի յԱղուանս, որպէս Պեպրոս Խոնթկայ որդին և Յակոբ սքանչելին, որ յաւուր միում Կեսասնէր զասարանայ հեծեալ յուս կրօնաւորի միում' որ գայր առ նա (Սարկավագի մուր- Գ. Ս) 'ի խոստովանութիւն, և ի մօտիլն մտրակեալ զնա և խօթեալ, անդրէն դարձոյց որպէս փախսարական: Եւ նա հրամայեաց սպասաւորին ընթանալ զկնի և բերել առ նա բռնութեամբ. և հարցեալ զնա ասաց. Եկի առ քեզ զըղջացեալ 'ի խոստովանութիւն, և յիշեալ զսովորական գործն իմ դարձայ ի քէն: Եւ սուրբն (Սարկավագը- Գ. Ս.) պատմեաց նմա զԿեսասիլն. և նորա լուեալ անկաւ յոյսս նորա և խոստովանեալ էառ զլուծն ապաշխարութեան»²¹³:

Թեև վարքագրության ժանրին բնորոշ է ականատեսների միջոցով հրաշքներին «հավաստիություն» հաղորդելու մեթոդը, սակայն, դրանով հանդերձ, չի կարելի մերժել նրանց միջոցով այլ իրական փաստերի ձգբրտումը, ուստի Վարքի և Վարդան Արևելցու վերոնշյալ հատվածները արժևորվում են նրանով, որ հուշում են, թե մոտավորապես երբ կարող էր գրված լինել այս Վարքը: Եթե այս տեղեկությունները ձգբրտվել են Հովհաննես Սարկավագի հրաշագործությունների ականատեսի ու սպասավորի²¹⁴ պատմությամբ, ապա կարելի է ասել, որ այն գրվել է նրա մահից անմիջապես հետո, երբ դեռ ողջ էին Հովհաննեսին տեսած ու սպասավորած մարդիկ²¹⁵: Իսկ Մխիթար Այրիվանեցիի Խոնթկա որդուն, Հակոբին, Մարիամին ու Խորասուին հիշատակում է. «1131-1141 (Ամբ տեսոն) – Աստ Պետրոս՝ Խոնթկայ որդին, և Յակոբ սքանչելին, իսկ Խորասու և Մարիամ ի Քոբայրին կային կուսութեամբ»²¹⁶: Սամուել Անեցու տեղեկությամբ՝ թոքակերի որդի Գրիգորի մահվան ստույգ թվականը հայտնի է՝ 1139 թ., ինչը վկայում է, որ Հովհաննես Սարկավագի Վարքը պետք է, որ գրված լիներ նրանց կենդանության ժամանակ, հենց այս տարիներին՝ մինչև 1139 կամ 1141 թվականները, և եղել է, փաստորեն, Սարկավագի մասին ստեղծված առաջին վավերագիրը, և տեղեկություններն առավել քան հավաստի են, որից էլ կարող էին օգտվել հետագայում:

Վերոհիշյալ ավանդապատումի մեջ կարևորենք նաև Անապատում դասավանդելու հանգամանքը, քանի որ Հովհաննես Սարկավագն իր հանրահայտ «Բան իմաստութեան...» քանաստեղծության մեջ ևս հիշատակում է, որ գնում էր Անապատ. «Յանապատի աստ գամ նստեմ, զի օգտեցայց հանդարտութեամբ...»²¹⁷: Անապատ գնալու մասին մի աստվածաբանական երկ²¹⁸ ևս

²¹³ **Վարդան Արևելցի**, Տիեզերական պատմություն, էջ 125 (գրաբար):

²¹⁴ Հոգևոր սպասավորությունը նաև սարկավագների գործառույթն էր:

²¹⁵ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 19:

²¹⁶ **Մխիթար Այրիվանեցի**, նշվ. աշխ., էջ 62-63:

²¹⁷ Բան իմաստութեան..., **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 321:

²¹⁸ Հարցումն ընդ սուրբ վարդապետն Սարկուագ. Եթե արժան իցե թողուլ զեղբայրս..., «Գանձասար», հ. Զ, Եր., 1996, էջ 327-335:

ունի Սարկավագը, որի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ նա ժամանակ առ ժամանակ «քաղաքային կյանքի խժոժություններից հեռանալու, տանջող բեռների ծանրությունից թեթևանալու ու աշխարհի ծովում կորստից փրկվելու, Աստու հետ հաղորդակցվելու»²¹⁹, ինչպես և, կենսագրության տեղեկությամբ, դասավանդելու համար գնացել է **Անապատ** կոչված վայրը²²⁰:

Իսկ ի՞նչ Անապատի մասին է խոսքը: Այն ընդհանրապես աշխարհից ու մարդկանցից մեկուսանալու, մենակեցությանը տրվելու ինչ-որ անորոշ վաճառ է, թե՞ որոշակի աշխարհագրական վայր կամ տեղանք:

Մեր կարծիքով, խոսքը Հաղբատի շրջակայքում գտնվող Անապատի մասին է:

Հաղբատավանքի մասին կարևոր տեղեկություններ է հաղորդել 10-րդ դարի վերջի – 11-րդի սկզբի պատմագիր Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկ), հիմնադրման մասին գրել են Սամուել Անեցին՝ քաղելով Ասողիկից, 13-րդ դարի պատմագիրը՝ Կիրակոս Գանձակեցին, Վարդան Վարդապետը, Մխիթար Այրիվանեցին և Ստեփանոս Օրբելյանը:

Հաղբատի մասին գիտական ուսումնասիրություններ են գրվել 19-րդ դարից սկսած, երբ Հյուսիսային Հայաստանը դեռևս չէր միացել Ռուսաստանին: Սակայն այդ բոլոր ուսումնասիրությունների մեջ պատվավոր, կարևորագույններից մեկը 19-րդ դարի 20-ական թվականներին գրված Հովհաննես Դրիմեցու մեծածավալ ուսումնասիրությունն է, որը հրատարակվեց 1965 թվականին՝ Հ. Ոսկյանի աշխատասիրությամբ:

Հովհաննես Դրիմեցին²²¹ նկարագրում է Հաղբատի շրջակայքում գտնվող եկեղեցիները, մատուռներն ու խաչարձանները, որոնցից, մեզ հետաքրքրող տեսանկյունից, ամենաուշագրավը մենաստաններից մեկն է. *«Յարեւելակողմն մենաստանիս ի բարձրաւանդակ մասն նոյն փեղկի լերինն, յորում է եւ սա այս մենաստան, է եկեղեցի Տիրամօր Սբ. Կուսին կառուցեալ, արայժմ սովորաբար ի բնակչաց Անապատ կոչի»*²²²: *«Յայսմ եկեղեցի էր առանձին միաբանութիւն ոմանց միայնակեցաց Հաղբատայ, ուրանոր երեւին ցայսօր աւերակք իցկանց կամ բնակարանաց նոցին»*²²³:

Կ. Ղաֆաղարյանը ևս Հաղբատի տարածքում գտնվող ճարտարապետական կառույցներին ու վիմական արձանագրություններին նվիրված իր աշխատության մեջ ներկայացնում է Անապատ կոչվող սրբավայրն ու նրա մասին եղած տեղեկությունները²²⁴:

²¹⁹ **Յովհաննէս Սարկավագ**, Եթէ արժան իցէ թողուլ զեղբայրս....., «Գանձասար», հ. Զ, Եր., 1996, էջ 327–335:

²²⁰ **Կ. Ղաֆաղարյան**, Հաղբատի ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Եր., 1963:

²²¹ **Յովհաննու Դրիմեցոյ** Պատմութիւն հոչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին, Վիեննա, 1965:

²²² **Յովհաննու Դրիմեցոյ** նշվ. աշխ., էջ 78:

²²³ Նույն տեղում:

²²⁴ **Կ. Ղաֆաղարյան**, նշվ. աշխ.:

Այն այժմ կոչվում է Կուսանաց անապատ, որի անունը եղել է Տիրամոր տաճար կամ սբ. Աստվածածին: Սա կուսակրոնների առանձնանալու վայր, մենակյաց կուսակրոնների աղոթատեղի էր: Հովհ. Գրիմեցուն ծանոթ չէ «Կուսանաց անապատ» անվանումը, նա գրում է «Անապատ» կոչվող եկեղեցու մասին:

Այս վայրը կույսերի՝ վանականների անվան հետ առաջին անգամ կապել է Սարգիս Զալալյանցը՝ եկեղեցին անվանելով Կուսանաց վանք, որից օգտվելով՝ Ռոստոմ բեկ Երզնկյանցը «Անապատ» կոչվող եկեղեցին «Կուսանաց անապատ» է անվանում. «Գոյ փոքրիկ եկեղեցի Նորոգեալ Ի պերս կուսանաց, որք ձգնեալք են ի սմին անապատի: Վասնորոյ և կոչի եկեղեցիս այս Անապատ կուսանացն Հաղբատայ»²²⁵:

Կ. Ղաֆադարյանը, ելնելով եկեղեցու ճարտարապետական կառույցի և զարդաքանդակների առանձնահատկություններից, այն թվագրում է 13-րդ դարով. նրա վրա պահպանվել են ՌՃԻԵ (1676) և ՌՃԼ (1681) թվականներին կատարված վերանորոգումների մասին վկայող արձանագրություններ:

Սակայն դեռևս 11-րդ դարի վերջին և 12-րդ դարի սկզբին մենք հանդիպում ենք այդ՝ «Անապատ» անունը կրող տեղանքին Հովհաննես Սարկավագի վերոնշյալ բանաստեղծության մեջ, ինչպես նաև Վարքում:

Այնտեղ պահպանված են գերեզմաններ, որոնցից մեկի տապանագիրը հետևյալն է. «Արձանս այս սեմական է **սոփեստէսի** տէր Ստեփաննոսի, կազմեալ ի տէր Յոհաննիսէ քվերորդոյ իւրոյ ի թուին ՈՀԴ (1225) »²²⁶:

Արձանագրությունները փաստում են 13-րդ դարը, սակայն Սարկավագի ստեղծագործություններն ու Վարքը թույլ են տալիս ասել, որ դեռևս 1225 թվականից մեկ դար առաջ այդ վայրում պետք է որ հիմնադրված լիներ Տիրամոր տաճարը կամ Սբ. Աստվածածին կոչված մենաստանը, որը, սակայն, ժողովրդի հիշողության մեջ պահպանվել է իր ավանդական անունով՝ Անապատ: Մյուս կողմից՝ հնարավոր է՝ այնտեղ եղած լիներ իմաստասիրական (սոփեստական) դպրոց, որի վարդապետն իր ժամանակին Հովհաննես Սարկավագն է եղել:

Այսպիսով, Անապատը ստույգ վայր է Հաղբատի մերձակայքում, որտեղ եղել է մենաստան, ուր իր աշակերտների հետ գնացել է դասավանդելու կամ առանձնացել է Հովհաննես Սարկավագը:

Վարքում հիշատակվող մյուս ավանդապատումը կապված է Ստեփանոսի՝ Զոմզոմայի կամ վարքագրի մոտ՝ Բարսեղ անունով ամբարիշտ մեկի հետ, որին Սարկավագը նախ առանձին, ապա հրապարակավ հանդիմանում և թույլ չի տալիս պատարագել: Զոմզոման, հարձակվելով Սարկավագի վրա, փորձում է սպանել նրան: Սարկավագը մահվան սպառնալիքի տակ անամոթին ստիպված է լինում թույլ տալ պատարագել, բայց հենց եկեղե-

²²⁵ Ռոստոմ Բեգ Երզնկեանց, Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ աշխարհահոջակ վանից սրբոյ Նշանի, Վաղարշապատ, «Արարատ», 1886, ՌՅԼԵ:

²²⁶ Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ.:

ցում Սարկավագի աստվածային խնդրանքով Ջոնզոնան անդամալույծ է դառնում: Ավանդապատումը վկայում է ոչ միայն նրա հրաշագործության, այլև վարդապետի՝ եկեղեցական գործերին միջամտելու իրավասության մասին:

Հովհաննես Սարկավագի սքանչելագործությունների մասին ստեղծվել են բազմաթիվ ավանդապատումներ, և, ինչպես ասում է վարքագիրը, «*Է և այլ ինչ յոլով սքանչելիք առնն ասարուծոյ...*»²²⁷:

Վարքի շարունակության մեջ անանուն հեղինակը գրում է. «*...պայծառանսար նուալ փառաքանութիւն բանին ասարուծոյ: Որպէս և վարդապետն Պաւղոս ի Տարոն, և աշակերտք նորա՝ Սարգիս Հարքացին, և Սրբեփաննոս և այլք*»²²⁸:

Ինչպես երևում է համեմատություններից, նա էլ իր ժամանակակցի՝ Պողոս Տարոնացու (մահը՝ 1123 թ.) նման համարվել է «*երկրորդ լուսատրիչ երևեալ քանս Հայոց և վէմ ադամանդեայ ընդդէմ հերձուածողաց և յոյժ ախտեան լեալ ուղղափառաց և անպարկառելի վարուք կացեալ ի կեանս իւր ընդդէմ հերետիկոսացն...*»²²⁹:

Սա փաստում է, որ Հովհաննես Սարկավագը եղել ու հիշվել է իբրև Հայ առաքելական ս. եկեղեցու ադամանդյա վեմը՝ ծառացած հերձվածողների ու հերետիկոսների դեմ:

Նրա՝ Հայ առաքելական ս. եկեղեցու վարդապետության հիմնասյուններից մեկը լինելու մի վառ ապացույց է նաև այն, որ հետնորդների հիշողության մեջ դասվում է այնպիսի անձերի շարքում, որոնց վրա էր խարսխված Հայ առաքելական ս. եկեղեցին: Այսպես, 15-րդ դարի նշանավոր մատենագիր Թովմա Մեծոփեցին իր պատմության մեջ²³⁰ հիշատակում է Հովհաննես Սարկավագին՝ իբրև Հայ առաքելական ս. եկեղեցու վարդապետության հիմնասյուններից մեկի. «*Իսկ աշակերտք նորին Կրկեր գոյով՝ ոչ էին առեալ զճաշակ դասնութեան եկեղեցոյ զմեծին Լուսատրչին Գրիգորի, զԱստուածաբանին Գրիգորի, զԱթանասին եւ զԿիրողին եւ զմերոց աստուածաբանիցն զՍրբեփաննոսին Սինեաց, զԱնանիա Շիրակունոյ, զՊողոսի Տարոնացոյ, զՅովհաննու Սարկավագին Հաղբարացոյ, զԴաւիթ փիլիսոփային...*»²³¹:

Հիշատակվում է նաև Դրագարկի Բարսեղ Պիավեցու անունը, ինչը կարող է հուշել կենցաղային մի մանրուքի մասին, այն, որ նույնիսկ տոն օրերին բնավ միս ու կաթ չի ճաշակել, այլ՝ միայն ջուր:

Մինչ Հովհաննես Սարկավագի կենսագրությունն ամբողջացնելը անդրադառնանք սկզբնաղբյուրներում առկա մի քանի կարևոր տեղեկություններ:

²²⁷ Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Սարկավագին..., Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 123:

²²⁸ Նույն տեղում:

²²⁹ Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 388:

²³⁰ «Պատմութիւն համառօտ անօրէն Թամուրին, որ ելեալ ի յաշխարհէն Խորասանու եւ գնաց մինչեւ ի ծովն Ովկիանոս արարեալ Թովմայ վարդապետի»: Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, Եր., 1999:

²³¹ Թովմա Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 53-54:

րի ևս, որոնք լույս են սփռում նրա կյանքին ու գործունեությանն առնչվող այլ խնդիրների վրա:

Սամուել Անեցու պատմության մեջ գտնում ենք Հովհաննես Սարկավագին վերաբերող մի հատված (2-րդ տեղեկություն), որտեղ հիշատակված են Սարգիս և Հովհաննես անունները²³², որը ուսումնասիրողների մանրակրկիտ քննության առարկա է դարձել: Ինչպես հայտնի է, այն տարակարծություններ է առաջացրել հետագա ուսումնասիրողների մոտ, այն է՝ ա) հատվածն ընդմիջարկություն է, բ) Սարգսի անվան հայտնվելն այդ տեղեկության մեջ Սարկավագի անվան աղճատման հետևանք է²³³ և այլն²³⁴:

Մենք ևս այն կարծիքին ենք, որ հետագա ընդմիջարկության հետևանքով է այս հատվածը տեղ գտել Սամուել Անեցու երկում: Թեև այս հատվածը մանրամասնորեն քննել է նաև Մ. Աբեղյանը²³⁵, սակայն ասվածը հաստատենք մեր քննության արդյունքներով:

Նախ սկսենք նրանից, որ

- ա) եթե այստեղ հիշատակված լիներ պատմության հեղինակի՝ Սամուել Անեցու անունը, ապա հեղինակը իր մասին չէր օգտագործի այնպիսի քերականական ձևեր, ինչպիսիք են՝ «ամենեքին սոքա Անեցիք», «Եւ ընկերք **սորա**... Սամուէլ», որոնք վկայում են, որ այս հատվածի գրողն իր մասին չի գրում, այսինքն՝ Սարկավագի ընկերների շարքում չէր թվի նաև իրեն՝ անունով, և ինքն իր մասին չէր գրի երրորդ դեմքով, այլ կնշեր, որ այդ Սամուելն ինքն է, ինչպես այդ անում է այլ դեպքերում²³⁶: Նշանակում է, որ կա՛մ հիշատակված Սամուելն ինքը՝ Սամուել Անեցի պատմիչը չէ, կա՛մ այս հատվածի հեղինակը Սամուելը չէ: Հակված ենք կարծելու՝ վերջինը: Այսպիսով, այս հատվածի հեղինակը Սամուել Անեցին չէ, իսկ այնտեղ հիշատակվածը Սամուել Անեցին է:
- բ) Ինչպես վկայում է Սամուել Անեցին, ինքը պատմում է «շարադրության կարգով», այսինքն՝ տարիների հաջորդականությամբ: Սրա մասին ակնարկում է ՇՀԳ (1124/25) թվականի իրադարձությունները նկարագրելիս: Մի փոքր շեղվելով ու իր ժողովրդի գլխին եկած աղետները նկարագրելով և դրանց պատճառը համարելով մարդկային մեղքերի բազմացումն ու դրա հետևանքով Աստծու՝ իրենցից երես դարձնելը՝ գրում

²³² **Սամուել Անեցի**, նշվ. աշխ., էջ 128: «Այս հատվածը չկա Սամվել Անեցու ժամանակագրության հնագույն երեք ձեռագրերից ոչ մեկում» (**Կ. Մաթևոսյան**, Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները, Եր., 2009, էջ 21):

²³³ **Հ. Ոսկեան**, Հովհ. Սարկավագի կյանքը, Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1925, էջ 28:

²³⁴ Թեև Մ. Աբեղյանը կարծում է, որ կարող է և սխալաբար դրված չլինել: **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Գ, էջ 445-446:

²³⁵ Տե՛ս **Մ. Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, հ. II, Եր., 1946, Առաջին հավելված՝ Սարկավագ վարդապետի կենսագրության շուրջ, էջ 532:

²³⁶ «Այլ **մեք** յերից որդուցն Նոյի **սկսցուք**, Արդ վասն զի **խոստացաք** յերից որդուցն Նոյի» (**Սամուել Անեցի**, նշվ. աշխ., էջ 15 և 75):

է. «Իսկ մեր ի կարգ շարադրութեան գնասցուք՝ զի զանձնէ անբաստանեմք՝ և չէ օգուտ»²³⁷:

Սակայն, այս կարգը շատ տեղերում է խախտված (օր.՝ **ՌՃԼԳ** թվակա-նից հետո գրված է. «**ՌՃԼԱ: Ի ՇՀԸ**. Ամին փոխեցաւ ի Քրիստոս մահուանը վարդապետն մեծ որ Սարկաւագ կոչիր՝ ի Հաղբատ»²³⁸), և, իհարկե, դրանց հեղինակը Սամուել Անեցին չէր կարող լինել:

Երբ ուշադրություն ենք դարձնում մեզ հետաքրքրող ժամանակագրական մի որոշակի հատվածի, նկատելի է դառնում, որ ժամանակագրությունը ներկայացված է երեք տոմարական իրողություններով, այն է՝ Հայոց մեծ թվականով (**ՇՀ**, **ՇՀԱ** ևն), Փրկչական կամ Կենարարի թվականով (**ՌՃԻԱ**, **ՌՃԼԷ** ևն՝ զամս ծննդեան Քրիստոսի²³⁹) և այս երկուսի զուգադրությամբ (**ՌՃԻԱ. Ի ՇԿԸ**. ևն): Ըստ Հովհաննես Սարկավագի կանոնի՝ Հայոց մեծ և Փրկչական կամ Կենարարի թվականների տարբերությունը մշտապես 553 տարի է: Այս հաստատունը Հովհաննես Սարկավագի խմբագրության արդյունք է՝ «Կալ ՇԾԳ (553) և զհայդ՝ կենարարին է»²⁴⁰, «Եւ անտի մինչև ի հայ թուականին դիր ամբ ՇԾԳ...»²⁴¹, որն օգտագործում է Սամուել Անեցին զուգադրումներ կատարելիս:

Սակայն այս հատվածում առկա են այս կանոնի 2 շեղում, որոնք հանդիպում են, երբ ներկայացվում են հետևյալ թվականների զուգադրությունները՝

1. **ՌՃԻԱ** (= 1121) = **ՇՁԸ** (= 588), որոնց տարբերությունը **533**²⁴² տարի է, իսկ
2. **ՌՃԼԳ** = 1133 = **ՇՀԹ** = 579 (1133-579 = 554) տարբերությունը՝ 554 տարի:

Սա ցույց է տալիս, որ այս զուգադրություն կազմող հեղինակը կա՛մ չի առաջնորդվել Սարկավագադիր թվականի կանոնով, կա՛մ չի տիրապետել Սարկավագադիր տոմարի առանձնահատկություններին, որը Սամուել Անեցին լինել չէր կարող, քանզի նա, լինելով Հովհաննես Սարկավագի ժամանակակիցն ու աշակերտը (ինչպես հաղորդում է Վարդան Արևելցին՝ «յիշատակք ճառագայթիցն փայլին մինչև ցարդ ի բանս իւր և ի նմանէ աշակերտեալսն»²⁴³), չէր կարող չհիմանալ այդ օրինաչափությունը և սխալ հաշվարկ կատարել, կա՛մ էլ գրչական սխալ է:

²³⁷ Սամուել Անեցի, նշվ. աշխ., էջ 128:

²³⁸ Նույն տեղում, էջ 129:

²³⁹ «Ջամս ծննդեան Քրիստոսի այսպէս արա. **Կալ ՇԾԳ (553) ամ, զհայ թուականն ի վերաբեր և այն է**» (**Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Եր., 1956, էջ 205):

²⁴⁰ Հովհաննեսի «Պատձէն տոմարի» աշխատությունը, **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Եր., 1956, էջ 215, 279:

²⁴¹ Նույն տեղում:

²⁴² 533 թիվը հուշում է նաև, որ այս դեպքում կատարվել է գրչական ակնառու սխալ՝ **Խ**-ն **Ի** է դարձել (Ի մեծ թվականէն ՇԾԳ (553) ի բաց երթ՝ փոքր է (**Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 205):

²⁴³ Ըստ հրատարակության՝ Սամուել Անեցին Գէորգին է համարում իր վարդապետը:

Բացի այդ, երկու տեղում խախտում է առաջացել տարիների հաջորդականության մեջ, և այն էլ մեզ հետաքրքրող՝ ՇՀԸ (578) (մի դեպքում՝ Սարգիս վարդապետի ու նրա աշակերտների, մյուսում՝ Հովհաննես Սարկավագի մահվան) թվականի առաջին անգամ գործածության ժամանակ: Առաջին անգամ՝ ՇՀԸ = 578 թվականը դրվել է ՇՀԷ = 577 թվականից առաջ:

Տարիների հաջորդականության խախտումը ևս կարող է հաստատել, որ այստեղ այն հայտնվել է ընդօրինակողի կողմից, և, ըստ Մ. Աբեղյանի²⁴⁴, Լ. Խաչիկյանը հետագայում հանդիպել է բնօրինակին առավել հարազատ ձեռագրի²⁴⁵, որտեղ բացակայում է այս հատվածը:

Տարիներ անց Սամուել Անեցու մատենագրության ուսումնասիրությունը Կ. Մաթևոսյանին ևս հանգեցրել է այն եզրակացության, որ այս հատվածն ընդմիջարկություն է²⁴⁶:

Վարդան Արևելցուց «Էին և վարդապետք...» քաղվածքի առաջին մասը համարյա համապատասխանում է Սամուել Անեցու պատմության մեջ կատարված ընդմիջարկությանը, միայն թե Վարդանի մոտ փաստագրվել է Սարկավագ անունը, և չկա Հովհաննես անունը:

Թեև այս տեղեկությունն ընդմիջարկություն է, սակայն քննությունը շարունակենք, քանի որ կարծում ենք, որ ընդմիջարկություն կատարողը պատահական մարդկանց մասին տեղեկություն չէր գետեղի ժամանակի կարևորագույն պատմագրության մեջ: Այդ իսկ պատճառով անդրադառնանք տեղեկության հիշատակած Սարգսի և Հովհաննեսի խնդրին, քանի որ դրա հիմքում ընկած պիտի լինեին ինչ-ինչ փոխառնչություններ այդ անձերի և մեր կողմից ուսումնասիրվող հեղինակի միջև:

Ովքե՞ր կարող էին լինել ընդմիջարկողի հիշատակած Սարգսի և Հովհաննեսը: Հովհաննես Սարկավագի տոմարական ժողովածուին նվիրված մեր նախորդ հոդվածում²⁴⁷ ևս անդրադարձել ենք Սարգսի հարցին, մանավանդ որ Սարկավագը Սարգիս անունով մեկին հղած նամակներ ու «Առ Սարգիս. Ողբք.» ունի, և առաջարկել այդ անվան տակ տեսնել 11-րդ դարի անվանի Սարգիսներից՝ կա՛մ Սարգիս Սևանցուն (վարդապետ), կա՛մ Սարգիս Կունդին²⁴⁸՝ առանց մանրագնին քննության ենթարկելու այդ տեսակետը:

²⁴⁴ Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, էջ 445-446: Այս տեղեկության համար Մ. Աբեղյանը 5-րդ տողատակում բերում է Լ. Խաչիկյանի այն բանավոր հաղորդումը, որի համաձայն, Սարգսին վերաբերող այս հատվածը չի եղել 1176 թվականին ընդօրինակված 5619^{հմ} ձեռագրում, որն ավելի վաղ և հենց Սամուել Անեցու ձեռագրից է ընդօրինակվել: Եվ բնական է ենթադրել, որ այդ հատվածը հետագայում արված ընդմիջարկություն է: «Ուրիշ խոսքով՝ ներմուծումը եղել է Սարկավագ անվամբ, որ հետո դարձել է Սարգիս: Բայց ներմուծումը կարող է հենց սկզբից Սարգիս անունով եղած էլ լինել»:

²⁴⁵ ՄՄ 5619^{հմ} ձեռ.:

²⁴⁶ Կ. Մաթևոսյան, Սամուել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները, էջ 20-21:

²⁴⁷ Գ. Սիմոնյան, Ռ. Վարդանյան, Հովհաննես Սարկավագի «Մեկնություն տոմարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուն, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Եր.. 2006: Եր. համալսարանի հրատ., էջ 58-97:

²⁴⁸ Հր. Աճառյանը, հիմնվելով մի շարք աղբյուրների տեղեկությունների վրա (մանրամասները տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 415-416), գրում է. «Խորանա-

Նախ նշենք, որ Խորանաշատ վանքը և նրա վարդապետական դպրոցը, որտեղ իբրև թե՛ Սարգիս Կունդն աշակերտել է Հովհաննես Սարկավագին, հիմնադրվել է XIII դարի առաջին կեսին Վանական Վարդապետի կողմից, որով միանգամայն անտրամաբանական է դառնում Կունդի վարկածը:

Այդ պատճառով վերստին փորձել ենք անդրադառնալ Հովհաննես Սարկավագի հետ առնչվող Սարգիսների ինքնության խնդրին:

Սարգիս անունը փաստված է Հովհաննես Սարկավագի «Նորին (Յովհաննու) առ Սարգիս. Ողբք» և «Առ Սարգիս» բնագրերում: Ըստ «Նորին (Յովհաննու) առ Սարգիս. Ողբք»-ի, որն ակրոստիքոս՝ ծայրակապ է (բանաստեղծության 40 տողերից յուրաքանչյուրն սկսում է «**Յովհաննէս քահանայ Սարգիս Մեծի խնդալ ՅԱԾ կենդանի**» ծածկագրի տառերով), Սարգիսն անվանվել է Սարգիս Մեծ²⁴⁹:

Բանաստեղծի՝ իր անունից հանդես գալը «Նորին (Յովհաննու) առ Սարգիս. Ողբք»-ում, առաջին հայացքից, թվում է սուսկ բանաստեղծական հնարք: Սակայն այն վերածվում է կենսագրական փաստի, երբ նկատի է առնվում բանաստեղծության տեսակի ընտրությունը, այն է՝ ծայրակապը (ակրոստիքոսը), ինչը հնարավորություն է տալիս ծածկագրել ոչ միայն այն անձի անունը՝ Սարգիս Մեծ, ում ուղղված էր, այլև իր անունը՝ Հովհաննես քահանա (գուցեև հետագայում տարածելու կամ էլ «գրաքննությունը» շրջանցելու համար²⁵⁰):

Բանաստեղծության ծածկագիրը աներկբայորեն հաստատում է, որ հեղինակն անհայտ պատճառով գաղտնագրել է թե՛ իր և թե՛ Սարգիս Մեծի անունը:

Բանաստեղծական այս ձևի՝ ծայրակապի ընտրությունը մեզ թույլ է տվել ենթադրել, որ Սարկավագն ինչ-ինչ սխալների պատճառով մերժվել է Սարգիս Մեծի կողմից և խնդրում է նրա ներողամտությունը²⁵¹, և Սարգիս Մեծը Հաղբատավանքի եպիսկոպոսության առաջին առաջնորդն է Սարգիս Ա-ն է:

Առաջնորդին «Մեծ» անվանելը ենթադրում է նաև համաժամանակակից մեկ այլ անվանի Սարգսի գոյությունը, որից տարբերվելու համար էլ նրան ասել են Սարգիս Մեծ: Իսկ Սարգիս Ա կոչվելով փաստվում է, որ հետագայում այդ անունով այլ առաջնորդներ պետք է ունենար Հաղբատավանքը:

Նկատենք, որ Սարգիս Առաջինը կարող էր լինել Հովհաննես Սարկավագի հասակակիցն ու ընկերներից մեկը, բայց ո՛չ ուսուցիչը կամ աշակերտը:

շատ վանքում աշակերտել է Յովհաննէս Սարկավագ վարդապետին: ...», որի աղբյուրը, մեր կարծիքով, Գ. Զարբհանայանի տեղեկությունն է, որին կանոնադառնանք ավելի ուշ:

²⁴⁹ Սարգիս Մեծ անունով հայտնի է նաև Զաքարե Սպասալարի և Իվանե աթաբեգի հայրը, ով եղել է Անիի կառավարիչը 1163 թվականից, ինչը բացառում է նրա առնչությունը Հովհաննես Սարկավագի հետ:

²⁵⁰ Է. Զրբաշյան, Հ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, Եր., 1980:

²⁵¹ Այս տեսակետը կհիմնավորվի նրա գրական երկերի մեկնաբանության ընթացքում:

Լինելով Հաղբատի առաջնորդը՝ Սարգիս Մեծը կարող էր ի պաշտոնն պահանջել քաջահմուտ վարդապետից՝ մեկնելու հայկազյան տոմարը. «Պահանջեցեր յինէն, ուսումնասէ՛ր, վասն հայկազնեան Կրումարիս...»²⁵²:

Խնդրի պարզաբանման համար ուշագրավ է նաև 1110 թվականին «Առ Սարգիս» գրված նամակը: Վերնագրից ելնելով՝ Սարգսի հրաման-խնդրանքով է Հովհաննես Սարկավազը «երկրորդել» տոմարի մեկնության հետ կապված շատ խնդիրներ: Գլխագրից բացի՝ նամակում չի գործածվել Սարգիս անունը, այլ՝ Հովսեփ՝ «Եւ արդ՝ դու ի՛մ Յովսէփ քաջասունդ և պարկեշտագեղ...», «Եւ դու անձկալիդ իմ և քաջաշտրի», որոնցից հստակորեն հայտնի է դառնում, որ Հովհաննեսը ոչ միայն գովասանքի խոսքեր է հղում նամակի հասցեատիրոջը տոմարական հարցերով շահագրգռված լինելու պատճառով, այլև կարծում ենք, որ այլաբանորեն է Հովսեփ անվանել նրան՝ նկատի ունենալով աստվածաշնչային Հովսեփին՝ Հակոբի կրտսեր որդուն, ում եղբայրները վաճառեցին, և տարվեց Եգիպտոս, որտեղ էլ նա դարձավ իմաստուն կառավարիչ կամ վերակացու: Իսկ, եթե կարելի է այսպես ասել, կառավարչի կամ վերակացուի դիրք ունեւ Սարգիս Առաջինը՝ Հաղբատի առաջնորդը, և այս նամակն ուղղված է եղել հենց նրան, ու նրա խնդրանք-հրամանով է Հովհաննես Սարկավազը «երկրորդել» տոմարի մեկնության հետ կապված խնդիրները:

Սարգիսը Կիրիկեանց Կիրիկե Բ թագավորի դռան երեցն էր, որը «եղավ եպիսկոպոս և առաջնորդ Հաղբատի «1081» (ուղղել՝ 1082 թ. – Գ. Ս.), և նրանից է սկսվում Հաղբատի եպիսկոպոսական հաջորդությունը: Վանքի համար շինել է ջրաղաց, որ դարձել է «ազատաղաց», տնկել է այգիներ և պարտեզներ «1086 թ.», ինչպես հիշատակում է իր արձանագրության մեջ: Ունի ևս մի արձանագրություն 1089 թվից:

«Սարգիս առաջին, աւագ երէց արքունի դրան Կիրիկեայ արքայի որդւոյ Անհողինին Դաւթի ի ՇԼԱ. թուականին հայոց, յամի Տեառն 1082. հրամանաւ նորին Կիրիկեայ ձեռնադրեալ ի կրկին կաթողիկոսաց արքեպիսկոպոս Հաղբատայ, նստի առաջնորդ: Սա ինքն Սարգիս յառաջնորդութեան իւրում անդ ի թուին ՇԼԵ. յամի 1086, ի տեղուջն Խանջակաձոր կոչեցեալ տնկեաց գորախտ մեծ ազգի պտղաբեր ծառովք եւ տնկովք վայելչազարդեալ ի զբօսանս կրոնաւորաց Հաղբատայ եւ առ նովաւ այգի մեծ եւ ջրաղաց մի ձրիաղաց, գոր ինքն Ազատաղաց ասէ եւ ի նմին տեղուջ կանգնեալ զխաչ մեծ եդ ի նա արձանագիր յետուստ կողմանէ այսպիսի. «Ի ՇԼԵ. թուականիս, **ես տէր Սարգիս առաջնորդ որ ուխտիս Հաղբատայ** շինեցի զջրաղացս եւ արարի ազատաղաց, արկի եւ զայգիս տնկեցի եւ գորախտս զանազան մրգաբերաւք ի փառս սրբոյ Նշանին եւ ի վայելումն տանս Հաղբատայ: Իսկ առաջի կողմանէ այսր խաչարձանի է այլ արձանագիր սորին Սարգսի

²⁵² Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., Մեկնութիւն տոմարիս Հայկազնեայ, էջ 222:

փորագրեալ օրինակ այս է. «**Ի ՇԼԸ թուին (յամի 1089) ես տէր Սարգիս առաջնորդս Հաղբատայ** կանգնեցի գնշանս տէրունական՝ զէն հաւատացելոց եւ պահապան թագաւորաց մերոց Կիրիկէի, Սմբատայ եւ Դաւթի զարմի սոցա»²⁵³:

Հովհաննէս Սարկավագի՝ Սարգիս անունով աշակերտի մասին վկայություն եւ կա պահպանված մի հիշատակարանում, որը ներկայացրել է Ղ. Ալիշանը. «...կայարեցաւ հոգեւորոց փառս մեկնութեան սուրբ աւերարանին Յոհաննու, զոր կարգեալ և ուղղեալ բազում աշխարհութեամբ մեծի իմաստնոյ Սարգիս կոչեցեալ, աշակերտ երիցս երանեալ սուրբ վարդապետի Սարկաւագ կոչեցեալ, որ և նմա համոզեալ ի սոյն խորհրդի, ժողովեալ բանս պարշաձաւորս յաղագս օգրի լսողաց և ուսումնասիրացն ընթերցողաց»²⁵⁴:

Նկատենք նաև, որ Սամուել Անեցու պատմության մեջ Սարգսի անունը հանդիպում է նաև **ՌՃԻԱ** = 1121 = **ՇՁԸ** = **588** (1121-588 = 533) թվի՝ երկրաշարժից Գանձակ քաղաքի կործանումն ու Հաղբատի վանքի փլուզումը²⁵⁵ նկարագրելիս, վերջինիս հետևանքով **Սարգսի** ու **Գրիգորի (Թորակերի որդու)** մահը փաստագրելիս, որտեղ, ինչպես կտեսնենք, կատարվել է նաև գրչական սխալ և տարիների հերթագայության խախտում. «**ՌՃԻԱ (= 1121): Ի ՇՁԸ (= 588) թուին՝ ի ԺԷ. արեգ ամսոյ շարժմամբ կործանեցաւ Գանձակ քաղաք. և սուրբ վարդապետքն՝ Գրիգոր և Սարգիս՝ ընկղմեցան, և եկեղեցին Հաղբատայ փլուզանի. և ի նոյն ամի Խարասնդունն զԻւանէ տեար ի Գանչէնքն**»²⁵⁶:

Այս տեղեկության մասին նախ ասենք, որ **ՌՃԻԱ** (1121) = **ՇՁԸ** (588) (1121-588 = 533) զուգադրության մեջ առկա է նաև **Խ** > **Ի** -ի գրչական սխալը, այն է՝ **ՌՃԻԱ-ն պետք է ուղղել ՌՃԽԱ**²⁵⁷, որ համապատասխանի Սամուել Անեցու տոմարական հաշվումների համակարգին, քանի որ պատմական այլ աղբյուրներ վկայում են դրա օգտին:

Այսպիսով, Սարգիսը մահացել է Գանձակի երկրաշարժի ժամանակ, երբ փլուզվել է նաև Հաղբատավանքը՝ 1139 ներկա թվականին = Կենարարի 1141՝ ՌՃԽԱ թվին: Գրչական սխալի հետևանքով ՌՃԽԱ-ն դարձել է ՌՃԻԱ,

²⁵³ **Յովհաննու Ղրիմեցոյ** Պատմութիւն հոչակատր վանից Հաղբատայ Ս. Նշանին, Վիեննա, 1965, էջ 99 նն: (Մխիթարեան տպարան, էջ՝ 184): Այս արձանագրությունը հիշատակում է նաև Կ. Ղաֆադարյանը, էջ 262-263:

²⁵⁴ **Ղ. Ալիշան**, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 371:

²⁵⁵ Վարդան Արևելցիին Գանձակի երկրաշարժը դնում է ներկա **1139**, այն է՝ Փրկչի **ՌՃԽԱ՝ 1141** թվին:

²⁵⁶ **Սամուել Անեցի**, նշվ. աշխ., էջ 132:

²⁵⁷ **ՌՃԽԱ** ուղղման օգտին են վկայում Տավուշի վիմական արձանագրություններից մեկի 2-րդ ու 3-րդ տողերը, որտեղ փաստված է այդ կործանարար երկրաշարժի տարեթիվը՝ «Ի ԱԿԻ. **ՇՂ**: ԲԱՐԿՈՒԹԻԻՆՆ ՇԱՍԵԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԶՏԻԵԶԵՐ...ԱՀՌՉԱԿ ՔԱՂԱՔՆ ԳԱՆՉԱԿ ԿՈՐԾԱՆԵԱՑ...» (**Սուրեն Սաղումյան, Արտաշես Շահնազարյան**, Տավուշի պատմության էջերից, Տավուշի շրջանային «Այգաբաց» թերթ, 1991 թ. օգոստոսի 17, № 65): ՇՂ (590) թվականը համապատասխանում է Փրկչական **ՌՃԽԱ** (1141) թվականին կամ Դիոնիսիոսի կամ ներկա 1139 թվականին:

սակայն նրան ձիշտ է զուգադրված Հայոց մեծ թվականը՝ ՇՁԸ = ՌՃԽԱ, որը դարձել է Սարկավագի մահվան թվականներից մեկը Վարդան Արևելցու մոտ:

Կենարարի ՌՃԽԱ-ին՝ 1121 = ներկա 1119 թվականը, որը համապատասխանում է Հայոց մեծ թվականի ՇԿԸ տարուն, հետագայում դառնում է Սարկավագի մահվան թվականի տարբերակներից մյուսը՝ դարձյալ Վարդան Արևելցու մոտ, որոնք վկայում են, որ աղձատված է եղել Սարգիս անունը և շփոթել են Սարկավագի հետ, մասնավանդ որ Սարգսի հետ գետնաստույգ եղած Թորակերի որդի Գրիգորը Սարկավագի ընկերն ու համերկրացին էր:

Փաստորեն Սարգիս վարդապետը մահացել է 1139 ներկա թվականին, որը կարող էր շփոթության հիմք դառնալ ընդօրինակողների համար, եթե աղձատված լիներ Սարգիս անունը, և կարդային Սարկավագ:

Տեղեկությունների վերլուծությունից մենք հանգել ենք այն համոզման, որ դրանցում հիշատակված Սարգիսներից մեկը Հաղբատի առաջնորդ Սարգիս Ա-ն է, իսկ երկրորդը՝ Սարգիս վարդապետը:

Ժամանակագրական փոքրիկ հատվածի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ տարաբնույթ աղավաղումների մեջ երկու տեղ հանդիպող Սարգիս անուններից (Սարգիս վարդապետ՝ Փառիսուսից²⁵⁸ և Սարգիս Ա) առաջինը՝ Փառիսուսցի, քահանայական տոհմից, և իր՝ վարդապետը լինելու մասին տեղեկությունները Սամուել Անեցին չի դրել:

Հովհաննես Սարկավագի և երկու Սարգիսների հետ առնչություն ունեցող երեք տեղեկություններից, որոնք կատարվել են ՇՀԸ = 578, ՌՃԼԱ = 1131 = ՇՀԸ = 578 (1131-578 = 553), ՌՃԽԱ = 1121 = ՇՁԸ = 588 (1121-588 = 533) թվականներին, անխաթար է միայն Հովհաննես Սարկավագի մահվան թվականը, այն է՝ Փրկչական ՌՃԼԱ = 1131 կամ Հայոց մեծ թվականի ՇՀԸ = 578 թվականը, որ համապատասխանում է ներկա **1129/1930** թվականներին:

Այժմ անդրադառնանք այն խնդրին, թե քննարկվող ընդմիջարկված տեղեկության մեջ հիշատակված Հովհաննեսը Սարկավագ մականվանյալն է, թե՞ խոսքը մեկ ուրիշի մասին է:

Ինչպես վկայում է Վարքը, Հովհաննես Սարկավագի վարդապետը եղել է Ուռձացին՝ Գեորգը, իսկ Սարգիս Ա-ն, ինչպես ասվեց, եղել է Հաղբատի եպիսկոպոսության առաջին առաջնորդը, և պետք է որ լիներ համարյա Հովհաննես Սարկավագի հասակակիցը կամ քիչ ավելի մեծ: Ըստ այսմ՝ Սարգիս Առաջինը չէր կարող լինել Հովհաննես Սարկավագի վարդապետը, մյուս կողմից՝ Հովհաննես Սարկավագը չէր կարող լինել Սամուել Անեցու դասընկերը: Հետևում է, որ Սարգսի անունը նույնիսկ ձիշտ գրված լինելու դեպքում խոսքը Հովհաննես Սարկավագի մասին չէ:

Հատկապես շփոթության ապացույց կարելի է դիտել այն փաստը, որ այն, ինչ Սարգսի մասին մեզ է հասել «Սամուել Անեցու» ընդմիջարկողի

²⁵⁸ Ասենք նաև, եթե Սարգիս Մեծը Փառիսուսից լիներ, ապա անպայման Կիրակոս Գանձակեցին նրա անունը կհիշատակեր փառիսուսցիների շարքում:

ավանդածով, համարյա բառացիորեն նույնը հաղորդում է Վարդան Արևել-
ցին Հովհաննես Սարկավագի մասին²⁵⁹:

Բացի այդ, եթե Արշակ Տեր-Միքելյանը Սարգսի աշակերտներից Հով-
հաննեսի անվան տակ հասկացել է Հովհաննես Սարկավագին, ապա դա մի-
անգամայն անհնարին է և մեջբերման թյուրըմբռնում²⁶⁰, քանզի «ընկերք սո-
րա» արտահայտությունը վերաբերում է Երեմիա Անձրևին և ոչ թե Սարգսին:
Նախ՝ ըստ տեղեկությունների, Սամուել Անեցին մահացել է, մոտավորապես,
1173–1180–ական թվականին²⁶¹, նշանակում է, որ նա ծնվել է մոտավորապես
11–րդ դարի վերջին կամ 12–րդ դարի սկզբին, իսկ այդ ժամանակ Հովհաննես
Սարկավագը պիտի լիներ 45–50–ամյա հասակում, և, բնականաբար, նրա
հետ միաժամանակ աշակերտել չէր կարող, այլ միայն՝ ուսուցանել, և այս-
տեղ հիշատակված Հովհաննեսը վստահաբար Սարկավագը չէ: Առավել հա-
վանական է դառնում Սարգիս և Սարկավագ անունների շփոթությունը, ինչը
կարելի հաստատել նաև Վարդան Արևելցու տեղեկությամբ:

Հովհաննես Սարկավագին վերաբերող մի տեղեկություն ևս կարելի է
քաղել Սամուել Անեցու պատմությունից: Այն Ղրզիլ ամիրայի կողմից Հաղ-
բատը գրավելու և Սանահինն այրվելու մասին տեղեկությունն է, ըստ որի՝
ՅԾԳ (1105) թվականին Խրզըլը (սելջուկ Ղրզիլ ամիրան) գրավեց Լոռին և
Հաղբատն ու Սանահինն այրեց²⁶²: Նույնն է վկայում նաև Մխիթար Այրիվա-
նեցին, միայն տարեթիվը անորոշ է թողնում՝ 1101–ից 1111 թթ.²⁶³:

Կարծում ենք, որ Լոռու, Հաղբատի գրավումից ու Սանահինի այրվելուց
հետո էլ՝ 1105–ից մինչև 1110 կամ 1111 թվականը, Հովհաննես Սարկավագը
դեռևս գտնվել է Անիում, քանի որ 1110 թվականին գրել է «Առ Սարգիս»
գրությունը: Մեր կարծիքով, քանի որ այն ուղղված է եղել Հաղբատի առաջ-
նորդին, ապա վստահաբար այդ ժամանակ՝ 1110 թվականին, Սարկավագը
Հաղբատում չի եղել:

Ըստ Վարդանի տեղեկության՝ Հովհաննես Սարկավագի աշակերտներն
են եղել Երեմիա Անձրևիկը, Սամուել երեցը, Գրիգորը՝ Թոքակերի որդին²⁶⁴,
Աղվանքում ձգնող Խոնթկա որդի Պետրոսը, Հակոբ Սքանչելին և այլք, իսկ
արքայական ընտանիքի երկու կանանց՝ Խորասուին ու Մարիամին, խրատա-
կան նամակներ է գրել:

²⁵⁹ Տե՛ս Վարդան Արևելցու 2–րդ տեղեկությունը:

²⁶⁰ Ա. Տեր-Միքելյան, «Սամուելի քահանայի Անեցոյ Հուարմունք ի գրաց պատմագրաց յա-
ղագս գիտի ժամանակաց անցելոյ մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ» երկի առաջա-
բանում (էջ Ե)՝ հղելով էջ 128–ի տեղեկությունը:

²⁶¹ Տե՛ս Կ. Մաթևոսյան, Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրա-
ցումները, էջ 29–ը և թիվ 61, 62 տողատակերը: Ինչպես նաև Քրիստոնյա Հայաստան հան-
րագիտարան, Եր., 2002, էջ 884:

²⁶² Սամուել Անեցի, նշվ. աշխ., էջ 121:

²⁶³ Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն հայոց, էջ 61:

²⁶⁴ Սարկավագի՝ Վարդապետաց վարդապետ կոչումը թույլ է տալիս ասել, որ նրան աշակեր-
տել են նաև վարդապետները, այդ թվում՝ նաև իր դասընկերը:

Վարդան Արևելցու տեղեկությունները նույնական են Սարկավագի կենսագրի տեղեկությունների հետ, որոնք բերվեցին սկզբում, և քանի որ Վարքը, ինչպես հայտնի է, ստեղծվել է ավելի վաղ, ապա Վարդանը, ինչպես երևում է, օգտվել է հենց դրանից:

Այստեղ նկատենք մի նրբություն. նրա սաների մեջ ասես առանձնակի տեղ են զբաղեցրել Աղվանից աշխարհից սերող ձգնակյացները և այնտեղ գործունեություն ծավալած անձինք, ինչը նրբորեն կարող է հուշել նրա ծագումը Փառիսոսից, լայն առումով Հայոց Աղվանից աշխարհից, մանավանդ այդ երկրամասում հոգևոր կրթության ու քրիստոնեական դաստիարակության խնդիրները կարևորագույն նշանակություն են ունեցել հայերի համար, և ինչպես ներկայացնում է Մովսես Կաղանկատվացին, դեռևս մոտավորապես 920–1000–ական թվականների վերջերը Փառիսոսի առաջնորդարանը Դավիթ անունով երկու և Մովսես անունով մեկ հայ հայրապետ է տվել Աղվանից աշխարհին²⁶⁵:

Մինչ Հովհաննես Սարկավագի մահվան թվականի խնդրին անցնելը քննենք նաև նրա գործունեության մեկ այլ ոլորտ, այն է՝ «դիվանագիտությունը», որը մեր ոչ անհավանական տեսակետն է՝ թեև հիմնված սուղ տեղեկությունների²⁶⁶ վրա:

Ուշադրություն դարձնելով այն փաստին, որ Բարսեղի հետ բազմաթիվ եպիսկոպոսների ու քահանաների խմբում Մելիքշահի մոտ է գնացել միայն մեկ վարդապետ՝ Հովհաննես Սարկավագը, ենթադրել ենք, որ բազմաթիվ վերոբերյալ պատճառներից բացի՝ չի բացառվում, որ նրա հեղինակությանն ու լեզվական իմացություններին կամ դիվանագիտական կարողություններին է վստահել Բարսեղ Անեցի կաթողիկոսը, որն ավելի համոզիչ է դառնում Հովհաննես Սարկավագ – վրաց թագավոր Դավիթ Շինարար սերտ հարաբերությունների առկայությամբ:

Թեև Կիրակոս Գանձակեցին սաստիկ անձնավորել է Դավթի՝ հայոց հանդեպ ունեցած վերաբերմունքը՝ պայմանավորելով Հովհաննեսին սիրելու հանգամանքով, սակայն վրաց թագավորի այսպիսի վերաբերմունքի պատ-

²⁶⁵ **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., 1969, էջ 271: Մովսես Կաղանկատվացին, «Պատմություն Աղվանից աշխարհի» գրքի ԻԳ գլխում ներկայացնելով Աղվանքի հայրապետների անունները, տարիները և նրանց գործերը, երկու անգամ հիշատակում է Փառիսոսի առաջնորդությունը, որտեղից երկու հայրապետ է ձեռնադրվել Աղվանքում: Դրանցից մեկը՝ տեր Դավիթը, գահակալել է Հայոց մեծ թվականության մոտավորապես 370–371 թվականներից (= 921/922 կամ 922/923 թթ.)՝ 6 տարի, իսկ երկրորդը՝ դարձյալ տեր Դավիթ, ով ձեռնադրվել է հայոց կաթողիկոս Անանիայի ձեռամբ, հայրապետել է նույնպես 6 տարի՝ Հայոց մեծ թվականության 410 թվականից (961/962 թ.):

²⁶⁶ **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, էջ 256: Պատմություն Հայոց արարեալ **Կիրակոսի վարդապետի Գանձակեցույ**, էջ 105:

ճառները կարող էին լինել երկկողմ քաղաքական նպատակներն ու շահերը²⁶⁷.

1. վրաց համար՝ այլահավատների դեմ մղած պատերազմներում²⁶⁸ աջակցությունը Հայոց զորքի ու ժողովրդի դրա համար Վրաստանում Գորի քաղաքն էր կառուցվել՝ բազմաթիվ եկեղեցիներով ու վանքերով²⁶⁹,

2. հայոց ուսումնական կենտրոնների գերազանց որակն ու հռչակը²⁷⁰,

3. Հովհաննես Սարկավագի անձը, այն սրբակեցությունը, որով ապրում էր նա, մյուս կողմից էլ՝ նրա՝ Աստվածաշնչի ու դրա մեկնության լայնածավալ ու խոր իմացությունը, ում օգնությանն էին դիմում նույնիսկ վրացի եպիսկոպոսները²⁷¹, ապա գիտական, թարգմանական, մանկավարժական գործունեությունը Անիում կամ Հաղբատում, որից էլ փորձել են օգտվել վրացիները՝ այնտեղ ուղարկելով սասներ, ովքեր պիտի հմտանային հունարենի իմացության մեջ, թարգմանություններ կատարեին ու տանեին իրենց հայրենիք²⁷²,

4. Դավթի՝ հայ կին ունենալը, որից էլ ծնվել էր Դեմետրե որդին:

«Հայտնի է, որ ԺԲ դարի ընթացքում վրացիները երեք անգամ գրավեցին Անին ու կարճ ժամանակով (1124-1126 թթ., 1161-1164 թթ., 1174-1176 թթ.) իշխեցին այդտեղ: Այդ իրադարձությունների ժամանակ վրաց թագավորները համագործակցել են անեցիների, մասնավորապես նաև հայոց եկեղեցու տեղական առաջնորդների հետ»²⁷³:

Վրաց զորական ուժերի օգնությամբ մահմեդականներից Անիի ազատագրումն իրականացնելու՝ հայոց ջանքերն առաջին անգամ պտուղ տվեցին 1124 թվականին²⁷⁴:

²⁶⁷ «Հայ-վրացական միացյալ թագավորության գոյության հնարավորության գաղափարը կարող էր սկիզբ առնել ԺԸ դարում, ձևավորվել Ժ-ԺԱ դարերում՝ վրաց Բագրատունիների քաղաքականության արդյունքում»: **Պ. Չոբանյան**, Հայ-ուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006, էջ 126: Տե՛ս նաև **Ա. Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Եր., 1957:

²⁶⁸ Հայոց ՇՀԳ թվականին հայերի աջակցությամբ Դավիթը գրավում է Հայոց թագավորանիստ Անի քաղաքը Մանուչեի որդիներից և Սուրբ Կաթողիկեն ազատագրում ստրկությունից (**Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, Եր., 1991, էջ 392):

²⁶⁹ **Մատթեոս Ուռհայեցի**, նշվ. աշխ., էջ 390:

²⁷⁰ 1123-1125 թթ. միջոցին Թբիլիս գումարվում է հայ-վրացական եկեղեցական ժողով, որին մասնակցած հոգևորականների մասին Դավիթ Շինարարի պատմիչը գրում է, թե հայերը «պարծենում էին, թե ինչպես են հասել ամենայն ուսմանց և գիտության գագաթնակետին» (**Լ. Մելիքսեթ-Քեկ**, Հովհաննես վարդապետ Հաղբատացու «Վասն շարժման և սասանութեան երկրի», ՍՍՀՄ ԳԱ հայկ. ֆիլ. «Տեղեկագիր», սերիա 1, թիվ 1, Եր., 1943, էջ 76):

²⁷¹ Սարկավագն իր «Վասն շարժման և սասանութեան երկրի» տիեզերագիտական-օդերևութաբանական երկը գրել է ի պատասխան ոմն վրացի եպիսկոպոսի, ով խնդրել է մեկնաբանել Սողոմոնի LXX 13-14 մատերը (**Լ. Մելիքսեթ-Քեկ**, Հովհաննես վարդապետ Հաղբատացու «Վասն շարժման և սասանութեան երկրի», Պատմաբանասիրական պրպտումներ, Ս. Էջմիածին, 2010, էջ 57):

²⁷² Նույն տեղում:

²⁷³ **Կ. Մաթևոսյան**, Անի, էջ 195:

²⁷⁴ Թեև կա կարծիք, որ վրաց արքունիքը այս խնդրի իրականացման համար օգտագործել է քաղկեդոնականներին (**Կ. Մաթևոսյան**, Անի, էջ 195), սակայն չի բացառվում, որ Հայ առա-

Չի բացառվում, որ Բարսեղ Անեցու՝ Մելիքշահի մոտ գնացած պատվիրակության կազմում ընդգրկվելով հմտացել էր նաև քաղաքական բանակցություններ վարելու արվեստին, և հայերը նրա գործուն մասնակցությամբ են Դավիթ թագավորի հետ բանակցություններ վարել Անիի ազատագրումը նախապատրաստելիս, և, բնականաբար, Դավիթ թագավորն ըստ արժանվույն է գնահատել Հովհաննես Սարկավազի մատուցած «ծառայությունը» կամ փորձել գայթակղել՝ պարգևելով նրան «գեաւղ առընթեր վանացն»²⁷⁵:

Իսկապես էլ, պատմական տեղեկությունները վկայում են, որ այս խնդիրը լուծելու նպատակով հայերը տասնամյակներ շարունակ բանակցել են վրացական կողմի հետ, որի կազմակերպիչն ու իրականացնողը դեռևս ԺԱ դարի վերջերից եղել է հայ հոգևորականությունը²⁷⁶: Քանի որ. «Նախ!... անեցիների քաղաքական զարթոնքը պայմանավորված էր հենց կրոնական խնդրի սրումով (1124 թ.): Ապա՝ քաղաքում բնակվող հայ ազնվականության փոքրաթիվ ներկայացուցիչներն իրենց գոյությունը պահպանում էին միայն Անիի ամիրաների մոտ ծառայելու շնորհիվ և չէին կարող ազատորեն քաղաքական գործունեությամբ զբաղվել՝ ի շահ հայ քրիստոնյա բնակչության»²⁷⁷, և այդ իսկ առումով շատ ավելի շահեկան էր հոգևորականության վիճակը, որ դեռևս Մելիքշահի ժամանակներից ուներ հարկային արտոնություններ՝ հատկապես Բարսեղ Ա Անեցու բանագնացության շնորհիվ: Սակայն Բարսեղ Առաջինը ևս, ինչպես և նրա նախորդներն ու հաջորդները, իբրև կաթողիկոս, բացահայտորեն չհակադրվելու համար Մանուչեի որդի Աբուլասվար ամիրային, որը, ի տարբերություն հոր, այնքան անբարյացկամ էր հայերի նկատմամբ, որ 1064 թվականից սգկիթի վերածված Անիի Կաթողիկեի գլխին բարձրացված մահիկը փոխարինում է ավելի մեծով, կաշկանդված պիտի լինեին վրացական կողմի հետ անձնապես և բացահայտ բանակցելու հարցում, և այդ խիստ պատասխանատու գործը պետք է հանձնարարվեր ամենափորձառու, բանիմաց հոգևորականներից մեկին: Իսկ հայ և վրաց ժողովուրդների պատմական տեղեկությունները պահպանել են միայն Հովհաննես Սարկավազի անունը, ով, հավանաբար, մուտք է ունեցել վրաց արքունիք՝ իրական հարաբերությունների պատճառներն ու նպատակները սքողելով անձնական մտերմության քողի տակ:

Այսպիսով, կարելի է վստահաբար ասել, որ Հովհաննես Սարկավազը, փաստորեն, մասնակցել է Անիի ազատագրման նախապատրաստական աշ-

քելական ս. եկեղեցին էլ էր շահագրգռված մահմեդականներից Անին ազատագրելու խնդրում և չէր խուսափի այդ համագործակցությունից:

²⁷⁵ Լ. Մելիքսեթ-Քեկ, Հովհաննես վարդապետ Հաղբատացու «Վանն շարժման և սասանութեան երկրի», էջ 58:

²⁷⁶ Հիշենք նաև, որ դեռևս Դավիթ Շինարարի ժամանակներում բանակցային գործընթացն իրականացրել են հոգևորականները՝ դպիրները (Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի ու հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 218):

²⁷⁷ Կ. Մաթևոսյան, Անի, էջ 116:

խատանքներին՝ իբրև բանագնաց բազմիցս հանդիպելով վրաց թագավոր Դավիթ Շինարարի հետ:

Կարծում ենք, որ հայոց կողմից հայ-վրացական հարաբերությունների սերտացման և հոգևոր ու քաղաքական «սիրալիրության» մի ուրույն դրսևորում պետք է դիտել Հռիփսիմյան²⁷⁸ կույսերից՝ վրաց կողմից առանձնահատուկ պաշտամունքի արժանացած Նունեի²⁷⁹ խաչը Անի փոխադրելու իրադարձությունը:

1095 կամ Փրկչական 1097 թվականին հանդիսավորությամբ Անի է բերվում Նունեի խաչը, և Բարսեղ Ա կաթողիկոսն այդ առիթով մասնավոր տոն է սահմանում՝ Խաչվերացի ութօրեքին հաջորդող կիրակի օրը՝ «*Ի հինգ հարիւր քառասունն չորս թուին : Առ այսու ժամանակօք եմուր սուրբ խաչն Նունեայ ՚ի յԱնի. այն որ ՚ի յուրացմանն Վազգենի Վրաց առաջնորդի գաղթեցավ ՚ի խորշան լերինն Պարիսարու, ի ձեռն սուրբ Վանականին Անդրէասայ յաշակերպաց արքոյն Սահակայ: Եվ կացեալ անդ զեօթն ամ, և սպա ազդ արարեալ Մամիկոնեանն Գրիգորոյ որդոյ Հմայեկի՝ րարաւ ի Կապոյրն կոչեցեալ բերդն և անդի փոխեցաւ Վանանդ, և կոչեցաւ Վանանդայ խաչ. և ՚ի բառնալն րանն Մամիկոնէից յանօրէնն Սուքմանայ՝ բերաւ յԱնի ՚ի հայրապետութեանն րեառն Բարսղի....»²⁸⁰, այն դեպքում, երբ վրացիներն իրենց դարձը պայմանավորել էին Նունեի քարոզչությամբ ու լուսավորչությամբ՝ ի հակակշիռ Գրիգոր Լուսավորչի:*

Թեև «*հայ-վրացական եկեղեցական բաժանման հետևանքով առաջ եկած երկպառակությունը VII դ. II րասնամյակից ի վեր խորանում է այնքան, որ դարավերջին վրաց քաղկեդոնիկ եկեղեցին աստիճանաբար ստեղծում է հայկականից փարբեր, սեփական եկեղեցու դարձաբանական և նվիրապետական դոգմա*»²⁸¹, սակայն պատմաքաղաքական իրադարձությունների զարգացման այնպիսի ժամանակահատվածում, ինչպիսին 11-12-րդ դարերն էին, երբ անհրաժեշտություն էր առաջացել միավորելու հայ-վրացական ռազմական ու հոգևոր ուժերը միացյալ թշնամու՝ մահմեդականության դեմ, անտեսվում են

²⁷⁸ «VII դ. արդեն, երբ հատկապես բորբոքվում է Հռիփսիմյան կույսերի պաշտամունքը, Նունեին կապել են Հռիփսիմյանների հետ, իբրև նրանցից մեկը: Դա կա՛մ արվել է Նունեին պատմականացնելու համար, հետևաբար և, գիտակցաբար: Կա՛մ էլ արդեն առաքելուհու ճանաչում և համարում ստացող Նունեին, եկեղեցու պաշտոնական դարձաբանական դոգմային անժամանակ չհակադրելու համար, համարել են Հռիփսիմյան վկայուհի, որն էլ հետագայում ներմուծվել է գրավոր պատմություն, իբրև առաքելուհու կենսագրության մի փաստ, հետևաբար, տարերայնորեն, անգիտակցաբար» (Ա. Սահակյան, Հայ-վրացական եկեղեցական միասնության պատմակտումը (VII դարի սկիզբ), ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի Տարեգիրք, Երևան, 2007):

²⁷⁹ Նունեն դարձաբանական պատմության քննված տվյալների հիման վրա ներկայանում է որպես Քրիստոսի տեղական տարբերակ՝ վրաց ժողովրդական քրիստոնեական միջավայրում (Ա. Սահակյան, նշվ. աշխ.):

²⁸⁰ Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 115:

²⁸¹ Ա. Սահակյան, Վրաց դարձի պատմության մշակութաբանական քննություն, Տարեգիրք ԵՊՀ աստվածաբանության ֆակ., 2007:

նահիկին քաղաքական ու դավանաբանական հակասությունները և առաջին պլան է մղվում դավանաբանական հանդուրժողականությունը, որն էլ պետք է դառնար այս ժողովուրդների քաղաքական դաշինքի հիմքերից մեկը: Ահա թե ինչպես պետք է հասկացվի Վարդան Արևելցու այն ասածը Դավիթ թագավորի մասին, թե «Եւ ոչ էր նա երկմիտ յեկեղեցոյ և յաղօթից մերոց. վասն որոյ բազում անգամ դնէր զգլուխ իւր ՚ի ներքոյ ձեռաց մերոցն՝ ինդրելով օրհնութիւն» կամ Կիրակոս Գանձակեցունը՝ «...Կարի յոյժ սիրէր զսա թագաւորն Վրաց...»²⁸² ևն:

Ասենք նաև, որ Դավթի վերաբերմունքը եթե պայմանավորված լիներ միայն Հովհաննես Սարկավագի անձով, ապա նրա ու վրաց թագավորի սրտակից բարեկամությունն առաջին հայացքից թույլ է տալիս նաև հակառակ եզրակացության հանգել, այսինքն՝ հնարավոր է, որ Հովհաննեսը ինչ-ինչ զիջումների գնացած լիներ քաղկեդոնիկ վրաց եկեղեցուն, որի հետևանքով էլ ձևավորված լիներ այդ սրտակից բարեկամությունը:

Սակայն կարևոր ենք կրկին, որ այդպիսի հարաբերությունների գլխավոր պատճառը երկուստեք քաղաքական շահերն ու դրանց հասնելու համար թափված ջանքերն էին, որոնք Անիի համար Դավթի մղած պատերազմում առաջին անգամ պսակվեցին վրաց և հայ ժողովրդի հաղթանակով (1124 թ.), մանավանդ որ Հովհաննես Սարկավագի ողջ աստվածաբանական ժառանգությունն ու անգամ նրա մասին հյուսված ավանդապատումն էլ՝ կապված ոմն Զոնգոնա՝ Ստեփանոսի կամ Բարսեղի հետ, ապացուցում են, որ նա չէր կարող ընկրկել Հայ առաքելական ս. եկեղեցու վարդապետության կանոններից և եղել է նրա ջատագովն ու նախանձախնդիրը:

Կարծիքներ կան, որ Հովհաննես Սարկավագը, հավանաբար, Հաղբատ է վերադարձել սելջուկների կողմից Անին վերագրավելուց հետո (1125 թ.), ինչի մասին պատմական տեղեկություններ չկան:

Կենսագրությունն ամփոփելու համար վերստին դառնանք Հովհաննեսի Վարքին:

Վարքագիրը հաղորդում է նրա մահվան թվականը. «Եւ այսպէս **բարտք կացեալ ի ժիր մշակութեան** (ընդգծումը մերն է- Գ. Ս.), չոգաւ առնուլ զվարձն ի յախրենական ժառանգութեան: Եւ եղավ ի հանգաւարանի սրբում ի Հաղպատ»²⁸³, ուր սրնաւ և վարժեցաւ ի փառս տեսառն աստուծոյ **թվ[ին] Շ[ՀԸ (1129/1130 թթ.)]**»²⁸⁴, որով նաև սկսված էր Վարքը. «Յետ վարելոյ զքաղաքականութիւն երկնաքաղաքական վարուց, պարկերն ճշմարութեան և քանոն կարգաց, երիցս երջանիկ վարդապետն Յովհաննէս, և անուն բարդ՝ Սարկա-

²⁸² Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 105:

²⁸³ Նրա աճյունն ամփոփված է «հանդէպ զանգակատանն յարևմտից ի գերեզմանատանն նշանաւոր եպիսկոպոսաց եւ վարդապետաց» (Յոհաննու Արիմեցոյ Պատմութիւն, էջ 85-86):

²⁸⁴ Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Սարկաւագին..., Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 124:

ւագն, եհաս ի կէտր և յաւարտր բարոնք կենաց ճանապարհին ի ՇՀԸ (1129/30) թուականին և եղաւ պատուով ի քնարանի հանգապեան ընդ ամենայն սուրբս»²⁸⁵:

Սարկավագի մահվան թվականը ՇՀԸ (578) են հաղորդել Սամուել Անեցին. «**ՌՃԼԱ** (= 1131) = **ՇՀԸ (578)** ամին փոխեցալ ի Քրիստոս մահուամբ վարդապետն մեծ որ Սարկաւագն կոչիր' ի Հաղբար»²⁸⁶, Կիրակոս Գանձակեցին. «Եվ այսպիսի բարոնք քաղաքավարութեամբ կեցեալ յաշխարհի' փոխեցաւ ի Քրիստոս աշխարասերն ի Հաղբար. և թաղեցինն յարևելից կուսէ եկեղեցոյն մեծի առ դուրդ փոքրագոյն եկեղեցոյն, զոր յետոյ քակեաց եպիսկոպոսն Համազասպ և շինեաց հրաշալի շինուած, ուր զգանկական կախէին, յարմարեալ ի նմին և եկեղեցիս: Եւ եղև վախճան սրբոյն ի **շիր** (578 թ.) թուականին. եւ զկնի ամի միոյ վախճանեցաւ սուրբ լուսաւորիչն Դաւիթ վարդապետն, Ալաւկա որդի...»²⁸⁷, ով Գանձակ քաղաքի բնակիչ Արքայություն անունով մի քահանայի խնդրանքով գրեց գեղեցիկ շարադրված ու օգտակար Կանոնական օրենսդրությունը, Ստեփանոս Օրբելյանը. «**ՇՀԸ (578)** փոխեցաւ ի Քրիստոս մեծ վարդապետն Սարկավագ ի Հաղբար»²⁸⁸:

Սարկավագի մահվան տարին ՇՀԸ է փաստված նաև Հովհաննես քահանայի (Սարկավագ) ժամանակագրական ցանկը շարունակողի մոտ. «ՇՀԸ թուին' փոխեցաւ ի Քրիստոս մեծ վարդապետն Սարկաւագն»²⁸⁹:

Վարդան Արևելցու պատմության մեջ գրված է. «...իսկ Սարկաւագ վարդապետն կացեալ **'ի ժիր մշակութեան** զաւուրս իր' հանգեաւ ի հինգ հարիւր ութսուն և ութ (ՇՀԸ) թուին'... և զկնի ամի միոյ' լծակիցն իւր Ալաւկա որդին Դաւիթ, որ կանոնք գրեաց դիրահասա...»²⁹⁰:

Մխիթար Այրիվանեցին վստահորեն օգտվել է Վարդանի պատմությունից, որտեղ արդեն աղձատված էր Սարկավագի մահվան թվականը (ՇԿԸ՝ 1118/19 թթ., կամ ՇՁԸ՝ 1138/39 թթ.), և նա անորոշ է դրել Հովհաննես Սարկավագի մահվան թվականը՝ 1111-1121 թվականների միջակայքում՝ «Մեռալ Սարկաւագ Վարդապետն և Գէորգ վարդապետն Մեղրիկ, որ Դրագարկին կարգն սահմանեաց. և Դաւիթ վարդապետն Ալաւկայ որդին, որ զԿանոնքն քացայայրեաց»²⁹¹:

²⁸⁵ Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Սարկաւագին..., Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 119:

²⁸⁶ Սամուել Անեցի, նշվ. աշխ., էջ 129:

²⁸⁷ Պատմություն հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, էջ 106-107:

²⁸⁸ Ժամանակագրութիւն Ստեփանոս Օրբելյանի, էջ 17:

²⁸⁹ Հովհաննես Իմաստասերի ժամանակագրությունը, տե՛ս Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 133:

²⁹⁰ Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 125 (գրաբար): Նույն տեղում հին Օ. ՇԿԸ, որ է հինգհարյուր վաթսուն և ութ (=1119): Այլ ժամանակակիցը ՇՀԸ ասեն, հինգհարյուր յեթանասուն և ութ (=1129/30), որ ուղղագոյն թուի (էջ 125, 3-րդ տողատակ): Հետագա ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՇԿԸ, ՇՁԸ թվականները գրչական սխալներ են, առավել մանրամասն տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 30-32:

²⁹¹ Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 61:

Կ. Կոստանյանը²⁹², Խ. Սամվելյանը²⁹³, Ստ. Ռոշքան²⁹⁴, Վարդան Արևել-
ցու տեղեկությունը գերադասելով, Սարկավագի մահվան թվականն են հա-
մարում 1139 թվականը:

Ուսումնասիրողների գերակշիռ մասը (Մ. Աբեղյան, Ա. Աբրահամյան և
Ժամանակակից այլք) և հատկապես վերջին շրջանում հիմնականում ընդու-
նում են, որ մահացել է 1129 թվականին: Մ. Աբեղյանը, հիմնավորապես քննե-
լով 1139 թվականի հարցը, որն ընդունում էր Կ. Կոստանյանցը, մերժում է
այն և ապացուցում, որ Հովհաննես Սարկավագը մահացել է Հայոց մեծ
թվականի ՇՀԸ տարում = 1129 թվականին²⁹⁵:

Ա. Աբրահամյանը²⁹⁶ լրացուցիչ փաստերով հիմնավորել է Մ. Աբեղյանի
կարծիքը, որոնց քննությանը մենք չենք անդրադառնա:

Այսպիսով, ըստ սկզբնաղբյուրների տեղեկությունների, Հովհաննես
Սարկավագը մահացել է Հաղբատում Հայոց մեծ թվականի ՇՀԸ (578) տա-
րում:

Սակայն նկատենք՝ եթե բացակայում են Հայոց մեծ թվականի ամիսն ու
ամսաթիվը, միանշանակ ասել, որ Հայոց մեծ թվականի ՇՀԸ (578) տարին
համապատասխանում է 1129 թվականին, չի կարելի, լավագույն դեպքում՝
1129/30 թթ.:

Թեև Ղ. Ալիշանը գրում է. «Յասմաուրաց մէջ չեն հանդիպած անոր
վարքին կամ յիշարակին»²⁹⁷, սակայն, բարեբախտաբար, հավանաբար մա-
հից անմիջապես հետո Հովհաննես Սարկավագը սրբացվել է (այլապես ան-
հասկանալի կմնար նրա Վարքի ստեղծումը), և նրա հիշատակի օրն անցել է
Յայսմավուրք ժողովածու: Փետրվարի 11-ին²⁹⁸ տոնվել է նաև նրա հիշատա-
կը: Յայսմավուրքային՝ փետրվարի 11-ի տեղեկությունը թույլ է տալիս վե-
րաձշտել ներկա թվականը և ստանալ Հայոց մեծ թվականի 578-րդ տարվա
համարժեքը, այն է՝ 1130 թվականի փետրվարի 11-ը, քանի որ 578 թվականը
փետրվարի 17-ից մինչև հունվարի 12-ը համընկնում է 1129 թվականին, իսկ
հունվարի 13-ից մինչև փետրվարի 16-ը՝ 1130 թվականին: Հետևապես, Հով-
հաննես Սարկավագը մահացել է 1130 թվականի փետրվարի 11-ին, և Հայոց
մեծ թվականի 578 տարուն պետք է գումարել 552՝ ստանալու համար ներկա
թվականը, այն է՝ 1130-ը՝ ունենալով ամսաթվային նշումը՝ փետրվարի 11, և
այն ընդունելով իբրև Հովհաննես Սարկավագի մահվան ամիս-ամսաթիվ:

²⁹² Կ. Կոստանյան, Դավիթ Ալավկա որդի // Ազգագրական հանդես, ԺԲ գիրք, 1906, էջ 105:

²⁹³ Խ. Սամվելյան, Հայ իրավունքի պատմություն, Եր., 1939, էջ 74:

²⁹⁴ Ստեփանոսի Ռոշքայ ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք, Վիեննա, 1964,
էջ 119:

²⁹⁵ Մանրամասները տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, էջ 450:

²⁹⁶ Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 31:

²⁹⁷ Ղ. Ալիշան, Յուշիկք ..., հ. Բ, էջ 306:

²⁹⁸ Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. Գ, էջ 572:

Դավիթ Ալավկա որդու մահվան թվականը ևս հնարավորություն է տալիս ձշգրտելու Հովհաննեսի մահվան՝ 1130 թվականը: Դավիթը մահացել է Սարկավագից մեկ տարի հետո. «...և զկնի ամի միոյ՝ լծակիցն իւր Ալավկա որդին Դաւիթ, որ կանոնք գրեաց դիրահասա...»²⁹⁹:

Դավթի մահվան թվականը ձշգրտվում է Անիի Ամենափրկչի փլուզման տարվա հետ զուգադրվելով: Սամուել Անեցին գրում է. «Ի ՇՁ (580)՝ թվին փլաւ ամենափրկիչն Անի. Ի մարերի ի ժԵ. յաւուր Ե. Շարթոնջ: Ննջեաց յայսմ ամի լուսաւորիչ և սուրբ վարդապետն Դաւիթ Ալուկա որդի ...»³⁰⁰:

Քանի որ Անիի Ամենափրկիչը փլուզվել է ՇՁ (580) թվականի Մարերի 15-ին, օրը հինգշաբթի, համապատասխանում է հուլյան տոմարով ներկա 1131 թվականի դեկտեմբերի 4-ին³⁰¹, ապա Դավիթը մահացել է նույն՝ 1131 թվականին:

Հայոց մեծ թվականից ներկա թվականն ստանալու համար հուլիսի 11-ից մինչև հունվար կիրառվում է 551 հաստատունը, այն է՝ մահացել է 1131 (580 + 551) թվականին:

Սամուել Անեցու հաշվումներով՝ Հայոց մեծ թվականի ՇՁ (580) տարին ներկա 1131 թվականն է (= 580 + 553) = 1133՝ Կենարարի թ. = (1133 - 2):

Այսպիսով, Սարկավագը մահացել է 1130 թվականին, իսկ Ալավկա որդին՝ Սարկավագից մեկ տարի հետո՝ 1131 թվականին:

Հովհաննես Սարկավագի մահվան թվականը ձշգրտելուց հետո, այն է՝ 1130 թվականին և, հատկապես, նկատի ունենալով, որ մահացել է «**բարևոք կացեալ ՚ի ժիր մշակութեան**», միջին հաշվով մոտավորապես 73-ամյա հասակում, կարելի է ասել, որ նա ծնվել է մոտավորապես 1057 թվականին:

Հաղբատի զանգակատան գավթում պահպանվել է Հովհաննես Սարկավագի տապանաքարը, որի վրա արձանագրված է՝ «Արձանս այս սեմական է **Սոփեստոսի**³⁰² Սարկաւագին», որը ներկայացնում է Սարկավագի բնութագրի ամենաէական կողմերից մեկը՝ նրա իմաստասեր լինելը:

Այս բնութագիրը կարող է զարմանք հարուցել առաջին հայացքից, քանզի զուտ փիլիսոփայական ժառանգություն Հովհաննես Սարկավագի մեզ չի հասել, սակայն միայն առաջին հայացքից, քանզի Հովհաննես Սարկավագի ստեղծագործական ողջ տարաբնույթ ավանդը թաթախուն է և՛ իմաստախոսությամբ, և՛ գեղախոսությամբ, և՛ «բնության երևույթների ռացիոնալիստական բացատրություններով, և՛ բարոյական ու սոցիալական հարաբերապաշտությամբ»³⁰³, այսինքն՝ այն առանձնահատկություններով, որով «բնորոշվում էր նախնական սոփեստական դպրոցը»³⁰⁴: Եվ հենց ինքը՝ Հով-

²⁹⁹ Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 125 (գրաբար):

³⁰⁰ Սամուել Անեցի, նշվ. աշխ., էջ 129-130:

³⁰¹ Հ. Բաղայան, Օրացույցի պատմություն, Եր., 1970, էջ 362:

³⁰² Հունարեն՝ սոփեստես - վարդապետ, իմաստուն:

³⁰³ Փիլիսոփայական բառարան՝ խմբ.՝ Մ. Մ. Ռոզենտալի, Եր., 1975, էջ 388:

³⁰⁴ Ձևավորվել է մ. թ. ա 5-րդ դարում: Լավագույն ներկայացուցիչներն էին Պրոթագոր, Հիպպոս, Պրոդիկ, Անտիփոն, Պլատոն, Արիստոտել և այլք:

հաննես Սարկավագ դարձել է իր ժամանակի լուսավորիչն ու հանրագիտակը, վարպետ գեղանկարիչը (գրական իմաստով), այն է՝ սովետտուր:

Անփոփենք իմաստասեր վարդապետի կենսագրությունը՝ փաստելով, որ Հովհաննես Սարկավագը ծնվել է մոտավորապես 1057 թվականին Փառիստում, քահանայական ընտանիքում: Նախակրթությունն ստացել է ծննդավայրում, ապա տեղափոխվել Հաղբատ և հանձնվել քեռու դաստիարակությանը: Քեռու հանձնարարությամբ ուսանել է ժամանակի ամենալուսավոր վարդապետներից մեկի՝ Գեորգ Ուռձացու մոտ: 1082 թվականից Բարսեղ Ա կաթողիկոսի հետ տեղափոխվել է Անի, ապա դարձել կուսակրոն քահանա և հասել վարդապետության աստիճանի: Հետագայում՝ 1082 թ. հետո և 1091 թ. առաջ, դարձել է Անիի վերաբացված վարդապետանոցի ուսուցչապետը: Նրան են աշակերտել ժամանակի ամենալուսավոր վարդապետներն ու երեցները՝ Սարգիսը, Սամուել Անեցին, Երեմիա Անձրևիկը, Թոքակերի որդի Գրիգորը, Աղվանքում ձգնող Խոնթկա որդի Պետրոսը, Հակոբ Սքանչելին և այլք, խրատական նամակներ է գրել արքայական ընտանիքի երկու կանանց՝ Խորասուին և Մարիամին:

1091 թվականին եղել է Բարսեղ Անեցու՝ Մելիքշահի մոտ գնացած պատվիրակության կազմում և, ամենայն հավանականությամբ, նույն տարում նրանց հետ եղել Զահան (Հոնի) գավառում, Ուռհայում և Անտիոքում:

1092 թվականին Մելիքշահի մահվան պատճառով Բարսեղ Անեցու հետ վերադարձել է Անի:

1094 թվականին ստեղծել է «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուն, որի շնորհիվ իրականացվել է Հայոց տոմարի բարեփոխությունը:

Նամակներ է գրել տոմարական խնդիրների վերաբերյալ՝ «Առ Սարգիս» (1110 թ.), Լուսնի լրման և խավարման մասին (1113 թ.) և անհայտ մեկին (1116 թ.):

Հավանաբար 1125 թվականից հետո, երբ Անին կրկին անցել է այլադավանների ձեռքը, կյանքի վերջին տարիներին վերադարձել է Հաղբատ:

Մահացել է 1130 թվականին և թաղված է Հաղբատում՝ ս. Նշան եկեղեցու զանգակատան գավթում:

Հովհաննես Սարկավագն ապրել է ստեղծագործական բեղմնավոր կյանք: Զբաղվել է գիտական, գրական, թարգմանական, մանկավարժական, եկեղեցական գործունեությամբ, մասամբ նաև դիվանագիտությամբ՝ դառնալով Հայ առաքելական ս. եկեղեցու վարդապետության ջատագովը և ժառանգություն թողնելով իմաստասիրական տրամախոհությամբ թաթախուն բազմաթիվ աստվածաբանական, տոմարական, պատմական, գրական, մանկավարժական, երաժշտական, մաթեմատիկական բնույթի երկեր՝ իր վառ անհատականությամբ զարդարելով հայ մշակույթի արծաթե դարը:

ԳԼՈՒԽ Բ

**«Առասացութիւնք Սարկաւազայ ըստ
իւրաքանչիւր պիտոյից և ախորժակաց».
«...սա բազում ինչ աշխատասիրեաց ի գիրս,
յիշատակ բարի թողեալ....»**

Հովհաննէս Սարկավազի ստեղծագործական վաստակի մասին նրա անանուն վարքագիրն ասում է. *«Յամենայն դէմս բանի եւ գործոյ, տեսութեան և յառաջբերութեան, գրելոյ և ընթեռնելոյ, պատրմագրութեան և վարդապետական վերլուծութեան, մարգարէականին և առաքելականին այնպէս կատարելագոյն գրաւ, որպէս և ո՛չ ոք ի մինն միայն համբաւեալ՝ կամ ի գործս կամ յարդիւնս: Եւ գեղք յորովայնէ նորա բխեալ՝ արբուցին զգրուն տէրունական և զնորապունկ մանկունս յարկաց աստուծոյ: Եվ զի՞ ես պիտոյ է ինձ յերկարել զտողս բանից, ուր և վկայութիւն յայտնագոյն նորայն առասացութիւնք, լցին զոլորպս Հայաստանեայց, ըստ իւրաքանչիւր պիտոյից և ախորժակաց»³⁰⁵:*

Վարքագիրը Հովհաննէս Սարկավազին ներկայացնում է իբրև բազմաբեղուն հեղինակ, և դժվար է նրա ստեղծագործությունների մասշտաբայնության մասին վարքագրից ավելին ասել:

Կիրակոս Գանձակեցին ևս գրում է նրա ստեղծագործական ժառանգության մասին՝ մասնավորելով. *«... ո՛չ ձեռնհաս, զհաստատար և զանշարժ տունարն կարգեաց Հայոց փոխանակ շարժականին և անհաստատարն. արար և միաբանութիւն ամենայն ազգաց տոմարի ընդ Հայոց: ... սա գրեաց ծառս ներքողականս ի մեծագոր արքայն Տրդատ, և ի սուրբ հայրապետն Ներսէս, և ի սքանչելին Սահակ և Մեսրոպ. արար և շարական Ղևոնդեանցն քաղցր եղանակաւ և յարմար բանիւ, որոյ ըսկիզբն է այս. «Պայծառացան այսօր սուրբ եկեղ.» գրեաց սա և գիրս աղօթից, գրեաց և օրինակ սրոյզ գրոց.»³⁰⁶:*

Մխիթար Անեցու վկայությամբ՝ նա խմբագրել է «նուրբ գրեանքը»՝ Դավթի «Սահմանք», Պրոկղի «Լուծմունք», Հերմեսի փիլիսոփայական աշխատությունները, Արիստոտելի «Տաս ստորոգութիւնք», «Պերի Արմենիաս», «Յաղագս առաքինութեան», «Յաղագս աշխարհի», «Յաղագս վերլուծութեան», Դավթի «Էակաց գիրք», ինչպէս նաև Փիլոնի 9 գրքերը, Դիոնիսիոսի 5 գիրք, Գրիգոր Նյուսացու 7 գիրք, Գրիգոր Նազիանզանցու 4 գիրք, Բարսեղ Կեսարացու 4 գիրք, Եվագրի 2 գիրք և այլն³⁰⁷: Ա. Աբրահամյանը հիշատակում է Թովմա Մեծփեցու վկայությունը, որ Հովհաննէս Սարկավազի

³⁰⁵ Ա. Աբրահամյան, Հովհաննէս Իմաստասերի մատենագրությունը, էջ 120:

³⁰⁶ Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 104-105:

³⁰⁷ Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 112:

խմբագրած և կազմած փիլիսոփայական ու աստվածաբանական երկերի ժողովածուն է ինքն ընդօրինակել³⁰⁸:

Իրավամբ, ցանկացած ընթերցող նրա ստեղծագործություններում կարող է գտնել, ինչպես գրում է վարքագիրը, իր համար «պիտանի» և «ախորժակին հարմար» երկեր:

Մենք կանդրադառնանք Հովհաննես Սարկավագի գրական, պատմագրական, թվաբանական, աստվածաբանական երկերին ընդհանուր գծերով, իսկ տոմարական ժառանգությանը՝ հանգամանորեն՝ վերջինիս հատկացնելով առանձին գլուխ:

Մինչ Հովհաննես Սարկավագի մատենագրական վաստակի առանձին ոլորտներին անդրադառնալը հիշենք 11-12-րդ դարասկզբի Հայոց աշխարհի պատմական վիճակը՝ հենված Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության տեղեկությունների վրա: 10-11-րդ դարերի ընթացում լայնաթափ զարգացում ապրած քաղաքային կյանքն աստիճանաբար խաթարվում է Հայաստանում՝ նախ՝ Բագրատունյաց թագավորության անկումով, ապա՝ քաղաքական իշխանությունը կորցրած հավատակից հռոմեացիների, մյուս կողմից՝ սելջուկների վարած հայակործան քաղաքականության պատճառով, որի ծանր հետևանքներից չեն խուսափում Հայոց եկեղեցին ու հոգևորականությունը:

Մատթեոս Ուռհայեցու նկարագրած մեկ-երկու դրվագով իսկ կարելի է պատկերացում կազմել Հայ եկեղեցու և հոգևորականության 11-րդ դարի սկզբի՝ բարգավաճ ու կայուն, ապա կեսերի՝ արքայալ ու հալածական վիճակի մասին:

Հայոց մեծ թվականության 514 թվականին (5 մարտի 1065 – 4 մարտի 1066) վախճանվում է «ամենագովելի տեր Խաչիկը՝ հայոց կաթողիկոսը», ով հայրապետական աթոռը զբաղեցրեց վեց տարի՝ օտար՝ հունաց երկրում: Նրա կյանքի տարիները տխրությամբ էին հագեցած: *«Կոստանդնուպոլսում նա բազում փառապանքներ կրեց հոռոմոց անիրավ և մոլեգին ազգից, պեսպես փորձությունների ենթարկվեց նա դավանաբանության հարցի կապակցությամբ: ... Տեր Խաչիկի սրտում սուգ կար, նա հիշում էր հայոց հայրապետական աթոռի վերացումը, Բագրատունյաց թագավորական գահի կործանումը, հույների չարամիտ ազգի ծառայության լծի ընդունումն ու հայոց լուսավորիչ սուրբ Գրիգորի աթոռի աղքատանալը: Երբ հայրապետական աթոռին նստած էր Կեր Պեպրոսը, իսկ աթոռն էլ գտնվում էր Հայաստանում, նա ուներ հայոց թագավորներից որպես հայրենիք նվեր սրացած կալվածքներ՝ հինգ հարյուր անվանի, ընդարձակ, շահութաբեր և շատ ընտիր գյուղ, իր [ենթակայության] փակ կային հինգ հարյուր փառավոր եպիսկոպոս և յոթ հարյուր թեմերի վրա մշտապես հովվող թեմակալներ: Հայրապետի վեհարանում մշտապես լինում էին փասնակրու եպիսկոպոս, չորս վարդապետ և վաթսուներեք*

³⁰⁸ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 112:

րեց, ինչպես և հինգ հարյուր աշխարհական: Հայրապետական աթոռը ոչնչով չէր զիջում թագավորական գահին»³⁰⁹:

Մատթեոս Ուռհայեցին ցավով է արձանագրում, թե ինչպես ստրկացվեց Հայոց ամբողջ աշխարհը, որ ծովի նման ծփում էր արյան մեջ: Քանդվեց, ավերվեց մեզանից խլված մեր հայրենիքը, խախտվեց հայ ժողովրդի տան հիմքը, ոչ մի տեղից հույս, ապավեն չմնաց, և մենք ընկանք անհավատ ժողովուրդների և օտար գազանների ծառայության լծի տակ:

11-րդ դարի կեսերին արդեն վտանգված էր Հայաստանի թե՛ տնտեսական, թե՛ մշակութային կյանքը: Մի կողմից՝ Հռոմեական կայսրության հայատյաց, ուծացման քաղաքականությունը, մյուս կողմից՝ սելջուկյան արշավանքների հետևանքով առևտրաշատ քաղաքների ավերումը, ժողովրդի կողոպուտն ու գերեվարությունը պատճառ դարձան հայ բնակչության աստիճանաբար գաղթին դեպի Փոքր Ասիա և Կիլիկիա, որն օրըստօրե զանգվածային բնույթ էր ստանում՝ նոսրացնելով հայ բնակչության թիվը հայոց բնիկ տարածքներում և պակասեցնելով երկրի ռազմական հզորությունը:

Սակայն, ի պատիվ մեր ժողովրդի, պետք է ասել, որ այսքանից հետո էլ չկտրվեց Հայաստանի զարգացման միալար ընթացքը, չխորտակվեց տնտեսական ու մշակութային կյանքը:

Հայ ժողովուրդը գաղթավայրերում անգամ՝ Կիլիկիա, Ուռհա և այլուր, հիմնեց տնտեսական ու մշակութային օջախներ, իսկ բուն Հայաստանում մշակութային կյանքը տեղաշարժվեց դեպի լեռնային շրջաններ՝ Սյունիք, Տաշիրք, Սասուն, Ձորագետ, Մոկս:

Եվ այս իրավիճակում երկրի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի պահպանման ու զարգացման առհավատյան ու հովանավորը դարձան Հայ եկեղեցին ու հոգևորականությունը:

Եվ ահա այս շրջանում է, որ ասպարեզ է իջնում հոգևորականության մի պատկառելի բույլ՝ Գրիգոր Վկայասեր, Բարսեղ Ա Անեցի, Հովհաննես Սարկավագ, Դավիթ Ալավկա որդի և բազում այլք, ովքեր իրենց ողջ կյանքն ու գործունեությունը ծառայեցրին ոչ միայն գիտության ու մշակույթի պահպանմանն ու զարգացմանը, այլև ներքաղաքական ու արտաքին հարաբերությունների կարգավորմանը՝ փորձելով երկրի ներսում ապահովել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կստեղծեին ոչ միայն չարտագաղթելու, այլև գաղթածների վերադարձի համար:

Ա. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:

Հովհաննես Սարկավագի ստեղծագործություններում առկա են եկեղեցական գրական տարբեր ժանրերի ստեղծագործություններ՝ ճառեր, խոհափիլիսոփայական բանաստեղծություններ, տաղեր, աղոթքներ, շարական՝ ղևոնդյանց նվիրված՝ «Պայծառացան այսօր սուրբ եկեղեցիք» սկսվածքով:

³⁰⁹ **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, Եր.. 1973, էջ 100-101:

Մ. Աբեղյանը, քննելով նրա այս ստեղծագործությունները, գտնում է, որ Գրիգոր Լուսավորչին, մեծագոր արքա Տրդատին, սուրբ հայրապետ Ներսեսին, սքանչելի Սահակին ու Մեսրոպին նվիրված ներբողական ձառերով ու Ղևոնդյանց շարականով Հովհաննես Սարկավագը 11-րդ դարում հիմք է դնում գրական մի տեսակի՝ հայրենասիրական երգին: Նա, ասես, ի դեմս պատմական անձերի հիշեցրել է մեր փառահեղ անցյալը և փորձել խրախուսել սրտաբեկ ու հուսահատ իր ժողովրդին՝ խնդրելով աստծուն՝ «վարատեալ» ժողովրդին հավաքի, միավորի ուրախության շուրջ ու փրկի³¹⁰: «Հեղմամբ արեան սըրբոց քոց հօտապետաց զեկեղեցոյ քո ցրուեալ մանկունս ժողովեալ յուրախութիւն ըզվարատեալս տըրտմութեամբ եւ արտասուաց յորդահոս բըղխմամբ. փրկութեան մերոյ պարգեւաց բաշխող»³¹¹:

Հովհաննես Սարկավագին իրապես էլ հուզել է իր ժողովրդի տարագիր ու թափառիկ վիճակը, որի արտահայտությունը գտնում ենք նաև «Արարիչ ամենայնի անեղծութիւն...» սկսվածքով պանդխտության նվիրված աղոթքում³¹²:

Ներկայացնենք մի ստեղծագործություն, որտեղ արտահայտված է հեղինակի վերաբերմունքը աղոթքի և խորհրդաբանական տաղերի մասին: Այն «**Յոհաննու քահանայի առ Սարգիս. վասն տաղիցն**» պատառիկն է, որը Ա. Աբրահամյանը հրատարակել է ՄՄ 7^{հմբ} ձեռագիր ընդօրինակությունից՝ նրա մեջ կատարելով անհրաժեշտ ուղղումներ Զմմառի ձեռագրի հիման վրա³¹³:

Կարծում ենք՝ այս նամակով Հովհաննեսը պատասխանում է Սարգսին: Ենթադրում ենք, որ Սարգսի կողմից հանձնարարություն է տրվել Սարկավագին՝ կազմելու մի ժողովածու: Հեղինակի խոսքը, որ հանձնարարությունը առավել վստահություն է իր անձի հանդեպ և ոչ թե նվաստացում, պարզում է, որ հանձնարարությունը տրվել է բարձրաստիճան անձի կողմից, քանզի կարող էր հանձնարարել միայն առավել բարձրաստիճան հոգևորականը: Եվ քանի որ հանձնարարողը Սարգիսն է, ապա նամակն ուղղված է Հաղբատի առաջնորդին, ում մասին խոսել ենք կյանքը ներկայացնելիս:

«**Յոհաննու քահանայի առ Սարգիս. վասն տաղիցն**» գործնական թուղթ է, որ վերաբերում է ինչ-որ ժողովածուի՝ մատյանի կառուցվածքին: Նամակագիրը պատճառաբանում է, թե մատյանի որ հատվածում և ինչու

³¹⁰ Մ. Աբեղյան, Հայ հին գրականության պատմություն, գիրք երկրորդ (XI-XIX դարի 30-ական թթ.), էջ 50-52:

³¹¹ «Պայծառացան այսօր սուրբ եկեղեցիք» սկսվածքով Ղևոնդյանց նվիրված շար., տե՛ս Շարական Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյ, Եփրեմ արք. Թապազեանի աշխ., թարգմ., Կոլորադո, 2006, էջ 750:

³¹² ՄՄ 7^{հմբ} ձեռ., էջ 52բ-56ա, աղոթք ԺԲ:

³¹³ Յոհաննու քահանայի առ Սարգիս, վասն տաղիցն, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 327: Առաջինը, որ կատարել է, վերնագրի ընտրությունն է, որը եղել է «**Առ Սարգիս, վասն տաղիցն Յոհաննու քահանայի**» և հարմարեցվել է Զմմառի ձեռագրին՝ «**Յոհաննու քահանայի առ Սարգիս. վասն տաղիցն**»:

պետք է տեղադրվեն աղոթքներն ու անձառագույնները³¹⁴, և թե ինչու նախ պետք է լինեն աղոթքները, ապա հարմար՝ պատեհ, խորհրդաբանական տաղերը, այն է՝ անձառագույնները:

«Վստահություն կարծես և ոչինչ նուազություն երջանիկդ հռչակելոյ.

Ամփոփել ոչ միայն զաղաթականսդ, որ է՛ և յառաջատելոյ՛,

Այլ և զանձառագոյնսն զոր պատահ է առնուլ...»³¹⁵:

Հովհաննեսը, որքան էլ զատորոշում է հոգևոր գրականության այս երկու տեսակները՝ աղոթքներն ու անձառագույնները, սակայն չի փորձում հակադրել դրանք միմյանց, այլ յուրօրինակ գեղարվեստական պատկերների ու համեմատության միջոցով փորձում է մոտեցնել ու հարաբերակցել միմյանց հետ: Հովհաննեսը պարզաբանում է, որ որքան էլ անձառագույնը խրթին է, որն աճում է կարծր հողում և շատերի համար անհասկանալի ու անմեկնելի է, այն դարձյալ սերմանողի, այսինքն՝ Աստծու մասին է:

Սարկավագը եթե աղոթքը դիտում է որպես «բնականագույն» միջնորդ՝ մարդու և Աստծու միջև հաշտություն կայացնող, ապա անձառեղին՝ խորհրդաբանականը (պարիսպ, պահապան, սերմանող)՝ բարոյական և լծորդված՝ որևէ բանով կապված, միաբան աստվածայինի հետ, և ավելին ասել պետք չէ.

«Եւ զի՞նչ այսքան թէ՛ աղաւթք զուգակցեալք աստուածայնոցն պարգևաց,

Միայն զի այս միջնորդա՛ւ, իսկ այն՝ լծորդաբար»:

Փաստորեն Հովհաննեսը խորհուրդ է տալիս մի ժողովածուի մեջ ներառել ու ամփոփել ոչ միայն աղոթքները, այլև անձառագույնները և մեկնաբանում է իր ասածի պատճառները:

Աղոթագրությունը, որ սկիզբ էր առել հայ գրերի գյուտից անմիջապես հետո, Հովհաննես Սարկավագի ստեղծագործական ժառանգության զգալի մասն է կազմում: Ինչպես երևում է Հառիճավանքի վանահոր՝ Գրիգոր վարդապետի (...– 1185 թ.)³¹⁶ նամակից, սարկավագյան աղոթքներն ստեղծվել են «զտկարություն տկարաց բառնալու» և «սրտաբեկ» մարդկանց փրկության համար:

Հովհաննես Սարկավագին, ով մանուկ հասակում «լքել» է իրեն, իբրև աղոթքների հեղինակ է հիշատակում Հառիճավանքի վանահայրը՝ Գրիգոր վարդապետը: Հովսեփ վարդապետին գրած մի թղթում³¹⁷ նա ասում է. «Ի

³¹⁴ Խոսքը «նուրբ կան դժվարալուր» համարվող գրվածքների մասին է՝ այն անթարգմանելի, անբավ, գաղտնի, խորին, անպատմելի գրվածքների, որի մասին չի կարող մարդը ճառել մեծության, անհասության, գաղտնիության պատճառով:

³¹⁵ Յոհաննու քահանայի առ Սարգիս, վասն տաղիցն, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 327:

³¹⁶ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 561:

³¹⁷ ՄՄ 2680 ^{հմբ} ձեռ., թերթ 513բ–514ա՝ 1371–1378 թթ. Անգեղակոթում գրված «Հարանց վարք», (Կ. Մաթևոսյան, Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները, էջ 189):

հեռուստ ժամանակաց հետևե՛ գ[ուղղել-զ]եղծմամբ սրտի, այս են փափագանք սրտի ինոյ, պատշաճավոր եւ դիպող աղաւթք կարգել ի քաջէ և յաստուածունակ առնէ, զոր արտաքոյ աղաւթելն կամիցի հաղորդ սուրբ խորհրդոյն՝ ձայնակից լեալ աղաւթեսցէ ի միասին վճարմամբ, զի գեղեցկապէս եւ կարգաւոր լիցի դրութիւն:

Եւ արդ՝ զի գըտի զոր սիրէի եւ հարկ առնեն բռնութեամբ փափագանաց, զի լըցցես անյապաղապէս: Յանկալի լինել ի մերմէն **Սարկաւագէ**, այլ Հոգին քեզ պատշաճեալ պահեաց: Զի որպէս նայն այլովք յոլովիւքն սաապէս եւ դու սակաւութիւ հաղորդեսցիս գտկարութիւն տկարաց բառնալ: Եւ դիցես աղերս բանի սրտաբէկ ի բերան աղօթողին, զի փրկութեանն եւ արտասուացն մասնաւոր լինիցիս:

Հաւատա ինձ, որդեակ իմ, զի թէ զիմն ծեր զվերասացեալն իմաստուն՝ լըքի ի մանկութենէ իմում, զմանուկ եւ զիմաստուն երկրորդ գըտի ի ծերութեան իմում, առաւել բերկրութիւն սրտի:

Ո՛ղջ լեր Աստուծով»³¹⁸:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանված ենք գտնում Սարկավագի աղոթքների ընդօրինակություններ՝ ինչպես ամբողջության մեջ՝ ՄՄ 7^{հմբ} (ընդօրինակված Ծիծռանքարում ՈԿԱ (661)՝ 1211/1212 թ.), ՄՄ 8^{հմբ} (ընդօրինակված Ամասիայում ԶՀԶ (976)–1527 թ.), նաև գրչագիր ժողովածուներում՝ իրենց հիշատակարաններով³¹⁹: Աղոթամատյանը հրատարակվել է նաև առանձին գրքով՝ Սոփերք հայկականք³²⁰, թիվ ԺԷ, այնպես էլ տարբեր ժողովածուներում՝ ընտրողաբար:

ՄՄ 7^{հմբ} և ՄՄ 8^{հմբ} ձեռագրերում պահպանված Հովհաննես Սարկավագի ամենաընդարձակ ընդօրինակությունները նման են միմյանց³²¹:

Առաջինում աղոթքները համարակալված են, երկրորդում՝ ոչ: Տարբերվում են միայն առաջին հատվածի գլխագրերը: ՄՄ 7^{հմբ}-ում ձևակերպված է «Ճառ առաջին: Աղաւթք Յոհաննու սրբոյ վարդապետի, որ մականունն Սարկավագ կոչի (Ա. 1 ա –126 բ)», իսկ ՄՄ 8^{հմբ}-ում՝ «Յոհաննէս վարդապետի ասացեալ, մականունն Սարկաւագ կոչեցելո, ի պատճառս աղօթից (Ա. 2ա – 137ա)»: Քանի որ առաջին միավորը աղոթք չէ, այլ ճառ, որտեղ ներկայացված են աղոթքները գրելու պատճառները, կարծում ենք, որ ճառի վերնագիրը պետք է վերականգնել՝ «Ճառ ի պատճառս աղօթից», ապա՝ «Աղաւթք», իսկ հեղինակին վերագրվող մասերը՝ «Յոհաննէս վարդապետի ասացեալ,

³¹⁸ **Կ. Մաթևոսյան**, Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները, էջ 187–188:

³¹⁹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի, հ. Ա, Եր., 1984., էջ 25 և 27:

³²⁰ Աղօթամատոյց Յովհաննու Սարկաւագ վարդապետի, Սոփերք հայկականք, հ. ԺԷ, Վենետիկ, 1854, էջ 5–147:

³²¹ Նոյն տեղում, էջ 21–24:

մականունն Սարկաւագ կոչեցելո», «Յովհաննու սրբոյ վարդապետի, որ մականունն Սարկավագ կոչի» հետագայի հավելումներ են:

Աղոթք կոչվածները թվով ԼԷ (37)-ն են, որոնք սխալ համարակալման հետևանքով նշված են ԼԶ (36), բաց է թողնված ԻԵ (25) համարակալումը:

Ինչպես երևում է ստեղծագործությունների սկսվածքներից, ներկայացված աղոթքների (Ա. Աղալթ առ Աստուած՝ «Հայր-Արարիչ իմանալեաց և զգալեաց բնութեանց...(1ա-5բ)», Բ. Նորին վարդապետի Աղալթ առ Որդի՝ «Որ աղբիւրդ ես անսպառ բարութեանց...(6ա-9ա)», Գ. Նորին՝ յՈրդի. «Որ ի չափ խոնարհութեան մերոյ.....(9ա-13ա)», Դ. Նորին՝ յԵրրորդութիւն սուրբ. «Ո՛ր բնութիւն անձառելի և արարչական.....(13ա-14ա)» և այլն) շարքում առկա են թե՛ հարցմունք ու պատասխանիք (ԼԴ. Հարցմունք՝ «Ի գործս բարիս Աստուծոյ ստեղծանելով զմարդն....» (94բ)), թե՛ թուղթ (ԼԲ. Առ կոյրն աչազեղոյն և լուսավոր, Յոհաննու քահանայի՝ «Ի կափուցումն զգայութեանց ոմանց.... (92ա-93ա)»), թե՛ խրատներ մանուկներին (ԼԶ. Նորին՝ խրատ մանկանց («Յետ ճշմարտին ընդունելոյ զառ ի հաւատ....(99բ-106ա)»)), թե՛ առ եղբարս ուղղված խոսք (Նորին՝ Առ եղբարս վասն անձին՝ յետ կենաց՝ «Ծառայակիցք ի Քրիստոս ընդ ամենայն տեղիս... Յորոց ստեղծն և Աստուած ի գոյութիւն, այժմ...., ամէն (106ա-126բ) սկսվածքով) և այլն, որոնք պետք է առանձնացվեն աղոթքներից:

Սարկավագի աղոթքները մեծավ մասամբ ուղղված են առ Հայր, առ Որդի և առ Ս. Երրորդություն, որտեղ դրսևորված են նաև իր աստվածաբանական ու դավանաբանական հայացքները: Աղոթքներն ունեն կիրառական-աստվածաբանական նշանակություն. ստեղծվել են գործնական նպատակներով:

Սարկավագի աղոթքների մանրակրկիտ աստվածաբանական քննությունը մեր խնդրից դուրս է, այդ իսկ պատճառով ներկայացնենք հիմնականում այն երկերը, որոնք հնարավորություն են ընձեռում նրա գրական կերպարի բացահայտմանը³²²:

Դրանցից են Հովհաննես Սարկավագի կենսագրության որոշ դրվագներն անփոփոզ բանաստեղծությունները, որոնցից այստեղ կանդրադառնանք «Ողբ», «Նորին (Յովհաննու) առ Սարգիս. Ողբք», «Նորին վասն միւս ողբականին» և «Ամբաստանութիւն զանձնէ»³²³ ստեղծագործություններին, որոնք պատկանում են «ողբ» գրական տեսակին:

«Ողբի»³²⁴ իբրև գրական տեսակի ակունքները շատ հին են, հայտնի Հայոց հեթանոսական շրջանից և կենսունակ են նաև մեր ժամանակներում: Նրանք հիշվել են իբրև բանավոր լայաց երգեր՝ նվիրված այս կամ այն ան-

³²² Տե՛ս Գ. Սիմոնյան, Հովհաննես Սարկավագի գրական երկերն իբրև հեղինակի կենսագրության սկզբնաղբյուր, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, հ. Ժ, 2015, էջ 72-91:

³²³ Աղոթքներում հանդիպում է այսպիսի վերնագրով 3 ստեղծագործություն:

³²⁴ Տե՛ս Է. Զրբաշյան, Հ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, էջ 227-228:

հատի անձնական կամ հասարակական կյանքի դժբախտություններին: Հայոց գրավոր մատենագրության մեջ «Ողբ» անունով գրվել են բանաստեղծություններ, պոեմներ և արձակ գործեր, որոնց ընդհանուր ակունքը Աստվածաշունչն է (Ողբ Երեմիայ): Հատկապես նշանակալից են միջնադարյան պատմական «ողբերը», որոնք նվիրված են ազգային-քաղաքական կյանքի անցուդարձերին՝ թագավորության անկում, թշնամական ասպատակություններ, քաղաքների անկում, սով, կոտորած և, ի վերջո, անձի հոգեկան ողբերգությունը, որի արտացոլման գագաթը դարձավ հայ մատենագրության անանց փառքը՝ Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» աղոթամատյանը:

Թերևս Հովհաննես Սարկավագի ստեղծագործությունների վրա հնարավոր է նկատել Գր. Նարեկացու ազդեցությունը («Բնության արցունքները ինձ բավարար չեն կորուստս սգալու»³²⁵, «Ինձ ծանիցեն յոլովութիւնք որդոց մարդկան զքոյդ գթութիւն» ևն), սակայն, ի տարբերություն Գր. Նարեկացու, ով հանուր մարդկության մեղքերի կրողն է ասես դառնում, ում անձնական ողբի ակունքը անանձնական մեղքն է, Հովհաննեսի ողբերգության մեջ իրենց տեղն ունեն սեփական մեղքերն ու դրանց պատճառները («Անձ իմ տառապյալ և գերված սատանայից, ինչո՞ւ չես զգում քո կորուստը, ի՞նչ հույսով քաջալերված՝ դատարկվել ես բարի գործերից...», «...Արարչին բարկացրիր իսպառ և չճանաչեցիր բարեգործին»³²⁶ ևն), որոնք չնկատելն անհնարին է:

Ինչպես ասվել է, Հովհաննես Սարկավագի «Նորին (Յովհաննու) առ Սարգիս. Ողբք»³²⁷ բանաստեղծությունը ծայրակապ է: Բանաստեղծության 40 տողերից յուրաքանչյուրն սկսում է «Յովհաննէս քահանայ Սարգիս Մեծի խնդալ ՅԱԾ կենդանի» ծածկագրի տառերով: Այն հայ տաղերգության լավագույն նմուշներից է, խոր հուզականությամբ ու խոհականությամբ հագեցած բանաստեղծական բարձրարվեստ ստեղծագործություն³²⁸:

Ողբք հոգնակի ձևի գործածումը վերնագրում Ա. Աբրահամյանին թույլ է տվել կարծել, որ այս տեսակի այլ գործեր էլ ունի հեղինակը, և նրան է վերագրել նաև «Նորին վասն միւս՝ ողբականին» վերնագրված պատառիկը, որը, իրավամբ, Հովհաննես Սարկավագինն է: Սակայն սխալված չենք լինի, եթե ասենք, որ այստեղ ողբքը պետք է ընկալել ոչ թե որպես մի քանի բանաստեղծություն, այլ այն բազմաթիվ պատճառները, որոնք ծնում են բանաստեղծի ողբը:

³²⁵ Ողբ, Աղոթամատույց Հովհաննես Սարկավագ վարդապետի, աշխ., թարգմ. Ա. Մաղոյանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2013, էջ 85:

³²⁶ Նույն տեղում, էջ 84:

³²⁷ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 325:

³²⁸ Նույն տեղում, էջ 103:

Բանաստեղծական մեծ վարպետությամբ Մարկավագը վշտանգածի անթաքույց մորմոքն է արձանացնում ընթերցողի առջև և մասնակից դարձնում իր հոգեկեղեք ապրումներին:

«Առ Սարգիս. Ողբը»-ում ներկայացված է տհասության պատճառով մեղանչած մարդու՝ գրական հերոսի, որ ինքն է, ախտահարվածի հոգեկան ոգորումները, կատարածի խորը, ցավագին ըմբռնումն ու ինչ-որ ժամանակով ճշմարիտ ուսմունքից հեռացածի ողբերգությունն ու ներման սպասումը: Այնտեղ մեր առջև հառնում է ոչ միայն ներվելու ցանկությամբ, այլև «երկար ժամանակով» տիրոջը ծառայել հուսացող մարդու գունագեղ կերպարը:

Հեղինակն «ուշացած» խնդրանքներով վաղահաս օգնություն է աղերսում Հիսուսից: Եվ ահա այստեղ արդեն ոչ միայն ներկայացնում է իր խնդրանքների պատճառները, այլև իրեն: Նա, որ մի ժամանակ եղել է «անմեղութեամբ բարգավաճեալ», դարձել է «մեղքերի ախտից ու չարությունից վշտանգված», «Ադամի նման անհնազանդ, օրինազանց ծնունդ», ով անձամբ է ընտրել կորուստը, «Կայենի պես չարությունն է աճեցրել», ում «պատրանքներով որսացել են սուտն ու նենգավորը»³²⁹:

Հեղինակը խնդրում է «անչարահուշ» Աստծուն իր կողմ շրջվել ու, ինչպես առաջ, սաստել իրեն՝ «հողմերից դառնաշունչ գրգռվածին», «մեղքերի ծփանքներից տագնապածին», «նենգավոր ու ռազմիկ ավազակների ձեռքն ընկած գանահարված վիրավորին»:

Անսահման գոջումով է ներկայանում բանաստեղծության հեղինակ-հերոսը, որ միայնակ մոլորվել է «արքունական ճամփաների ուղիղ շավղից», համեմատում է իրեն անառակ որդու հետ, խնդրում Աստծուն նորից զարդարել իրեն պատմուճանով և հայրական մատանիով և ներել իր տհասությունը: Նա՝ ներման սպասումով հուսացողը, հասկացել է, որ խոտորումը մահաբեր դարման է եղել իր համար, և պատրաստ է անչափ բարի գործերի, միայն թե Աստված նորից ընդունի իրեն՝ «օտարացածին», «երկարագույն» ժամանակով: Եվ խնդրում է Մարդասերին՝ արժանացնել իրեն «հրեշտակների հետ անլուրի օրհնելու նրան»³³⁰:

Օրինազանցությունը, չարությունը, դառնաշունչ հողմերը, սուտն ու նենգավորը գցել են իրեն անցողիկ պատրանքների գիրկը, հեռացրել աստվածային ճշմարիտ ուսմունքից, որի գիտակցումն էլ ահա բանաստեղծի հոգում ծնում է Հայ առաքելական ս. եկեղեցու ճշմարիտ դավանորդի խորը ողբերգությունը: Եվ առավել է սաստկանում այդ ողբերգության գիտակցումը, քանզի դեմ հանդիման են հայտնվում երկփեղկված մարդու երկու եսերը՝ մեկը՝ նախկին անմեղությամբ բարգավաճած, մյուսը՝ անձամբ կորուստն

³²⁹ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 325-326:

³³⁰ Նույն տեղում, էջ 326:

ընտրած՝ վշտանգված, գրգռված, տագնապած, գանահարված ու վիրավոր: Սակայն այս բոլորը միասին, հավանաբար, այնքան ծանր տառապանքներ չեն ծնում բանաստեղծի հոգում, որքան իր հայրերի ուսմունքից օտարացած լինելը:

Իսկ համեմատությունը Պետրոսի հետ ավելի է հստակեցնում, թե ինչ ախտով կարող էր վարակված լինել բանաստեղծը: Պետրոսը՝ Հիսուսի 12 առաքյալներից մեկը, ով առաջինը Հիսուսի մեջ ճանաչեց Մեսիային ու Փրկչին, հետագայում կոչվեց քրիստոնեական եկեղեցու վեմ, նա՝ Որդու ընտրյալը, հայտնի հանգամանքներում առժամանակ կորցրեց հավատը Տիրոջ հանդեպ, նույնիսկ հրաժարվեց նրանից, սակայն նրա օգնությամբ փրկվեց խորտակումից ու դարձավ Քրիստոսի ուսմունքի ջատագովն ու «մարդկանց որսորդ»³³¹:

«Նորին (Յովհաննու) առ Սարգիս. Ողբք»-ը, անշուշտ, նաև ժամանակի պահանջները բավարարող և «յուրօրինակ» քրիստոնյաների համար ստեղծված մեղայական ողբ-աղօթք է: Իսկ այդ «յուրօրինակ» քրիստոնյաները կարող էին լինել կա՛մ Հայ առաքելական ս. եկեղեցուց խոտորված, տարբեր տեսակի աղանդավորությամբ ու քաղկեդոնականությամբ ախտահարվածները, կա՛մ արտաքին գրյանց ազդեցությամբ աշխարհայացքը փոխած մարդիկ, կա՛մ էլ աշխարհիկ կյանքի առաջնայնությունն ընտրածները, այսինքն՝ բոլոր «օտարացածները», որոնք հետագայում փորձել են, թեև «ուշացած», այնուամենայնիվ վերադառնալ մայր եկեղեցու գիրկը:

Բանաստեղծության հեղինակը՝ Հովհաննես քահանան, խոսում է իր անունից, այսինքն՝ գրական հերոսն ինքն է, գրում է իր անձնական ողբերգության մասին, սակայն դա կարելի է դիտել թե՛ որպես ձև և որպես միջոց՝ իր օրինակով բոլոր օտարացածներին դարձի բերելով հարազատացնել մայր եկեղեցուն, և թե՛, իրոք, իբրև կենսագրական փաստ՝ ինչ-որ ժամանակով Հայ առաքելական ս. եկեղեցու վարդապետությունից իր խոտորվելու, ապա մեղայականով վերադառնալու փափագի մասին:

Բանաստեղծի՝ իր անունից հանդես գալը «Նորին (Յովհաննու) առ Սարգիս. Ողբք» - ում առաջին հայացքից թվում է սուկ բանաստեղծական հնարանք: Բանաստեղծությունը՝ իբրև աղօթք, իհարկե, ուղղված է առ Աստված, և Աստված՝ իբրև հայր, միայն կարող է ներել անառակ որդուն ու վերադարձնել հայրական գիրկ: Սակայն այն վերածվում է կենսագրական փաստի, երբ նկատի է առնվում բանաստեղծության տեսակի ընտրությունը: Ծայրակապը հնարավորություն է ընձեռում ծածկագրելու ոչ միայն այն անձի անունը՝ Սարգիս Մեծ, ում ուղղված էր, այլև իր՝ Հովհաննես քահանա անունը: Կարծում ենք՝ Հովհաննես քահանան ծածկագրել է Սարգիս Մեծի՝ Հաղբատի անվանի առաջնորդի, այսինքն՝ այն մարդու, ում անմիջականորեն

³³¹ Աստվածաշնչի բառարան, Եր., 1992, էջ 454:

ուղղված է, եթե կարելի է այսպես ասել, իր մեղայական աղոթքը: Նշանակում է՝ այսպես նա ուղղակիորեն ներում է հայցում իր առաջնորդից, ում փաստացի ներումով միայն ինքը կարող էր դառնալ հարազատ եկեղեցու գիրկը: Եվ ահա սա էլ անուղղակիորեն հուշում է, որ բանաստեղծության հիմքում ընկած է կենսագրական շատ հավաստի իրողություն, այն է՝ Հովհաննես քահանայի կամ Հովհաննես Սարկավագի ժամանակավոր մեղանշումը և հեռանալը հարազատ եկեղեցուց: Սակայն այս ամենաանհավանական թվացող ենթադրությունը, թե հեղինակը ինչ-ինչ պատճառներով մեղանշել է կամ հեռացել, իրական մարմին է առնում նրա մեկ այլ՝ «Ամբաստանութիւն զանձնէ»³³² վերնագրված ստեղծագործության տվյալներով:

Բանաստեղծի հոգեկեղեք ապրումներն իրենց շարունակությունն են գտել «Ամբաստանութիւն զանձնէ» ստեղծագործության մեջ: Վերջինս նաև խոստովանագիր է, որն իր բովանդակությամբ ոչ միայն սեփական անձին ուղղված մեղադրական է, այլև անհատի՝ սեփական կամքով ընտրած կործանման գիտակցումի, սխալների ըմբռնումից ապրած ողբը, խոստովանությունն ու մեղայական խոստովանանքը:

Այստեղ ծնողներին վերաբերող հատվածը՝ «Ի նախնեաց բարեպաշտից և յիմաստուն ծնողաց բուսեալ, ձեռայդէմ գործեցի, որք սնուցին զիս օրինաւք հոգւոյն կենաց՝ առաւել քան զբնութեանն տածիւք խնամոյ առ մանկունս, որովք յառաջին հասակին դաստիարակեալք յոյս տայի քաջութեանն»³³³, ուսումնասիրողների մեծ մասը (Ղ. Ալիշան, Գ. Զարբհանայան, Մ. Աբեղյան, Ա. Աբրահամյան) վերագրել են Հովհաննես Սարկավագին: Այսպես, Ա. Աբրահամյանը գրում է. «Այս հատվածը, առանց սկզբնաղբյուրը ցույց տալու, «գրվածքի մը մէջ» ցուցումով, առաջին անգամ մեջ է բերել Ղ. Ալիշանը: Նրանից օգտվել է Գ. Զարբհանայանը, իսկ վերջինից՝ պրոֆ. Մ. Աբեղյանը: Վերցնելով այս մեջբերումը, Մ. Աբեղյանը անհրաժեշտ է համարել տալ հետևյալ տողատակ ծանոթությունը. «Այս ցիտատը բերում է Զարբհանայանը «Հայկական հին դպրության պատմության» մեջ, աղբյուրը ցույց տալով «ուրիշ տեղ մը» անորոշ բառերով ըստ հին վենետիկյան սովորության: Հետաքրքիր է իմանալ, թե Սարկավագ Վարդապետն իր որ գրվածքի մեջ է գրել այն»³³⁴: Սակայն, բացի Ա. Աբրահամյանից, մյուսները չեն ներկայացրել այդ ստեղծագործությունն ամբողջովին: Թեև Ա. Աբրահամյանը ևս միայն հրատարակել է այն՝ միանգամայն ուշադրություն չդարձնելով բովանդակությանը:

Ուշադիր ընթերցողը չի կարող չնկատել, որ պատանեկան կամ երիտասարդ տարիքում նրա հետ ինչ-որ բան է կատարվել, ինչի մասին լռում են բոլորը:

³³² Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 127:

³³³ Նույն տեղում, էջ 127:

³³⁴ Նույն տեղում, էջ 22:

Ուսումնասիրողների կողմից այդ ստեղծագործության շարունակությամբ «ծանոթ չլինելը» ևս կարող է համարվել մի կողմնակի ապացույց, որ եթե օգտագործվեր, ապա կանգ էին առնելու բացահայտ հակասության առջև, այն է՝ ինչպես կարող էր ստեղծագործության հերոսը լինել Հովհաննես Սարկավազը, որին բոլորը ճանաչել են միանգամայն այլ պատկերով, ինչպես հաղորդում է Հովհաննես Սարկավազի կենսագիրը, Պողոս Տարոնացու նման, որի մասին կարդում ենք. «...լուսաորիչ, երևեալ փանս Հայոց և վէմ աղանանդեայ ընդդէմ հերձուածողաց և յոյժ ախոյեան լեալ ուղղափառաց և անպարկասելի վարուք կացեալ ի կեանս իւր ընդդէմ հերերիկոսացն»³³⁵:

Ողբերի բովանդակային վերլուծությունը հաստատապես ապացուցում է, որ սրանց հեղինակը՝ հետագայում սրբացված Հովհաննես Սարկավազը, միանգամայն «սովորական» մարդ է՝ իր մարդկային թուլություններով ու սխալներով, որոնք առնչվում են, հատկապես, երիտասարդ տարիների գործունեությանը, ինչը միանգամայն շրջանցված է թե՛ վարքագրի մոտ, թե՛ մատենագրական տեղեկություններում:

«Ամբաստանութիւն զանձնէ...»-ն բովանդակությամբ խոստովանություն է («Խոստովան լինել զգործոցն անառակութիւն և զանձին սոգտանելով կամաւոր մոլորութիւն»), սեփական անձի ամբաստանագիր, որն սկսում է իր անմտության ու մոլորության պատճառաբանությունների, անօրեն գործողությունների բարձրագոչ դատապարտումով, ուր տողերի արանքից ասես լսվում է ինքնագիտակցման եկած ճշմարիտ հավատացյալի հառաչի ձիչն ու ինքնախարազանման անթաքույց արդարացիությունը, այն ցավագին ըմբռնումը, որ, իրենից բացի, ոչ ոք մեղավոր չէ, քանզի ոչ թե ինչ-որ մեկն է գայթակղել իրեն, այլ, հանդիպելով «այլևայլ չար ուսմանցս և վատարարոյից ընդունելոյթամբ...»³³⁶, ինքն է գիտակցաբար գնացել կործանումի ճանապարհով՝ «Ո՛վ անմտութեան, ի՛նչ մոլորութեան իմոյ բարուք. Ո՛չ անգիտութեամբ ինչ գայթակղեալ սխալեցի, և ո՛չ խաբեալ յումմեքէ ըստ որում յոլովք մոլորեցան»³³⁷:

Բարեպաշտ ու իմաստուն ծնողներից սերած հեղինակն ապա պատմում է, թե ինչպես եղավ, որ հայտնվեց այդ վիճակում. «Եւ արդ՝ ընդէ՞ր պատահեաց ինձ անարիխութիւնք գործուց»³³⁸:

Նախ կրկին իրեն է մեղադրում իր չար ընտրության համար. թեև ապրել է իմաստունների ու արդարների հետ, սակայն ընտրել է անիրավը՝ «Աւաղ չարաչար ընդրութեանն, ընդ իմաստունս կելով, անմտացայ եւ արդարոց քաղաքակից եղեալ գտայ անիրաւ»³³⁹: Ինքը չի ընտրել պարկեշտների

³³⁵ Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 388:

³³⁶ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 127:

³³⁷ Նույն տեղում:

³³⁸ Նույն տեղում:

³³⁹ Նույն տեղում:

ողջախոսությունն ու քաջությունը, «հերքիչ ու կործանագործ արհամարհյալն է գտել իրեն՝ տգեղացնելով իր պատկերի բարեշնորհությունը», ճոխանալով «ոլորապատեհ փարթամութիւնէն»՝ աղքատացել է Աստծու որդուց: Ափսոսում է իր գործը, որի վերստին ստացումը չի վերականգնելու ծնունդի հետ շնորհված գեղեցկագործությունը («Աւա՛ղ գործոյս, որոյ վերստին ստացումն յետ աւագանին գեղեցկագործութեանն ոչ է այժմ»), և ինչպե՞ս պիտի կարողանա նորից շահել այն³⁴⁰:

Մարդը երկփեղկվել է՝ անձ՝ հոգի, և գիտակցություն՝ միտք, որոնք ելել են միմյանց դեմ, որոնց մասին լռում է հեղինակը, սակայն հռետորական հարցը («գիա՛րդ շահեցայց գնոյն») դրա անթաքույց վկայությունն է: Հնարավո՞ր է հաշտեցնել միմյանց հետ հոգին ու գիտակցությունը՝ միտքը, այն դեպքում, երբ կատարել է ոչ թե բարին, որ ցանկացել է, այլ այն՝ ինչ ատել է: Եվ պատճառը՝ մարմնականի, գիտակցության, մտքի կամքը կատարելն է. «...Եւ թուիմ առնել ոչ զբարին, զոր կամիմ, այլ զոր արեմն: Բայց ո՞րպէս հաւանեցուցանեմ զանձն իմ ի գիտակցութիւնէ մտաց իմոց վկայեալ. զիս ուրեմն, և որոց ցանկամ կամ յորմէ ոչ զգուշանամ, առնեմ, այսինքն զկամս մարմնոյ և մտաց, վասն որոյ քարկութեանն եղէ և անուանեցայ որդի»³⁴¹:

Մեղավորության ծանր զգացումով կքած մարդը մոլորված է, տարակուսած, տրտմած, թվում է՝ գտնվում է անելանելի իրավիճակում, սակայն չի կորցնում հույսն ու հավատը Աստծու ողորմածության, առատկամության հանդեպ, քանզի նույնիսկ մեղավորների աղաչանքների համար է ուրախանում Աստված: Սակայն եթե կա մի կողմից մեղավորի՝ իր անառակ գործերի **խոստովանությունը**, կամավոր մոլորության պատճառով սեփական անձի մեղադրումը, ապաշխարության ընծայաբերությունը, մյուս կողմից՝ կանչն Աստծու, ապա պետք է, որ լինի նաև փրկությունը:

Հստ բանաստեղծության՝ հեղինակի՝ Աստծուց ընկրկման մասին իր հրապարակավ ու բարձրաձայն խոստովանությունից առավել ոչինչ ասել չենք կարող, բացի միայն այն, թե ինչպիսին է եղել՝ հոգեկան երկվությամբ և վերջնական ապաշխարությամբ, այսինքն՝ ինչպես իր խնդրանքն էր առ Աստված՝ հիշել միայն իր բնածին ու ընդաբույս բարերարությունը:

Բանաստեղծությունը թույլ է տալիս վստահորեն ասել, որ մեղքի պատճառով նա զրկվել է նաև իր գործից, ապա կրկին ստացել այն. «Աւա՛ղ գործոյս՝ որոյ **վերարին սրացումն** յեւր ավագանին գեղեցկագործութեանն ոչ է այժմ»³⁴², ինչը սակայն չի փարատում բանաստեղծի ցավը, քանի որ ինքը չի կարող վերստանալ ետծննդյան իր գեղեցկագործությունը:

³⁴⁰ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 127:

³⁴¹ «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուի մեկնողական հատվածում, մեր կարծիքով, Քրիստոսի զոհաբերությունը դիտվում է իբրև տոմարական իրողության խորհուրդ, ինչն այս բանաստեղծության մեջ արտահայտված է՝ իբրև գիտակցությունից թելադրված իրողություն և **աղքատացում Աստծու որդուց**:

³⁴² Նորին (Յովհաննու) Ամբաստանութիւն զանձնէ, Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 127:

Եվ հատկապես այն իրողությունը, որ երկար տարիներ գործել է Անինում (գուցե նաև 1124–1126 թթ., երբ Անին գրավել էին վրացիները) և հետո վերադարձել ու իր մահկանացուն կնքել Հաղբատում, կարող է ևս մեկ վկայություն համարվել այն բանի մասին, որ «օտարված» է եղել Հաղբատից, իսկ հետագայում՝ հառաջացած տարիքում, դիմելով Սարգիս Մեծին, ներվել ու վերադարձել է Հաղբատ:

Մեր կարծիքով՝ Սարկավագի կենսագրական տեղեկությունները կարող է լրացնել նաև **Նորին Յովհաննու «Առ կոյր աչագեղոյն եւ լուսավոր»**³⁴³ երկը ևս: Այս ստեղծագործությունը տեղադրված է եղել Հովհաննես Սարկավագի տաղերի շարքում, թեև բովանդակությունից Ա. Աբրահամյանը կռահել է, որ այն նամակ է կամ Թուղթ: Ա. Աբրահամյանն այն հրատարակել է ՄՄ 7^{հմբ} գրչագրից (էջ 92 բ–93ա)³⁴⁴:

Այս նամակի մասին՝ իբրև տաղի, առաջին անգամ տեղեկություն է հաղորդել Հ. Ոսկյանը³⁴⁵՝ հիմնվելով Քեշիշյանի կազմած՝ Զմմառի ձեռագրացուցակի վրա (Զմմառի մատենադարանի թիվ 195 ժողովածու):

Թղթին այլևս ոչ ոք չի անդրադարձել:

Կարծում ենք՝ այն Հովհաննես Սարկավագի լավագույն գրական երկերից մեկն է՝ օժտված գեղարվեստական ու խոհափիլիսոփայական բարձր ոգով:

Այստեղ արտացոլված են բանաստեղծի փիլիսոփայական խոհերը մարդ ու հասարակություն, մեղք ու պատիժ, անձ ու մարմին, աչք և միտք, զգայություններ ու բանականություն, մասնավորի ու ընդհանուրի, պատճառի ու հետևանքի փոխհարաբերությունների վերաբերյալ:

Թղթում առաջին հայացքից թվում է, թե խորհրդածության առարկան ընդհանրապես *կոյր* հասկացությունն է, նրա փիլիսոփայական և հասարակական ընկալումը. *«Ի կասիուցման զգայութեանց ոմանց, մանաւանդ որ ասեն իմաստասերք վրիպել ի բարուք կելոյ եւ ոչ ասեն եթէ ունիցի, զոր ըստ անձինն բիբս անպղտորս և կորովիս վերնասհայեացս, զի եթէ գոյութիւն անապական անձն և ներհակ մարմին արժան ուրեմն է, ո՛չ զըստ մարմնոյ յաւէր, քան թէ ըստ անձինն կոչել ուղղակի քաջազգայութիւն և համայն բարեբախտութիւն»*³⁴⁶:

Սարկավագն ընդհանուր-վերացարկված ձևով գրում է երկու տեսակի՝ բնածին կամ ժառանգաբար ստացած և ձեռքբերովի կուրության (արության, իմաստասիրելում վարժվելու կամ բռնության պատճառով) ու կույրերի մասին, հատկապես կարևորելով, որ նրանք «ոչ տխուր, այլ ուրախ մանաւանդ լինել պարտին: Թեպէտ և իցեն զգալոյս աստի արգելեալք ի լոսոյ, որք եղէն

³⁴³ Ա. Աբրահամյան, Հովհ. Իմաստասերի մատենագրությունը, էջ 328–329:

³⁴⁴ Նույն տեղում, էջ 109–110:

³⁴⁵ Հ. Ոսկեան, Հովհաննես Սարկավագի գրությունները // Հանդէս անսօրեայ, 1925, մայիս–հունիս:

³⁴⁶ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 328:

բարեկիրք առաջնովն և մեծաւ, վասն որոյ զնոյն վարիլ հետ», այն է՝ թեև նրանք արգելված են զգալու լույսը, սակայն կույրերի համար կարևորագույնը դառնում է իմաստասիրական զգայությունը, որ միտք է կոչվում, և այն ավելի կարևոր է ու օգտակար. «Եւ ասի բիւրապատկագոյն ստացեալ զաւգտակարութիւն, զի նա յայսմ և խափանելի, իսկ այնմ և անփոխադրելի զաւգուտն ունի: Եւ ասեմ զայս առ երկոեան, որք անուամբք և եթ և որ արդեամբք իմաստասիրեն յարթուն՝ զիմաստասիրականն ունելով զգայութիւն, որ կոչի միտք»³⁴⁷:

Իր խորքում այս մեկնաբանությունը անչափ համահունչ է առավելապես Եղիշեով մեզ ավանդված աստվածաշնչային՝ «Լավ է կոյր աչօք, քան մտօք» ասույթին, որի մեկնությունն է ասես այս ստեղծագործությունը:

Հովհաննեսը, առանց ծանրաբեռնելու կամ մանրամասների մեջ մխրձվելու, կույրի շատ ընկալելի օրինակով կարողանում է ներկայացնել փիլիսոփայական բարդ հիմնախնդիրներ՝ մասնակիի ու ընդհանուրի փոխհարաբերություն, պատճառի կարևորություն և այլն. «Արդ՝ եթէ պարզագոյնքն նմանեան նկարին բոլորեքին, այլ և պատճառն՝ երիցագոյն, որ է առաւել իմաստութիւն, ոչ ամենայն երաժշտագոյն է ասել գովելոյ՝ հասեալ երջանկութեան, որ զնայն ասացաւ սրարեասագոյն և բարեբախտ զճշմարիտն իմաստասիրելով: Եւ զանլուծանելին, որովք յաղագս անլուծանելացն, որ և է»³⁴⁸:

Թղթում զգացվում է հելլենիստական սոփեստական դպրոցի կարկառուն ներկայացուցչի՝ Արիստոտելի ուղղակի ազդեցությունը Հովհաննեսի փիլիսոփայական հայացքների վրա, այն է՝ մտքի միջոցով է միայն, որ կարելի է հասնել ճշմարտության: Օրինակ, ըստ Արիստոտելի, Աստված ինքը կատարյալ փիլիսոփա է³⁴⁹, որ իր միտքն է մտորում կամ իր խոհը խորհում: Թեև տաղում խոսք անգամ չկա իր խոհը խորհող Աստծու բարոյական իդեալի մասին, ով մարդուն ստեղծեց իր պատկերով ու նմանությամբ, սակայն աչագեղ ու լուսավոր կույրը, ում իր սրտակցությունն ու բարեխոսությունն է հղում բանաստեղծ-վարդապետը, առարկայանում է այդ նմանության մեջ, նամանավանդ, եթե միտքը ենթադրում է գործունեություն, տվյալ դեպքում՝ եթե «զի արութեամբ զայս վասն ընդդիմակին բռնագբաւսմամբ»³⁵⁰ է կուրացել:

Նկատելի է նաև Եվագր Պոնտացու ազդեցությունը, ում երկու գրքերն է խմբագրել:

Կուրության մասին ընդհանուր տրամախոսությունից հետո Սարկավագը միանգամից անցում է կատարում՝ ընդհանուր դատողությունները մասնավորեցնելով մեկի՝ սիրելի, աչագեղ կույրի համար՝ ի քաջալերություն և առ Աստված բարեխոսություն այն անձի, ում անունը չի հիշատակվում

³⁴⁷ Հմմտ. «Դիդիմոս ի մարմնական աչաց կուրացեալ լինի, յայնժամ հոգոյն աչք ևս առաւել լուսաւորեցաւ» (Յովհ. Սարկաւագի Ի բանից Եւագրեայ, ՄՄ 5596 ձեռ., թ. 336 ա-345բ):

³⁴⁸ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 328:

³⁴⁹ Փիլիսոփայական բառարան, Եր., 1975, էջ 43:

³⁵⁰ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 328:

ստեղծագործության մեջ. «Ո՛վ սիրելի, յոյժ ախորժեւ բաղձանաւք անձինքում
բարոյ և մեզ նուաստից լինիլ բարեխաւ: Ո՛ղջ լեր»³⁵¹:

Կույրն այս նամակում ներկայացված է անանուն՝ ուղղակիորեն «ո՛վ սիրելի», ինչը միանգամայն նրա անմեղության և հեղինակի կողմից չդատապարտվելու մասին պարզ վկայություն է:

«Ո՛վ սիրելի»-ն անուղղակիորեն ներկայացված է իբրև «անպղտոր բիբ և կորովի վերնահայացք»³⁵² ունեցող մեկը, ում կուրությունը ձեռքբերովի է՝ գուցե և քաջությամբ բռնությանը դիմադրելու պատճառով:

Բանաստեղծության ձոնումը անանուն աչազեղ կույրին վկայում է, որ նա եղել է Հովհաննես Սարկավազին քաջածանոթ ու սիրելի մեկը, ում կուրությունը հնարավոր էր՝ հակասականորեն ընկալված լինել, նույնիսկ դիտված իբրև սեփական մեղքերի պատճառով հասած աստվածային պատիժ: Այն, որ միանշանակ չի եղել այդ կույրի հանդեպ հասարակության վերաբերմունքը, ապացուցում է նաև նրա անվան բացակայությունը:

Հարց է ծագում՝ ո՛վ կարող էր լինել այդ աչազեղ կույրը, ո՛ւմ է ուղղված այս նամակը:

Հարցի պատասխանը, բնականաբար, կարող է լինել միայն ենթադրության սահմաններում, քանզի ոչ մի ուղղակի փաստական ապացույց չենք հայտնաբերել Հովհաննես Սարկավազին վերաբերող տեղեկություններում, այսուամենայնիվ պատմական տեղեկությունները հնարավորություն են տալիս մտածելու Հովհաննես Սարկավազի ժամանակակից (11-րդ դ. վերջ - 12-րդ դ. առաջին քառորդ) երկու հանրահայտ կույրերի մասին, որոնցից մեկը Գեորգ Արձիշեցի³⁵³ Աշիկան է՝ բնածին կույրը, մյուսը՝ Ուռհայի Ստեփանոս արքեպիսկոպոսը՝ բռնությամբ կուրացված:

Ի ծնե կույր Գեորգ Արձիշեցին ձգնավոր էր ու սրբակյաց: Իր ընկերոջ՝ Գրիգորի հետ ման էր եկել բազմաթիվ վանքերով (յոթ անգամ ուխտի էր գնացել միայն Երուսաղեմ), հրաշքով փրկվել հունգար ավազակների հարձակումներից, հրաշագործությամբ վերակենդանացրել սպանված ընկերոջը: Կյանքի վերջին շրջանում ապրել է Անիի եկեղեցիների պատերի տակ, հատկապես Կաթողիկեի, որտեղ գործել է Հովհաննես Սարկավազը: Սակայն առավել հակված ենք կարծելու, որ Թուրթն ուղղված է եղել Ստեփանոս արքեպիսկոպոսին, քանզի մյուսին՝ Գեորգ Արձիշեցի Աշիկային, կարող էր հաճախ հանդիպել Անիում և հայտնել իր սրտակցությունը, և բացի այդ՝ իմաստ չկար թաքցնելու նրա անունը տաղում, քանզի քաղաքական իրադարձությունների հետ չէր առնչվում այդ բնածին կույրը, իսկ Ստեփանոս արքեպիսկոպոսի պարագայում միանգամայն այլ էր: Ստեփանոս Ուռհայի արքեպիսկոպոսը, ըստ Մատթեոս Ուռհայեցու տեղեկությունների, 1107/08 թվին է կուրացվել³⁵⁴:

³⁵¹ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 329:

³⁵² Նույն տեղում:

³⁵³ Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Եր., 1942, էջ 461:

³⁵⁴ Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 336:

Հայտնի է, որ Սամուել Անեցին քաղաքել է Սարկավագից ոչ միայն Հայոց ՇԽԲ թվականի, այլև ՇԽԷ թվականի՝ Խաչակրաց առաջին արշավանքին վերաբերող պատմությունը³⁵⁵, այսինքն՝ Սարկավագը շատ լավ է տեղյակ եղել այդ ժամանակի ոչ միայն պատմաքաղաքական անցքերին, այլև հայտնի պատմական անձերի հետ կապված իրադարձություններին: Քանի որ Սարկավագի պատմական աշխատություններից մեզ հասել են միայն պատանիկներ, դիմենք այլ պատմիչների երկերին:

11-12-րդ դարերի պատմական իրադարձությունների մասին լավագույնս տեղեկանում ենք Ուռհայեցու Ժամանակագրության շնորհիվ:

Ինչպես հայտնի է՝ 1098 թվականին՝ Խաչակրաց առաջին արշավանքի ժամանակ՝ Բալդուինը հիմնեց Եդեսիայի (Ուռհա) կոմսությունը:

Ըստ Ուռհայեցու Ժամանակագրության՝ 1091 և 1104 թթ.³⁵⁶ Հայոց կաթողիկոս Տեր Բարսեղն իր ողջ սպասավորությամբ՝ ազատներ, եպիսկոպոսներ, քահանաներ, Անի քաղաքից ուղևորվում է Ուռհա: 1091 թվականի ուղևորության ժամանակ նրա հետ էր նաև Հովհաննես Սարկավագը, իսկ երկրորդ ուղևորության ժամանակ նրան կաթողիկոսին վայել պատիվներով ընդունում է ֆրանկների կոմս Բալդուինը (Պաղտին): Եվ շատ սիրելով՝ նվիրում գյուղեր ու տալիս այլ ընծաներ:

Բնականաբար, Ուռհայում Բարսեղը պիտի հանդիպեր նաև հայ հոգևորականության հետ, որոնցից մեկի անունը՝ **Ստեփանոս արքեպիսկոպոս**, հիշատակում է Ուռհայեցին Հայոց 557 թ. (1107/1108 թթ.) դեպքերի նկարագրության ժամանակ:

Հայոց կաթողիկոսի հանդեպ ցուցաբերած այսպիսի վերաբերմունքը և հետո Զավլիից Զոսիկնի շնորհիվ փրկագնված Բալդուինի՝ հայոց իշխան Վասիլի մոտ ապաստանելը վկայում են, որ Բալդուինը վստահել է հայերին և նրանց աջակցությանը:

Սակայն երբ Հայոց 557 թ.-ին (1107/1108 թթ.) Թլպաշարի սահմաններում տեղի ունեցած ձակատամարտում Տանգրին պարտության է մատնում Բալդուինի ու Զոսիկնի զորքերին, Ուռհայում մեծ սուգ է լինում՝ մտածելով, որ Բալդուինը գոհվել է:

Այդ ժամանակ ս. Հովհաննես եկեղեցում ֆրանկ քահանայի գլխավորությամբ՝ միաբանության և քաղաքը պաշտպանելու³⁵⁷ վերաբերյալ ժողով է գումարվում, որտեղ Տանգրիի հետ միաբանվելու որոշում է ընդունվում, քանի որ քաղաքի բնակիչները շատ էին վախեցել նրանից ու այն բանից, որ նա կարող էր քաղաքը հանձնել Ռիչարդին, ով քաղաքում շատերին էր թալանել:

³⁵⁵ Կ. Մաթևոսյան, Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները, Եր., 2009, էջ 91:

³⁵⁶ Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 320:

³⁵⁷ «Ձեր մարդ և մեր թող պահեն զկլայն քաղաքին, մինչև մեզ տէր յայտնի» (Մաթ. Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 336):

Ժողովին մասնակցել են նաև հայ հոգևորականները՝ Ստեփանոս արքեպիսկոպոսի գլխավորությամբ, քանզի մեկ օր անց Ուռհա են գալիս Ջուլինն ու Բալդուինը և իրենց դավաճանելու ամբաստանությամբ շատերին են հիրավի կամ հանիրավի կուրացնում ու մահվան դատապարտում: Նրանց թվում էր նաև հայոց այնպիսի բարձրաստիճան հոգևորական, ինչպիսին էր Ստեփանոս արքեպիսկոպոսը, ում քաղաքացիները 1000 դահեկան փրկագնով կարողանում են ազատել մահից, սակայն նրան կուրացնում են:

Հովհաննես Սարկավազը, անտարակույս, քաջատեղյակ պիտի լիներ ոչ միայն Ուռհայում կատարված իրադարձություններին, այլև մոտ ի մոտո ծանոթ բարձրաստիճան հոգևորականներին, այդ թվում և Ստեփանոս արքեպիսկոպոսին ու նրա հետ կատարված դժբախտությանը, ինչին, մեր կարծիքով, իբրև քաջալերություն, արձագանքել է այս թղթով:

Հովհաննես Սարկավազի ստեղծագործություններից ուսումնասիրողների առանձնակի ուշադրությանն է արժանացել **«Յովհաննու Սարկավազի Իմաստասիրի և վարդապետի ասացեալ բան իմաստութեան ի պատճառս գրոսանաց առ ձագն որ գաղօթանցաւ նոր ճոռողէր քաղցրաձայն որ կոչի սարել»** խոհափիլիսոփայական բանաստեղծությունը, որին առաջին անգամ հանգամանորեն անդրադարձել է Մ. Աբեղյանը, ում կարծիքով՝ այս ստեղծագործությամբ նա հիմք է դնում մի նոր՝ իմաստասիրական քնարերգությանը³⁵⁸:

Այս ստեղծագործության ուսումնասիրությունը հեղինակներին (Մ. Աբեղյան³⁵⁹, Հ. Թամրազյան³⁶⁰, Ա. Մնացականյան³⁶¹, Կ. Միրումյան³⁶², Վ. Չալոյան³⁶³, Ս. Զաքարյան³⁶⁴) բերել է երբեմն իրարամերժ եզրակացությունների, այն է՝ Հովհաննես Սարկավազը իբրև աստվածային Հայտնությունը մերժող գեղագետ-փիլիսոփա, ինչպես՝ Վերածննդի գաղափարներ արտահայտող կամ մարդու կեցության, նրա կոչումի ու էության, բնական-աստվածայինի և մարդկայինի, բնության և «քաղաքակրթված» մարդու հարաբերակցության իմաստասիրական-աստվածաբանական հիմնահարցեր արծարծող հեղինակ:

Ա. Մնացականյանը հիմնավորել է, որ այն կրում է համաքրիստոնեական աստվածաբանական գրականության ազդեցությունը: Այստեղ արծարծված շատ հարցեր հիմնված են Փիլոն Եբրայեցու «Յաղագս նախախնամութեան», «Յաղագս բան ունել և անասուն կենդանեացդ» երկերի, ինչպես նաև

³⁵⁸ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 72-82:

³⁵⁹ Նույն տեղում:

³⁶⁰ Հ. Թամրազյան, Հայ քննադատություն, գիրք Բ, Եր., 1985, էջ 247:

³⁶¹ Ա. Մնացականյան, Հովհաննես Սարկավազի «Բան իմաստութեան» պոեմը և նրա գնահատությունն՝ ըստ օգտագործված աղբյուրների // Բանբեր Մատենադարանի, № 14, էջ 9-44:

³⁶² Կ. Ա. Միրումյան, Հովհաննես Սարկավազի աշխարհայացքը, Եր., 1984:

³⁶³ Վ. Չալոյան, Հայկական Ռենեսանս, Եր., 1964:

³⁶⁴ Ս. Զաքարյան, Մարդու և բնության փոխհարաբերության հարցը Հովհաննես Սարկավազի «Բան իմաստութեան» քերթվածում // Բանբեր Երևանի համալսարանի, 2002, 2 (107), էջ 20:

Գրիգոր Աստվածաբանի, Բարսեղ Կեսարացու, Հովհ. Ոսկերեքանի զանազան ճառերի և մեկնությունների վրա³⁶⁵:

Չմանրամասնելով բանաստեղծության բազմաշերտ գաղափարները, որոնց հանգամանորեն անդրադարձել են վերոնշյալ հեղինակները, կարևորենք միայն, որ «Բան իմաստութեան...» բանաստեղծության մեջ հստակորեն արծարծված է քաղաքակրթության երկակի դերակատարության՝ մի կողմից դրական՝ իբրև առաջընթացի, մյուս կողմից՝ բացասական, այն է՝ դրա հետևանքով մարդու՝ աստվածային արարչագործությունից օտարացման, մեղանշումների ու մեղքերի մեջ խորատուգման, ինչպես և աստվածային արարչագործության հանդեպ մարդու պատասխանատվության հիմնահարցերը:

Բ. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Հովհաննես Սարկավազի անվանն են առնչվել պատմագրական երկու երկ՝ «Պատմություն» և «Եկեղեցական պատմություն»:

Հովհաննես Սարկավազի մատենագրությամբ հետաքրքրված հեղինակներից մի մասի մոտ ձևավորվել է այն կարծիքը, թե նա գրել է 2 մասից բաղկացած «Պատմություն»: Ղ. Ալիշանն այդ «Պատմությունը» համարում է նրա երկերի կորսված գլուխգործոցը³⁶⁶: Նույն կարծիքին է եղել նաև Գ. Զարբհանայանը³⁶⁷:

Բ. Սարգսյանը իր կազմած՝ Վենետիկի ձեռագրացուցակում նշում է մի ձեռագիր Ժամանակագրություն, որի՝ սկյութների (= սելջուկների) իշխանության գալու Ժամանակների մասին հատվածը օգտված է Սարկավազից. «...Սկյութացուցն առնուլ զբռնակալութիւնն այսպիսի պարճառաւ զոր ընթերցաք գրեալ վարդապետին մեծի, որ Սարկաւազ վերակոչի...»³⁶⁸: Սա, կարծում ենք, Սամուել Անեցու պատմության մի հատված պետք է որ եղած լինի³⁶⁹, որտեղ նա օգտվել է Հովհաննես Սարկավազից:

Ուսումնասիրությունները Ա. Աբրահամյանին բերել են այն համոզման, որ «Պատմություն» կոչվածները պատմագիտական տարբեր աշխատություններ են և ոչ թե նույն գրքի երկու մասերը³⁷⁰: Ա. Աբրահամյանը մի տեղեկության է հանդիպել Հաղբատ-Սանահին «Քյոթուկ» կոչված ձեռագրի «Վասն սքանչելեաց Սուրբ Աստուածածնին» հատվածում, որտեղ այս հատվածի՝ Սարկավազին պատկանելու մասին կա «Քյոթուկը» կազմողի հիշատակու-

³⁶⁵ Ա. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 9-44: Հ. Քյոսեյան, Ներածություն հայ եկեղեցական մատենագրության, էջ 336:

³⁶⁶ Ղ. Ալիշան, Յուշիկք ..., էջ 300:

³⁶⁷ Գ. Զարբհանալեան, Հայկական հին դպրության փոխարեն՝ Պատմութիւն հայերէն դպրութեանց, 649 էջ:

³⁶⁸ Բ. Սարգսեան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Բ, Վենետիկ, 1924, էջ 817:

³⁶⁹ Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., «Հովհաննես Սարկավազի կենսագրությունը» գլխում նշված՝ Սամուել Անեցու տեղեկությունները:

³⁷⁰ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 34:

թյունը. «Էր և պատահումն ի վանսն Սանահին կոչեցեալ, զոր տայ գրով իմաստուն Պոետիկոսն Սարկաւագ», ինչը հերքում է Կ. Մաթևոսյանը³⁷¹՝ հիմնավորելով, թե 1110 թվականին կատարված դեպքը չէր կարող ընդգրկվել Ալփապլանի (մահ. 1072) թագավորությամբ ավարտվող երկուն:

Ինչպես հայտնի է, մատենագիրներից Սամուել Անեցու³⁷², Մխիթար Այրիվանեցու և Կիրակոսի Գանձակեցու մոտ ենք հանդիպում տեղեկությունների, որոնցից կարելի է ենթադրել, թե Սարկավագը գրել է պատմագրական բնույթի երկեր:

Սամուելի երկուն կարդում ենք. 1. «...Իսկ յետ նոցա Սկիթացւոցն առնուլ զբռնակալութիւն, այսպիսի պարճառաւ: **Ընթերցաք գրեալ վարդապետին մեծի որ Սարկաւագ վերակոչի անուանեալ**»³⁷³:

Սամուել Անեցին նշում է նաև, որ Մելիքշահին վերաբերող՝ Սարկավագի պատմությունից կգրի այն հատվածը, «զոր ինչ մահուան է ասացեալ»³⁷⁴:

Սամուել Անեցու տեղեկությունները փաստում են, որ հեղինակն իր Պատմության որոշ հատվածներ (սկյութների բռնակալությանը, Մելիքշահին, հույների Ալեքս թագավորին, Խաչակրաց արշավանքներին վերաբերող) գրելիս օգտվել է Հովհաննես վարդապետի գրվածքներից: Սակայն այստեղ խոսք չկա, թե Հովհաննես Սարկավագը գրել է ամբողջական պատմություն: Այստեղից կարելի է եզրակացնել, որ նա գրել է կոնկրետ հենց այդ իրադարձությունների մասին և մեկի դեպքում էլ՝ համառոտ՝ խոստանալով գրել ավելի ընդարձակը:

Մյուս հեղինակի՝ Մխիթար Այրիվանեցու Պատմության՝ «Պատմագիրք ի սկզբանէ» ենթավերնագրի տակ մարդկային պատմությունը սկզբից գրած պատմագիրների շարքում հիշատակվում է նաև «Յոհաննէս Սարկաւագ վարդապետը»³⁷⁵: Սակայն, ինչպես ասել ենք, Այրիվանեցին այստեղ նկատի պետք է ունեցած լիներ Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուի մաս կազմող «Ժամանակագրությունը», որն սկսում է այսպես՝ «Եթէ կամիցիս յեւանելոյ Ադամայ ի դրախտէն գիտել զԺամանակն...»³⁷⁶, և ոչ թե իրական պատմագրություն: Համամիտ ենք Ա. Աբրահամյանի այն կարծիքին, որ Սարկավագի գրած ժամանակական ցանկի նպատակը եղել է «իր կատարած տոմարական հաշիվներով ժամանակագրության որոշ թվականներ ամփոփելը»³⁷⁷:

³⁷¹ Կ. Մաթևոսյան, Հովհաննես Սարկավագի գործունեությունն Անիում, Էջմիածին, 2005, Է-Ը, էջ 66:

³⁷² Սամուել Անեցի, նշվ. աշխ., էջ 119, 120:

³⁷³ Նույն տեղում, էջ 97:

³⁷⁴ Նույն տեղում, էջ 116:

³⁷⁵ Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն հայոց, էջ 23:

³⁷⁶ Հովհաննես Իմաստասերի Ժամանակագրությունը, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 131:

³⁷⁷ Նույն տեղում, էջ 40:

Կիրակոս Գանձակեցին միայն հիշատակում է՝ սելջուկների Հայաստան մուտքից մինչև Մելիքշահի մահը գրել է Հովհաննես Սարկավագը, որից էլ օգտվել է Սամուել Անեցին³⁷⁸:

Առաջին ուսումնասիրողները Սարկավագի անվանն են առնչել նաև երկրորդ պատմագրական երկը՝ «Եկեղեցական պատմությունը», սակայն Ա. Աբրահամյանը բացահայտել է, որ, թեև մեզ է հասել Հովհաննես Սարկավագի անունով («Եկեղեցական պատմութենէն, զոր երկրորդեալ է Սարկավագ վարդապետէ») երկ, այն, ինչպես պարզորեն վկայում է վերնագիրը, Սարկավագի գրածը չէ, այլ երկրորդածը, և ինչպես ցույց է տվել համեմատությունը՝ Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմության»՝ Բեկտոր եպիսկոպոսի գործունեության և մի քանի աղանդների վերաբերող մի հատվածի մեկնաբանությունն է³⁷⁹:

Այսպիսով, եղած տեղեկությունները հիմք են տալիս մտածելու, որ Հովհաննես Սարկավագի՝ երկու հատորով կամ երկու մասից կարծված «Պատմությունը» ընդամենն իր ժամանակի մի քանի կոնկրետ պատմական իրադարձություններին նվիրված առանձին գրություններ են և ոչ թե Աղամից սկսվող «Պատմություն», և երկրորդել է Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմությունը»:

Այսպիսով, Հովհաննես Սարկավագը գրել է իր և մերձ ժամանակների փոքրածավալ պատմական երկեր՝ կապված սկյութների բռնակալության, Մելիքշահի, հույների Ալեքս թագավորի հետ առնչվող պատմական իրադարձություններին ու Խաչակրաց արշավանքներին, մի դեպքում՝ իբրև այդ իրադարձությունների մասնակից, մյուսում՝ ժամանակակից, երրորդ դեպքում էլ հանդես է եկել իբրև եկեղեցական պատմության մեկնիչ:

Գ. ՄԱԹԵՄԱՏԻԿԱ: Հովհաննես Սարկավագի մատենագրության մաս պետք է դիտել «Յաղագս անկլինաւոր թուոց»-ը: Մաթեմատիկական բովանդակությամբ այս երկի մասին առաջինը խոսել է Ղ. Ալիշանը³⁸⁰, սակայն, այն ձեռքի տակ չունենալով ամբողջությամբ, կարծել է, թե Սարկավագի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ»-ի մի մասն է: Գ. Զարբհանայանը³⁸¹, Հ. Ոսկյանը³⁸², Ե. Տեր-Մինասյանը³⁸³, Հ. Աճառյանը³⁸⁴ և ուրիշներ ևս իրենց աշխատություններում սխալաբար նունացրել են այդ տարբեր բնույթի երկերը, «Հայկազյան բառարանի» հեղինակները որոշ թվաբանական եզրեր³⁸⁵ քաղել

³⁷⁸ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, աշխ.-մը՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 84:

³⁷⁹ **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 39:

³⁸⁰ **Ղ. Ալիշան**, Բագմավէպ, 1847, էջ 219:

³⁸¹ **Հ. Զարբհանայան**, Հայկական հին դպրութեան պատմութիւն, 3-րդ տպագրութիւն, Վենետիկ, 1897, էջ 613:

³⁸² **Հ. Ոսկյան**, Հովհաննես Սարկավագի գրությունները, էջ 238:

³⁸³ **Ե. Տեր-Մինասեան**, Հաղբատի դպրոցը և Հովհաննես Սարկավագը, Արարատ, 1901, էջ 341:

³⁸⁴ **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, էջ 571-573:

³⁸⁵ Տե՛ս Նոր բառագիրք հայկազեան լեզուի, հ. 1 և 2, Եր., 1981:

են Հովհաննեսի մաթեմատիկական աշխատությունից, որը սխալմամբ նշվել է «Սարկավագի տոմար» անունով:

Լ. Մելիքսեթ-Բեկը³⁸⁶ և Մ. Արեղյանը³⁸⁷, հավանաբար, տեղյակ չեն եղել նրա այս երկի՝ իբրև մաթեմատիկական աշխատության մասին, քանի որ իրենց ուսումնասիրություններում նույնիսկ անվանապես չեն նշում այն:

«Յաղագս անկլինաւոր թուոց»-ը հայտնի է տասնհինգ գրչագրերով, որոնցից միայն երեքն են ամբողջական և լավագույն վիճակում (ՄՄ 1770^{հմր}, ՄՄ 2595^{հմր} և Երուսաղեմի Ս. Յակովբեանց մատենադարանի 157^{հմր})³⁸⁸: Դրա մի պատառիկին առաջին անգամ անդրադարձել է Ա. Աբրահամյանը³⁸⁹, 1941 թվականին նույն պատառիկն ուսումնասիրել է Բ. Թումանյանը³⁹⁰, սակայն դրա հեղինակ է համարել Անանիա Շիրակացուն:

Հովհաննեսի «Յաղագս անկլինաւոր թուոց»-ը դրանից հետո նեղ մասնագիտական քննության է ենթարկել Գ. Պետրոսյանը «Հովհաննես Սարկավագի Անկյունավոր թվերը»³⁹¹ վերնագրով հոդվածում, որտեղ հեղինակության հարցը լուծել է Հովհաննես Սարկավագի օգտին:

Ա. Աբրահամյանը այս պատառիկին վերստին անդրադարձել է «Անանիա Շիրակացու մատենագրությունը» երկի «Անկյունավոր թվերը» ենթագլխում³⁹² և հիմնավորում է Հովհաննես Սարկավագինը լինելու կարծիքը:

Ա. Աբրահամյանը «Հովհաննես Սարկավագի մաթեմատիկական աշխատությունը»³⁹³ հոդվածում դարձյալ անդրադառնում է Հովհաննեսի «Յաղագս անկլինավոր թուոց»-ին՝ մանրամասնորեն ներկայացնելով դրանց բնագրերը:

Նիկոմախի³⁹⁴ երկի հետ համեմատությամբ պարզվել է, որ Հովհաննես Սարկավագի այս աշխատության սկզբնաղբյուրը ոչ միայն Նիկոմախն է, այլև Փիլոն Եբրայեցին: Եթե «Յաղագս անկլինավոր թուոց»-ի բուն բովանդակությունն ընդհանրություններ ունի Նիկոմախի «Թվաբանության ներածության» հետ, ապա բացատրական մասի աղբյուրը Փիլոն Եբրայեցու «Յաղագս տասն բանից»-ն է, որը պահպանված է Երևանի մատենադարանում:

³⁸⁶ Լ. М. Меликсет-Бекон, К истории точных наук в Армении и Грузии, Тифлис, 1930:

³⁸⁷ Հովհաննես Սարկավագ վարդապետ, Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. Բ, էջ 43-62:

³⁸⁸ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 49:

³⁸⁹ Ա. Աբրահամյան, Յոթերորդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացու թվաբանության դասագիրքը, «Եր. պետ. համալսարանի գիտական աշխատություններ», հ. 11, էջ 249:

³⁹⁰ Բ. Туманян, О таблице полигональных чисел А. Ширакаци, 1941, ՀՍՍՌ Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու», հ. 1, էջ 53-59:

³⁹¹ Գ. Պետրոսյան, «Հովհաննես Սարկավագի Անկյունավոր թվերը», «Տեղեկագիր ՀՍՍՌ. Գիտությունների ակադեմիայի (հասարակական գիտություններ)», Եր., 1945:

³⁹² Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 68-71:

³⁹³ Ա. Աբրահամյան, Հովհաննես Սարկավագի մաթեմատիկական աշխատությունը, էջմիածին, 1950, մարտ-ապրիլ, էջ 52-58, մայիս-հունիս, էջ 33-42:

³⁹⁴ Նիկոմախի «Թվաբանության ներածությունը» եղել է հետագա դարերի կարևորագույն թվաբանության ձեռնարկը (տե՛ս Մ. Е. Бешенко-Захарченко, История математики, т. 1, Киев, 1883, էջ 122-126):

Ա. Աբրահամյանը պարզել է, որ Հովհաննեսը փաստորեն տառացիորեն պատճենահանել է Փիլոնի այս երկը³⁹⁵:

«Յաղագս անկիւնաւոր թուոց»-ը լիովին պատկերացում է տալիս, թե ինչպէս են դասավանդել մաթեմատիկան միջնադարյան դպրոցներում: Բանասիրության տեսանկյունից հատկապես հետաքրքրական են թվաբանական եզրերը՝ «արմատ», «բողբոջ», «դարբ»՝ զույգ թվեր կամ 2-ի աղյուսակը, «ջումլադարբ» կամ «միահամուռ դարբ»՝ նախորդ թվերի գումարով ստացված թվեր, «կոճատբ»՝ կենտ թվեր, «ջումլակոճատբ»՝ կենտ թվերի գումարով ստացված թվեր³⁹⁶, «քուայթ»՝ 8-ի աղյուսակը, «երեքկինթ»՝ թվի խորանարդ աստիճան, «կրկնակթ»՝ թվերի կրկնապատիկները, «չորեքկինթ»՝ թվերի չորս աստիճանը:

Ինչպես վկայում է Հովհաննես Սարկավագի վարքագիրը, իր դպրոցում Սարկավագն ուսուցանել է նաև թվաբանություն և, բնականաբար, պետք է ունենար դասագիրք, և այն, ամենայն հավանականությամբ, եղել է «Յաղագս անկիւնավոր թուոց»-ը, որտեղ օգտագործվել են ինչպես Անանիա Շիրակացու թվաբանության դասագիրքը, այնպես էլ Նիկոմախի ու Փիլոն Երայեցու թվաբանական երկերի թարգմանությունները:

Գ. ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ: Սկզբնաղբյուրների տեղեկություններից պարզ է դառնում, որ Սարկավագը գրել է՝ կատարելապես մեկնելով, վերլուծելով վարդապետությունը, մարգարեություններն ու առաքելական Թղթերը, ժամանակի ընթացքում աղձատված բնագրերը վերականգնել է: Հովհաննես Սարկավագի աստվածաբանական ու բարոյախրատական երկերին անդրադարձել ենք մեր հոդվածում³⁹⁷:

Հովհաննես Սարկավագի աստվածաբանական երկերից երկուսը՝ «Վասն պատկերաց»-ն ու «Վասն մասանց պատուոյ»-ն առաջինը հրատարակել է Արտ. Սեդրակյանը³⁹⁸:

Ա. Աբրահամյանը Հովհաննեսի կրոնապոլեմիկ աշխատությունների շարքին է դասել «Նորին [Յովհաննու քահանայի] հակաբանութին հնագիտական ընդդէմ անգիտաց ոմանց յիրս գիտութեան, որ ստայօղ ճառիք հաւանեցուցին զոմանս ի վայրագաց և պարզամտաց հաւատալ անհաւաստի իւրենց կարծեաց» աշխատությունը՝ ՄՄ 2751^{հմր}, էջ 200բ–207ա³⁹⁹, որտեղ խոսվում է վաղ քրիստոնեական աղանդների ու նրանց առաջացման ժամանակների մասին: Այն գրել է՝ օգտվելով Եվսեբիոսի «Եկեղեցական պատմու-

³⁹⁵ Ա. Աբրահամյան, Հովհաննես Սարկավագի մաթեմատիկական աշխատությունը, Էջմիածին, 1950, մայիս-հունիս, էջ 38:

³⁹⁶ «Ջումլադարբ» և «ջումլակոճատբ» թվերի շարքից պարզվում է, որ «ջումլա» նշանակում է գումար:

³⁹⁷ Տե՛ս Գ. Սիմոնյան, Հովհաննես Սարկավագի աստվածաբանական ու բարոյախրատական երկերը // ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, հ. Թ, 2014, էջ 34–51:

³⁹⁸ Ա. Սեդրակեան, Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ պատկերագրութիւնը, Ս. Պետերբուրգ, 1908:

³⁹⁹ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 37:

թյունից»: Այս բնագիրը Ա. Աբրահամյանը համարում է նաև Հայաստանում սոցիալական շարժումների համար կարևոր սկզբնաղբյուր, քանզի խոսք կա պավլիկյանների մասին⁴⁰⁰:

«Յովհաննու Սարկաւագ վարդապետի յաղագս քահանայութեան եւ քահանայից եւ գլխոց նոցին» – ը հրատարակվել է «Սոփերք հայկականք»-ի Գ հատորում⁴⁰¹:

Երկարատև ընդմիջումից հետո՝ 1996 թվականին, «Գանձասար» աստվածաբանական հանդեսի Զ հատորում լույս է տեսել Սարկավագի «Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-իցն»⁴⁰² ժողովածուի մի հատվածը: Այդ հանդեսում ներկայացված են այդ երկի Ե, Զ, Է, Ը և ԺԱ գլուխները⁴⁰³:

Նույն տեղում՝ Տրդատ քահանա Ուզունյանի նախաբանով՝ «Հարցում վասն գայթակղութեան», «Հարցում վասն մեղաց եւ հանդերձելոց», «Հարցումն ընդ սուրբ վարդապետն Սարկաւագ». «Եթէ արժան իցէ թողուլ ի ժամանակի զեղբարս կենակիցս...» սկսվածքներով հարց ու պատասխանները և «Նորին խրատք մանկանց», «Նորին յաղագս որոց կուտութեամբ հաճոյեանն Աստուծոյ» բարոյախրատական երկերը⁴⁰⁴:

Տ. քին. Ուզունյանը Սարկավագի բարոյախրատական երկերի ցանկում ներառել է նաև հետևյալ գործերը՝ «Նորին Յոհաննու խաւսք սակաւսք», «Նորին առ եղբարս վասն անձին յետ կենաց»⁴⁰⁵, «Յոհաննու Սարկաւագ վարդապետի յաղագս քահանայութեան եւ քահանայից եւ գլխոց նոցին», «Բանք խրատու սուրբ վարդապետին Սարկաւագին», «4 հարցմունք, պատասխանիք», «Եւագրէն ի բանից սուրբ վարդապետին, [որ] Սարկաւագ կոչեցեալ»: Սարկավագին է պատկանում նաև «Լուծումն բանիցն Աստուածաբանի. Սարկաւագին (ձեռ. 5596^{հմր}, էջ 98բ-211բ)» բնագիրը, որը Գրիգոր Աստվածաբանի «Ճառ ի սուրբ ծնունդն Քրիստոսի» մեկնությունն է:

Հովհաննես Սարկավագն իր աստվածաբանական երկերում անդրադարձել է աստվածաբանության թե՛ տեսական, թե՛ գործնական խնդիրներին:

⁴⁰⁰ Նույն տեղում, էջ 39:

⁴⁰¹ **Յովհաննու Սարկաւագ վարդապետի** յաղագս քահանայութեան եւ քահանայից եւ գլխոց նոցին, Սոփերք հայկականք, հ. Գ, Վենետիկ, 1853, էջ 9-79:

⁴⁰² Հովհաննեսն իր երկերում օգտվում է նաև անցյալի հեղինակների թողած ժառանգությունից: Ինչպես կարծում է Գ. Հովսեփյանը, նրա աղբյուրներից մեկը 8-րդ դարի հեղինակ Խոսրովիկ թարգմանիչն է. «Հովհաննէս քահանայի երկի ԺԶ. գլուխը – Նորին յայտարարութիւն զանազան հերձուածոց յալ եւ յալ ժամանակս յարանց բոջախոհաց – վերնագրով ամբողջապէս համառօտութիւն կամ բանաբաղոյթիւն է Խոսրովիկի Ա. Գ. և Ե. գլուխներից: միայն անցողակի կերպով խոսում է բնութեան խնդրի մասին» (**Գարեգին Վ. Յովսէփեան**, Խոսրովիկ թարգմանիչ (Ը դար), Վաղարշապատ, 1899, էջ 37):

⁴⁰³ **Մեսրոպ քին. Արամեան**, Յովհաննէս Սարկաւագի «Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-իցն» ժողովուն, «Գանձասար» աստվածաբանական հանդես, հ. Զ, Եր., 1996, էջ 44-78, էջ 278-298:

⁴⁰⁴ **Տրդատ քին. Ուզունեան**, Յովհաննէս Սարկաւագ վարդապետ, «Գանձասար» աստվ. հանդ., Զ, Եր., 1996, էջ 298-339:

⁴⁰⁵ Ներառված է աղոթքներում:

Տեսական աստվածաբանական երկերից՝ «Վասն պատկերաց»-ին ու «Վասն մասանց պատուոյ»-ին անդրադարձել է Հ. Քյոսեյանը⁴⁰⁶: Դրանք դավանաբանական նկատառումներով⁴⁰⁷ գրված ստեղծագործություններ են, որտեղ դրսևորված է Հայ առաքելական ս.եկեղեցու չափավոր վերաբերմունքը պատկերների նկատմամբ, և այն նպատակաուղղված է այդ վերաբերմունքի ժողովրդականացմանը: Պատկերահարգությունն է այն դիքորոշումը, որ ունի մեր եկեղեցին, որի հիմնավորմանն ու տարածմանն են միտված Սարկավագի այս ստեղծագործությունները: Հ. Քյոսեյանը կրկին անդրադարձել է Հովհաննես Սարկավագին «Ներածություն հայ եկեղեցական մատենագրության»⁴⁰⁸ երկում: Նա Սարկավագին նվիրված մասում մի քանի ենթավերնագրերով՝ «Աստվածաբանական աշխատություններ», «Տոմարագիտական աշխատություններ», «Թվաբանական մի աշխատություն», «Աղոթագիրք», «Շարական Ս. Ղևոնդյանց», «Տաղեր» - «Բան իմաստութեան», «Ողբ», «Մեկնություններ», «Բարոյախրատական երկեր», «Բնագիտական բնույթի աշխատություններ», ուրվագծել է նրա ստեղծագործական վաստակը՝ քիչ ավելի ներկայացնելով բարոյախրատական երկերից I, II, IV, VIII միավորները:

Մեսրոպ քահանա Արամյանը «խիստ ուրվագծային» ուսումնասիրությամբ ներկայացնում է «Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-իցն»-ը:

Քանի որ աստվածաբանության գործնական, կիրառական խնդիրների լուծումը տրված է Հովհաննես Սարկավագի տոմարական ժառանգության մեջ, որին մենք նվիրել ենք գրքի երրորդ գլուխը, այս մասում կանդրադառնանք աստվածաբանության տեսական հարցերին նվիրված միայն մեկ երկի:

Հովհաննես Սարկավագի անվամբ մեզ հասած **«Հարցումն ընդ սուրբ վարդապետն Սարկավագ»** կամ **«Հարցումն սուրբ վարդապետին մականունն Սարկավագ»**⁴⁰⁹ վերնագրված հարց ու պատասխանն այն գործերից է, որ մնացել է միջնադարյան հայ մատենագրության կարկառուն ներկայացուցչի աստվածաբանական հարուստ ժառանգությունից, այն սակավաթիվ գրվածքներից, որը հնարավորինս լույս է սփռում Հովհաննես Սարկավագ իմաստասերի ստեղծագործական ակունքների ու առնչակցությունների և մեզ հասած աղոտ ու փոքրաքանակ կենսագրական տեղեկությունների վրա:

Երկի բուն նպատակը հարցնողին խրատելն է՝ ըստ ավանդության և նախօրինակների: Հովհաննես Սարկավագի այս երկը բնույթով խրատական է, ինչպես ինքն է վկայում, գրել է այն «վասն խրատու»⁴¹⁰:

⁴⁰⁶ Հ. Քյոսեյան, Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995:

⁴⁰⁷ Նույն տեղում, էջ 145:

⁴⁰⁸ Հ. Քյոսեյան, Ներածություն հայ եկեղեցական մատենագրության, Եր., 2018, էջ 333-339:

⁴⁰⁹ Յովհաննէս Սարկավագ, Եթէ արժան իցէ թողով զեղբայրս....., «Գանձասար», հ. 2, Եր., 1996:

⁴¹⁰ Նույն տեղում:

Հարց ու պատասխաններում, ինչպես նշում է Հովհաննես Սարկավազը, ինքը թույլ է տվել ասել առավելապես այն, ինչ գրել են բոլոր «գիտեցողներն» ու «իմաստունները»: Թեև անուններ չի թվարկում հեղինակը, սակայն սա հաստատում է, որ Հովհաննես Սարկավազի ձեռքի տակ են եղել անապատականության մասին նախորդ շրջանից հայտնի «գիտեցողների» և «իմաստունների» գրվածքները:

Ոչ միայն նրա Վարքից, այլև «Բան իմաստութեան...» բանաստեղծության մեջ արված ակնարկից՝ «Յանապատի աստ գամ նըստիմ զի օգտեցայց հանդարտութեամբ...»⁴¹¹, դեռևս վաղ հասակից այր-գրադարանում օրերով մեկուսանալու, աշակերտներին անապատում դասավանդելու մասին պահպանված ավանդազրույցներից կարելի է եզրակացնել, որ Սարկավազի համար անապատականությունը խորթ երևույթ չէ:

«Հարցումն ընդ սուրբ վարդապետն Սարկաւազ» երկում առավել ամբողջական տեսք են ստացել անապատականության մասին սարկավազյան ընկալումները:

Երկն սկսում է հարցով. «Արժի՞ ինչ-որ ժամանակով թողնենք մեր կենակից եղբայրներին և գնանք անապատ, թե՞ (մնանք) նրանց հետ, որ իրենց անձերում ունենալով կյանքի առաքիչության նույն բաղձանքը, չարչարանքով ձգնում են Աստծու փառքի համար, քանի որ ցանկալի չհամարեցինք առանձին և մենակ նստել» (թրգմն. Գ. Միմոնյան):

Հովհաննես Սարկավազի հարց ու պատասխանները հիմնավոր պատկերացում են տալիս իր ժամանակի (11-12-րդ դդ.) անապատականության՝ ինչպես վանականության, այնպես էլ մենակեցության և՛ դրական, և՛ բացասական կողմերի մասին: Այն հիշեցնում է պատմական ակնարկ անապատականության վերաբերյալ, որտեղ առանձին օրինակներով ներկայացվում են մեկուսանալու՝ «անապատում փոքրիկ օթևան» գտնելու պատճառներն ու նպատակները՝ «աղավնու թևեր առնել», և՛ այդ նպատակներին հասնելու միջոցները՝ ժուժկալություն (հոգևոր ու ֆիզիկական) և աղոթք:

Ինչպես պարզ է դառնում երկից, վանականությունը հեցած է առաջին հայրերի առաքիչի սովորության վրա: Այն ձևավորվում է նորընծա հավատացյալ եղբայրների սրտակից միաբանությամբ, որոնց սիրտն ու անձը մեկ են, ովքեր օժտված են հոգևոր շնորհներով, ապրում են խաղաղության մեջ՝ առաքյալների խոսքի համաձայն, որոնց ունեցվածքը հանրային է: Եթե այդպես են ապրում, ապա մեկուսանալու ոչ մի առիթ լինել չի կարող: Սակայն բազում պատճառներ կան, որոնց հետևանքով կարող է նախընտրվել անապատականությունը, միայն թե տեղի համաբնակությունից ինչ-որ ժամանակով խաղաղության տրվելու՝ **մտքի առանձնության** և ոչ թե **վայրի միայնության համար**՝ այն համարելով նախնական քրիստոնեական ապրելակերպ՝ գովելով մենակեցությունը՝ վերադարձի պարտավորությամբ:

⁴¹¹ Տե՛ս «Բան իմաստութեան...», Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 321:

Երկից պարզ է դառնում, որ Հովհաննես Սարկավագն առավել կարևորում է մտքի առանձնությունը, հավանություն չի տալիս վայրի մենակեցությանը՝ իբրև նախնական քրիստոնեական ապրելակերպ, չի ընդունում մենակեցությունը՝ առանց վերադարձի պարտավորության, որը հետագա շարադրանքում փորձում է պատճառաբանել՝ ներկայացնելով տարբեր օրինակներ:

Մենակեցությունը պետք է լինի ժամանակավոր, որի նպատակը մարդկային խառնակությունների պատճառով խռովված հոգին խաղաղեցնելը, անժուժկալ ապրելու պատճառով գրգռված զգայարանները սանձելը, հոգուն հանգիստ և տկարացած մտքին, որ պարտվել է զգայարաններից, ուժ տալն է:

Մեկուսանալը կամ մենակեցության տրվելը պետք է դառնա **ինքնադաստիարակության և ինքնակրթության միջոց**: Անապատում պետք է *«վայր մի հագուցանել»⁴¹² գխտովեալ վասն յամբոխական վրդովմանց հոգին եւ զգայութիւնսն ի հարկավորապէս անարգելութենէ արգելուլ եւ հանգուցանել, ոյժ քալ մրացն ի քկարութենէ, յոր անկան՝ յաղթահարեալ ի զգայարանացն: Եւ անդ, որպէս ի դպրոցի, ժամանակ մի կրթել զանձն եւ իմաստնանալ, որպէս զի մի՛ դիրաւ միսանգամ հաւանեսցի կրել յընդունումն ի վերայ անդ անկելոցն պատահմանց ակամայից»⁴¹³:*

Իր պատասխաններն առավել համոզիչ դարձնելու նպատակով Հովհաննես Սարկավագը հիշում է անապատականության նախօրինակներին՝ Եղիային (Հեղիաս), ով մեկուսանում էր Կարմեղ լեռան գագաթին՝ Քոռաթի հեղեղատում, ինչպես և Մեծն Մովսեսին՝ Քորեբ անապատում, Դավթին, Երեմիային, Հովհաննես Մկրտչին, ինչպես նաև բազում աստվածընտրյալ վարդապետների (ոչ հանվանե):

Անապատականությունը նախընտրելու պատճառները կարող են լինել տարբեր ու բազմաբնույթ՝ քաղաքային կյանքի խռովություններ, զայրույթի ու կարճատևության մրրիկներ, որոնք պղտորում են հոգու աչքերի մաքրության հստակությունը, դրսից անձերն ու հոգին ներթափանցած գանազան աղմկաստեղծ իրեր, բազմաթիվ անհավատարիմ և խռովարար ժողովների⁴¹⁴ խոսքեր, անժուժկալության հետևանքով սրված զգացություններ և բազում ու բազմատեսակ հոգևոր արատներ՝ սպանիչ նախանձը և մերձավորին նախանձողներ. հեղինակը լռում է այլ բաների մասին, ապա

⁴¹² Բառը պիտի լինի **հանգուցանել**, քանի որ տեքստից բխում է, որ խոսքը ոչ թե հագցնելու, այլ հանգիստ տալու, հանգստացնելու մասին է:

⁴¹³ Եթե արժան իցէ թողուլ գեղբայրս...., **Յովհաննէս Սարկավագ**, «Գանձասար», հ. 2, Երևան, 1996, էջ 328:

⁴¹⁴ Նկատի են առնված Քաղկեդոնի ժողովը (451 թ.), որը պատճառ դարձավ քրիստոնեական ընդհանրական եկեղեցու տրոհմանը, Կոստանդնուպոլսի (553 թ.), Կ. Պոլսի 2-րդ (680/81 թթ.), Նիկիայի 2-րդ (787 թ.) տիեզերաժողովները, որոնք մերժում է Հայ առաքելական ս. եկեղեցին՝ ընդունելով միայն առաջին երեք տիեզերաժողովները՝ Նիկիայի (325 թ.), Կոստանդնուպոլսի (381 թ.) և Եփեսոսի (431 թ.):

հիշում ոչ բարիներին և նրանց, ովքեր մշտապես ապրում են՝ ըստ միայն մշտապես լսած ու իմացած ճոխության, ինչն «անհամապատասխանություն»՝ տարածայնություններ է առաջացնում անապատականների միջև:

Մարկավագը կարևորում է օգտակարության հանգամանքը՝ կա՛մ լինել օգտակար, կա՛մ օգտվել մեկից՝ խոսքով և գործով, սակայն հանդիպում են բոլորովին հակառակ բաները. *«Բամբաստելք եւ բամբասիմք, ծառք աղճարանաց եւ շարահաստութեան ի բերանս ամենեցուն մեր, դարիմք զմիմեանս եւ դարապարտեալ լինիմք.....: Քսութեան եւ շոգմոգութեան արինակ միմեանց լինիմք. կարակարանութեան եւ ծաղու անխարտութիւն է ի մեզ, որպէս ի հաց-կարականս եւ ի սիրող նոցունց, սիրոյ եւ ողորմութեան պակասութիւնն եւ յաճախութիւնն արելութեան եւ անգթութեան, բարեկամութեան արեղծական եւ անհավարարիւն»*⁴¹⁵:

Մարդկային և եղբայրական հարաբերությունների խզման պատճառ կարող է դառնալ երեսպաշտությունը. *«Գովեսար բերանոյ յանդիման երեսաց քարոզական և պարարտ եւ առաջի այլոց լի պարսաւանաւք եւ հայհոյութեամբ: Սիրոք մեր հանճարեղք եւ խորինք առ նենգաւորութիւն միմեանց, իսկ առ իրս եղբայրութեան՝ վայելչականս եւ գովելիս, ի ձշմարիտ կամաց յիմարութեամբ եւ ապուշ, անգգամութեամբ խաւարեալք»*:

Հակառակասիրությունը, սուտը, ռիսակալությունն ու նախանձը⁴¹⁶, մարդահաճությունն ու որկրամոլությունը, ընչաքաղցությունը⁴¹⁷, վեճն ու կռիվը, չարության աշխարհակալ խավարը, կատակաբանությունն ու ծաղրը, ատելությունը, անգթությունը, սիրո ու ողորմության պակասը, ձևական ու անհավատարիմ բարեկամությունը, երեսպաշտությունը, տրտմության հանդեպ անտարբերությունը, նախանձը, որոնց ծնունդն են բոլոր չար բաները, եսամոլությունը՝ սեփական անձինը և ոչ ընկերինը ու Հիսուս Քրիստոսինը փնտրելը, գայթակղիչներին հավասարվելը, անատակներին սիրով հարելը, իսկ օրինավորներից խորշելը, հեռանալն ու նույնիսկ ատելը, օտարների և բազում պատճառներով յուրայինների հետ մահկանացու բնությունից բխող լկտիությունն ու չարաբարոյությունը և այլն, և այլն, որոնցից շատերի մասին էլ լռում է, ևս կարող են պատճառ դառնալ եղբայրության խզմանը և մենակեցությունը նախընտրելուն:

Ահա, այսպես, գրելով մարդկային հասարակությունից, ինչպես և կուսանոց կամ եղբայրանոց կոչված համաբնակությունից հեռանալու տարաբնույթ ու բազմազան երևույթ-պատճառների մասին՝ հնչեցնում է իր հռետորական հարցը և ինքնադատապարտման ու ամոթի մորմոքը, որը նարեկացիական ողբերգության նուրբ արտահայտություններ է ստացել. *«Ո՞ համար»*

⁴¹⁵ Եթէ արժան իցէ թողուլ գեղբայրս....., **Յովհաննէս Մարկավագ**, նույն տեղում, էջ 332:

⁴¹⁶ Նույն տեղում, էջ 333:

⁴¹⁷ Նույն տեղում:

ձակեացի ասել յայրնապէս զքանհանութիւն արելի եւ արտանեն ինացմանց եւ գործոց թերեւս: Վասն զի չիք խտրութիւն քարաժամ ժամանակաց, պատահմանց եւ խաւսակցութեան համանմանիցն: Բազում անգամ եւ յարակցութեան եւ յարար աշաց արձակութեան ամաչեմ ճշմարտապէս ընդ բանիցն արկանել ի պարկեշտ լսելիս, բայց զի մի վայրապար եւ անհասարար մրաց քիւս՝ ...»⁴¹⁸:

Նախապէս գեղեցկահարդար և հմտորեն կարգավորված քաղաքները (նկատի ունի նաև եկեղեցին, որի նպատակը աշխարհիկ մարդկանց հոգևոր կարիքները բավարարելն է) և անապատների բնակիչների՝ վանականության լուսավոր կրոնը բաժանված չէր, գուցեև ունեցել են չնչին զանազանություն. *«Արդ, յայնմ ժամանակի եւ քաղաքք բարեպաշտիցն ոչ ժամու բաժանեալ ինչ էին յաղագս գեղեցկայարդար եւ քաջարէն կարգաւորութեան յանապարի բնակչացն լուսաւոր կրանիցն: Եւ դուն (ուղղել՝ դյուզն) ուրեք թերեւս ունէին զանազանութիւն առ միմեանս»⁴¹⁹*: Բայց դա ինչ-որ երկրորդական կամ օտարացնող երևույթ չէ, քանի որ նախօրինակները, ովքեր առաջին ժամանակների սրբեր էին, Աստծու կամքով ու օրհնությամբ, բնության բազմաթիվ հանգամանքների համաձայն՝ ապրում էին ամուսնական կենցաղավարությամբ և մեղանչում:

Հեղինակը ցավով է նկատում, որ իր ժամանակներում կուսանոցներում կամ եղբայրանոցներում շատ քչերն են Տիրոջ կամքը խնդրողները և աշխարհայինը չհոգացողները: Իրենց մեջ առավել շատ են նրանք, ովքեր ընտրել են անապատականությունը հանուն շահի, փափկության, մարմնաբուծության, ինչի համար էլ առավել «պտղակորույսներ են, խոսքը խեղդողներ և փշեր», քան ամուսնությամբ կապվածները. *«Բայց առ մեզ սակաւք եւ յոյժ նուագունք եւ յանուանեալ կուսաստանս կամ յեղբայրանոցն զքանին կամացն Տեառն խնդրողք, միայն ճշմարտապէս եւ զաշխարհիս ոչ հոգացողք: Քանզի առաւել մանաւանդ ի մեզ շահից եւ փափկութեան վասն եւ մարմնաբոյժ լինելոյ գոն փուշք եւ հեղձուցիչ բանին եւ պտղակորոյսք, քան ի կապեալսն ամուսնութեամբ»⁴²⁰*:

Թեև Հովհաննես Սարկավագը ներկայացնում է հասարակության, հատկապէս վանականության մեջ առկա այն արատները, որոնք կարող են պատճառ դառնալ անապատականության այս տեսակը՝ մենակեցությունը, ընտրելուն, սակայն աշխարհից, այն է՝ մեղսածին միջավայրից հեռանալը դեռևս չի նշանակում ազատվել այդ ամենից: Տանջող բեռների ծանրությունից թեթևանալու և աշխարհի ծովում կորստից փրկվելու համար անհրաժեշտ են ոչ միայն խաղաղ վայր, այլև մերձավոր ու լավաբարո իմաստուն,

⁴¹⁸ Եթէ արժան իցէ թողուլ գեղբայրս....., **Յովհաննէս Սարկավագ**, էջ 334:

⁴¹⁹ Նույն տեղում, էջ 330:

⁴²⁰ **Յովհաննէս Սարկավագ**, Եթէ արժան իցէ թողուլ գեղբայրս....., «Գանձասար», հ. Զ, Եր., 1996, էջ 331:

գիտուն առաջնորդ և նախապատվությունը տալ իմացություններին ու գործերին. «Արդ, եթէ ոչ զգուշացուք ամենայն սրտիւ եւ զարութեամբ գրանել մերձաորս իմաստունս ... Անհնար է թեթեանալ ի փանջիչ բեռանցն ծանխոթենէ ...»⁴²¹:

Մենակեցությունը նախընտրելու նպատակները պետք է դառնան մտքերը խաղաղեցնելն ու Աստծուն հաղորդակցվելը (Եղիա), առ Աստված հույսի ակնկալությունը՝ ցանկանալով աղավնու թևեր առնել (Երեմիա), ժամանակ գտնելը՝ բարձրագույնի մասին մտորելու, միմիայն Աստծու հետ տեսակցելու և խոսելու անհրաժեշտությունը (եկեղեցու բազում աստվածընտրյալ եպիսկոպոսներ), տանջող բեռների ծանրությունից թեթևանալն ու աշխարհի ծովում կորստից փրկվելը:

Ինչպես Հիսուս Քրիստոսի համար առանձնանալու և իր նպատակներին հասնելու **կարևորագույն միջոցը աղոթքն էր**, այդպես էլ նրա հետևորդների, առավել ևս անապատականությունն ընտրածների համար առավել փափագելի և քաղցր ոչինչ չկա, քան աղոթքը. «...Երթալ առ անապատաւորս եւ յանապատս, որպէս զի յամփոփման զգայութեանցն առնել պարսպունմն եւ ժամանակ մտացն ի բարձագոյնսն եւ յառաւել րեստութիւն, ընդ Աստուծոյ միայն լինել եւ խաւսել ընդ Նմա աղաւթիցն յարածգութեամբ, քան զոր ոչինչ փափաքելի եւ քաղցր համարէին»⁴²²:

Հովհաննես Սարկավագը, մանրամասն խոսելով այս ամենի մասին, իբրև վարդապետ և ուսուցիչ, գալիս է ամենակարևոր եզրահանգման, այն է՝ անապատական առանձնացման ժամանակ Սուրբ Հոգու ձառագայթների ծագումից շահած հոգնապատիկ պտուղները, ըստ Աւետարանի, մատուցել իրենց որդիներին, ինչպես անում էին եկեղեցու բազում վարդապետները. «Այլ և ի պրդոյ անտի շահիցն յոքնապարկացն (ուղղել՝ յոգնապարկացն), զոր ի հանդարտութենէն շահեալ սրացան, ի ծագմանէ Հոգոյն Սրբոյ ձառագայթից բերեալ՝ մայրուցանէին որդոյ իրեանց, ըստ Աւետարանին ի Քրիստոս Յիսուս»⁴²³:

Այսպիսով, թեև Հովհաննես Սարկավագն ուղղակիորեն չի պատասխանում հարցին, ակնարկում է, որ ցանկալի չի համարում առանձին ու մենակ նստելը, սակայն ժամանակ առ ժամանակ հոգևոր խաղաղություն ձեռք բերելու համար պետք է մեկուսանալ, ապա վերադառնալ կենակից եղբայրների մոտ և օգնել, նույնիսկ անօրեններին, բարեպաշտության գործում, իսկ ամենակարևորը՝ այնտեղի ձեռք բերած իմաստությունը մատուցել սաներին կամ հետևորդներին:

⁴²¹ **Յովհաննէս Սարկաւագ**, Եթէ արժան իցէ թողուլ զեղբայրս..... // Գանձասար, հ. Զ, Եր., էջ 335:

⁴²² Նույն տեղում, էջ 330:

⁴²³ Նույն տեղում, էջ 331:

Իսկ իր պատասխանի բուն նպատակը հարցնողին խրատելն է՝ ըստ ավանդության և նախօրինակների:

Հարց ու պատասխաններում, ինչպես նշում է Հովհաննես Սարկավազը, ինքը թույլ է տվել ասել առավելապես այն, ինչ գրել են բոլոր «գիտեցողներն» ու «իմաստունները»: Թեև անուններ չի թվարկում հեղինակը, սակայն սա հաստատում է, որ Հովհաննես Սարկավազի ձեռքի տակ են եղել անապատականության մասին նախորդ շրջանից հայտնի «գիտեցողների» և «իմաստունների» գրվածքները: Իսկ թե ում գրվածքները կարող էին կանոնակարգել անապատականությանը վերաբերող խնդիրները, եթե ոչ առաջին հերթին անապատականության ակունքներում կանգնած հայրերի, ինչպես նաև հայ մատենագիրների, որոնք տարբեր առիթներով անդրադարձել են անապատականությանը:

Աներկբայորեն, Հովհաննես Սարկավազի հիշատակած գիտեցողներից և իմաստուններից մեկը Անտոն Անապատականն (250–356 թթ.) է: Ինչպես որ Աթանաս Մեծն (296–373 թթ.) է արտահայտվել նրա մասին, որ **նա իմաստուն մեղվի նման ամեն տեղից իր համար հոգևոր մեղր էր հավաքում և ամբարում իր սրտի մեջ, ինչպես մեղուն փեթակի մեջ**: Համարյա թե նույն բառերով Հովհաննես Սարկավազին է բնութագրում է Կիրակոս Գանձակեցին. «Որ իբրև գիմաստուն մեղու՝ բարձեալ յանդամս մտաց զծաղիկս յերանգոց գունոց և հոտոց և համոց բերէր ի քաղաք իւր ...»:

Անտոնը նշում է, որ պետք է հեռու մնալ աշխարհիկ խոսակցություններից, որոնք մարում են հոգու կրակը, և Հոգին ոչ մի բանից այնպես չի հանգչում, որքան ունայն խոսակցությունից⁴²⁴:

Այսպիսով, լռել կարողանալը դառնում է վանականի և կուսակրոնի կենսակերպի կարևոր պայմաններից մեկը, որը բնորոշ է եղել նաև Հովհաննես Սարկավազի վարդապետանոցին:

Ինչպես տեսանք, նույն խնդրի մասին գրում է նաև Հովհաննես Սարկավազը:

Հովհաննես Սարկավազը բերում է այն նույն օրինակները և աստվածաշնչի այն մեջբերումները, որ գործածում է Անտոն Մեծը (Եղիա, Երեմիա, Դավիթ, Հովսեփ, Հովհաննես Մկրտիչ, Հիսուս Նազովրեցի՝ Դուկ. Դ-2, Մատթ. ԺԷ, Գ Թագ. ԺԸ-42, Հոգևոր խրատների ԺԷ- 3-5, ԺԹ 9-18 և բազմաթիվ այլ համարներում):

Մինչև ձյնարիտ աստվածաճանաչողություն շատ երկարատև ու երկար ճանապարհ է, որովհետև նույնիսկ Անտոնն իրեն այդ հարցում տեղադրում է հոգևոր մանկության հասակում: Այդ նույն երկար ճանապարհի մասին են վկայում և՛ Եղիա մարգարեին ուղղված աստվածային պատգամը (Գ Թագ.

⁴²⁴ **Սուրբ Անտոն Մեծ**, Հոգևոր խրատներ, «Քրիստոսով ապրելու խրատները, քաղված նրա կյանքի՝ սուրբ Աթանասի գրառած պատմությունից, որ բովանդակում է 20 ուղերձ և 20 պատգամ», Ս, Էջմիածին, 2007, էջ 68:

15, 17), և՛ Դավիթը՝ «Մեկն ինձ աղավնու թևեր տար, որ թռչելով բարձրանայի»⁴²⁵:

Անտոն Անապատականը, կարելի է ասել, ներկայացնում է աստվածաբանական այն նույն խնդիրներն ու հարցերը՝ վանքերում ապրող վանականների ու կույսերի⁴²⁶, մերժելի և դրական երևույթների⁴²⁷, Աստծու կամքը փնտրելու և այլն, որոնց շուրջ խոսում է նաև Հովհաննես Սարկավագը:

Աներկբայելի են նաև Հովհաննես Սարկավագի ստեղծագործության և Մակար Մեծի (301-391 թթ.) խրատների առնչակցությունները: Վերջինս Անտոն Անապատականի ժամանակակիցն ու նրա բազմաբովանդակ խրատների անմիջական ունկնդիրն էր: Այդ իսկ պատճառով պատահական չէ, որ խոր ընդհանրություններ ենք գտնում նրանց խրատներում, և դրանք իրենց հետքն են թողել նաև մեր փիլիսոփա – աստվածաբանի մտածողության և երկերի վրա: Այսպես, եթե Մակար Մեծը հանգամանորեն ներկայացնում է անկյալի խավար վիճակը, չար իշխանին՝ խավարի թագավորությունը, և նրա ազդեցությունը մարդու վրա⁴²⁸, ապա Հովհաննես Սարկավագը նույնն է ներկայացնում շատ լակոնիկ ոճով. «*Եւ ունի զիշխանութիւնս եւ զպետութիւնս և զաշխարհակալ խավարն, զչարութեան այսս, որ ի ներքոյ երկնից, մարգիչս ի նոյն և գրգռիչս*»:

Գրիգոր Նյուսացին (335-394 թթ.) Եփրեմ Ասորու (մոտ 306-373 թթ.) Ամիդից Եդեսիա տեղափոխվելու պատճառների մասին գրելիս ասում է, *թե նրան այնպեղ ձգում էր այնպեղի սրբությանը ծնրադրելու ցանկությունը, իսկ ամենից առաջ՝ ցանկությունը գտնելու մի գիտուն այրի, ումից նա կարող էր սրանալ կամ ում կարող էր հաղորդել իմացության պրուղը*⁴²⁹: Իսկ Հովհաննես Սարկավագը գրում է. «*Արդ, եթե ոչ զգուշացուք ամենայն սրբոյիվ եւ զարութեանք գպանել մերձաւորս իմասպունս եւ լաւաբարոյս եւ րեղի անքոյթ եւ ապահովս ի խոովութեանց ալեաց վնասակարաց հոգւոց ըստ գրեցելոցդ, անհնար է թեթևանալ ի րանջից բեռացդ ծանրութենէ կամ ապրել ի ծովու աշխարհիս կորսպենէ: Ոչ եթե զի ոչ իցէ կամողութիւնն ի մէջ այնպիսեացն առաքիւնանալ եւ հաճոյ լինել Տեառն՝ ասեմ զայս*»⁴³⁰, կամ թեև հակառակն է հանդիպում. «*Բայց, արդ, հակառակն ամենայնի եւ յամենայն իրս հանդիպի՝ ոչ ի բանս եւ ոչ ի գործս շահեցուցանել զոք եւ կամ շահել յումեքէ գոյ կարողութիւն*»⁴³¹, բայց խոսքով և գործով անհրաժեշտ է գիտուններից ստանալ կամ նրանց հաղորդել իմացության պտուղը:

⁴²⁵ Սուրբ Անտոն Մեծ, նշվ. աշխ., էջ 75:

⁴²⁶ Նույն տեղում, էջ 67:

⁴²⁷ Նույն տեղում, էջ 103:

⁴²⁸ Սուրբ Մակար Մեծ, Հոգևոր խրատներ, Ս. Էջմիածին, 2007, էջ 19:

⁴²⁹ Սուրբ Եփրեմ Ասորի, Հոգևոր խրատներ, Ս. Էջմիածին, 2007, էջ 20:

⁴³⁰ Յովհաննէս Սարկավագ, Եթե արժան իցէ թողուլ զեղբայրս....., «Գանձասար», հ. Զ, էջ 333:

⁴³¹ Նույն տեղում, էջ 332:

Հովհաննես Սարկավազի ստեղծագործությունների վրա առկա է նաև հունական անտիկ փիլիսոփայության ազդեցությունը: Պատահական չէ, որ նրան անվանել են սոփեստոս՝ ոչ միայն նկատի ունենալով նրա փիլիսոփա լինելը, այլև հենց սոփեստական դպրոցից կրած ազդեցությունը, ինչը հաստատվում է նաև այս երկի գրական մեթոդի՝ հարց ու պատասխանների ընտրությամբ:

Իբրև փիլիսոփա-աստվածաբան՝ արծարծում է նաև գեղագիտական և բարոյագիտական խնդիրներ, որոնք, մասնավորաբար, վերաբերում են գեղեցիկին և օգտակարին՝ շահեկանին, բարու և ոչ բարու (չարի) խնդիրներին:

Գեղեցիկը արտաքին տեսքը չէ, այլ ներքին գեղեցկությունը, որով երևում է մարդու նմանությունը Արարչի հետ, գեղեցիկը այն գործն է, որ հիշում է Աստված. նա չի մոռանում նաև անգործներին. *«Արարքուսր երեւիմք գեղեցիկ, այլ ոչ ի ներքոյ. այնպիսի ինչ, յորում մանավանդ երեւի գեղեցկութեան իսկ նմանութիւն՝ այն, որ սրեղծ զմեզ եւ առնու ի մոիս զգործս մեր եւ զանգործսն րեսանէ հաւասարապէս»*⁴³²:

«Շահելն» ու «շահեցուցանելը» կամ օգտակարությունը Հովհաննես Սարկավազի համար բարոյագիտական խնդիր է և ոչ նյութական: Մարդը թեև հնարավորություն ունի խոսքով և գործով օգուտ տալ ինչ-որ մեկին կամ օգտվել, սակայն բոլորովին հակառակ բաներն է անում: Նա գրում է. *«Բայց, արդ, հակառակն ամենայնիւ եւ յամենայն իրս հանդիպի՝ ոչ ի բանս եւ ոչ ի գործս շահեցուցանել զոր եւ կամ շահել յումեքէ գոյ կարողութիւն»*⁴³³:

Այստեղ նա, ասես, իր գեղագիտական հայացքները քաղել է Սոկրատից, ով ասում էր, թե այն, ինչ օգտակար է, նաև գեղեցիկ է:

Այլ ստեղծագործություններում, ինչպես նկատել է Վ. Հովսեփյանը, Սարկավազի համար *«իսկական գեղեցկությունը մարմնավորված է բնության մեջ..... Ամենից անկեղծ և այդ պարճառով ամենից գեղեցիկ ձայնը, խոսքը, պարկերը բնության նմանությամբ սրեղծվածներն են: Սա է Իմաստասերի գլխավոր գեղագիտական դրույթը»*⁴³⁴:

Այս երկը համեմատելով առաջին հայրերի՝ Աթանաս Մեծի, Անտոն Անապատականի, Մակար Մեծի, Եփրեմ Ասորու, Գրիգոր Նյուսացու խրատների հետ՝ կարելի է եզրահանգել, որ Հովհաննես Սարկավազի խրատական այս գործը դասախոսության համառոտագրություն է, որտեղ ներկայացված են անապատականությանը վերաբերող միայն կարևոր դրույթները, որոնք այնուհետև կլրացվեն բանավոր գրույցների ժամանակ: Դա ենթադրվում է նաև խոսքը կառուցելու բնույթից և ոճից: Հաճախ հեղինակը միտքը ասես թողնում է ամկախ, երբ կարելի էր առավել մանրամասնել և պարզաբանել, ինչպես այդ արել են առաջին հայրերն իրենց խրատներում, նա հաջորդիվ

⁴³² Եթե արժան իցէ...**Յովհաննէս Սարկավազ** // Գանձասար, հ. Զ, էջ 333:

⁴³³ Նույն տեղում, էջ 332:

⁴³⁴ Վ. Հովսեփյան, Գեղագիտական ուսմունքի պատմություն, Եր., 1979, էջ 184-186,

շատ արագ անցում է կատարում այլ հարցերի՝ միայն ներկայացնելով առանցքայինը, նույնիսկ չհիշատակելով անուններ, թեև իրեն թույլ է տալիս ասել առավելապես այն, ինչ գրել են բոլոր «գիտեցողներն» ու «իմաստունները»:

Այս երկի գրման մեթոդաբանությունը՝ հարց ու պատասխանիքը, յուրահատուկ միջոց է դառնում հեղինակի սուբյեկտիվ կարծիքներին օբյեկտիվություն հաղորդելու համար, հատկապես երբ պատասխանները կապում է նախնիների կարծիքների հետ, որոնց հանվանտ չի էլ ներկայացնում: Այսու հեղինակը կանոնականացնում է անապատականության տրվելու խնդիրները:

Երկն անուղղակիորեն հաստատում է, որ նա վարել է նաև անապատական կյանք ու փաստում, որ եղել է կուսակրոն քահանա:

Ամբողջության մեջ իր աստվածաբանական երկերով Սարկավագը ներկայացնում է Հայ առաքելական ս. եկեղեցու դավանաբանությունն ու հավատարմությունը քրիստոնեության առաջին հայրերի ու առաջին երեք տիեզերաժողովների սկզբունքներին:

Ե. ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ: Հովհաննես Սարկավագը դեռ վաղ տարիքից գերվել էր իմաստասիրությամբ, ոչ միայն մատի ծայրով, այլև ամբողջովին ճաշակել նրա քաղցրությունը, և ով, ինչպես գրում է վարքագիրը, անուղղակիորեն հղելով Դավիթ Անհաղթին⁴³⁵, բոլոր երկրավոր հոգսերին «մնաք բարյավ» ասելով, «ողջախոհ մի մոլությամբ անձնատուր» էր եղել դրան, որի մասին վկայում է նաև իր տապանագիրը՝ «Արձանս այս սեմական է **Սոփեստոսի**⁴³⁶ Սարկաւագին»:

Այստեղ արձանագրված է Սարկավագի բնութագրի ամենաէական կողմերից մեկը՝ նրա իմաստասեր-վարդապետ լինելը:

Այս բնութագիրը կարող է զարմանք հարուցել առաջին հայացքից, քանզի զուտ փիլիսոփայական ժառանգություն Հովհաննես Սարկավագից մեզ չի հասել, եթե հաշվի չառնենք՝ «Դավիթ Անհաղթի «Լուծմունք Սահմանաց գրոց»»-ի մեկնությունը⁴³⁷:

Սակայն այս երկի մանրակրկիտ քնությամբ ու հիմնավոր փաստարկումներով Հ. Միրզոյանը եզրակացնում է. «Լուծմունք «Սահմանաց գրոց Դավթի Անյաղթ փիլիսոփայի» ցարդ անանուն փիլիսոփայական աշխատության հեղինակը 11-12-րդ դարերի ականավոր գիտնական, բանաստեղծ ու փիլիսոփա

⁴³⁵ Փիլիսոփայության սահմանումները, **Դավիթ Անհաղթ**, Երկեր, Եր., 1980, էջ 35:

⁴³⁶ **Սոփեստոս** – հունարեն sophistes – վարպետ, իմաստուն, գեղանկարիչ բառից – այսպես էին կոչում հին հունական փիլիսոփաներին, որոնք իմաստության և գեղախոսության ուսուցիչներ էին՝ մ.թ.ա. 5-րդ դարում: Սոփեստները գերազանցապես հետաքրքրված էին **մարդով, նրա մտածողությամբ, բանականությամբ, բարոյականությամբ, հասարակական և անձնական վարքագծով**:

⁴³⁷ Հ. Միրզոյանն այս երկի հեղինակությունը վերագրում է Սարկավագին: Տե՛ս Հ. Միրզոյան, Հովհաննես Սարկավագ Իմաստասերը «Լուծմունք Սահմանաց գրոց» երկի հեղինակ // Բանբեր Երևանի համալսարանի, 2002, թիվ 1:

Հովհաննես Սարկավազ Իմաստասերն է: Դրանով մի կողմից միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի հիասքանչ հուշարձանը գտնում է իր հեղինակին, իսկ մյուս կողմից հաստատվում է, որ Հովհաննես Սարկավազը միանգամայն արժանի է «Իմաստասեր» իր պատվանվանը»⁴³⁸:

Կ. Միրումյանը Սարկավագին է վերագրել «Լուծմունք եօթնից գրոցն Փիլոնի» երկը, սակայն, ինչպես ապացուցում է Փ. Անթապյանը «Հովհաննես Սարկավագին վերագրված «Լուծմունք եօթնից գրոցն Փիլոնի» բնագրի առնչությամբ» հոդվածում՝ բնագրի ու Սարկավագի այլ երկերի պատմահամեմատական ու լեզվական քննությամբ, Հովհաննես Սարկավագի երկը չէ. «Հովհաննես Սարկավագի գրչի արգասիք համարելը ակներևաբար զուրկ է որևէ լուրջ հիմքից»⁴³⁹:

Հովհաննես Սարկավագին՝ իբրև փիլիսոփայի, անդրադարձել են Մ. Աբեղյանը⁴⁴⁰, Գ. Գրիգորյանը⁴⁴¹, Վ. Չալոյանը⁴⁴², Ս. Արևշատյանը⁴⁴³, Հ. Թամրազյանը⁴⁴⁴, Կ. Միրումյանը⁴⁴⁵, Ս. Զաքարյանը⁴⁴⁶, Հ. Միրզոյանը⁴⁴⁷ և այլք:

Սարկավագի բնագիտական հայացքներին անդրադարձել են Լ. Մելիքսետր-Բեկը⁴⁴⁸, Ավ. Տեր-Պողոսյանը⁴⁴⁹, Բ. Թումանյանը⁴⁵⁰, Ա. Կծոյանը⁴⁵¹, Հ. Բաղայանը⁴⁵²:

Լ. Մելիքսետր-Բեկը նրան համարում է «հին հայոց տիեզերագիտական և աստեղաբաշխական գրականության սյուններից մեկը և մի տեսակ կամուրջ Շիրակացուց դեպի Երզնկացի»:

Վերոնշյալ հեղինակները միակարծիք են, որ Հովհաննես Սարկավագը բնափիլիսոփա է, փորձել է գիտական բացատրություն տալ բնական երևույթ-

⁴³⁸ Նույն տեղում, էջ 106:

⁴³⁹ Փ. Անթապյան, Հովհաննես Սարկավագին վերագրված «Լուծմունք եօթնից գրոցն Փիլոնի» բնագրի առնչությամբ // Պատմա-Բանասիրական հանդես, Եր., 1983, թիվ 1 (100), էջ 177-190:

⁴⁴⁰ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 72-82:

⁴⁴¹ Գ. Գրիգորյան, Հովհաննես Սարկավագ Իմաստասերի փիլիսոփայական և բարոյագիտական հայացքները, Էջմիածին, հ. Ա, 1959, էջ 46-53:

⁴⁴² Վ. Չալոյան, Հայկական Ռենեսանս, Եր., 1964:

⁴⁴³ Ս. Արևշատյան, «Յաղագս խրատու մանկանց» գրվածքը և նրա հեղինակի հարցը // Բանբեր մատենադարանի, № 11, Եր., 1973, էջ 33-45:

⁴⁴⁴ Հ. Թամրազյան, Հայ բնադատություն, գիրք Բ, Եր., 1985:

⁴⁴⁵ Կ. Միրումյան, Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Եր., 1984:

⁴⁴⁶ Ս. Զաքարյան, Մարդու և բնության փոխհարաբերության հարցը Հովհաննես Սարկավագի «Բան իմաստութեան» քերթվածում // Բանբեր Երևանի համալսարանի, 2002, 2 (107), էջ 19-26:

⁴⁴⁷ Հ. Միրզոյան, Հովհաննես Սարկավագ Իմաստասերը «Լուծմունք Սահմանաց գրոց» երկի հեղինակ // Բանբեր Երևանի համալսարանի, 2002, թիվ 1:

⁴⁴⁸ Տե՛ս Հովհաննես Սարկավագ վարդապետ Հաղբատացու «Վասն շարժման եւ ասանութեան երկրի», Լ. Մելիքսետր-Բեկ, Պատմաբանասիրական պրպտումներ, Էջմիածին, 2010, էջ 55:

⁴⁴⁹ Ավ. Տեր-Պողոսյան, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև XIII դարը, Երևան, 1960:

⁴⁵⁰ Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն (Հնագույն ժամանակներից մինչև XIX դ. սկիզբը), Երևան, 1964: Տոմարի պատմություն, Երևան 1972:

⁴⁵¹ Ա. Կծոյան, Բժշկագիտությունը Հայաստանում XI-XV դարերում, Երևան, 1968:

⁴⁵² Հ. Բաղայան, Հայոց տոմարի պատմություն, Երևան, 1976:

ներին (երկրաշարժ, քամիներ, Արևի և Լուսնի խավարում և այլն), իրերի ու երևույթների բուն էությանը՝ առաջ քաշելով ճանաչողության փորձնական մեթոդը: Բնագիտական երևույթները մեկնաբանելիս նա կանգնած է իրական հողի վրա, առաջնորդվում է իրական փաստերով, հեռու է առասպելական մեկնաբանություններից ու սնոտիապաշտական պատկերացումներից, ինչը բնորոշ է նաև մեր նախորդ շրջանի հեղինակներին (Եզնիկ Կողբացի, Անանիա Շիրակացի):

Հովհաննես Սարկավագը, որքան էլ, մեկնություններից բացի, զուտ փիլիսոփայական խնդիրների նվիրված երկ չունի, այդուամենայնիվ, ինչպես գրում է Կիրակոս Գանձակեցին, նրա երկերը գրված չեն գեղջուկ ոճով, այլ իմաստասիրական⁴⁵³:

⁴⁵³ **Կիրակոսի Գանձակեցու** Պատմություն Հայոց, աշխ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 113:

ԳԼՈՒԽ Գ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ՏՈՄԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ. «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՄԱՐԻՍ ՀԱՅԿԱԶՆԵԱՅ»

Հովհաննես Սարկավագի տոմարական ժառանգությունը, որը վերաբերում է տոմարի թե՛ տեսական, թե՛ գործնական-կիրառական խնդիրներին, մեզ է հասել ցաքուցրիվ վիճակով, բազմաթիվ ընդօրինակություններով ու խմբագրություններով: Մեզ համար խնդիր է դարձել պարզելը, թե, ի վերջո, ի՞նչ է իրենից ներկայացնում այդ տոմարական ժառանգությունը: Այդ հարցին անդրադարձել ենք մեր «Հովհաննես Սարկավագի «Մեկնություն տոմարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուն» հոդվածում⁴⁵⁴, որն էլ դարձել է այս գլխի առանցքը: Կարևոր խնդիր է համարվել պարզելը, թե մեզ հասած առանձին-առանձին տոմարական բնագրերը միմյանցից անկախ աշխատություններ են, թե՞ միևնույն երկի առանձին բաղկացուցիչ մասեր. եթե միևնույն երկի մասերն են, ապա ի՞նչ վերնագիր է ունեցել ժողովածուն, ե՞րբ է ստեղծվել, մոտավորապես ի՞նչ կառուցվածք կարող էր ունեցած լինել և այլն:

Հովհաննես Սարկավագի անվան հետ է կապվում հայկական շարժական տոմարի նոր մեկնությունն ու Հայոց անշարժ տոմարի նախագծի ստեղծումը: Նրա նպատակն էր կարգավորել 532-ամյա զատկացուցակների երկրորդ շրջապտույտի տոմարական խնդիրները՝ կապված Հայոց շարժական և անշարժ տոմարների առանձնահատկությունների հետ:

Հովհաննես Սարկավագի մասին գրող անանուն վարքագիրը, Սամուել Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Այրիվանեցին, Հակոբ Ղրիմեցին, այլ պատմիչներ և տոմարագետներ ընդհանրացված ձևով են հիշում Հովհաննես Սարկավագի անշարժ տոմարի նախագծի մասին: Անանուն վարքագրի տեղեկություններից կարելի է հասկանալ, որ Հովհաննես Սարկավագը կազմել է Շ-եակ՝ «Ինն և տասնեկաց և քսան և ութեան բոլորագրաց պարունակաց»-ը⁴⁵⁵, իսկ Կիրակոս Գանձակեցու տեղեկությունից՝ «Միաբանություն ամենայն ազգաց տոմարի ընդ Հայոց»-ը⁴⁵⁶, որոնցից կարելի է հետևություն անել, որ խոսքը Շ-եակ զատկացուցակների, «Ազգաց ազնուականոսների» և «Պատձէսների» մասին է:

⁴⁵⁴ Գ. Սիմոնյան, Ռ. Վարդանյան, Հովհաննես Սարկավագի «Մեկնություն տոմարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուն, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի Տարեգիրք, հ. Ա, էջ 58-97:

⁴⁵⁵ Հանդէս բանի վասն....., Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 121:

⁴⁵⁶ Պատմություն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, Թիֆլիս, 1909, էջ 104-106:

Հովհաննես Սարկավագի տոմարական բնագրերը հրատարակել, հիշատակել և ուսումնասիրել են՝ Է. Դյուլորեն, Ֆ. Գինցելը, Վ. Գրյումելը, Բ. Սարգսյանը, Ե. Տեր-Մինասյանը, Մ. արք. Օրմանյանը, Գ. քահ. Աղանյանցը, Հ. Ոսկյանը, Ա. Աբրահամյանը, Հ. Բադալյանը, Բ. Թումանյանը, Է. Աղայանը, Ռ. Վարդանյանը, Փ. Անթապյանը, Զ. Էյնաթյանը, Գ. Բրուտյանը և այլք: Վերոհիշյալ հեղինակներից հատկապես Ա. Աբրահամյանին, Փ. Անթապյանին և Զ. Էյնաթյանին աղբյուրագիտական տեսակետից պետք է հետաքրքրեր՝ արդյոք Հովհաննես Սարկավագը ստեղծել է մեկ տոմարական ժողովածո՞ւ, թե՞ բազմաթիվ առանձին աշխատություններ, և հատկապես՝ ե՞րբ է ստեղծվել այն:

Ա. Աբրահամյանը, Զ. Էյնաթյանը և Փ. Անթապյանը⁴⁵⁷ «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ»-ն ներկայացրել են իբրև Հովհաննես Սարկավագի տոմարական աշխատությունների շարք, որոնք գրվել են տարբեր ժամանակներում:

Մեր կարծիքով, Հովհաննես Սարկավագն ստեղծել է տոմարական ժողովածու, ինչի հիմնավորումն առկա է հենց իր բնագրերում: Հովհաննես Սարկավագն իր բնագրերը բնութագրում է իբրև մատեան. «...Մինչև ի գիր մարենիդ...»⁴⁵⁸, «Եւ ժողովին ի թուականացո, որ յելիցն Աղամայ ի դրահարէն աուրք իբրև չորից ամաց սակաւ ինչ կամ նուագ, կամ աւելի մինչև ի գիր մարենիդ»⁴⁵⁹: Իսկ «մատեան» նշանակում է **թուղթ կամ գիրք մագաղաթեայ, հատոր գրոց**⁴⁶⁰ կամ **գրքի մաս, գլուխ**⁴⁶¹:

«Վասն երկուցն և չորիցն ապրիլիոս ամսոյ անմիաբանութիւն» վերնագիրը կրող բնագիրը, որին մանրամասն կանդրադառնանք իր տեղում, ինքնին ապացուցում է, որ եթե նա «Պատձէններում», Շ-եակում, «հարականերում» և այլ առանձին հատվածներում փոփոխություններ է կատարում, ապա այստեղ նա բացատրում է իր կատարած փոփոխությունների պատճառները, այսինքն՝ դրանք միևնույն ժողովածուի տարբեր մասերն են:

Բացի այդ՝ առանձին-առանձին տոմարական բնագրերը դառնում են ինքնանպատակ, իսկ այն դեպքում, երբ նրանք միևնույն մատյանի մասերն են, դառնում են գործնական ու կիրառելի, քանի որ մեկը պայմանավորված է մյուսով, մեկը հիմնված է մյուսի հաշվումների արդյունքների կամ տեսական սահմանումների վրա, որոնցով էլ ձևավորվում է ամբողջական երկը: Հետևապես, Հովհաննես Սարկավագն ստեղծել է տոմարական ժողովածու, մատյան, որի վերնագիրն է «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ», ինչը կհիմնավորվի ընթացքում:

⁴⁵⁷ Փ. Անթապյան, Հովհաննես Սարկավագ Իմաստասեր, էջ 19-20:

⁴⁵⁸ Յաղագս Շ.եկի, Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 237:

⁴⁵⁹ Նորին (Յովհաննու) առ Սարգիս, Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 262:

⁴⁶⁰ Նոր բառագիրք հայկազեան լեզուի, հ. երկրորդ, Եր., 1981, էջ 115:

⁴⁶¹ Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, հ. Բ, Եր., 2000, էջ 150:

«Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» ընդհանուր վերնագիրը կրող բնագրի բովանդակության մեջ առկա են փաստեր, որոնք հնարավորություն են տալիս հիմնավորելու, որ այն ունեցել է ենթավերնագիր, այն է՝ **«Վասն հայկազնեան տանից տարեկանաց շրջաբերութեան տումարիս»**, որին կանդրադառնանք իր տեղում:

Կարևոր է նաև Հովհաննես Սարկավագի ժողովածուի ստեղծման և տումարական բարեփոխության ժամանակի խնդիրը, որին անդրադարձել են ուսումնասիրողները:

Գ. քահ. Աղանյանցը⁴⁶² և Ա. Աբրահամյանը⁴⁶³ կարծում են, որ նա տումարական բարեփոխությունը կատարել է 1116 թվականին:

Հիմնախնդիրների այդ լուծումները, ինչպես կտեսնենք, անընդունելի են:

Ձեռագրի (սկստի ունի ՄՄ 1999^{հմբ} գրչագիրը) մանրամասն ուսումնասիրությունը Ջ. Էյնաթյանին բերել է այն համոզման, որ Հովհաննես Սարկավագն անշարժ տոմարը և Հայոց փոքր թվականը հիմնադրելուց առաջ խմբագրել է «Պատձէն տումարի»-ն, վերաշարադրել է Անանիա Շիրակացու ստեղծած համակարգը՝ հիմնականում ոչինչ չփոխելով այնտեղ, չնայած, Սարկավագի կարծիքով, այն գործնական չէ: Պետք է նկատել, որ հիշյալ աշխատանքները Հովհաննես Սարկավագի տոմարի մեկնության հետ կապ չունեն և գրվել են նրանից առաջ⁴⁶⁴:

Հարկ է նշել, որ ՄՄ 1999^{հմբ} ձեռագրում առկա են տոմարի երկու «Պատձէն», որոնցից մեկն ունի «Սկիզբն տումարի Հայոց եւ Պարսից գոյգ ընդ միմեանս» սկսվածքը, որն ընդգրկում է տպագիր 26-114 էջերը և ներկայացնում է Ստեփանոս Մեծրկա որդու «Պատձէն տումարի»-ի խմբագրությունը, իսկ մյուսը վերնագրված է «Պատձէն տումարի Հայոց մեծաց» և տպագրի մեջ սկսվում է 116 էջից ու ավարտվում 318 էջով, որը Սամուել Անեցու խմբագրած «Պատձէն Տոմարի»-ն է, թեև այդտեղ ընդգրկված են Հովհաննես Սարկավագի «Ազգաց ազնուականոնները»⁴⁶⁵, «Լուսնացոյցը» (որը Սարկավագինը չէ, այլ հետագա խմբագրությունը)⁴⁶⁶, և Հովհաննես Սարկավագի կազմած Շ-եակ գատկացուցակի հուլյան շարքը⁴⁶⁷, որոնցից և ոչ մեկը «Պատձէնի» մասերը չեն, այլ նրա՝ տումարական ժողովածուի առանձին մասեր:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «Սկիզբն տումարի Հայոց»-ի խմբագրությունը Ստեփանոս Մեծրկա որդունն է՝ հիմնված Հայոց շարժական տոմարի և Հովհաննես Սարկավագի «Պատձէնի» նորություննե-

⁴⁶² Գ. քահ. Աղանեանց, Տոմար և տոնացոյց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, էջ 16:

⁴⁶³ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 65-101, Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Եր., 1959, էջ 269:

⁴⁶⁴ Ռ. Վարդանյան, «Պատձէն տումարի Հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը (6-18-րդ դդ.), էջ 5-10:

⁴⁶⁵ Նույն տեղում, էջ 174-196:

⁴⁶⁶ Նույն տեղում, էջ 212-230:

⁴⁶⁷ Նույն տեղում, էջ 264-318:

րի վրա, որն իրականացրել է 1126 թվականին⁴⁶⁸: «Պատձէն Տոմարի Հայոց մեծաց»-ի բնագիրը բխում է Հովհաննես Սարկավագի «Պատձէնի» խմբագրությունից, ինչպես և նախնական «Պատձէնից», որը 1165 թվականին խմբագրել է Սամուել Անեցին⁴⁶⁹: Նա օգտվել է նախնական «Պատձէններից», այդ թվում՝ նաև դրանց՝ Սարկավագի խմբագրություններից: Սա հիմնավորել է Ռ. Վարդանյանը, ինչին կանդրադառնանք «Պատձէն տոմարի»-ի հատվածի քննության մեջ: Միայն նշենք, որ Հովհաննես Սարկավագը գրել է տոմարի մեկնություն, և այդ ժողովածուի մեջ են եղել նրա խմբագրած «Պատձէնները», որի հիմնավորումներն առկա են թե՛ պատմիչների, թե՛ նրա բնագրերի հետագա ընդօրինակությունների և խմբագրությունների մեջ, որոնց կանդրադառնանք ստորև:

Ա. ՏՈՄԱՐԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Հովհաննես Սարկավագի՝ տոմարի մեկնությունը գրելու ժամանակի մասին հայագիտության մեջ առկա է երկու կարծիք: Գյուտ քահանա Աղանյանցը «Տոմար և տօնացոյց Հայաստանեայց ս. Եկեղեցոյ» ձեռնարկում առանց հիմնավորման գրում է, որ Հովհաննես Սարկավագը «1116 թուին մեր տոմարը վերանորոգեց և նոր թուական սահմանեց, որ կոչուեցաւ փոքր կամ Սարկավագադիր և կամ Յայսմաւորաց»⁴⁷⁰:

Ա. Աբրահամյանը, հենվելով Հովհաննես Սարկավագի գրած նամակներից մեկի վրա, որն իսկապես շարադրվել է 1116 թվին, գրում է, թե տոմարական բարեփոխությունն իմաստասերը կատարել է 1116 թվին, սկսել է 1084 թվականից՝ շարունակելով նախկին ՇԼԲ աղյուսակները⁴⁷¹:

Ի դեպ, Հովհաննես Սարկավագը տոմարի մեկնության դժվարամատչ հատվածները բացատրելու համար նամակներ է գրել՝ 1110 թ. («Առ Սարգիս»), 1113 թ. (Լուսնի լրման և [Արևի] խավարման մասին), 1116 թ. (անհայտ մեկին):

Ա. Աբրահամյանի ընտրությունն անհասկանալիորեն ընկել է մեզ հայտնի վերջին թվականի վրա, թեև նրան հայտնի էր 1110 թվականին Սարգսին ուղղված նամակը, որտեղ Հովհաննես Սարկավագը ասում է, որ ավելի վաղ գրած իր աշխատության մեջ հայոց ամսաթվերի շարժման օրինաչափության մասին հատվածը երկրորդում է: Այլ կերպ ասած՝ Հովհաննես Սարկավագը տոմարի մեկնությունը, որտեղ և կատարել էր հայոց տոմարի իր բարեփոխությունը, ավելի վաղ է գրել, քան կարծել են Գ. քահ. Աղանյանցը և Ա. Աբրահամյանը:

⁴⁶⁸ Ռ. Վարդանյան, «Պատձէն տոմարի Հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը (6-18-րդ դդ.), էջ 195:

⁴⁶⁹ Նույն տեղում, էջ 195-96:

⁴⁷⁰ Գյուտ քահանա Աղանեանց, Տոմար և տօնացոյց Հայաստանեայց ս. Եկեղեցոյ, էջ 11:

⁴⁷¹ Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Եր., 1973, էջ 106: 1084 թվականը 1-ին Շ-եակի վերջին տարին է և ոչ 2-րդ Շ-եակի սկսման տարին, ինչպես կարծել է Ա. Աբրահամյանը:

Ավելի վաղ երկրորդ կարծիքը «Հայոց տոնացույցը. 4-18-րդ դդ.» աշխատության մեջ ներկայացրել է Ռ. Վարդանյանը⁴⁷², ում հիմնավորումները մեզ համար լիովին ընդունելի են, և փորձել ենք լրացնել այն նոր փաստարկներով:

2001 թվահամարի գրչագրում, որտեղ մի զգալի մաս են կազմում Հովհաննես Սարկավազի բնագրերի ընդօրինակությունները, «Սարկաւազ վարդապետէ ասացեալ Յաղագս Շ.եկին» ենթավերնագրի տակ գրված է. «...Քանզի ո՛չ գտաւ առ նախնեալքս բոլորակդ այդ (խոսքը Հասյան ՇԼԲ-ի մասին է – Ռ. Վ.) մինչև յԼԴ ամն Յուստիանոսի կայսեր յորմէ **մինչև ի գիր մաքենիդ այդորիկ լինի ամբ ՇԼԲ...**»⁴⁷³:

Հասյան Շ-եակի առիթով Ռ. Վարդանյանը ցույց է տվել, որ ՇԼԲ-ն ստեղծվել է 562 թվականին, որն ընկալվել է իբրև Հուստինիանոսի 34-րդ տարի, ուստի 562-ին գումարելով 532, ինչպես նշված է բնագրում, կստանանք տոմարի մեկնության ստեղծման տարին, այն է՝ 1094 թվականը⁴⁷⁴:

Վերոհիշյալ թվականը հաստատվում է Հովհաննես Սարկավազի հեղինակած «Ազգաց ազնուականոնների» միջոցով, որտեղ Սարկավազադիր 10 թվականի (1094 թ.) կտրվածքով է տվել այդ աղյուսակները, քանի որ, ըստ Սարկավազի, այն Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջանի 1-ին՝ ապրիլի 4-ի տարին էր:

Վերջապես, «Առ Սարգիս» նամակում, որը Սարկավազը գրել է 1110 թվականին, ասում է, որ երկրորդում է տոմարի մեկնության մեջ փաստագրված հայկական շարժական տոմարի ամիսների և ամսաթվերի շարժման մասին հատվածը: Այս փաստերը ավելի քան բավարար են՝ հիմնավորելու համար Հովհաննես Սարկավազի տոմարի մեկնության գրության և տոմարական բարեփոխության ժամանակը, այն է՝ 1094 թվականը:

Ընդգծենք՝ Հովհաննես Սարկավազն իր տոմարական ժողովածուն ստեղծել է 1094 թվականին:

Բ. ՏՈՄԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Պարզելու համար, թե որն է եղել Հովհաննես Սարկավազի 1094 թ. ստեղծած տոմարական ժողովածուի վերնագիրը, քննենք հեղինակների տեղեկություններն ու բովանդակային վերլուծության ենթարկենք հետազայում ընդօրինակված և ներկայումս հրատարակված առանձին բնագրերը: Բերենք այդ տեղեկությունները. ՄՄ 1973^{հմբ} և ՄՄ 2001^{հմբ} ձեռագրերի ընդօրինակությունների տարբեր հատվածների մեջ տրվում է հեղինակի անվան հիշատակությունը, այն է՝ «Սարկաւազ վարդապետէ ասացեալ» կամ «Սարկաւազին

⁴⁷² Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը, էջ 231-232:

⁴⁷³ ՄՄ 2001^{հմբ} ձեռ., էջ 159 ա-բ: Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 237 (այլ վերնագրի տակ): Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը, էջ 231:

⁴⁷⁴ Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը, էջ 116-119:

ասացեալ»⁴⁷⁵ և այլն՝ նկատի ունենալով Հովհաննես Սարկավագի կողմից ստեղծված լինելը, իսկ ՄՄ 1973^{հմր} ձեռագրի ընդօրինակությունների այլ հատվածների մեջ Հովհաննես Սարկավագի տոմարական ժողովածուի վերնագիր է ընկալվել «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ»-ն:

Այդ վերնագիրը հաստատվում է այդ բնագրի սկսվածքով. «Պահանջեցեր յինէն ուսումնասէր **Վասն հայկայզնեան փումարիս փաւնից փարեկանաց շրջաբերութեան, որ ոչ ընդ այլազգացդ զիզեալ նահանջիցն շարաթանալով զդարձն վերափին առնու, այլ միշտ անցեալն զվախձ[ան] առնլով լրմանցն, ի ներկայունս միշտ և յայագայսն ներգործէ մեզ, այլ փաւնից փեսութիւն յարափոփոխ անցելովք նահանջիք և հասարակաւորութեանն գնալով, ընդ բոլոր աւուրս փարոյն ի հարկէ ընդ իւր շարաբերելով զգրութիւն փաւնից իսողացմամբ, ի բոլոր ամին կապարէ ՌՆԿ (1460) ամ և ոչ ամիսն շարժի որպէս զայլազգացդ»⁴⁷⁶:**

Դատելով այդ հատվածի սկսվածքից՝ Սարկավագի տոմարական ժողովածուի ընդհանուր վերնագիրը եղել է «**Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ**», որը պահպանվել է միայն հիշյալ բնագրի միջոցով, իսկ բնագրի նշված հատվածի ենթավերնագիրը՝ «**Վասն Հայկազնեան տումարիս տաւնից տարեկանաց շրջաբերութեան**»⁴⁷⁷:

1971^{հմր} և 2762^{հմր} ձեռագրերի ընդօրինակված հատվածների մեջ այն վերնագրվել է «Յովհաննու վարդապետի արարեալ մեկնութիւն, որ մականուն Սարկաւագ կոչի. Յաղագս Շ-եկին»⁴⁷⁸ (ՄՄ 2762^{հմր} ձեռագիր) կամ «Յովհաննու արարեալ մեկնութիւն, որ մականուն Սարկաւագ կոչի. Յաղագս Շ-եկին» (ՄՄ 1971^{հմր} ձեռագիր):

Ա. Աբրահամյանն իրավացի է, երբ կարծում է, որ այս վերնագիրը երկու մասի պետք է բաժանել. «Յովհաննու [վարդապետի] արարեալ մեկնութիւն, որ մականուն Սարկաւագ կոչի» և «Յաղագս Շ.եկին», որովհետև առաջին վերնագիրն ընդհանուր է և վերաբերում է Սարկավագի տոմարական բոլոր այն բնագրերին, որոնք մտել են տվյալ ժողովածուի մեջ, իսկ երկրորդը՝ այդ աշխատության միայն մի մասին, որտեղ իրապես խոսվում է հինգ-հարյուրյակ բոլորակի մասին⁴⁷⁹:

Ի դեպ, վերոհիշյալ ընդհանուր վերնագիրը, այն է՝ «Յովհաննու արարեալ մեկնութիւն, որ մականուն Սարկաւագ կոչի», թեև գրված է ուշ շրջանում ընդօրինակողի կողմից և կիսատ է, բայց բխում է նախնական բնա-

⁴⁷⁵ ՄՄ 1973^{հմր} ձեռ., էջ 237 ա-238 ա, ՄՄ 2001^{հմր} ձեռ., էջ 159 ա-162 ա:

⁴⁷⁶ Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 222:

⁴⁷⁷ Ենթավերնագրի հիմնավորումներն առավել մանրամասն են ներկայացված «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» վերնագրված բնագրի քննության հատվածում:

⁴⁷⁸ Տարբեր բնագրերում ՇԼԲ (532)-ամյա զատկացուցակը ներկայացված է Շ.եկ, Շ-եակ, Շե-ակ և այլ ձևերով: Պահպանել ենք բնագրային ձևերը:

⁴⁷⁹ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 222:

գրից, քանի որ «Յաղագս Շ. եկի» ենթավերնագրի տակ Հովհաննես Սարկավագը տալիս է մատյանի գրության ժամանակը՝ 1094 թվականը՝ կապելով Շ-եակի սկզբնավորման ժամանակի հետ: Այդ կիսատ վերնագիրը պետք է վերականգնել **«Յովհաննու վարդապետէ արարեալ մեկնութիւն խումարիս Հայկազնեայ], որ մականունն Սարկաւագ կոչի»**: Կարձ ասած՝ Հովհաննես Սարկավագի 1094 թ.-ին գրած տոմարական ժողովածուի նախնական վերնագիրը եղել է **«Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ»**:

Հարկ է նշել, որ մյուս ազգերի անշարժ տոմարների մեկնությունները կատարվել են Հայոց շարժական և անշարժ տոմարների օրինաչափությունները բացահայտելու և այլ ազգերի տոմարներին համադրելու նպատակով:

ՏՈՄԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական ձեռագիր տոմարական ժողովածուների (ՄՄ 1999^{հմր}, ՄՄ 1973^{հմր}, 2001^{հմր} ևն) ուսումնասիրությունները և Հովհաննես Սարկավագի թողած տեղեկությունները հնարավորություն են ընձեռում վերականգնելու նրա ժողովածուի ոչ միայն վերնագիրը, այլև կառուցվածքն ու բովանդակությունը՝ հիմնական գծերով, և մեզ հասած առանձին բնագրերի մոտավոր տեղը այդ ժողովածուում: Ներկայացնենք Հովհաննես Սարկավագի տոմարական ժողովածուի նախնական կառուցվածքի մոտավոր վերակազմությունը և հիմնավորենք բնագրական միավորների տեղը՝ ելնելով ՄՄ 1999^{հմր} գրչագիր երկու ժողովածուների, այն է՝ Ստ. Մեծրկա որդու և Սամուել Անեցու խմբագրություններից, ինչպես և Սարկավագի տոմարական ժողովածուի առանձին մասերի հետագա ընդօրինակություններից:

Հովհաննես Սարկավագի տոմարական ժողովածուն՝ «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ»-ն, ունի հետևյալ ենթավերնագրերը՝ «Յաղագս Շ. եկի», «Վասն տաւնից տարեկանաց շրջաբերութեան» անվանված («Պահանջեցեր յինեն ուսումնասէր» սկսվածքով), «Վասն Հայկազնեան տումարիս նորին Հովհաննու» («Ասացաք յառաջագոյն...»), «Ըստ երբայեցւոց հնագիտաց և մարգարէից ոմանց...» սկսվածքով, «Նորին Յովհաննու. Յաղագս իննետասներեկ ամացն» («Ի տգիտաց ոմանց...» սկսվածքով), «Պատճառ խանգարման Զատկին», «Պատմութիւն սրբոյ Զատկին», «Յաղագս ըստ Հոռոմոց ամսոց...» («Զթուականէն անուանելոյ...» սկսվածքով), «Յաղագս եղանակաց...» («Վասն երկուցն և չորիցն ապրելիոյ ամսոյ անմիաբանութիւն...» սկսվածքով), «Յաղագս յարակայից» («Կարծեալք...» սկսվածքով) և «Պատճէն տումարի Հայոց մեծաց», «Պատճէն տումարի ըստ Հայոց եղանակաց», «Պատճէն տումարի Սարկաւագի», «Պատճէն տումարի հռոմեացւոց», «Պատճէն տումարի հունացի», «Պատճէն տումարի ասորոց», «Պատճէն տումարի երբայեցւոց», «[Պատճէն տումարի արաբացւոց]», «[Պատճէն տումարի մակեդոնացւոց]», «Պատճէն տումարի Է (7) ազգաց [Եգիպտացւոց, Եթէն-

պացուց, Աթենացուց, Բիւթանացուց, Կապադովկացուց, Վրաց եւ Աղուսնից]», «[Պատձէն տումարի Պարսից և Տաճկաց]», «Լուսնացոյց», «Թուական ազգաց և ժամանակագրութիւն», «Ազգաց ազնուականոններ» («Խառնախորան»), «Ազնուականոնք ՇԼԲ-ամաց (Հուլեան և Հայոց անշարժ)»:

Հովհաննես Սարկավագի տոմարական ժողովածուի ամբողջական պատկերը հիմնականում արտացոլված է նրա տեղեկությունների ենթավերնագրերում կամ սկսվածքներում, սակայն առանձին-առանձին միավորների հերթականությունը խախտված է բնագրի ընդօրինակություններում: Այսպես, «Յաղագս Շ.եկին» բնագիրը թեև դրել են «Ըստ երրայեցուց հնագիտաց և մարգարէից ոմանց...» սկսվածքով բնագրից հետո, սակայն ենթավերնագիրն առկա է՝ իբրև ժողովածուի վերնագրի շարունակություն, որից էլ ենթադրում ենք, որ այն պետք է լինի առաջին միավորը:

Ներկայացված ենթավերնագրերն ու, հատկապես, դրանց բովանդակությունը ակնհայտորեն ցույց են տալիս, որ Հովհաննես Սարկավագի ժողովածուն կազմվել է հայոց և տարբեր ազգերի տոմարների տեսական խնդիրների մեկնության ու գործնական նկատառումներով: Ընդ որում, մեր կողմից ներկայացված ժողովածուի՝ «Յաղագս Շ. եկից»-ի մինչև «Յաղագս յարակայից» («Կարծեալք...» սկսվածքով) ենթավերնագրերով մասերը կամ գլուխները տեսական բնույթ ունեն ու նվիրված են տոմարի մեկնությանը, իսկ «Պատձէնները», «Թուական ազգաց և ժամանակագրութիւնը», «Ազգաց ազնուականոնները» («Խառնախորան»), «Լուսնացոյցը», «ՇԼԲ-ամեա աղյուսակները (հուլեան և Հայոց անշարժ)» միտված են լուծելու տոմարի գործնական-կիրառական խնդիրները՝ ելնելով Հայ առաքելական ս.եկեղեցու դավանաբանական ու աստվածաբանական կողմնորոշումից:

Դժվար է վերջնականորեն ասել, թե դրանք նախնական բնագրում ինչ հաջորդականություն են ունեցել, որովհետև այդ մեկնությունները կարող էին լինել ինչպես «Պատձէններին» կամ Շ-եակ զատկացուցակներին կցված, այնպես էլ՝ առանձնացված: Սակայն «Յաղագս Շ.եկի» ենթավերնագիրը կրող հատվածը, որով սկսվում է ժողովածուն, ունի տեսական-մեկնողական բնույթ, ուստի վերոհիշյալ մեկնությունների մասը կարող է լինել, հետևաբար նպատակահարմար է դրանց մասին գրել այստեղ:

«Յաղագս Շ-եկի»: Հովհաննես Սարկավագի տոմարական ժողովածուի մեկնողական մասն սկսվում է «Յաղագս Շ-եկի» ենթավերնագիրը կրող բնագրով:

Ա. Աբրահամյանին «Յաղագս Շ-եկի»-ն հայտնի է եղել ՄՄ 5 ձեռագրով՝ 1973^{հմր}, 2001^{հմր}, 1971^{հմր}, 2180^{հմր} և 2762^{հմր}. նրա հրատարակածի հիմքը վերջինն է⁴⁸⁰:

Ուշ շրջանում գործող տոմարագետները ձիշտ են ընկալել, որ այն Սարկավագի մեկնության մաս է կազմել, որը երևում է դրա բովանդակությու-

⁴⁸⁰ Յաղագս Շ-եկի, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 239:

նից: Ինչպես բազմիցս ասացինք, Սարկավագն այստեղ տալիս է իր մատյանի գրության ժամանակը՝ գրելով. «*Քանզի ո՛չ գլխու առ նախնեսաք բոլորակդ այդ մինչև յԼԴ (34) ամն Յուսրիանոսի կայսեր, յորմէ մինչև ի գիր մարենիդ այդորիկ լինին ամբ ՇԼԲ (532)*»:

Սարկավագն իր այս ժողովածուն գրել է 1094 թ. (562+532), և, իսկապես, Հուստինիանոսի 34 տարուց մինչև Սարկավագի 10 թվականը կազմում է 532 տարի:

«Յաղագս Շ–եկի» ենթավերնագրի տակ Հովհաննեսը ցույց է տալիս, որ մինչև Հուստինիանոս կայսեր 34–րդ տարին ՇԼԲ բոլորակ չի եղել, մինչ այդ դեկավարվել են 200–ամյա և 95–ամյա աղյուսակներով: Նա քննադատում է բոլոր այն տոմարագետներին, որոնք ՇԼԲ–ի սկիզբը համարել են Փիլիպպոս կայսեր 2–րդ տարին, նաև նրանց, ովքեր ՇԼԲ–ն համարում են հռոմեական 252, եբրայական 100 և 180 հանապազորդ կոչվող թվերի գումարը, և «զանուանս իրեանց ինքեանք ո՛չ իշխեցին գրել, զոր բարիոք ասեմ գործել, որպէս զի թափեցեն զանձինս ի կարի յայտանախատն լինելոյ»: Թեև սա փոքրածավալ բնագիր է՝ ընդամենը նվիրված Շ–եակի ստեղծման ժամանակի հարցին և նույնիսկ հերքելով ոմանց կարծիքը 532–ամյակի ստացման հարցում, անգամ չի կրկնում, թե ինչպես է առաջացել այդ պարբերաշրջանը, քանզի բազմիցս գրել է դրա մասին⁴⁸¹:

Գ. ՎԱՍՆ ՀԱՅԿԱԶՆԵԱՅ ՏՈՆԻՑ ՏԱՐԵԿԱՆԱՅ ՇՐՋԱԲԵՐՈՒԹԵԱՆ

Ընդհանուր՝ «Յովհաննու արարեալ մեկնութիւն, որ մականուն Սարկավագ կոչի» անվանված բնագրում առկա են համոզիչ այլ փաստեր, որոնք վկայում են, որ այս բնագիրը ոչ միայն Հովհաննես Սարկավագինն է, այլև ունեցել է **«Վասն Հայկալզնեան տանից տարեկանաց շրջաբերութեան տումարիս»** ենթավերնագիրը: Այսպես, 1. հեղինակը այս բնագրում մեկնում է Հայոց տոմարին բնորոշ հայոց ամիսների անշարժության և տոների շարժականության վերաբերող խնդիրը. «*Ձի որպէս այլոց ազգաց ամիսք փոխին, հայոց հասարակածն փոխի, և հայ ամիսք անշարժք և անխաղացք են*»⁴⁸²: Ընդգծված միտքը պետք է հասկանալ այսպես՝ հայոց ամիսները՝ օրերի քանակի առումով, նույնիսկ նահանջ տարիներին փոփոխություն չեն կրել, այն է՝ տարին մշտապես ունեցել է 365 օր (անշարժ)⁴⁸³, որի հետևանքով շարժվել են հայոց հասարակածն ու տոները, այսինքն՝ փոփոխվել է նրանց ամիս–ամսաթիվը, իսկ վերադիրը մեկ օրով պակասում է՝ 11 արժեքի փոխարեն ստանալով 10 արժեքը, իսկ երբ նահանջն ու տասնիննամյակը համընկնում են,

⁴⁸¹ Յաղագս Շ–եկի, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 238:

⁴⁸² Նույն տեղում: «Հայ ամիսք անշարժք և անխաղացք են» արտահայտությունը պետք է հասկանալ, որ հայոց ամիսները մշտապես ունեն 30 օր, իսկ Աւելեացը՝ 5 (365 օր), և պետք չէ շփոթել անշարժ տոմարի հետ:

⁴⁸³ Հովհաննես Դրասխանակերտցին է հիշատակում Անանիա Շիրակացու անշարժ տոմարի մասին:

վերդիրը կրկին 11-ով է փոփոխվում: Հավանաբար, ամիսների անշարժության այս պատկերացումը թյուրըմբռնման պատճառ է դարձել որոշ ուսումնասիրողների համար, այն է՝ Անանիա Շիրակացու ստեղծած տոմարը եղել է անշարժ տոմար՝ ժամանակակից ընկալումով, և այն մեզ չի հասել:

Սարկավագը շատ հստակ է ներկայացնում, որ մեր տոմարի համար նահանջ տարում մեկ օր ավելացնելը Աելեաց օրերի վրա, ինչպես որ երբայեցիների մոտ է, հարմար չէ, չի աշխատել. *«Որպէս նահանջի ար ավելի արեգականն է, որ յաւելու երթներեակս ազգաց, բայց ի հայդ ո՛չ, վասն որոյ ամիսք նոցա շարժին, այլ ոչ փասնք: Զոր եթէ ի մերումս էր եղեալ, որպէս զերբայեցւոցն ի նահանջի ամի զավելեացն վեց ունելով, և զարն ավելի յերթերեակ փարոյն յաւելեալ՝ անաշխատ մեզ զգիտութիւն արուեստիցդ ցուցանէր»⁴⁸⁴:*

Սա նշանակում է նաև, որ իր անշարժ տոմարը կարգելիս չէր կարող, իրեն հակասելով, նահանջ տարվա ավելացած մեկ օրը հավելել հայոց տոմարի Աելեաց օրերին, այն է՝ Աելեացը նահանջ տարիներին ունենար 6 օր, ինչպես կարծել են Բ. Թումանյանը, Լ. Սենյոնովը, Ա. Աբրահամյանը, Գևորգ արքեպիսկոպոս Սերայդարյանը: Բ. Թումանյանը գրում է. *«Ըստ Սարկավագի փոմարի ամասնունները և նրանց պարունակած օրերը մնում են նախկինը, միայն թե նահանջ փարիներին (որոնք մրցվում են չորս փարին մեկ) լրացուցիչ մեկ օրը դրվում է ավելյաց ամսի վրա, այսինքն այդպիսի փարիներին այն 5-ի փոխարեն ունենում է 6 օր»⁴⁸⁵:*

2. «Վասն Հայկազնեան տաւնից տարեկանաց շրջաբերութեան տումարիս» ենթավերնագիրը կրող բնագրի մի զգալի հատված նվիրված է երբայական տոների մեկնությանը⁴⁸⁶, քանզի դրանց հիման վրա են ձևավորվել հայոց քրիստոնեական տոները. *«Եւ արդ՛ եկեացուք ի կարգադրութիւն փաւնիցն երբայեցւոց, քանզի ամենայն փաւնախրմբութիւնք նոցա կթն ամբք բացակատարին աուրբք և շարաթիւք և ամասաւք»:* Այս հատվածում խոսվում է տոների կատարման շաբաթական կարգի մասին⁴⁸⁷՝ ընդհանուր ձևով հիշելով ութերորդ դարի կենսասեր անձանց⁴⁸⁸ մասին, ովքեր ներդրեցին տոների կատարման շաբաթական շարքի սկզբունքը: Հետայդու Սարկավագը հերթականությամբ ներկայացնում է Բաղարջակերաց՝ Զատիկի տոնը, որից 50 օր հետո կատարվում է յոբելեանը (= Հոգեգալուստը՝ Պենտեկոստէ), ապա տարեմուտի գոհության տոնը (Թշրին 1-ին): Այս տոների նկարագրությունը միտված է մի

⁴⁸⁴ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 222:

⁴⁸⁵ Բ. Ե. Թումանյան, Տոմարի պատմություն, Երևան, 1972, էջ 117:

⁴⁸⁶ Զաքարիայի պապանձումով և Եղիսաբեթի հղացմամբ պայմանավորված՝ Աւետումն Աստուածածնի և Քրիստոսի Ծննդեան, Տեառնընդառաջի և այլ տոներ:

⁴⁸⁷ «Շաբաթ» հասկացությունը (7 օր) ձևավորված ենք գտնում երբայեցիների մոտ՝ արարչության 6 օրից հետո, 7-րդ՝ հանգստյան օրը՝ շաբաթ:

⁴⁸⁸ Անուղղակիորեն հիշեցնում է Հովհան Օձնեցու՝ «Տոնացոյց ըստ շաբաթուցը»:

նպատակի, ճշտորեն՝ երբայական և դրան զուգահեռ՝ հուլյան ու հայոց ամսաթվերով ներկայացնելու մի քանի անշարժ տոների ամիս-ամսաթիվը՝ Զաքարիայի պապանձման, քանզի նրանով է պայմանավորված Եղիսաբեթի հղիացման օրվա սահմանումը, որից էլ բխում է Աւետման կուսին և Քրիստոսի Ծննդեան ու Յայտնութեան տոների սահմանումը, ապա Տեառնընդառաջը⁴⁸⁹, որոնց տարբերությամբ էլ պայմանավորված են քրիստոնեական եկեղեցիների (հայոց ու քաղկեդոնական) միևնույն տոնական օրերի ամսաթվային տարբերությունները: Այսպես, «*Ա թշրին նուիրեալ ար սուրբ, որ է սեպտեմբերի ԺԸ, և մարտի ԻԵ, և արն ուրբաթ: Եւ ի փաս թշրին՝ ար քաութեան և պապանձումն Զաքարիայ*⁴⁹⁰, որ է սեպտեմբերի ԻԷ, և մարգաց չորս և արն կիրակէ: Եւ ի ԺԵ թշրին՝ փաղաւարահարք, որ է հոկտեմբերի երկու, և մարգաց ինն, և արն ուրբաթ: Ի ԻԱ թշրին կատարումն փանին փաղավարահարաց, որ է հոկտեմբերի Ը, և մարգաց ԺԵ և արն հինգշաբթ: Արդ ի հնգեփասան աուր թշրին ամսոյ սկիզբն փանին և արն ուրբաթ: Ի ԻԱ կատարումն փանին և արն հինգշաբթի, զի վերջին արն յոլովագոյն էր մատուցումն զոհիցն և պատարագաց, և ոչ ժամանէր քահանայապետն երթալ ի փուն իւր ի ԻԲ աուր ամսոյն, երթայր այր ի փուն իւր յաուր ուրբաթի և լինի թշրին ԻԳ՝ և կթներեակն կթն, և հոկտեմբեր Ժ և կթներեակն չորս, և մարգաց ԺԵ (ուղղել՝ ԺԷ)՝ և կթներեակն կթն, և արն շաբաթ»⁴⁹¹:

Մեր վերանվանած «Վասն Հախկալգնեան տաւնից տարեկանաց շրջաբերութեան տումարիս» բնագրի տարբեր հատվածներում Սարկավագը ոչ միայն ամսաթվերով, այլև շաբաթվա օրերով հաստատագրում է հայոց տոնական օրերի ճիշտ լինելը և ապացուցում, որ քաղկեդոնականները, որքան էլ փորձեն, չեն կարող շաբաթվա օրերով համապատասխանեցնել իրենց ամսաթվերը տոներին: Եթե մի դեպքում նա, տոմարական կանոններով, յոթներեակների, վերադիրների և այլ արժեքներով ստանում է այդ տոների ճիշտ օրերը, ապա մյուս դեպքում ցույց է տալիս քաղկեդոնականների մոտ առկա անհամապատասխանությունը: Բերենք մի տոնի օրինակ: Աւետման կույսի տոնը, ըստ ավանդության, եղել է Նիսանի 17-ին, չորեքշաբթի: Օրագրուտի կանոնով ստանում է չորեքշաբթին. «...կալ նիսանի ԺԷ (17), եթներեակն մին, լինի ԺԸ (18) [քաղոց՝ ԺԱ (11), կրկնակ՝ մին և] եթներեակն վեց, լինի ԺԸ (18), երթ հինգ [ուղղել՝ եթն], եթն մնա չորս, զի սկիզբն փարոյն լեալ է, և մին յաւելու եթներեակն: Եվ այսպէս, աւերիքն հանդիպեալ չորեքշաբա-

⁴⁸⁹ Առանց անունը տալու օգտվում է Անանիա Շիրակացու «Ի Յայտնութեան տեառն» ճառից՝ ավելացնելով իր անշարժ տոմարի ամսաթվերը:

⁴⁹⁰ Մերժում է քաղկեդոնական եկեղեցու ընդունած՝ հենց Զաքարիայի պապանձման օրը՝ սեպտեմբերի 27-ին, Եղիսաբեթի հղիացման տոնի կանոնակարգումը, որից էլ 6 ամիս առաջանալով՝ մարտի 25-ին «ասեն զաւետիսն Գաբրիէլի առ կոյսն: Եւ անտի մինչև ի դեկտեմբերի ԻԵ-ն համարեն ինն ամիս և հինգ ար և անդ ասեն զծնունդն Քրիստոսի: Եւ ի փետրուար ԻԲ (22)-ն (ուղղել՝ ի Բ (2)-ն) զՏեառնընդառաջ կատարեն...» (Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 233-234):

⁴⁹¹ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 230-231:

թի...»⁴⁹²: Այսպես, տոմարական կանոններով, Սարկավագն ստանում է ոչ միայն տարբեր տոների շարաթագրերը, այլև ճիշտ ամիս-ամսաթիվը, իսկ քաղկեդոնականների համար փաստում է. «... և բազում անգամ ջանասն զար ծննդեան հինգաշարաթ ածել և ոչ կարեն, և ոչ զաւերիսն չորեքշաբթի»⁴⁹³:

Այս բնագրում Սարկավագը պարզաբանում է Հայոց շարժական և մյուս ազգերի անշարժ տոմարների տարբերությունը՝ հայոցի պարբերականությունը կապելով ոչ թե նահանջների (քառամյա), այլ 1460-ամյակի հետ, միաժամանակ ակնարկելով հասարակածը՝ գարնանային օրահավասարը՝ իբրև պարբերաշրջանի սկիզբ. «...այլ փունից փետութիւն անցելովք նահանջիւք և հասարակաւորութեանն գնալով, ...»⁴⁹⁴:

Ինչպես հայտնի է, Հովհաննես Սարկավագը տոմարական հաշվումներ կատարելիս առաջնորդվել է եբրայական թվականության համակարգով, և տոմարի մեկնությունից հասկանալի է դառնում, թե ինչու է ինքն Արարչության թվականության բազմաթիվ համակարգերից նախընտրել «եբրայեցուցը»⁴⁹⁵. «Արդ՝ զշարժումն ամսոցն եբրայեցոց և զանշարժութիւնն հայ ամսոցն սահմանեաց բարձրեալն, **զի հաւար և զգիր և փումար** այս երկու ազգիս միայն եր Աստուած, և այլոց ազգացդ՝ մարդկան են արարեալ....: Եւ այսպէս, վայելուչք են ամիսք երկաքանչիւր, քան զամենայն ազգաց: Զի եբրայեցոց ամիսք ցուցանեն զյեդափոխ լրմանց արարադարձումն, և զախարաց և ժամուց փորևառիկ զեղանակս, և հայ ամիսք՝ անցեալ ժամանակի ցուցանակ»⁴⁹⁶: Նշանակում է, որ եբրայական տոմարում արդեն հաշվի են առնված և՛ Լուսնի 19-ամյա պարբերաշրջանը, և՛ համապատասխանությունը տարվա եղանակների ու կենդանակերպների հետ:

Ասվածից միաժամանակ պարզ է դառնում, որ որքան էլ այս երկու ազգերին՝ հայերին ու եբրայեցիներին է վերագրում հավատ, գիր ու տոմար ունենալը, սակայն հայկական տոմարն առավել հին է համարում, քան եբրայականը, ինչպես երևում է ոչ միայն «հայ ամիսք՝ անցեալ ժամանակի ցուցանակ» արտահայտությունից, այլև մեկնության այլ հատվածում ուղղակիորեն ասվածից. «Այլ յառաջ քան զՄովսէս ո՛չ ուրեք էր գիտութիւն արուեստիս, բայց միայն ի հայ ամսոցդ, որ էին յառաջ, քան զՄովսէս, քանզի ասեն ... Հայկն, առաջին նահապետն Հայոց զամիսքդ կարգեաց...»⁴⁹⁷: Այսուամենայնիվ, նա իր հաշվումների համար հինք է ընդունում եբրայականը, քանզի դրանում, ինչպես ասվեց, հաշվի են առնված Լուսնի լրումները, կենդանակերպները (Արևի տեղաշարժը Խավարածրի հարթությամբ) և տարվա եղանակները:

⁴⁹² Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 231:

⁴⁹³ Նույն տեղում, էջ 234:

⁴⁹⁴ Մեկնություն տոմարիս Հայկազնեայ, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 222:

⁴⁹⁵ «Յադամայ մինչև հայ թուականն ըստ հրէիցն, որով մեք վարինք՝ ԲՊԻԳ» (Մեկնություն տոմարիս Հայկազնեայ, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 224):

⁴⁹⁶ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 223:

⁴⁹⁷ Նույն տեղում, էջ 224:

Բնագիրն անչափ հետաքրքիր տեղեկություն է հաղորդում հրեական վերջին ու քրիստոնեական առաջին Ջատկի մասին՝ վերջինս կապելով Քրիստոսի Խաչելության հետ: Փաստորեն, Քրիստոսն ինքը կատարում է հրեական վերջին Ջատկը՝ **զոհաբերելով գառը**, և սկսում նոր Ջատկը՝ **իրեն զոհաբերելով**. «*Ձայն հաւապ*⁴⁹⁸ *աւարտեաց ինքն ի վերնապանն, յորժամ կնքեաց զհին զարիկն արեամբ գառինն և սկսավ զնոր Ջարիկս արեամբ իւրով, և զայս (գառան զոհաբերությանը Ջարիկը – Գ. Ս.) աւարտէ, յորժամ գա ինքն Քրիստոս*»⁴⁹⁹:

Տոմարական բնագրերը հնարավորություն են տալիս հաշվարկելու, թե երբ են կատարվել այդ Ջատիկները: Քանի որ հայոց ընտրած 19-ամյակների հենքի վրա Քրիստոսի Խաչելությունը կատարվել է ապրիլի 4-ի լրման տարում, իսկ այն Քրիստոսի ժամանակ համընկել է ներկա 31 թվականին, ապա այդ թվականի հենց ապրիլի 4-ին՝ երեքշաբթի (ապրիլի չորս, արև երեքշաբթաթ⁵⁰⁰), կատարվել է հրեական Ջատիկը, քանի որ հրեաները Լուսնի լրման օրը, շաբաթվա ինչ օր էլ լինել, հայտարարում էին շաբաթ և կատարում Ջատիկը, իսկ քրիստոնեական Ջատիկը կհամապատասխաներ ապրիլի 9-ին՝ կիրակի⁵⁰¹, այսինքն՝ լրմանը հաջորդող կիրակի օրը:

Մեր ընկալումով, այս տեղեկությունն իր խորքերում նաև գարնանային օրահավասարի առաջխաղացման այլաբանական պատկերն է ներկայացնում⁵⁰²: Ինչպես հայտնի է, գարնանային օրահավասարը առաջ է շարժվում դեպի արևմուտք՝ կենդանակերպի համաստեղությունների երկարությամբ, այսինքն՝ Արեգակի ընթացքին հակառակ ուղղությամբ: Դեպի արևմուտք շարժման պատճառը տիեզերական ձգողականության և առաջխաղացման ընդհանուր օրենքն է: Դրանով պայմանավորված՝ փոփոխվում է համաստեղությունների և գարնանային օրահավասարի կետի հեռավորությունը⁵⁰³:

Գարնանային օրահավասարի կետի անցումը մի կենդանակերպից մյուսին տեղի է ունենում միջին հաշվով 2160 կամ 2166 տարվա ընթացքում, իսկ մեկ ամբողջական շրջանը, որը կոչվում է տիեզերական մեծ տարեշրջան,

⁴⁹⁸ «Հաւատը» Գրիգոր Տաթևացին հարաբերում է սբ.Երրորդությանը, համարում աստվածային մատանի (= շրջան կամ պարբերաշրջան – Գ. Ս.), համադրում օրվա սկզբի՝ առավոտի հետ և այլն: Այսինքն՝ նույնիսկ քրիստոնյա աստվածաբաններն այն առնչել են ժամանակային հասկացություններին: Իսկ Պողոս առաքյալն այն համարում է **Վահան**: Մի կողմ թողնելով քրիստոնեական բացատրությունը՝ նկատենք, որ մեզանում **ՎԱՀԱՆ** –ը **ՔՆԱՐ** համաստեղության անվանումն է նաև:

⁴⁹⁹ **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 223:

⁵⁰⁰ Նույն տեղում, էջ 225:

⁵⁰¹ Տեն **Լ. Ա. Սարգսյան, Ռ. Հ. Վարդանյան, Գ. Ս. Սիմոնյան**, Շ–եակ (ՇԼԲ) կարգ (ըլորակ) Հռոմեացուց և Հայոց Անանիայի Շիրակացույ (Շիրակուսույ) (վերականգնություն), ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, 2009, էջ 26: Նկատենք, որ սա հետագա հաշվումների արդյունք է, երբ Ջատիկը կատարվել է Լուսնի լրմանը հաջորդող կիրակի օրը:

⁵⁰² Գարնանային օրահավասարի տեղաշարժման (պրեցեսիա) մասին առաջինը հաղորդել է Հիպարքոսը (մոտ մ.թ.ա. 190–120 թթ.), երբ այն գտնվել է ԿՈՒՅՍ համաստեղության 6°-ում, իսկ Տիմարքոսի ժամանակ՝ ԿՈՒՅՍ համաստեղության 8°-ում (Популярная история астрономии и космонавтики, М., 2002, էջ 57):

⁵⁰³ Популярная история астрономии и космонавтики, М., 2002, էջ 57:

կատարվում է 25920 (2160 x 12)⁵⁰⁴ կամ 26 000 (2166 x 12)⁵⁰⁵ տարվա ընթացքում:

Այսպիսով, գարնանային օրահավասարի գոյության ավարտը ԽՈՅ կենդանակերպում ներկայացված է իբրև *գառան* վերջին գոհաբերություն, իսկ *Քրիստոսի գոհաբերությունն* արդեն համապատասխանում է գարնանային հասարակածի՝ ՁրԿՆԵՐ-ում գտնվելու փաստին, հատկապես որ *ձուկը* Քրիստոսի խորհրդանիշն է⁵⁰⁶: Փաստորեն, ՁԿՆԵՐ-ում ավարտվում է այս մեծ պարբերաշրջանը, և երբ հասարակածն անցնի ՋՐՀՈՍ, սկսվելու է նոր տիեզերական մեծ տարեշրջան: Հետևաբար, Սարկավագը թեև ուղղակիորեն չի խոսում վերոհիշյալ մեծ պարբերաշրջանի մասին, սակայն նրան այդ արդեն հայտնի էր, և նոր՝ ՁԿՆԵՐ պարբերաշրջանի սկիզբն ուղղակիորեն անվանում է Քրիստոսի գալուստ: Մեկնության մեկ այլ հատվածում Սարկավագը դարձյալ գրում է. «Այլ մեծին Մովսէսի հրամայէ աստուած տաւնել յԵգիպտոսի չորեքրասան նիսան գառնազէն, զոր Տէրն ի վերնասրանն աշակերտար ճաշակեաց զգառն խորհրդոյ և դադարեցոյց գառամբ զայրիկն՝ սկսեալ գառամբ⁵⁰⁷: Տեսցես անդանաւր գաստուածային գիշերն և մերձակայ կենացսցնդելոց այսմ գիշերի հակառակամարտ, յորում նախածինն լուսանի խաւար»⁵⁰⁸:

Փաստորեն, վերոնշյալ հատվածում Սարկավագը խոսում է Զատիկը (= գարնանային օրահավասարի կետը), այն է՝ հասարակածը, ԽՈՅ-ում գտնվելու պարբերաշրջանի ավարտի և Քրիստոսի գոհաբերությամբ ՁԿՆԵՐ կենդանակերպ անցնելու՝ կարևոր աստղագիտական պատկերացման մասին:

Ինչպես հայտնի է, տոմարի մեկնողական հատվածում ներկայացված են Արարչության թվականության տարբեր համակարգեր. «*Ջի ըստ Անդրէասայ ժամանակագրությանն լինի յԱդամայ մինչև հայ թուականն ՅՃԾԵ (6155), և ըստ կայսերական պարսութեանն՝ ԲՉԿԱ (5761) (ուղղել՝ ԲՉԾԱ (5751), որով դառնում է այն հասարարուն թիվը, որ ունի Եվսեբիոսի կամ 70-ից թվականն Արարչությունից մինչև հայոց թվականը) և ըստ Անանասիայ Շիրակունւոյ՝ ԲՃՂԸ (5198 [և ըստ Եպիփանու ՅԾԳ (6053)], և ըստ եբրայականին՝ ՅՄՁԹ*

⁵⁰⁴ Արթուր Արմին, Միերի դուռ. հնագույն թվային համակարգը որպես տիեզերքի կառույց, Լոս Անջելես, 2008, էջ 31:

⁵⁰⁵ Գր. Բրուտեան, Օրացոյց Հայոց, Ս. Էջմիածին, 1997, էջ 174:

⁵⁰⁶ Տե՛ս Գ. Մանասյան, Խորհրդանշանների հանրագիտարան, Եր., 2007, էջ 134:

⁵⁰⁷ Ընդգծված նախադասությունը հստակորեն վկայում է, որ գառան գոհաբերությունը, ինչպես և նրան հաջորդած Քրիստոսի գոհաբերությունը խորհրդաբանական հասկացություններ են՝ տոմարական իրողություններ, և Սարկավագն առանց այլևայլության գրում է դրա մասին: Հնարավոր է, որ Քրիստոսի գոհաբերության մասին ահա այսպիսի ուղղակի արտահայտությունները հոգևորականության կողմից ընկալվելին իբրև աստվածամերժություն կամ իր բառերով ասած՝ «աղքատանալ Քրիստոսից», որի հետևանքով Սարկավագը հալածանքի ենթարկվել էր կամ նույնիսկ օտարվել, որի աղոտ արձագանքներին մենք հանդիպում ենք «Ամբաստանութիւն զանձնէ» և «Նորին (Յովհաննու) առ Սարգիս. Ողբք» ստեղծագործություններում, որոնց քննությունը ներկայացրել ենք առաջին գլխում:

⁵⁰⁸ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 225:

(6289), և ըստ հրէիցն, որով մեք վարինք՝ ԲՊԻԴ (5824), և ըստ շամրասցոցն՝ ԲՊԼԲ (5832), և ըստ Շ.Եկին թուականին ԲԶԸԶ (5976)»⁵⁰⁹:

Սարկավագն է, որ Արարչությունից մինչև հայոց թվականը եղած տարիների քանակը եբրայեցիների **ԲՊԻԴ (5824)** տարի է ընդունել. այն հաստատվում է եբրայեցոց «Պատձէնի» թվականի կանոնով, որը կներկայացնենք, ուստի վերոքննյալ բնագիրը Սարկավագինն է: Բերենք մեկ այլ վկայություն ևս. «...Բայց լրնանն՝ ի քառասունէն մին այլ երթ. լրումն՝ յարեգ ԺԷ (17), հասարակածն՝ յարեգ ԺԲ (12), արարչութիւնն՝ յարեգ Թ (9), հոռովմ լրումն՝ մարտի ԻԵ (25), եբրայեցոցն՝ նիսան չորս, վերադիրն՝ երկուսասան, հին վերադիրն՝ երեսուն և արն երկուշարթ»:

Իսկապես էլ, 19-ամյակի հաշվելու իմաստով 19-րդ տարվա լրումը Արեգ 17-ին է, ըստ Սարկավագի անշարժ տոմարի, որը համարժեք է մարտի 25-ին և Նիսան 4-ին, որոնք առկա են բնագրում, իսկ գարնանային գիշերահավասարը՝ Արեգ 12-ին և արարչության 1-ին օրը՝ Արեգ 9-ին, որոնց համարժեքները կարող ենք հեշտությամբ ստանալ Արեգ 17 = մարտ 25, այն է՝ Արեգ 12 = մարտ 20 և Արեգ 9 = մարտ 17, որոնք Սարկավագի անշարժ տոմարի նախագծի կանոնած ամսաթվերն են՝ իր տոմարական սկզբունքներից և ավանդությունից ելնելով:

Եվ տարբեր ժողովուրդների թվականության համակարգերն այսպես զուգադիրելով, օգտագործելով նրանց վերադիրները, յոթներեակները, հանապազորդները՝ հետապնդում է կարևորագույն նպատակ՝ ապացուցել, որ Հայոց առաքելական ս. եկեղեցին քրիստոնեական տոները կատարում է առավել անաղարտ՝ հետևելով ավանդությանը, որ քաղկեդոնական եկեղեցու տոների ամսաթվերը չեն կարող լիովին զուգադիպել Աստվածաշնչի հաղորդած տեղեկություններին՝ տարիներով, ամիս-ամսաթվերով ու շաբաթվա օրերով, ինչպես դա հանդիպում է մեզանում:

Սարկավագը, բացի հայերի ու եբրայեցիների տոմարներից, մյուսների-նր համարում է մարդկանց (Արիստադես, Անատոլիոս, Որոգինես, Եվսերիոս)⁵¹⁰ հաշվումների արդյունք, իսկ տարբեր տարեմուտներ (գարուն՝ եբրայեցիք, ամառ⁵¹¹, աշուն՝ ասորիք և յոյնք, ձմեռ՝ հոռովմք⁵¹²) ընդունելու հետևանքով էլ առաջին վարդապետների՝ տարիների հաշվարկները «անմիաբան հանդիպին միմեանց», և ստացվել են Արարչության թվականության տարբեր համակարգեր:

⁵⁰⁹ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 228:

⁵¹⁰ Նույն տեղում, էջ 224:

⁵¹¹ Սարկավագն ամառվա մասին նշում չունի: Սակայն այն փաստը, որ Հայաստանը կենդանակերպերի աշխարհագրական բարտեզում հիշատակվում է **ԽԵՑԳԵՏԻՆ** կենդանակերպի հետ, ապա կարելի է ենթադրել, որ վաղ շրջանում հայոց տարեմուտը համարել են ամառնամուտը: **ԽԵՑԳԵՏԻՆ - Սիպպար** զուգադրությունը հանդիպում է դեռևս մ. թ. ա. 1-ին հազարամյակում բաբելական հուշարձաններում, թեև այդ զուգադրումը կարող էր կատարված լինել շումերա-աքքադական շրջանում: Տե՛ս Мифы народов мира, Энциклопедия, т. 2, М., 1988, էջ 653: Մեր կարծիքով, չի կարելի բացառել, որ Սիպպարը Արմե - **Շուպրիան է**:

⁵¹² Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 225:

Նա, հետևելով Անանիա Շիրակացուն, գտնում է, որ տոմարական արվեստի հիմքում պետք է դնել երբայական համակարգը, քանի որ «...Հասարակածը յերբայեցոց աւելեացն չորիցն հանդիպի, յայտ է՝ թէ առաջին արւելեացն է արարչութեան սկիզբն, և վերջին աւուր պարկերն եւթներեակ է փարսոյն, որ է հինգշաբթի և յաւուր ուրբաթու նիսան մրանէ, և լինելութիւն մարդոյն (նկարի ունի մարտի 22-ը), և արեգակն ի խոյ մրանէ»⁵¹³:

Այնուհետև Հովհաննեսն անդրադառնում է տոմարական արվեստի ստեղծման խնդրին ու առաջինը նշում Մովսեսի անունը: Նա կարգեց երբայական տոմարը և տարեսկիզբ համարեց զարնանային հասարակածը՝ Նիսանի 14-ը, և դրան զուգադրեց Ելքը Եգիպտոսից կամ «ելիցն ի ծովէն»: Այնուհետև Եզր դպրի օրոք նորոգվում է տոմարը, և Եզրասն էլ է նշել Զատիկը դարձյալ Նիսանի 14-ին: Ապա Անդրեասն ստեղծեց 200-ամյա զատկացուցակ, որին հաջորդեց արդեն էսայանների 532 (19 X 28) – ամյա կատարյալ զատկացուցակը⁵¹⁴:

Մեկնության հեղինակը բացատրում է, թե ինչու է էսայան պարբերաշրջանը կատարյալ, «քանզի յինքեան բերէ զկատարումն մասանց Լուսնի, և զշրջանս արեգակնս նահանջից հաւասարել միմեանց ի ԻԸ ինն և փասնէրեակի և ի իննևփասն ԻԸ. եկի»⁵¹⁵, պատկերավոր կերպով 532-ամյա կատարյալ պարբերաշրջանը համեմատելով անվի հետ. «Եւ բոլոր ասի, զի սպառուած ոչ ունի՝ ո՛չ սկիզբն և ո՛չ վաղձան, զարէն անոյ՝ անեզր բոլորեալ»⁵¹⁶:

Հարկ է նշել, որ հիշյալ բնագրի օրգանական շարունակությունն է «**Նորին Յոհաննու**» վերնագիրը կրող հատվածը, որը երբայեցիների ու հոռոմոց և Հայոց ամիսների զուգընթացության մասին ունեցած տարակարծությանն է վերաբերում (մարտը = մեհեկանին, մետասան արեգ = ԻԲ ադար և այլն): Այս բնագիրը պահպանվել է ՄՄ 1973^{հմբ}, 1971^{հմբ}, 2180^{հմբ} և 2762^{հմբ} ձեռագրերում, որն Ա. Աբրահամյանը հրատարակել է ՄՄ 1973^{հմբ}-ի հիման վրա⁵¹⁷:

Բնագրի սկսվածքն այս է. «Ասացաք յառաջագոյն՝ թէ զիա՛րդ բաժանեալ են կարծիք երբայեցոցն և հոռոմոց վասն կարգի ամսոց հայոց»⁵¹⁸:

Բնագրում գրված է. «Իսկ որպէս այժմ կանոնեալն ունի յամենայն եկեղեցիս հաւարացելոց երից ազգաց՝ ի քսանն յառաջագոյն ասացելոցդ ամսոց դիւստրոսի և ադարաւյլ և մարտի ամսոյ, որ լինի ԻԴ (24) պեմենովթայ ըստ եգիպտացոց, և աւել աւուրցն երբայեցոցն ի չորսն, ուր և զերկոյրասան ութերորդի լԱրեգ – Գ. Ս.յամսոյն ըստ հայում կանոնեցաք պարսեկել, ո՛չ առանց

⁵¹³ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 225:

⁵¹⁴ Այս երկու՝ 200-ամյա և 532-ամյա զատկացուցակների առաջին տարին (առաջինի համար հաշվելու և 19-ամյակի իմաստով, 2-րդի համար՝ 19-ամյակի իմաստով) ապրիլի 4 = Նիսանի 14-ի լրման տարին է:

⁵¹⁵ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 224:

⁵¹⁶ Նույն տեղում:

⁵¹⁷ Նույն տեղում, էջ 245:

⁵¹⁸ Նույն տեղում, էջ 240-244:

վկայութեան առաջնոց և հնոց արանց իմաստնոց, որպէս վերագոյնն ասացաւ»:

Հովհաննէս Սարկավագը, իսկապէս, «Ազգաց ազնուականոններում» է սահմանել իր սկզբունքները, հատկապէս զուգադրել մարտ 20 = Դիւստրոս 20 = Ադար 20 = Պեմենովթ 24 համարժեքները Հայոց անշարժ տոմարի Արեգ 12-ի հետ, իսկ այս հատվածում մեկնում է:

Նա բերում է նաև պատմական տեղեկություններ Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմության» հայերեն թարգմանությունից, վկայություններ Անատոլիոսից ու Հովսեփիոսից, որ զարնանային հասարակածը եղել է Արեգ ամսին, իսկ աշնանայինը՝ Հոռիին, և հիմնավորում է իր առաջ քաշած սկզբունքները:

Այլ կերպ ասած, ըստ էության, հիշյալ բնագրերը Սարկավագի նախնական ժողովածուի մեջ կազմել են մեկ ամբողջություն կամ իրար շարունակություն: Ի դեպ, անվերնագիր՝ «**Ըստ երբայեցւոց հնագիտաց և մարգարէից ոմանց...**» սկսվածքով բնագրի պատառիկն իր բովանդակությամբ նախորդների շարունակությունն է: Տոմարական այս պատառիկը պահպանվել է ՄՄ 1973^{հմր}, 1971^{հմր}, 2180^{հմր} և 2762^{հմր} գրչագրերում: Ա. Աբրահամյանն այն հրատարակել է 1971^{հմր} գրչագրից՝ ուղղումներ կատարելով ՄՄ 1973^{հմր} ձեռագրի հիման վրա⁵¹⁹, քանզի ՄՄ 1973^{հմր}-ի ընդօրինակության տեքստը խառնված է եղել այլ աշխատության հետ⁵²⁰: Սա ևս մի ապացույց է, որ այն առանձին միավոր չէ, այլ տոմարական աշխատությունից առանձնացված ու կարևորված հատված:

Թեև ըստ երբայեցի հնագիտականների ու մարգարենների՝ ըստ տպագրի՝ Արեգի 4-ին [ուղղել՝ Աելեաց 4-ին] է հանդիպում զարնանային հասարակավորությունը, «... սակայն առաւել հաճոյ թուի ասացեալն ի Յովսէպոսէ՛ յաղագս սկզբանն եղանակի զարնանայնոյ լինել յառաջին աւուրն նիսան ամսոյ՝ որ ըստ երբայեցւոցն, և հանդիպի ըստ եգիպտացւոցն ի ԻՋ պեմենովթայ, իսկ ըստ հոռունոց՝ ի ԻԲ մարտի ամսոյ: Նմանապէս և ըստ յունաց՝ դիւստրոս ամսոյ ԻԲ, և ըստ ասորոցն՝ ադար նոյնպէս ԻԲ և ըստ հայոց՝ արեգ ամսոյ ԺԱ, զոր դիւրին է ածել յուղղութիւն»⁵²¹:

Այստեղ էական է ոչ միայն այն, որ Արեգ ամիսն է զուգադրված զարնանային օրահավասարին, այլև տրված են բանալիներ՝ հասկանալու Սարկավագի տոմարի առանձնահատկությունները: Մեջբերենք հեղինակային տեքստերը. «Արդ՝ եթէ **դիցես սկիզբն ժամանակին զարնանայնոյ զիննէրորդ արեգ ամսոյ** և չորրորդ ամեկեացն երբայեցւոց՝ որ է քսան մարտ ամսոյ և ադարայ և դիւստրոսի, և ԻԴ (24) պեմենովթայ: Երկու աւուրքք յառաջ գրանի՝ քան զոր Յովսէպոսն ասացն: Բայց ոչ բանակոթիվ ինչ լինինք յաղագս

⁵¹⁹ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 98-99:

⁵²⁰ Նույն տեղում:

⁵²¹ Ըստ երբայեցւոց հնագիտաց և մարգարէից ոմանց..., տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 266:

ասացելոցդ, քանզի երկրքին յազնուական արանց սահմանեցան: Եւ ըստ այսմ ամենեցունց արեգ ամիս միայն ունի զուգութիւն, և **անուն յայր առնէ զառաջնութիւն ժամանակին ի նմա գոլ** և զաւելումն ի փիւ' լուսնոյ արևն ար ըստ արէ ի սկսմանէ անդի ասացելոյ իմաստնոց իրիդ քննեսցի հաւասարապէս ճշտութիւն: Բայց այնոցիկ մի հետրեւեցուք' որոց կոյր կուրի առաջնորդելով, կարարածն ի խորխորար առնել զվաղձանումն, այլ միայն հետրել ճշմարտութեան աստուածագեաց իմաստնոց արանց և անձանց առաքինեաց»⁵²², կամ. «...Բայց գրանի արեգակն ի ԻԶ (26) պեմենովթայ, զի նա է ԻԲ (22) ադարայ, ո՛չ միայն զի մրանելով մրանէ նա ի հասարակածն առաջին, այլ զի և ունի նա չորս աուրս, որով հաւասարի փիւն գիշերոյ: Եւ սա ինքն է սկիզբն ամսոց և գլուխ ժամանակաց, որ գայ և շրջի ի փեղոց իւրում իննեւրսան ամ»⁵²³:

Փաստորեն, Սարկավագը հստակորեն խոսում է իր ընդունած բնատնտեսական տարեսկզբի մասին: Արեգ ամիսը ոչ միայն գարնանային եղանակի սկիզբն է, այլ և ընդհանրապէս ժամանակի:

Եվ սա համահունչ է Սարկավագի ընդունած թվականության' երրայեցոց համակարգին, քանզի նրանց տարեսկիզբը համապատասխանում է մարտի 22 = Նիսանի 1, որոնց ինքը զուգադրել է Արեգ 14-ը:

ՄՄ 1973^{հմր}, ՄՄ 2001^{հմր}, ՄՄ 1971^{հմր}, ՄՄ 2180^{հմր} և ՄՄ 2762^{հմր} ձեռագրերում հանդիպում ենք **«Յաղագս ըստ հռոմոց ամսոց, և ԴԺ-երորդ լուսնոյ գատկաց, և փոփոխմանց իրաց, և անուանց և յարակայից»** («Զթուականն անուանեցելոյ...» սկսվածքով) վերնագիրը կրող բնագրեր, որոնցից Ա. Արբահամյանը առավել կարևորում է ՄՄ 2001^{հմր} ձեռագիրը, որը ոչ միայն պահպանել է ընթերցանության հին և ընտիր ձևերը, այլև ունի հեղինակի մասնավոր խորհուրդը Սարգսին' գիտությանը հետևելու մասին⁵²⁴:

Բնագրի վերջաբանը հուշում է, որ այս բնագիրն ստեղծվել է ուսումնական նպատակով և պարունակում է նաև վարդապետի խրատն ու զգուշացումը ոչ միայն վարդապետներին, այլև սաներին ուսման հանդեպ անփոյթությունից և առանց Աստծու երկյուղի: Այնտեղ ուղղակիորեն ասվում է. «Արդ' զգոյշ լե՛ր, մանուկ դու ուսումնասեր, քանզի ամենայն ուսումնութիւն, նուազ և անարգ է առանց երկիւղի աստուծոյ»⁵²⁵:

Այս բնագրում Հովհաննեսը Փիլիպպոսի գահակալության 7-րդ (երբեմն 5-րդ կամ 2-րդ) տարուց մինչև Անդրեասի 200-ամյակը հաշվում է 304 տարի, և «լինին մինչև ի յանկումն երկուհարիւրեկին' յերկրորդէն Փիլիպպեայ' ամբ 3Դ (304), յորոյ վերայ ածելով զհայոյն թուականն, գրանի հռովմոցն», որը գալիս է նախորդ շրջանից:

⁵²² Ըստ երրայեցոց հնագիտաց և մարգարէից ոմանց..., տե՛ս Ա. Արբահամյան, նշվ. աշխ., էջ 266:

⁵²³ Հովհաննեսի հայկական ամիսների զուգընթացության մասին աշխատությունը, Ա. Արբահամյան, նշվ. աշխ., էջ 241:

⁵²⁴ Ա. Արբահամյան, նշվ. աշխ., էջ 95:

⁵²⁵ Յաղագս ըստ հռոմոց ամսոց, և ԴԺ-երորդ լուսնոյ գատկաց, և փոփոխմանց իրաց, և անուանց և յարակայից, տե՛ս Ա. Արբահամյան, նշվ. աշխ., էջ 250:

Ա. Աբրահամյանը այս վերջին հատվածը այսպես է թարգմանում. «...որը և գումարում ենք հայկական թվականը գտնելու համար»⁵²⁶: Սակայն Հովհաննեսը միանգամայն պարզ ասում է, որ 304-ին ենք գումարում Հայոց թվականը՝ հռոմեացոցը գտնելու համար:

Հովհաննեսը գրում է, որ 200-ամյակի սկիզբը համընկել է Լուսնի ապրիլ 4-ի լրման տարուն և «առնու վախճան ի մարտիս ամսոյ ի քսան և հինգին»: Իսկ հայերի մոտ «սկիզբն լինի թուականին, որ ըստ հայում ի նոյն երեքտասանէն ապրիլի և յետ ՇԼԲ ամաց կարգեալ վախճանի ի քսան և հինգն մարտի լրմանն ամի»⁵²⁷: Նույն բնագրում Սարկավագը դարձյալ անդրադառնում է հայոց թվականը մեկով ավելանալու և դրանով իսկ ապրիլի 2-ի լրման տարուն համապատասխանելու խնդրին, որը, սակայն, առաջ էր բերում տոմարական հաշվումների սխալներ, ինչի հետևանքով ինքը բացառել է ապրիլի 2-ը, իբրև 19-ամյակի առաջին տարի, և վերադարձել է ապրիլի 4-ի լրման տարուն՝ իբրև առաջինի. «Բայց վասն զի յաւելուած եղև թիվ մի, որպէս ասացաք յառաջագոյն և ցուցանէր յերկուցն ապրիլի զինքեանք զյառածանիլն, թողաք զթիվն վասն ոչ ի ճմարիտ արուեստէ գայոյն ի սիսալ գամենայն կանոնեալսն առաջնոց ածելոյ: Եւ արդ՝ ըստ որում ի սկսմանն իւրում կանոնեցալ՝ հանդիպել ի նոյն դարձուցաք դարձեալ»⁵²⁸:

Թեև, իրապես, ապրիլի 2-ը լրման տարի է եղել, որով առաջնորդվել են հռոմեացիները՝ իբրև 19-ամյակի առաջին տարի, սակայն ալեքսանդրացի իմաստասերները հինգհարյուրամյակը կարգելիս, պահպանելով ամբողջ 19-ամյակը, այն չեն ընդունել իբրև առաջին տարի, այլ՝ ապրիլի 4-ի լրման տարին, «...քանզի հանապազ երկու թուով պակաս գրանին ո՛չ միայն աուրք Լուսնին, այլ և վերադիրք, և նոքին ինքեանք լուսնացոյց կանոնք»⁵²⁹:

Հովհաննեսն ասում է, որ «վասն հռոմոց զերկուս եղին նախագոյնք», որից էլ հաշվել են հնգյակն ու վեցյակը: Բայց Ալեքսանդրիայի իմաստասիրաց հայտնի ժողովը «եղին սկիզբն հինգհարիւրեկին ո՛չ զերկուսն, այլ զչորս ապրիլիոսի ամսոյ...»:

Էսայանների համար 19-ամյակի սկիզբը ապրիլ 4-ից ընդունելն անհրաժեշտություն էր: Այստեղ հաշվի էին առնվել քրիստոնեական գաղափարախոսության սկզբունքային հարցերը՝ արարչության առաջին օրվա՝ մարտի 17-ի և մարդու ստեղծման՝ Նիսան 1 = մարտ 22-ի, ինչպես նաև Ելից և այլ աստվածաշնչային իրողությունների և, ի վերջո, Քրիստոսի Ծննդյան ու Խաչելության հետ կապված ավանդությունները:

⁵²⁶ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 95-96:

⁵²⁷ ՄՄ 2001^{հմբ} ձեռ., թ. 168 բ:

⁵²⁸ Յաղագս ըստ հռոմոց ամսոց, և ԴԺ-երորդ լուսնոյ զատկաց, և փոփոխմանց իրաց, և ամուանց և յարակայից, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 247:

⁵²⁹ Նույն տեղում:

Ա. Աբրահամյանը նշում է ՇԼԲ-ամյա բոլորակի առաջին տարին ապրիլ 13-ին Լուսնի լրումը լինելու փաստը և գրում. «Այս կապակցությամբ Հովհաննեսը քննադատում է մի շարք տոմարագետների, որոնք սխալ հաշիվ են առաջարկում»: Սակայն իրականում Հովհաննեսը ներկայացնում և բացատրում է տվյալ խնդիրն առաջացնող հանգամանքները, նշում դրա պատճառները՝ առանց քննդատելու որևէ մեկին:

Հովհաննեսն այս բնագրում հստակորեն ցույց է տալիս, որ տոմարը քարացած երևույթ չէ և ոչ էլ առասպելաբանություն, այն զարգանում ու փոփոխություններ է կրում, ինչպես, օրինակ, հռոմեական կամ եբրայական տոմարների դեպքում. ոչ միայն փոփոխություններ են կրել ամսանունները կամ նրանց համապատասխան թվահամարները, այլև տարիների բովանդակությունը (դեկտեմբերը, որ նշանակում է 10-րդ, դարձել է 12-րդ ամիս, կիլիկոսի լիդիոսը՝ 5-րդ, փոխարինվել է «Յուլիոս Կեսարի» անունով, իսկ սեքստիոսը՝ 6-րդ, դարձել է ազուստոս, գերմանիկոսը՝ սեպտեմբեր, իսկ պարթիկոսը՝ հոկտեմբեր և այլն)⁵³⁰:

Հովհաննեսն այստեղ արծարծում է նաև հարակալի խնդիրը: Ժամանակի ընթացքում փոփոխություններ են կրել նաև հարակաները (ԽԴ>ԽԶ): Ի դեպ, հարակալի մասին եղած հատվածը միակ ապացույցն է, որ բնագիրը պատկանում է Հովհաննես Սարկավագին: Այստեղ գրված է. «Այլ յաղագս յարակալին, զի ոչ ԽԴ (44), այլ ԽԶ (46) ունիմք, ոչ յանդգնութեամբ ինչ զայս իմանալով, որպէս թե հակառակ իսկ ամանէ կանոնեցելոցն մի լիցի»⁵³¹: Լրման կանոնի մեջ Սարկավագը տվել է հաստատունը 46, իսկ մեկնության մեջ բազմիցս բացատրում է դրա պատճառը:

Ա. Աբրահամյանը սխալաբար նշում է, որ հարական նախկինում եղել է 40 և միայն Հովհաննեսի բարենորոգությունից հետո դարձել է 46, բայց Հովհաննեսի մոտ հաճախակի ենք հանդիպում ոչ թե 40, այլ՝ 44. «Այլ յաղագս յարակալին, զի ոչ ԽԴ (44), այլ ԽԶ (46) ունիմք...»⁵³², որին արդեն անդրադարձել ենք:

«Յաղագս ըստ հռոմոց ամսոց, և ԴԺ-երորդ լուսնոյ զատկաց, և փոփոխմանց իրաց, և անուանց և յարակալից» բնագրում նա ներկայացնում է նաև վերադիրների փոփոխությունը: Ըստ Սարկավագի՝ թեպետ «չորեքտասաներորդն զատկաց»-ն ընդունվեց ճշգրիտ, բայց «երկու արուրք ի քանակութենէ Լուսնին ի բացակային»: Այս 2-ն է, որ Հովհաննեսն ավելացնում է նախկին վերադիրի վրա. «... և երկուցն, զոր յաւելումք ի վերադիրսն յառաջինս»: Հայտնի է, որ Անանիա Շիրակացու և Սարկավագի յուրաքանչյուր տարվա վերադիրների տարբերությունը 2 է: Հավանաբար, «յառաջինս»

⁵³⁰ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 249:

⁵³¹ Նույն տեղում:

⁵³² Նույն տեղում:

ասելով, Հովհաննեսը նկատի է ունեցել հենց Անանիա Շիրակացու վերադիրների համակարգը:

Վերադիրների կրած փոփոխություններն արտացոլված են նաև Սարկավագի կազմած Շ-եակներում:

Եթե մինչ 532-ամյա պարբերաշրջանի ձևավորումը չէր հայտնաբերված Արևի փոքր շրջապտույտն (28-ամյակ) ու համադրված Լուսնի լրման 19-ամյակին, որի պատճառով նախորդներն առաջնորդվել են միայն 19-ամյակով, ապա հայտնաբերումից հետո «*զանաարուեսար և զանիմասար ձեռնարկութիւնս ոմանց խորեմք*»:

Անկասկած է, որ 19-ամյա պարբերաշրջանի մեկնության մաս է կազմել **«Վասն երկուցն և չորիցն ապրիլիոս ամսոյ անմիաբանութիւն»** վերնագիրը կրող բնագիրը:

ՄՄ 2001^{հմբ} ձեռագիրն ունի «Սարկավագի սակս երկուցն ապրիլի և չորիցն անմիաբանութեան» վերնագիրը, ՄՄ 1973^{հմբ}-ում՝ «Յովհաննու քահանայի յաղագս եղանակաց և տօնից և քանիօնութեան ամաց դիպաբանութեամբ ի նոյն տեսութիւն» վերնագիրը, իսկ ՄՄ 1971^{հմբ} -ում՝ «Յաղագս ըստ հռոմայեցւոցն ամսոց...» վերնագիրը: Այս ընդօրինակություններն ունեն միայն գրչական տարբերություններ, և որոշ ընդօրինակությունների մեջ տեքստը կրճատված է⁵³³: Համեմատաբար առավել ամբողջական է ՄՄ 1973^{հմբ} ձեռագիրը, որի վերոհիշյալ տեքստում պահպանվել է Հովհաննեսի ներածական մասը, որտեղից երևում է, որ այն ուղղված է ինչ-որ մեկին⁵³⁴:

Ինչպես պարզ երևում է վերնագրից, խոսքը դարձյալ Շ-եակի՝ 19-ամյակի գատկական լրման առաջին տարին ապրիլի երկուսը, թե ապրիլի չորսը կանոնելու մասին է:

Ինչ վերաբերում է բնագիրը Հովհաննես Սարկավագին պատկանելուն, ինչպես ավանդվել է, հիմնավորվում է բնագրի տվյալներով. «*Եւ զվերադիրսդ լուսնոյ ծանեան հասարեաւ և փոփոխեցին զքառասուն և չորսն ի ԽԶ (46) և զվերադրացդ զինն՝ ի մեյրասան, ըստ որում և հնգեակն՝ հինգ և վեցեակն՝ վեց*»: Այնպես, ինչպես Հովհաննես Սարկավագն է փոփոխություն կատարել հաստատունի մեջ՝ 44-ը դարձնելով 46, իսկ ապրիլ 4-ի լրման տարվա վերադիրը վերածել 11-ի ու դարձրել հնգեակի ու վեցեակի 1-ին տարի՝ Շիրակացու Շ-եակի ապրիլ 2 լրման տարվա փոխարեն: Այստեղ Սարկավա-

⁵³³ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 96:

⁵³⁴ Վստահաբար կարելի է ասել, որ խոսքը նույն մարդու մասին է, ում խնդրանքով ստեղծել է «Մեկնութիւն տումարիս հայկազնեայ»-ի «Վասն Հայկազնեայ տումարիս տունից տարեկանաց շրջաբերութեան» բնագիրը, քանզի նույն հարցին պատասխանում է նույն հիմնավորումով, այն է՝ արաշության առաջին օրը Լուսինը եղել է 11 օրական, ըստ Եփրեմի, ում անունն այստեղ չի նշում. «Մի՛ գտորքս զրպարտեցեն, զայն որ ասաց Աժ. ան աուրքք երեց գոլ ձև ի լուսնոյ ի ստեղծմանն ասէ զայս»: Իսկ քանի որ լուսատուներն ստեղծվեցին 4-րդ օրը, որը համապատասխանում է ապրիլի 4-ին, ապա առաջին գատկական լիալուսինը ևս ապրիլի 4-ին է եղել, և այն պետք է համարվի Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջանի 1-ին տարի:

գը դարձյալ պարզաբանում է ապրիլ 4-ի խնդիրը՝ բերելով բազում փաստեր և դարձյալ նշում հարականների ու վերադիրների վրա 2 ավելացնելու անհրաժեշտությունը. «Եւ որպէս աւել է չորրորդն ապրիլի, քան զերկուս իւր Բ թուով, տոնսպէս և յարակացն և վերադրացն պարտ էր առաւելուլ զոյգ թուով», իսկ ապրիլ 2-ի և ապրիլ 4-ի համար ասում է. «Եւ գիտես զսխալումն առաջնոյն այսպէս: Յորժամ յերկուցն ապրիլի առնես հնգեակ և վեցեակ և ապա լուսին բուսիք ածէ պակաս 2 թուով և յերեսնեկի անդ, որ կոչի քառագին, թէ առաջնովք արասցես զմոյրն վերադրաւք, ածէ սխալ զաւուրսն լուսնոյ երկու թուով և յերեսնեկի անդ, վասն որոյ յաւելեալ զերկու թիւդ ամենայն երկուսն ապրելի»⁵³⁵:

Հատվածը լավագույնս ապացուցում է նաև, որ «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ»-ն ժողովածու է, իսկ այս մասը գրել է մեկնելու համար իր կատարած փոփոխությունները:

«Յաղագս յարակայի, վերադրաց և բոպէից» վերնագիրը կրող բնագիրը օրգանական շարունակությունն է վերևի հատվածի, քանի որ նրա «Յաղագս բոպէից» անվանված մասն ավարտվում է վերոհիշյալ բացարձակություններ խնդրողին ուղղված տողերով. «Ունեի և զբազումս և այլս գրել քեզ վասն դոցունց և այդպիսեացդ իրաց, բայց արգելայ յանպարսպութիւնէ, մանաւանդ՝ զի տալ զպարձառս իմասրնոց բաւական համարեցայ»⁵³⁶: Այս հատվածից պարզվում է նաև, որ բնագիրն ուղղված է տումարի ուսուցման հարցերով շահագրգիռ մեկին: Հովհաննեսը գրում է. «Քանզի այս դիրին է մանկանց առիմանալ»⁵³⁷: Սրանից կարելի է ենթադրել, որ խնդրողը ժամանակի անվանի Սարգիս Ա-ն է, ում հետագայում հղել է այլ նամակ («Առ Սարգիս») ևս:

ՄՄ 1971^{հմր} ձեռագրում առկա են «Յաղագս յարակայի», «Յաղագս վերադրաց» և «Յաղագս բոպէից» անվանված մեկնությունները: Սրա համար հիմք են դարձել «Յաղագս յարակայի» մասում Հովհաննեսի արտահայտած մտքերը. «Բայց վասն պարձառի յարակայիցդ գիտութեան, զոր զառաջագոյն իսկ ասացաք զքանիանութեան ամսոցն վերադրաց...»:

Հռոմեական տումարի օրինակով նա ապացուցում է, որ հարական պետք է լինի 46, և բոլոր ամիս-ամսաթվերով հստակորեն ստանում է միևնույն՝ 46 հաստատունը: Այսպես, «Ապրիլ Դ (4), վերադիրն ԺԱ (11), և մարտ ԼԱ (31), բաղադրյալ թիւքն լինին ԽԶ (46), Մարտ ԻԴ (24), վերադիրն ԻԲ (22), նոյնպէս լինի ԽԶ (46),...»⁵³⁸:

Միաժամանակ ցույց է տալիս, որ ովքեր հարական կանոնել են 44, սխալվել են, քանի որ այդ դեպքում տարբեր տարիների Լուսնի լրումը եղել է գարնանային օրահավասարից առաջ կամ նույն օրը՝ մարտի 15-ին, 18-ին,

⁵³⁵ Վասն երկուցն և չորիցն ապրիլիոս ամսոյ անմիաբանութիւն, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 253:

⁵³⁶ Նույն տեղում, էջ 260:

⁵³⁷ Նույն տեղում, էջ 259:

⁵³⁸ Նույն տեղում, էջ 256-257:

19-ին և 20-ին, ինչը լիովին հակասում էր Նիկիայի առաջին տիեզերածոճողում հիմնավորված քրիստոնեական Ջատկի սկզբունքներին:

«**Յաղագս վերադրաց**» մասում Սարկավագը գրում է վերադիրների համակարգի օրինաչափությունների մասին, որտեղից իմանում ենք, որ վերադիրների միջև եղած ամենամյա տարբերությունը ԺԱ (11) է. «... *զմեդրասան թիսն յաեղումք ի վերադիրն*»: Նա այս մասում էլ օրինակներով ցույց է տալիս, թե ինչպես կարելի է վերադիրների օգնությամբ ստանալ զարկական Լուսնի լրման ամսաթվերը՝ «Ապրիլի չորս, դիր գայդ ի վերայ Մարտի ամսոյ (31 օր), և լինի ԼԵ (35), երթ մեդրասան, մնայ ԻԴ (24), լրումն Լուսնի առաջիկայ ամին»⁵³⁹: 19-ամյակի 19-րդ տարում վերադիրը դառնում է 12, որը ցույց է տալիս հռոմեական տոմարի մարտի 25-ի լրման տարվա օրինակով: Գործնականորեն այս ամենն առկա է իր զատկացուցակներում:

«**Յաղագս ըոպէից**» բնագրում հեղինակը խոսում է Լուսնի հասակը ամբողջովին՝ օրերով, ըոպէներով ու մասերով, մասանց մասերով գտնելու խնդրի մասին: Նա համեմատության մեջ է դնում լուսնային ու արեգակնային ժամերն ու գրում. «*Քանզի այսպէս համեմատելով հնգամսեայ լուսնական ժամքդ, զարեգակնային ժամնն Լ (30) մասամբք ժողովել սովորեցար*»:

«Յաղագս յարակայից, վերադրաց և ըոպէից» բնագրի հեղինակային նշումներից են՝ «Բայց ԽԶ վասն այնորիկ ասենք...», «Ապրիլ Դ (4) վերադիրն ԺԱ (11) և մարտ ԼԱ (31), բաղադրեալ թիւք լինին ԽԶ (46)...», որոնք միայն ապացուցում են, որ քննարկվող բնագիրը Հովհաննես Սարկավագին է: Այլ խոսքով՝ բնագրերի պատկանելության խնդիրը միանգամայն լուծված կարելի է համարել:

Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուի տեսական-մեկնողական հատվածի վերջին միավորը «**Յաղագս յարակայի, վերադրաց և ըոպէից**» բնագիրն է:

Այսպիսով, Հովհաննես Սարկավագը 1094 թվականին ստեղծել է «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուն, որը կազմված է եղել երկու բաժնից՝ տեսական-մեկնողական և գործնական-կիրառական:

Հովհաննես Սարկավագի այս ժողովածուի ստեղծումից, այն է՝ 1094 թվականից հետո միայն կարող էր իրականացվել հայոց տոմարի բարեփոխությունը:

«Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուն ստեղծելուց հետո նա գրել է տոմարական՝ տեսական-մեկնողական բնույթի 3 նամակ՝ «Առ Սարգիս» (1110 թ.), Լուսնի լրման և [Արևի] խավարման մասին (1113 թ.) և «Նորին (Յոհաննու) Յաղագս ամսոց Հայոց եւ Տաւնից եւ յաղագս ԴԺ. աներորդաց լուսնոյ Ջատկի» (1116 թ.)՝ անհայտ մեկին, որոնք հետագա ընդօրինակությունների ժամանակ կարող էին ավելացվել տոմարական ժողովածուին:

⁵³⁹ Յաղագս վերադրաց, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 258:

Գրքում տարբեր առիթներով խոսել ենք այդ նամակներում առկա տարբեր տոմարական իրողությունների մասին, ուստի դրանց առանձին չենք անդրադառնում:

Գ. ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կիրառական աստվածաբանության որոշակի խնդիրները, ինչպես քրիստոնեական տոների կատարման ժամանակի հարցերը, անվերապահորեն առնչվում են տոմարին, այդ իսկ պատճառով առանձնակի ուշադրության են արժանի «Մեկնութիւն տոմարիս Հայկազնեայ» ժողովածուի համապատասխան միավորները, որոնք հանգամանորեն կներկայացվեն հետագա շարադրանքում:

Հովհաննես Սարկավազը «Մեկնութիւն տոմարիս Հայկազնեայ» ժողովածուի գործնական-կիրառական մասն սկսել է իր խմբագրած ու ստեղծած «Պատճէններով»:

Միջնադարյան տոմարական գրականության մեջ առկա են մեծաքանակ «Պատճէն տոմարի»⁵⁴⁰ վերնագրված բնագրեր, որոնք ոչ միայն արդեն իսկ իրենց ժամանակի տոմարական տարբեր իրողությունների, անշարժ ու շարժական տոների, տարվա եղանակների, աստղագիտական երևույթների և այլնի ստույգ հաշվումներն են, այլև այն կանոնների սահմանումը, որոնցով հնարավոր է ստանալ վերոնշյալ այս կամ այն տոմարական իրողության ժամանակը՝ թե՛ շարժական և թե՛ անշարժ տոմարներով:

ՊԱՏՃԷՆը բազմիմաստ բառ է՝ 1. պաշտոնական որևէ թղթի՝ գրութեան ընդօրինակություն: 2. Գրուածք, գրութիւն: 3. Գրուածքի հատված, գլուխ⁵⁴¹: Կամ, ինչպես Ա. Աբրահամյանն է հասկացել, մեկնություն, բացատրություն⁵⁴²:

Բնագրերի անվանումը՝ «Պատճէն տոմարի», թույլ է տալիս մտածել, որ սրանք առաջին հերթին տոմարական բնագրերի ընդօրինակություններ են՝ ըստ «ՊԱՏՃԷՆ» բառի առաջին իմաստի, որովհետև նախապես հեղինակային վերագրումներ չեն ունեցել: Սակայն ասենք, որ դրանք սոսկ ընդօրինակություններ չեն, այլ՝ նաև հեղինակային բնագրեր, քանի որ իրենց ժամանակի Հայոց տոմարին համապատասխանեցվելու համար տարբեր հեղինակների կողմից խմբագրվել են: Հայոց տոմարական հարցերի մեկնության ու բացատրության համար ստեղծված, Սարկավազի, «Մեկնութիւն տոմարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուի բաղկացուցիչներից են «Պատճէն տոմարի»-ները:

Ռ. Վարդանյանը նախ «Հայոց Տոնացույցը (4-18-րդ դարեր)», ապա ««Պատճէն տոմարի Հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը. 6-

⁵⁴⁰ Ա. Աբրահամյանը նշում է իրեն ծանոթ 40 բնագիր, որոնցից ոչ մեկը մյուսին նման չէ (Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 219), հետագայում դրանց թիվը նշվում է ութ տասնյակ (Պատճէն տոմարի (է-ԺԵ դդ.), աշխ.՝ Զ. Էյնաթեանի և Գ. Տէր-Վարդանեանի, էջ 109):

⁵⁴¹ Ռ. Վազարեան, Գրաբարի բառարան, հ. Բ, եր., 2000, էջ 395:

⁵⁴² Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 88:

18-րդ դդ.» աշխատություններում հիմնավորել է, որ «Պատձեն տոմարի հայոց»- ի սկզբնավորողը եղել է Աթանաս Տարոնացին, ով այն կազմել է 581 թվականին Մովսես կաթողիկոսի հանձնարարությամբ⁵⁴³: Ռ. Վարդանյանը Ամառնամուտի կանոններից մեկի («*Կա՛լ ԺԴ* և զնահանջն տո՛ւր Հրոտից ամսոյ») վերլուծությամբ⁵⁴⁴ հիմնավորում է, որ Աթանաս Տարոնացին Պատձենի հաշվումներն սկսել է հայոց Շ-եակի առաջին քառամյակից:

Հետագա դարերում «Պատձեն տոմարի»-ն ենթարկվել է բազմաթիվ խմբագրությունների, ինչի հետևանքով միևնույն իրողության համար ստացվել են տարբեր ամիս-ամսաթվեր, հաստատուններ, կանոնների ձևակերպումներ, հարակաների համակարգեր, որոնք առաջին հայացքից ասես շփոթություն են ստեղծում, սակայն թույլ են տալիս հստակորեն որոշել ոչ միայն այդ կանոնների գործելու, այլև խմբագրությունների ժամանակն ու խմբագրողներին⁵⁴⁵:

Հայոց «Պատձեն տոմարի»-ն առաջինը խմբագրեց Անանիա Շիրակացին⁵⁴⁶ և ստեղծեց 8 ազգերի անշարժ տոմարների «Պատձենները» և զետեղեց «Քննիկոն» կամ «Շ-եակ կարգ» անունը կրող իր տոմարական ժողովածուի մեջ:

«Պատձենի» հաջորդ խմբագիրներից մեկը Հովհաննես Կոզեռնն է⁵⁴⁷, իսկ Հովհաննես Սարկավազը ներկայացրել է հրապարակի վրա եղած «Պատձենները»՝ նոր խմբագրությամբ: Վերջապես, նախորդ և Հովհաննես Սարկավազի «Պատձեններն» օգտագործելով՝ նոր խմբագրություն են իրականացրել Ստեփանոս Մեծրկա որդին 1126 թվականին⁵⁴⁸ և Սամուել Անեցին 1165 թվականին, որոնց խմբագրությունները պահպանվել են ՄՄ 1999^{հմբ} գրչագրում⁵⁴⁹: Այլ խոսքով՝ «Պատձենների» խմբագրությունները կապված են մի շարք տոմարագետների (նաև անանուն) անունների հետ, և յուրաքանչյուր տոմարագետ իր նպաստն է բերել «Պատձենի» մեջ: Հետևապես, մեր աշխատության մեջ կտրվեն հատկապես Հովհաննես Սարկավազի խմբագրությունները «Պատձեններում»:

«Պատձեն տոմարի»-ն և դրա մեկնությունը կազմել են մեկ ամբողջություն, որը հիմնավորվում է հեղինակի տեղեկություններով, որոնք առկա են «Առ Սարգիս» նամակում, որտեղ հեղինակը գրում է. «*Եւ ըստ այսմ (խոսքը*

⁵⁴³ Ռ. Վարդանյան, «Պատձեն տոմարի Հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը. 6-18-րդ դդ., Եր., 2007, էջ 8:

⁵⁴⁴ Տե՛ս Ռ. Վարդանյան, Գ. Կարախանյան, Անանիա Շիրակացին և նրա «Քննիկոնը», Աձենյան մատենաշար, հ. Ա, Եր., 2002, էջ 113-115:

⁵⁴⁵ Ռ. Վարդանյան, «Պատձեն տոմարի Հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը. 6-18-րդ դդ.:

⁵⁴⁶ Նույն տեղում, էջ 192:

⁵⁴⁷ Ռ. Վարդանյան, Հայոց Տոնացույցը (4 -18-րդ դարեր), էջ 193-194:

⁵⁴⁸ Ռ. Վարդանյան, «Պատձեն տոմարի Հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը. 6-18-րդ դդ., էջ 195:

⁵⁴⁹ Նույն տեղում, էջ 195-196:

Կյուրեղ Երուսաղեմցու՝ Կոստանդին թագավորին ուղղված թղթի մեջ եղած հույան անշարժ և հայոց շարժական փոմարների գուգահեռների՝ մայիսի 7 = Ահեկանի 30, մասին է) հանդիպի հասարակաորութիւն գարնանային յերկր-
փասան արեգ ամսոյ, ըստ որում և մեք զկանոն կարգեցաք և զբովանդակ
պախրձէն փոմարին»⁵⁵⁰:

Հովհաննես Սարկավագը Հայոց անշարժ տոմարի նախագծի այս հատ-
վածում է դրել **Արեգի 12 = մարտի 20 կանոնը** և Նաւասարդի 1 = օգոստոսի
11 համարժեքով սկսված տարին (428/431 թթ. քառամյակ), տվել է «Ազգաց
ազնուականոնների» «Ամիսք հայոց» կամ «Ամիսք հայոց Սարկավագի» սյու-
նակում, իսկ կանոնի քննությունն իրականացրել է մեկնության տարբեր
հատվածներում: Ասենք նաև, որ «Յաղագս ամսոց հայոց ...» վերնագիրը
կրող նամակում (գրված 1116 թ.) է հիմնավորվում կանոնը և հիշատակում
«Ազգաց կանոնս», այն է. «Գրցես և ի գուգաորութեան ազգաց կանոնս (հե-
փագայի «Խառնախորան» անվանվող աղյուսակները) կարգեալ յառաջնոց
հարց հաւասար ասացելոցդ: Բայց հաւանեալ ընտրեցաք կանովնել ըստ երա-
նելոյն Կիրդի, յառ թագաւորն Կոստանդինիանոս թղթի վասն իսաչին՝ պատուա-
կանի, յորում ասէ՝ երևել կթն մայիս ամսոյ, այսինքն ի գլուխ ահեկանոյ: Քան-
զի ըստ այսմ ի վերջ փեսանելոյ, գրանենք յերկրփասաներորդում աւուր ամ-
սոյն արեգ, զհասարակարեայն յեղանակ, որ ըստ գարնանայնոյ»⁵⁵¹, իսկ մեկ-
նության «Յաղագս Ե-եկին» ենթավերնագրի տակ կարդում ենք. «Ասեն
ոմանք և զայս եթե սկիզբն արարչութեան վեցերորդ արեգ ամսոյ էր, մերձա-
ւորաքս յայն հայելով. և ասեն այնոքիկ, որք զաւուրս նահանջիցն արեգա-
կան՝ ի յաւուրս փարոյ ո՛չ արկանեն, որպէս բազումք ազգ: Իսկ զիններորդ
(Ահեկան-Գ. Ս.) նորին ամսոյ, որոց ո՛չ է սիրելի, զնոյն կարծել և ասել: Որոց և
ես ընդ դիպարանութեան հաղորդեցայ և կանոնեցի զամենայն անտի սկսեալ:
Թէպէր իրն, և բան անուանք յայնմ ժամանակի ո՛չ այսպէս և ըստ այսմ
ունէին: Բայց քանզի հանդիպի այժմուս և ի ճշմարտութեան մասինն՝ խորելոյ
արժանի ո՛չ եղաք, այլ ուղևորեալք ի կարարածէ ի սկիզբն կոյս: Արդ՝ արհա-
մարհեցաք այսպէս կանոնեալ և կարծեմ ո՛չ աղարարելի և անարժան գոլ յաչս
իմաստնոց»⁵⁵²:

Քանի որ Սարկավագը կանոնել է Արեգ 12 = մարտ 20-ը, ապա արար-
չության 1-ին օրն էլ կհամապատասխանի Արեգ 9 = մարտ 17-ին:

«Նորին Յովհաննես» ենթավերնագրի տակ՝ տոմարի մեկնության՝
«Ասացաք յառաջագոյն...» սկսվածքով բնագրի հատվածում, կարդում ենք.
«Իսկ որպէս այժմ կանոնեալն ունի յամենայն եկեղեցիս հաւատացելոց երից
ազգաց՝ ի **քասնն** յառաջագոյն ասացելոցդ ամսոց դիւարոսի և աղարա(յ) և
մարտի ամսոյ, որ լինի **ԻԳ (24)**. պեմենովթայ ըստ եգիպտացոց, և աւել

⁵⁵⁰ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 261-262:

⁵⁵¹ Նույն տեղում, էջ 281:

⁵⁵² Նույն տեղում, էջ 238-239:

աուրցն երբայեցոցն ի **չորսն**, ուր և **գերկուրասան** ութերորդի ամսոյն (= Արեգ 12) ըստ հայում կանոնեցաք պատահել, ո՛չ առանց վկայութեան առաջնոց և հնոց արանց իմաստնոց, որպէս վերագոյնն ասացաւ»⁵⁵³:

Հեղինակը «Ազգաց կանոններ» ենթավերնագրի տակ բերել է հիշյալ գուգահեռները, իսկ մեկնության մեջ բացատրում է իր կանոնած սկզբունքը և հիմնավորում մատենագրական վկայություններով: Նույն բնագրի մեկ այլ հատվածում գրված է. «Բայց մեք ի սկիզբն բանիս և ի դիրատորութիւն անդր դարձցուք, քանզի կամէր բանս ցուցանել՝ եթէ յարեգ ամսեան հարքն մեր ասեն լինել զհաւասարութիւն փուրնջեան և գիշերոյ»⁵⁵⁴:

Այստեղ պետք է հասկանալ՝ Արեգ 12 = մարտ 20 = 428/431 թթ. քառամյակը, իսկ 120 տարվա սահմանում Արեգ 1-30-ին հավասար մարտի 20-ը համապատասխանել է գարնանային օրահավասարին 4-րդ դարի վերջից 6-րդ դարի սկզբի սահմաններում:

Բնագրի մեկ այլ հատվածում կարդում ենք. «Բայց բաւական են ասացեալդ, ցուցանել թէ՛ յարեգ ամսոյ հաւասարի տիւն գիշերոյ և գարուն ժամանակի ստուգապէս»⁵⁵⁵: Ինչ վերաբերում է Սարգսին գրած նամակում վկայված «գԲովանդակ Պատձէն տոմարի»-ն, ապա այն ոչ միայն Հայոց շարժական և անշարժ տոմարների մասին է, այլև մյուս ազգերի տոմարների «Պատձէնների», որոնք պետք է ապահովէին Շ-եակի 2-րդ շրջապտույտի տոմարական իրողությունները նախ կանոնների ձևակերպմամբ, ապա՝ դրանց բացատրություններով:

Սարկավագի ստեղծած՝ Հայոց շարժական և անշարժ տոմարի «Պատձէնը» հետագայում անվանվել է հեղինակի անունով՝ «Պատձէն տոմարի Հայոց Սարկաւագին»:

Հովհաննես Սարկավագի խմբագրած «Պատձէնների» մասին պահպանվել է հեղինակային հիշատակություն: Նամակներից մեկում նա գրում է. «Եւ ըստ այսմ հանդիպի հասարակավորութիւն գարնանային յերկուրասան արեգ ամսոյ, ըստ որում և մեք կանոնագրեցաք և զբովնդակ Պատձէն փոմարին»⁵⁵⁶: Նշանակում է, որ նա կազմել է «բովնդակ», այն է՝ թվով 15 ազգերի իրեն հասանելի տոմարների «Պատձէնները», եթե ոչ առանձին-առանձին, ապա համապատասխան խմբերով:

Նրա «Պատձէնները»՝ «բովնդակ», հայտնի են ՄՄ 1999^{հմր}, 1973^{հմր} և բազմաթիվ այլ գրչագրերով. դրանց մասամբ անդրադարձել ենք մեր հոդվածներից մեկում⁵⁵⁷:

⁵⁵³ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 240:

⁵⁵⁴ Նույն տեղում, էջ 242:

⁵⁵⁵ Նույն տեղում, էջ 244:

⁵⁵⁶ Նույն տեղում, էջ 262:

⁵⁵⁷ Գ. Սիմոնյան, Ռ. Վարդանյան, Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տոմարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուն, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք Ա, էջ 71-74:

Ա. Աբրահամյանի և Զ. Էյնաթյանի հրատարակած բնագրերը՝ հիմնված ՄՄ 1973^{հմր} և 1999^{հմր} տոմարական ժողովածուների վրա, քանի որ մոտ են Հովհաննես Սարկավազի նախնական բնագրին, ապա դրանց միջոցով հնարավոր է վերականգնել նրա «Պատձէն տոմարի» նախնական բնագիրը՝ հիմնական գծերով: Սակայն, առաջին հերթին, այդ բնագրերի տվյալներով պետք է ցույց տալ Սարկավազին պատկանող կանոնները: Այդ մենք նախկինում իրականացրել ենք հիմնականում ՄՄ 1999^{հմր} ձեռագրի «Սկիզբն տունարի հայոց...» և «Պատձէն Տունարի Հայոց մեծաց» վերնագրով սկսվող երկու բնագրերի հիման վրա, որովհետև նրանցից մեկը ժամանակակից է, իսկ մյուսն ավելի մոտ է Սարկավազի ժամանակին: Այնուհետև լրացրել ենք 1342 թ. ընդօրինակված ՄՄ 1973^{հմր} ժողովածուի «Պատձէն տունարի ըստ հայերէն թուոյ» վերնագիրը կրող բնագրի տվյալներով⁵⁵⁸, որոնք էլ առավել ուշադրության են արժանացել մեր այս աշխատանքում:

Ա. Աբրահամյանը⁵⁵⁹ հրատարակել է ՄՄ 1973^{հմր} գրչագիրը, քանի որ համարում է ամենահարազատը նախնական բնագրին: Այն մեզ է հասել Հովհաննես և Գրիգորի քահանաների՝ Երզնկայում կատարած ընդօրինակությամբ: Ինչպես նկատել է Զ. Էյնաթյանը, հրատարակված է «պակասավոր մի տարբերակ»⁵⁶⁰: Ասենք՝ թեև այն պակասավոր է, սակայն, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, այն Հովհաննես Սարկավազի խմբագրածի ընդօրինակությունն է:

Փորձենք «Պատձէնների» բնագրային տվյալներով հիմնավորել ոչ միայն հեղինակային պատկանելությունը, այլև դրանց հաջորդականությունը: Կարծում ենք, որ դրանց հերթականությունը կարելի է վերականգնել՝ առաջնորդվելով այն հաջորդականությամբ, որով իր «Ազգաց ազնուականոններն» է դրել Հովհաննես Սարկավազը, այսինքն՝ Հոռոմոց և իւրոց, Երրայեցոց և իւրոց, Եգիպտացոց և իւրոց, Հայոց, Պարսից, թեև հեղինակը, հետևելով Անանիա Շիրակացուն, նշում է նաև, որ բոլոր տոմարների հիմքը եբրայականն է:

ՀՈՌՄԵԱՅԻՆԵՐԻ ՏՈՄԱՐԻ ՊԱՏՁԵՆԸ

Հռոմեականը կամ հույանն այն առանցքային տոմարն էր, որի հետ հարաբերակցությամբ են արտացոլված ժամանակի հայտնի տոմարները: Բնականաբար, դրանք դեռևս շատ վաղ ժամանակներից ոչ միայն պետք է պատձենվեին մեզանում, այլև խմբագրվեին: Սակայն հենց սկզբից էլ ասենք, որ ոչ միայն հույան, այլև մյուս ազգերի տոմարների «Պատձէնները» օգտա-

⁵⁵⁸ Գ. Սիմոնյան, Ռ. Վարդանյան, Հովհաննես Սարկավազի «Մեկնություն տունարիս Հայկազնեայ» տունարական ժողովածուն, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք Ա, էջ 71-74:

⁵⁵⁹ Հովհաննեսի «Պատձէն տունարի» աշխատությունը, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 204-219:

⁵⁶⁰ Պատձէն տունարի (Է-ԺԵ դդ.), աշխ.՝ Զ. Էյնաթեանի և Գ. Տէր-Վարդանեանի, էջ 7:

գործվել են միմիայն Հայոց տոմարի ամիս-ամսաթվերի ձգարտությունն ապահովելու նպատակով:

ՄՄ 1973^{հմր} գրչագրից հրատարակված ձեռագրում այս հռոմայեցուց տոմարական «Պատձէնն» սկսում է աղյուսակով⁵⁶¹, որտեղ կան հռոմեացուց տոմարի ամիսներն ու նրանց օրերի քանակը, կրկնակները, մեծ, միջին և փոքր հարակաները և կիսակները: Աղյուսակին հաջորդում են կրկնակների, հարականների՝ մեծ, միջին, փոքր, ու կիսակի գործնական սահմանումները: Կիսակների ու կրկնակների հաշվարկը կատարվում է նույն սկզբունքով, ինչ Հայոց տոմարինը:

Հարականների ներկայացված երեք համակարգով էլ տրված են հայոց ամիս-ամսաթիվը գտնելու կանոնները:

«Պատձէն տոմարի Հռոմայեցուց» վերնագրի տակ ամփոփված կանոններից շատերը գալիս են Շիրակացու «Պատձէններից», իսկ որոշ կանոններ Հովհաննես Սարկավագի խմբագրության արդյունք են:

Սարկավագի խմբագրման հետքն առավել ակնառու է պահպանված ՄՄ 1973^{հմր} գրչագրում. «Թուական հռոմնի այսպէս արա. Կա՛լ յևթն⁵⁶² ամէն Փիլիպոսի կայսեր մինչև յերեսուն և չորս ամն Յուսրիանոսի կայսեր և ի ԻԴ (24) ն Խաւարովու պարսից արքայի, որ լինին ամք ՅԴ (304), զհայ թուականն վերայ բեր և երթ զշրջան ՇԼԳ (533), որ մնայ՝ թուական է հռոմնի»⁵⁶³:

Հարկ է նշել, որ «յևթն ամէն Փիլիպոսի կայսեր մինչև յերեսուն և չորս ամն Յուսրիանոսի կայսեր» հատվածը Ստեփանոս Մեծրկա որդու խմբագրությունն է, որպեսզի ստանա 304 հաստատունը՝ «Կայսերք Հռոմնոց»-ի հաշվումներով, իսկ «ի ԻԴ (24) ն Խաւարովու պարսից արքայի»-նր՝ հետագա հավելում:

Իսկ ՄՄ 1999^{հմր} գրչագրում կանոնն այսպէս է ձևակերպված. «Թուական Հռոմնոց այսպէս արա. կա՛լ զՀայ Մեծ թուականն, ՅԴ (304) ի վերայ բե՛ր, Մեծ թուական է Հռոմայեցուց: ՇԼԲ (532) ի բա՛ց գնա, Փոքր թուական է Հռոմնի, որ կոչի Քննիկոն»⁵⁶⁴:

Սարկավագը հավելել է «ՇԼԲ (532) ի բա՛ց գնա, Փոքր թուական է Հռոմնի, որ կոչի Քննիկոն» հատվածը, 304 հաստատունի բացատրությունը տրված է ժողովածուի մեկնության հատվածում⁵⁶⁵, որը պահպանվել է նախորդ շրջանից, իսկ Սարկավագը հավելել է, որ հռոմեական և Հայոց փոքր թվականների տարբերությունը ևս 304 տարի է:

Թվականի կանոնների առաջին մասը Անանիա Շիրակացունն է, իսկ երկրորդ մասը՝ Սարկավագի ստեղծածը: Ասենք, որ հռոմեական Մեծ թվականը Հռոմի հիմնադրման 1000-ամյակի հիմքի վրա առաջացած թվական է,

⁵⁶¹ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 209:

⁵⁶² Հովհաննեսի ժամանակագրության մեջ առկա է «Փիլիպոսի 2-րդ տարուց»: Տե՛ս Հովհաննես Իմաստասերի ժամանակագրությունը, Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 132:

⁵⁶³ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 210:

⁵⁶⁴ Հին Հայկական Տոմարը, աշխ., Զ. Էյնաթյանի, էջ 146:

⁵⁶⁵ Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 226:

որն սկսել էր մ. թ. 249 թվից և փաստված է Սարկավագի ժամանակագրության մեջ, որպես Փիլիպպոսի 7-րդ (2-րդ կամ 5-րդ) տարի, իսկ Փոքր թվականը՝ 532 տարուց հետո, այսինքն՝ Շ-եակի 2-րդ շրջապտույտի թվականն է, որն սկսել է 781 թվից: Հռոմեացոց և Հայոց փոքր թվականների տարբերությունը 304 տարի է (1085 – 781), ինչը երևում է նաև Սարկավագի գրած Արևի խավարման համաժամանակյա թվերից (333–29):

Հաջորդ կանոնը հռոմեացոց թվականով հայոց թվականն ստանալուն է վերաբերում, որը պահպանվել է նախորդ շրջանից:

«Կալ հոռոմի թուականն, ՄԻԹ (228) ի վերայ՝ բեր, թուական է հայոց: Կալ զհայ թուականն ՄԻԹ (228) ի բաց երթ, թուական է հոռոմի»⁵⁶⁶:

228 հաստատունի ստացումը բացատրված է ժողովածուի մեկնության հատվածում, այն է՝ հայոց թվականից մինչև հռոմեացոց թվականը 12 խորան (19-ամյակ) է՝ $12 \times 19 = 228$ ⁵⁶⁷:

Հարկ է նշել, որ վերադրի, յոթներյակի (ի տարբերություն Հայոց մեծ թվականի յոթներյակի՝ առաջնորդվում է բեսիքիստոնով՝ 28 ամյակով), Ավագ լրման կանոններում երևում է Սարկավագի խմբագրությունը (հաստատունը ԽԶ (46)), իսկ հնգյակի և վեցյակի կանոններն ամբողջապես Սարկավագին են, քանի որ ապրիլի 4-ի լրման տարուց է սկսել հնգյակը և վեցյակը, այսինքն՝ վերադիրը 11 (ԺԱ)⁵⁶⁸, իսկ Անանիա Շիրակացու հնգյակի և վեցյակի 1-ին տարին ապրիլ 2-ի լրման տարին է, որտեղ վերադիրը, բնականաբար, կլինի 11⁵⁶⁹:

«Բուպէիւ լուսին յորժամ ամնես...»⁵⁷⁰ կանոնը ևս Սարկավագին է, քանի որ նախորդ շրջանում այս կանոնը չի եղել. Անանիա Շիրակացին հաշվել է մասերով:

Ի դեպ, Սարկավագի նախնական բնագրում «Հռոմայեցոց» «Պատձէնից» հետո պետք է եղած լինեն այդ խմբի մեջ մտած «Յունաց և Ասորոց» պատձենները՝ թերևս համառոտված տարբերակով: Այդ համոզումը հիմնավորվում է «Ազգաց ազնուականոնների»՝ «Հռոմայեցոց եւ իւրոց» նշումով և նրանց ամիսների զուգահեռներով, ինչպես նաև հետագա շարադրանքում մեկ աղյուսակի⁵⁷¹ մեջ բերված՝ «Յունաց և Ասորոց» ամիսներով ու նրանց կրկնակներով:

Տարվա եղանակների՝ զարնանային, ամառնային, աշնանային, ձմեռային, նրանցում եղած օրերի քանակների, դրանց համապատասխան կենդանակերպների հատվածում Սարկավագի ավելացումը ամիսների ու կենդանակերպների համապատասխանեցումն է:

⁵⁶⁶ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 110:

⁵⁶⁷ Նույն տեղում, էջ 226:

⁵⁶⁸ Նույն տեղում, էջ 210, 211:

⁵⁶⁹ Լ. Սարգսյան, Հայոց տոնացույցի ծագումն ու զարգացումը (4–8-րդ դդ.), էջ 206:

⁵⁷⁰ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 211:

⁵⁷¹ Հին Հայկական Տոմարը՝ աշխ.՝ Զ. Էյնաթեանի, էջ 168:

Եկեղեցական տոների՝ «Բարեկենդան, Պապանձումն Զաքարիայի, Յդութին Եղիսաբեթի, Աւետիսն, Ծնունդն, Մկրտությունն» և այլնի⁵⁷² ամսաթվային սահմանումները՝ հուլյան և երրայական տոմարներով, գալիս են նախորդ շրջանի՝ Անանիա Շիրակացու «Պատձէնից», քանի որ այս ամսաթվերի մեկնությանը մենք հանդիպում ենք վերջինիս՝ եկեղեցական տոներին նվիրված «Ի Յայտնութեան տեառն» ճառում⁵⁷³:

«Հոռոնոց պատձէնը» ՄՄ 1973^{հմբ} գրչագրում ավարտվում է հուլյան տոմարի հենքով եգիպտական ու երրական տոմարների լրման օրը գտնելու կանոնով՝ տարբեր հաստատունների օգնությամբ:

Ինչպես արդեն նշել ենք և կտեսնենք հետագա շարադրանքում, Հովհաննես Սարկավազն առանձնակի կարևորություն է տալիս երրայեցոց տոմարին և բոլոր «Պատձէնների» հիմքը համարում է երրայեցոց «Պատձէնը»:

ՄՄ 1999^{հմբ} գրչագրի՝ «**Պատձէն տոմարի երրայեցոց**» վերնագիրն ունեցող բնագրում ևս Հովհաննես Սարկավազն ունի խմբագրումներ, հատկապես «թվականի, եթներեակի, վերադրի և լրումն Զատկի» կանոններում, իսկ «Զուգաւորութիւն նոր հայոց եւ երրայեցոց» կանոնն ամբողջությամբ հեղինակային է: Հարկ է նշել, որ երրայական «Պատձէնի» հետ միասին պետք է լինեին նրա խմբի մեջ մտնող «Արաբացոց և Մակեդոնացոց» «Պատձէնների» համառոտած տարբերակները, քանի որ «Ազգաց ազնուականոնների» մեջ առկա է «Երրայեցոց և իւրոց» սյունակը և զուգահեռ ամիս-ամսաթվերը:

ՄՄ 1973^{հմբ} գրչագրում «**Պատձէն տոմարի երրայեցոց**»-ը վերաբերում է երեք ազգերի՝ երրայեցիներին, արաբացիներին ու մակեդոնացիներին, քանի որ նրանք, ըստ «Ազգաց ազնուականոնների», մի խմբի են պատկանում, այդ իսկ պատճառով աղյուսակը, որով այն սկսում է, ունի առանձնահատուկ ձև: Այնտեղ կա վեց խորան, որտեղ տրված են այս երեք ազգերի ամիսները, որոնցից երրայականի հետ դրված են նրանց կրկնակների համակարգը, արաբացիների հետ՝ հարականների համակարգը, իսկ մակեդոնացիների հետ՝ կիսակների համակարգը: Աղյուսակից հետո տրված է պարզ բացատրություն. «Ամենայն ինչ մի է Գ ազգացս՝ կրկնակք, և կիսակք, և յարակայք»⁵⁷⁴:

Այնուհետև ամիս-ամսաթվերով հիմնավորված է երրայական խմբի հարականների համակարգը. «*Ի մարտի ամսոյ ԻԲ (22)ն նիսան ամսոյ մուր է, ուարի լինի մինչև ցելսն մարտոյ Ժ (10)*»⁵⁷⁵: Աղյուսակում Նիսան ամսի հարական Ժ (10) է:

⁵⁷² Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 212:

⁵⁷³ Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1979, էջ 148-160:

⁵⁷⁴ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 213:

⁵⁷⁵ Նույն տեղում:

ՄՄ 1973^{հմբ} գրչագրի այս «Պատձէնում» սահմանված են օլիմպիադները (ղոմբիադ՝ քառամասնութին ժամանակագրութեան), ինդիկտիոնը⁵⁷⁶ (երկաթթուղղել՝ թ>կլի շաբաթացեալ ժամանակաց կամ հինգետասան ամբ) ու հորելյանը (յիսուն ամբ կամ ազատութին):

ՄՄ 1973^{հմբ} գրչագրի երրայական «Պատձէնի» մեջ Հովհաննես Սարկավագինն է հետևյալ կանոնը. «Թուական երրայեցոց այսպէ՛ս արա. Կա՛լ ԲՊԻԴ (5824), զհայ թուականն ի վերայ՝ բեր, և ե՛րթ զշրջանսն ՇԼԳ (533), ՇԼԳ (533), որ մնայ՝ թուական է երրայեցոց»⁵⁷⁷: Այն հիմնավորվում է մեկնության մեջ արձանագրված ՌՊԻԴ (5824)–ով (արարչությունից մինչև Հայոց թվականը), որին հետևել է Հովհաննես Սարկավագը: Սակայն այս «Պատձէնում» առկա է նաև երրայեցիների մեկ այլ թվական. «Կալ ՅՄՂԹ (6299)⁵⁷⁸ և զհայն, երրայեցոց է, որով նոքա վարին»⁵⁷⁹:

Այս երկու երրայական թվականներն ունեն մեկ ընդհանրություն, այն է՝ երկուսն էլ ստեղծված են միևնույն տասնիննամյակի հենքի վրա, այսինքն՝ համապատասխանում են ապրիլի 13–ով սկսվող 19–ամյակին, որի 10–րդ տարին ապրիլի 4–ի լրման տարին է (5824 : 19 = 10 մն. և 6299 : 19 = 10 մն.):

Հոմեականի հենքի վրա սահմանված են երրայական յոթներեակը, վերադիրները, տարվա անշաբթ կետերը, տոները:

ՄՄ 1973^{հմբ} ձեռագրում երրայական տոմարին վերաբերող կանոններն այլևս սահմանազատված չեն նյուս տոմարների կանոններից:

Այնուհետև «Պատձէն տոմարի»–ում ներկայացված են բոլոր ազգերի տարեմուտները՝ հուլյան տոմարով. «Ի մարտի ԻԲ (22) փարէմուր է երրայեցոց, արաբացոց, մակեդոնացոց»⁵⁸⁰:

«Յազոսպոսի ԻԹ (29) փարէմուր է է (7) ազգաց՝ եգիպտացոց, եթովպացոլ, աթենացոց, բիթանացոց, կասդակացոց, վրաց, աղուանից»⁵⁸¹: Յոթ ազգերի տարեմուտների կանոնը միանգամայն հեղինակային է, քանի որ, ինչպես գիտենք, Սարկավագն է այս խմբում ավելացումներ կատարել:

Հոկտեմբերի 1–ին դրված է ասորոց տարեմուտը, իսկ նոյեմբերի 1–ին՝ հունացը, որոնք բոլորն էլ համապատասխանում են Սարկավագի «Ազգաց ազնուականոնների» տվյալներին:

Տարեմուտների հատվածը պետք է տեղադրել հոմեացիների «Պատձէնում», քանի որ բոլորը տրված են հոմեական ամիս–ամսաթվերով:

⁵⁷⁶ Ինդիկտիոնի մասին, որը 15–ամյա պարբերաշրջան է, տեղեկություն կա Հուստինիանոսի նովելաներում (հրամանագիր): Հրամայելով կանանց ժառանգական իրավունքը հավասարեցնել տղամարդկանց իրավունքին՝ նա գրում է. «Մեր սույն օրենքը ուժի մեջ է մտնում 14–րդ ինդիկտիոնից»: 14–րդ ինդիկտիոնը սկսել է 535 թվականի սեպտեմբերի սկզբից, հետևապես՝ ինդիկտիոններով հաշվարկն սկսել է մ. թ. 340 թվից: (Վ. Իսկանյան, Հայ–բյուզանդական հարաբերությունները IV–VII դդ., Եր., 1991, էջ 187–188.):

⁵⁷⁷ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 214:

⁵⁷⁸ ՄՄ 1999^{հմբ} գրչագրում հրատարակված է ՅՄՁԹ (6289), (Պատձէն տոմարի (է–ԺԵ դդ.), էջ 259):

⁵⁷⁹ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 215:

⁵⁸⁰ Նույն տեղում, էջ 215:

⁵⁸¹ Նույն տեղում:

Գրչագրում այնուհետև բերված են ինչպես տարբեր ազգերի, այնպես էլ Անդրեասի, Եվսեբիոսի ու Կիկլոնի թվականները՝ արտահայտված հայոց թվականով, որտեղ սպորդել են սխալներ: Այսպես, «Կա՛լ Յ (300), ուղղել՛ ՅԴ (304) և զհայդ՝ հոռոմի է», «Կա՛լ ՐԶԺԶ (5716), ուղղել՛ ՐԶԿԱ (5751)»⁵⁸² և զհայդ՝ Եսևերի է»⁵⁸³:

Ա. Աբրահամյանը հրատարակել է նաև Հովհաննես գրչի «ըստ դրու-թեան մեծին Սարկավագի, համառատ և դիւրին զուգակցութեամբ» ընդօրի-նակությունից մի աղյուսակ⁵⁸⁴, որն անկասկած բխում է Սարկավագադիր տոմարից, քանզի այնտեղ հայոց Նաւասարդ ամիսը զուգադրված է օգոս-տոս ամսին, մյուս ամիսների զուգադրումները համապատասխանաբար շա-րունակվում են:

Այս աղյուսակը պետք է տեղադրել «Հոռոմոց և իւրոց» կամ Հայոց «Պատձէնում», քանի որ այստեղ բերված կանոնները այս երկու ազգերի տո-մարները զուգադրելու նպատակով են սահմանվել:

Հովհաննես Սարկավագի նախնական բնագրում եբրայական (արաբա-կան և մակեդոնական) «Պատձէնին» պետք է հետևեին «**Պատձէն տոմարի է ազգաց**», այն է՝ «Եգիպտացոց, Եթէոպացոց, Աթենացոց, Բիւթանացոց, Կապադովկացոց, Վրաց և Աղուանից», իսկ «Պարսից ու Տաճկաց» «Պատ-ձէնները», որոնք մասամբ առկա են ՄՄ 1999^{հմր} առաջին ժողովածուի մեջ, սակայն բացակայում են ՄՄ 1999^{հմր} 2-րդ գրչագրում, պետք է տեղադրել Հայոց «Պատձէնից» հետո: Հիշյալ «Պատձէնների» ամիսների ու կրկնակների աղյուսակները և այլ տեղեկությունները ներկայացրինք նախորդ «Պատձէն-ների» կապակցությամբ՝ բերելով հիմնավորումները: Ասենք, որ Անանիա Շի-րակացին տվել է Եգիպտացոց և Եթէոպացոց «Պատձէնները», իսկ Սարկա-վագն ավելացրել է «Աթենացոց, Բիւթանացոց, Կապադովկացոց, Վրաց և Աղուանից» «Պատձէնները», որը երևում է Շիրակացու և Սարկավագի բնագ-րերի համեմատությունից, ինչպես և տվել է Պարսից, գուցեն Տաճկաց «Պատձէնները»:

ՄՄ 1999^{հմր} բնագրում, մինչև «Ազգաց ազնուականոնների» աղյուսակ-ները, առկա են Սարկավագի հեղինակած հետևյալ կանոններն ու աղյուսակ-ները:

«Եթե կամիցիս Հոռոմոյին վերադրան եւ Է (7) -երեկան զամենայն ազ-գաց գրանել,

Կա՛լ զՀոռոմի վերադիրն, Բ (2) ի քա՛ց առ՝ Յունաց է, Գ (3) ա՛ն՝ Ասորոց է, Է (7) ա՛ն՝ Եգիպտացոց է, Թ (9) ա՛ն՝ Եբրայեցոց է եւ իւրոցն:

⁵⁸² Ըստ Եվսեբիոսի հաշվումների՝ արարչությունից մինչև Քրիստոս 5198 տարի է, որին ավե-լացնելով Սարկավագի հաստատունը՝ 553, կստանանք 5751:

⁵⁸³ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 215:

⁵⁸⁴ Նույն տեղում, էջ 217:

Կա՛լ զԷ (7)-երեակ Հոռոմին, Բ (2) ի վերա՛յ ած՛ Յունաց է, Զ (6) ա՛ծ՛ Ասորոց է, Ա (1) ա՛ծ՛ Եգիպտացոց է եւ իւրոցն»⁵⁸⁵:

Իսկապես, ապրիլ 4-ի լրման, այն է՝ 19-ամյակի 1-ին տարվա վերադիրը Սարկավագի մոտ 11 է, որն անվանել է հոռոմի, որից հանենք 2՝ կատանանք 9, որը Շիրակացու օգտագործած վերադիրն է՝ Սարկավագի մոտ անվանված Յունաց, իսկ 11-ից հանելով 6 և 1՝ կատանանք 5 և 10, որոնք համապատասխանաբար Ասորոց և Եգիպտացոց ու նրա խմբին պատկանող ազգերի վերադիրներն են ապրիլ 4-ի լրման տարում:

«Եգիպտացոց եւ իւրոցն» արտահայտությունը, ինչպես և հետագայում գուգահեռ բերված «ամիսք և կրկնակք Աթենացոց և Բիլթանացոց, Կապադովկացոց և Եգիպտացոց, Եթէոպացոց և Վրաց, Տաճկաց և Աղուանից» աղյուսակները ցույց են տալիս, որ Սարկավագը նախապես տվել է նրանց «Պատձէնների» համառոտ տարբերակները: Այդ է հիմնավորում Սարկավագի հեղինակած «Զթուական ազգաց» հատվածը, որից ներկայացրին այն թվականները, որտեղ սխալ կար:

Ա. Աբրահամյանի հրատարակածը՝ ՄՄ 1973^{հմր} գրչագիրը, իրավամբ, պակասավոր է, քանի որ այստեղ ամբողջությամբ բացակայում են եգիպտացիների խմբի պատձենը՝ «Պատձէն է ազգաց»-ը, «Պատձէն Պարսից»-ը և «Պատձէն Տաճկաց»-ը, որոնք մասամբ առկա են ՄՄ 1999^{հմր} գրչագրից Զ. Էյնաթյանի և Գ. Վարդանյանի հրատարակածում:

«Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուի մեզ հասած «Պատձէն տոմարի Հայոց» մասի տարբեր բնագրերում արտացոլված կանոնները վերաբերում են Հայոց և՛ մեծ, և՛ փոքր (ՄՄ 1973^{հմր} և ՄՄ 1999^{հմր} գրչագրեր) կամ միայն փոքր (ՄՄ 1973^{հմր} գրչագրից Հովհաննես գրչի ընդօրինակությունը⁵⁸⁶) թվականներին: Բնականաբար, մինչև Սարկավագի ստեղծած տոմարական համակարգի շրջանառության մեջ դրվելը դեռևս պետք է առաջնորդվելին Հայոց մեծ թվականով: Այդ իսկ պատճառով Սարկավագի նախնական բնագրին առավել մոտ են այն «Պատձէն տոմարի»-ները, որտեղ կանոնները տրված են միասնաբար: Իսկ հետագայում, երբ առանձին տարածքներում ընդունելություն ու տարածում էին գտել նաև Սարկավագադիր կամ այլոց անշարժ տոմարները, կարող էին դրանցում գրանցել միայն նրա կամ մյուս հեղինակների անշարժ տոմարների ամսաթվերը:

Ներկայացնենք Հովհաննես Սարկավագի բերած նորությունները տոմարի «Պատձէնի» մեջ՝ ըստ ՄՄ 1973^{հմր} և ՄՄ 1999^{հմր} ձեռագրերի տվյալների, որոնք վերաբերում են թե՛ Հայոց մեծ թվականին, թե՛ իր ստեղծած տոմարին:

Սարկավագը Հայոց մեծ և փոքր թվականների համար գուգահեռաբար տվել է տարվա կարևորագույն հիմնակետերի կանոնները:

⁵⁸⁵ Հին Հայկական Տոմարը, աշխ.՝ Զ. Էյնաթյանի, էջ 162:

⁵⁸⁶ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 217-219:

*«Գարնանամուտը այսպէս արա. Կա՛լ ԺԳ (13) և զնահանջն փո՛ւր ահ-
կի ամսոյ յառաջ, ուր թիւն յանկի, անդ է: – Դարձյալ կա՛լ ԻԱ (21) և զնահանջ
նոր թուականին փո՛ւր նաւասարդի ամսոյ և գրաննես»⁵⁸⁷:*

Գարնանամուտի կանոնի առաջին մասը «Պատճէնի» նախնական խմբագրությունն է, որին չենք անդրադառնում, իսկ 2-րդ մասը՝ Սարկավագիրը: Իսկապէս, Սարկավագադիր 1 թվականին (1085 թ.) գարնանամուտը Հայոց մեծ թվականով Նաւասարդի 21-ին էր, իսկ 21-ին նոր նահանջը գումարելու դեպքում ստանում էին գարնանամուտի (մարտ 20-ի)՝ Հայոց շարժական տոմարին համարժեք ամիս-ամսաթիվը:

«Ամառնամուտը այսպէս [արա]. Կա՛լ ԺԴ (14) և զնահանջն փո՛ւր հրոյրից ամսոյ կամ ԻԲ (22) եւ զնոր նահանջն փո՛ւր Տրէ ամսոյ, ուր սպառի, ամառնամուտը է»⁵⁸⁸:

Ամառնամուտի կանոնի առաջին մասը Անանիա Շիրակացու խմբագրությունն է, իսկ 2-րդը՝ Սարկավագիրը: Իսկապէս, Սարկավագադիր 1 թվականին (= 1085 թ.) ամառնամուտը Հայոց մեծ թվականով Տրէ 22-ին էր (= հունիսի 19), և նոր նահանջը գումարելով՝ ստանում էին ամառնամուտի հայոց ամիս-ամսաթիվը հետագա տարիների համար:

Սարկավագի խմբագրությամբ են նաև հետևյալ հատվածները՝ *«Աշնանամուտը այսպէ՛ս [արա]. [... Կա՛լ] ԻԳ (23) եւ զնոր նահանջն փո՛ւր մեհեկի ամսոյ, ուր աւարտի, աշնանամուտը է»⁵⁸⁹:*

«Ձմեռնամուտը այսպէ՛ս [արա]. [...կա՛լ] ԻԴ (24) եւ զնոր նահանջըն փո՛ւր մարերի ամսոյ, ուր վաղձանի թիվն, ձմեռնամուտը է»⁵⁹⁰:

«Յիսնականուտը այսպէ՛ս [արա]. Կա՛լ... ԻԴ (24) եւ զնոր նահանջն փո՛ւր Ահկի, եւ գրաննես»⁵⁹¹:

Հայոց «Պատճէնի» շարունակության մեջ կանոններն արդեն վերաբերում են եկեղեցական տոներին, ինչպէս և զատկական լրմանը, որտեղ կանոնների մի մասն արտացոլված է Հայոց մեծ թվականի 1-ին և 2-րդ պարբերաշրջաններով, իսկ մյուսը՝ նորով, որոնք սկսվում են «կամ», ինչպէս նաև «դարձեալ կա՛լ» արտահայտություններով:

«Յայտնութիւն այսպէ՛ս [արա]. Կա՛լ զնահանջն, փո՛ւր մեհեկի ամսոյ կամ կա՛լ... ԺԳ (13) եւ զնոր նահանջն փո՛ւր Մարգաց ամսոյ, եւ գրաննես»⁵⁹²:

Հայտնի է, որ Շ-եակի 1-ին շրջապտույտի 2-րդ քառամյակից սկսած՝ «Յայտնութիւնը» համընկել է Մեհեկի ամսին, իսկ 2-րդ շրջապտույտում այն սկսում է Մարգաց 13-ի համապատասխանությամբ:

⁵⁸⁷ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 205: Հին Հայկական Տոմարը, աշխ.՝ Զ. Էյնաթյանի, էջ 122:

⁵⁸⁸ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 206: Զ. Էյնաթյան, նշվ. աշխ., էջ 122:

⁵⁸⁹ Նույն տեղերում:

⁵⁹⁰ Նույն տեղերում:

⁵⁹¹ Նույն տեղերում:

⁵⁹² Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 206: Հին Հայկական Տոմարը, աշխ.՝ Զ. Էյնաթյանի, էջ 122:

«Առաջաորաց Բարէկենդան» այսպէ՛ս [արա]. Կա՛լ հանապագ Լ (30) զկնի, և զաւելիսն ե՛րթ, զմնացեալն արագիւր արա՛ և ի կիրակէն րո՛ւր, և թէ կիրակէի հանդիպի, ի միւս կիրակէն րո՛ւր», կամ. «...ԽԱ (41) կա՛լ եւ զնոր վերադիրն ի բա՛ց երթ աւելաքն՝ Առաջաոր է»⁵⁹³:

Հավանական է, որ «Առաջաորաց Բարէկենդանը» կանոնել է Հովհաննես Սարկավագը, քանի որ այն բացակայել է Անանիա Շիրակացու մոտ:

Իսկ «Առաջաորաց Բարէկենդանից» մինչև «Բուն Բարէկենդան» հաշված է 21 օր. «Կա՛լ զ**Առաջաորաց Բարէկենդանն**, ԻԱ (21) ի վերա՛յ ած, Բուն Բարէկենդան է»⁵⁹⁴:

Սարկավագը «Լրումն Զատկի» կանոնի մեջ ԽԴ (44) հաստատուն թիվը փոխարինել է ԽԶ (46)-ով⁵⁹⁵, որի մասին բացատրությունները տրվել են մեկնության հատվածներում:

«Լրումն Զատկի այսպէ՛ս արա. կալ ԽԶ (46), վերադիրն եր՛թ, թէ քան զհասարակածն աւելի է, ի նմին ամսեան է, սպա թէ պակաս է, յառաջիկա ամիսն ելանէ, արագիւր արա և ի կիրակէն րոուր, զապիկ է, և թէ կիրակէի հանդիպի, ի միւս կիրակէն րոուր»⁵⁹⁶:

«Աստվածածին» այսպէս արա. Կա՛լ ... ԺԹ (19) եւ զնոր նահանջն րո՛ւր Արաց ամսոյ՝ եւ գրանես»⁵⁹⁷:

«Սուրբ Խաչ» այսպէ՛ս արա. Կա՛լ ... ԺԹ (19) եւ զնոր նահանջն րո՛ւր Մեհեկի ամսոյ. եւ գրանես»⁵⁹⁸:

Հայոց մեծ թվականի 2-րդ շրջապտույտի ժամանակ է, որ Աստվածածինը եղել է Արաց, իսկ Սուրբ խաչը՝ Մեհեկի ամիսներին:

«Պատձէն տումարի»-ում պահպանվել են Անկաստեղի և Ելաստեղի հետևյալ կանոնները՝ «**Ձանկաստեղ այպէս արա՛. կալ զնախանջն, Ը (8) ի վերայ ած, րոուր մարերի ամսոյ, զաւելիսն հան, ուր թինս յանգի, անդ է:**

Դարձեալ կա՛լ զնահանջն, ԺԸ (18) (ուղղել՝ ԺԳ) ի վերայ բեր, րո՛ւր մարգաց (ուղղել՝ Սահմի) ամսոյ, զաւելիսն հան, ուր սպառի թինս, անդ է Ելաստեղն)»⁵⁹⁹:

Կատարենք Հայոց մեծ թվականի 133-րդ նահանջի տարիների (= 1084–1087 թթ.) Անկաստեղի և Ելաստեղի համար նախատեսված հաշվարկը.

1. 133 (նահանջի համարը) + 8 (հեղինակի հաստատունը) = 141 : 30 = 21 (մն.), տալ Հռոփ ամսին – 5 (զաւելիսն) = 16 Հռոփ = ապրիլի 14 (Անկաստեղ)

⁵⁹³ Ա. Արրահամյան, նշվ. աշխ., էջ 206: Հին Հայկական Տոմարը, աշխ.՝ Զ. Էյնաթյանի, էջ 122:

⁵⁹⁴ «Պատձէն տումարի» (Է-ԺԵ դդ.), աշխ.՝ Զ. Էյնաթեանի և Գ. Տէր-Վարդանեանի, էջ 184:

⁵⁹⁵ Ա. Արրահամյան, նշվ. աշխ., էջ 206:

⁵⁹⁶ Նույն տեղում և «Պատձէն տումարի» (Է-ԺԵ դդ.), աշխ.՝ Զ. Էյնաթեանի և Գ. Տէր-Վարդանեանի, էջ 184:

⁵⁹⁷ Նույն տեղում, էջ 207: Հին Հայկական Տոմարը, աշխ.՝ Զ. Էյնաթյանի, էջ 126:

⁵⁹⁸ Ա. Արրահամյան, նշվ. աշխ., էջ 207:

⁵⁹⁹ Նույն տեղում:

տեղը հայոց և հուլյան ամսաթվերով) = Հայոց մեծ թվականի 533-536 տարիներ = 1084-1087 թթ. (ներկա թվականը):

2. 133 (նահանջի համարը) + 13 (հեղինակի հաստատունը) = $146 : 30 = 26$ (մն.) - 5 (զաւելիսն) = 21 (տալ Սահմի ամսին) - Սահմի $21=$ մայիսի 24 (Ելաստեղը հայոց և հուլյան ամսաթվերով) = Հայոց մեծ թվականի 533-536 տարիներ = 1084-1087 թթ. (ներկա թվականը):

Ակնհայտ է, որ Հ. Սարկավագի բնագրում փոփոխություն է կատարվել, մանավանդ որ Սարկավագադիր անշարժ տոմարի «Ազգաց ազնուականուններում»⁶⁰⁰ գրանցված է Անկաստեղ՝ ապրիլի $14 =$ Ահեկան 7 , իսկ Ելաստեղը՝ մայիսի $24 =$ Մարերի 17 :

Ասենք, որ Անկաստեղի ու Ելաստեղի՝ Մարերի ու Մարգաց հաշվարկը, առանց աւելեաց օրերի ավելացման, գալիս է Շ-եակի 1-ին շրջապտույտի տարիներից: Շ-եակի 2-րդ շրջապտույտի ժամանակ, երբ ընդօրինակվել է գրչագիրը (1342 թ.), անհնար էր հաշվարկել Մարերի և Մարգաց համար, որովհետև ապրիլի 14 և մայիս 24 -ը չէին տեղավորվում 120 տարիների կտրվածքում և կտեղափոխվեին Շ-եակի 3-րդ շրջապտույտի մեր օրերը: Ուստի Մարերի և Մարգաց ամիսների հիշատակությունը գալիս է 1-ին Շ-եակի հաշվարկից, սակայն առանց աւելեաց օրերի հաշվարկի կամ էլ պարզապես գրչական սխալի հետևանք է՝ Հովհաննես Սարկավագի Շ-եակի 2-րդ շրջապտույտի 1-ին քառամյակի համար յուրօրինակ հաշվարկով՝ օգտագործելով 8 և 13 հաստատունները:

Վերջին տարբերակն ավելի հավանական է, որովհետև ընդօրինակությունը կատարվել է Հովհաննես Սարկավագի ընդօրինակած «Պատճէնից»:

Լուսնի ընծայումը նախորդ շրջանում հաշվել են մասերով, իսկ այս «Պատճէնում»՝ նաև թուպներով՝ «Բոպէ ըստ հայ ամսոյ այսպէ՛ս արա. որով ընծայումն լուսնի...»⁶⁰¹, որը Սարկավագի խմբագրման արդյունք է:

ՄՄ 1999^{hup} գրչագրի «Պատճէն տումարի ըստ հայոց եղանակաց» վերնագիրը կրող բնագրի ստեղծողը Հովհաննես Սարկավագն է, քանի որ նրա առաջին երկու կանոններն արտացոլում են Շ-եակի 2-րդ շրջապտույտի (1085 թ. և այլն, |Հայոց անշարժ տոմարի) տոմարական իրողությունները, իսկ մնացած կանոնները խմբագրել է Սամուել Անեցին: Բերենք մեր դիտողությունները հիմնավորող փաստերը՝ ներկայացնելով «Պատճէն տումարի ըստ հայոց եղանակաց»-ի համապատասխան հատվածը. «Ը, Գ, ԺԳ, Թ, Զ, Զ, Ժ, ԺԱ, ԺԱ, ԻԲ, Թ

Կա՛լ ԻԲ (22) եւ զհասարակած Հայոյն՝ Յայտնութիւն է Հայոյն ...»⁶⁰²:

«Կա՛լ զՅայտնութիւնն, Ը (8) ի վերա՛ բեր, (նաւասարդի) րո՛ւր՝ զարնաւսամուր է»:

⁶⁰⁰ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 167:

⁶⁰¹ Նույն տեղում, էջ 208:

⁶⁰² Տե՛ս ՄՄ 1999^{hup}, էջ 196բ-197ա և «Պատճէն տումարի» (Է-ԺԵ դդ.), աշխ.-մբ՝ Զ. Էյնաթեանի և Գ. Տէր-Վարդանեանի, էջ 177:

Մեկ այլ առիթով ցույց կտանք, որ 22 և 8 հաստատունները առաջացել են սկսած Հայոց մեծ թվականի 453 տարուց (1004 թ.): Այժմ կատարենք կանոններով սահմանված թվաբանական գործողությունները՝ Շ-եակի 2-րդ շրջապտույտի առաջին քառամյակի ամսաթվերն ստանալու համար:

1) $22 + 21 = 43 - 30 = 13$ (Մարգացի):

2) $13 + 8 = 21$ (Նաւասարդի)

Հայտնի փաստ է, որ Շ-եակի 2-րդ շրջապտույտի առաջին քառամյակի գարնանամուտը եղել է Նաւասարդի 21-ին, իսկ Հայտնությունը՝ Մարգացի 13-ին: Մեկ անհայտով հավասարում կազմելով՝ կարող ենք գտնել գարնանամուտի 8 հաստատուն թիվը, այն է՝

$21 - x = 13$, որտեղից՝ $x = 21 - 13 = 8$, որն արձանագրված է բնագրում:

Հաջորդ հիմնավորումը գալիս է անշարժ տոների, տարվա եղանակների, աստղագիտական երևույթների, Հայոց շարժական տոմարի ամիսների շարքը գտնելու վերլուծությունից⁶⁰³: Բերենք Հովհաննես Սարկավագի խմբագրած Շ-եակի 2-րդ շրջապտույտի Հայոց շարժական տոմարի ամիսների շարքը, ինչպես և նրանց սահմանները անշարժ կետերի կտրվածքով:

Հաստատուն թիվը	Անշարժ տոների, տարվա եղանակների, աստղագիտ. երևույթների անվանումներ	Շ-եակի 2-րդ շրջապտույտի Հայոց շարժական տոմարի անսաշարք	Շ-եակի 2-րդ շրջապտույտի հայոց տոմ. հաստ.՝ սահման. ներկա թվականով	Հայոց շարժ. տոմ. ամիսը (1-30) սահման.՝ ներկա թվականով
21	Գարնանամուտ	Նաւասարդի 21	1085-1123	1004-1123
16	Անկաստեղ	Հռոի 16	1085-1143	1024-1143
26	Ելաստեղ	Սահմի 26	1085-1103	984-1103
22	Ամառնամուտ	Տրէ 22	1085-1119	1000-1119
19	Աստուածածին	Արաց 19	1085-1135	1010-1135
19	Սուրբ Խաչ	Մեհեկի 19	1085-1131	1012-1131
23	Աշնանամուտ	Մեհեկի 23	1085-1115	996-1115
24	Յիսնականուտ	Ահկի 24	1085-1111	992-1111
24	Զմեռնամուտ	Մարերի 24	1085-1111	992-1111
5	Յայտն. Բարեկ.	Մարգաց 5	1085-1187	1068-1187
13	Յայտնութիւն	Մարգաց 13	1085-1156	1037-1156

Հայոց փոքր թվականի կամ Շ-եակի 2-րդ շրջապտույտի հաստատունները և անսաշարքի ամսաթվերը ցույց են տալիս, որ այն սկսվել է 1085 թվականից:

Հայոց շարժական տոմարի անսաշարքի (1-30) առաջին թվականների վերին սահմանն է 1068 թվականը (Յայտնութեանը՝ Բարեկենդանի կտրվածքում), իսկ 2-րդ շարքի ներքին սահմանն է 1111 թ. (Յիսնականուտի և Զմեռնամուտի կտրվածքներում): Ակնհայտ է, որ հեղինակն ապրել է 1068-1111 թթ. սահմաններում, իսկ միջին թիվն է 1089-ը: Հայտնի է, որ Հովհ. Սարկավագը

⁶⁰³ **Ռ. Վարդանյան**, «Պատճէն տոմարի Հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը. 6-18-րդ դարեր, գլուխ 3-րդ, էջ 94-175, տարբեր ժամանակների պատճենների՝ այս շարքի մանրամասն քննությամբ հեղինակը ևս պարզում է կանոններն ստեղծողներին ու խմբագիրներին:

տոմարի մեկնությունը գրել է 1094 թ., իսկ Շ-եակի 2-րդ շրջապտույտն սկսվել է 1085 թվին:

ՄՄ 1999^{հմր} գրչագրի «Այլ Պատձեն տումարի ըստ հայոց եղանակաց» վերնագիրը կրող հատվածի գործնական մասը, ինչպես և «Դարագլուխքը» ուշ շրջանի խմբագրություններ են:

Ի դեպ, ՄՄ 1999^{հմր} գրչագրի առաջին ժողովածուի «Պատձենի» մեջ, որը Ստեփանոս Մեծրկա որդու խմբագրությունն է, վերոհիշյալ կանոնները պարզապես վերարտադրությունն են Հովհաննես Սարկավագի խմբագրության (12 կանոններից 10-ը Սարկավագինն են)⁶⁰⁴, և չեն բերված Շ-եակի 1-ին շրջապտույտի հաստատունների տվյալները:

«Հայոց Պատձեն տումարի»-ն բնագրում էլ (ՄՄ 1973^{հմր} և ՄՄ 1999^{հմր}) սկսվում է մի աղյուսակով⁶⁰⁵, որը բերում ենք համարյա նույնությամբ: Աղյուսակը մի փոքր այլ պատկեր ունի ՄՄ 1999^{հմր} գրչագրում. այն անվանված է «Պատձեն տումարի Հայոց Սարկավագին»⁶⁰⁶: Վերջինում բացակայում են «ՏԱՆՈՒՏԷՐ...», «Եւ կրկնակքն» խորանները, իսկ «Մոլորակք, գոր գոտիկք են» խորանը մի փոքր այլ պատկեր ունի, կոչվում է «Մոլորականք», և Նաւասարդից Աւելեաց՝ հայոց ամիսներին համապատասխան դրված են **Մոլորականք՝** Լուծ, Եղջերու, Ծկրաւորի, Փարագնտի, Արտախուր, որոնց հաջորդում է **Գատիք արլեգականը՝** Հրատ, Արեգակն, Լուսաբեր, Փայլածու, Լուսին, Երեւակն, Լուսնթագ⁶⁰⁷: Համեմատության համար այս խորանը ևս տեղադրել ենք ՄՄ 1973^{հմր} գրչագրի աղյուսակում:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

	Պատձեն տումարի ըստ հայերեն թուղայ - ամիս	Կրկնակք	Կրակք	Տառատեր տումար է ուր ամիս	Եւ կրկնակքն	Մոլորակք գոր գատիկք այս են	Մոլորականք*
1	Նաւասարդի	Չկա	Չկա	ԽՈՅ	Չկա		Լուծ
2	Հոռի	Բ	Կ*	ՑՈՒԿ	Բ	Երեւակ	Եղջերու
3	Սահմի	Դ	Ա	ԵԿԱՒՈՐ	Դ		Ծկրաւորի
4	Տրէ	Ձ	Ա Կ	ԽԵՑԳԵՏԻՆ	Ձ	Լուսնթագ	Փարագնտի
5	Քաղոց	Ա	Բ	ԱՌԻԻԾ	Ա		Արտախուր
6	Արաց	Գ	Բ Կ	ԿՈՅՍ	Գ	Հրատ	Գատիք արլեգական]
7	Մեհեկի	Ե	Գ	ԿՇԵԻՌ	Ե	Արեգակն	Հրատ
8	Արեգ	Չկա	Գ Կ	ԿԱՐԻՃ	Չկա	սի	Արեգակն
9	Ահկի	Բ	Դ	ԱՂԵՂՆԱՒՈՐ	Բ	Լուսաբեր	Լուսաբեր
10	Մարերի	Դ	Դ Կ	ԱՅԾԵՂՋԻՐ	Դ		Փայլածու

⁶⁰⁴ **Ռ. Վարդանյան**, «Պատձեն տումարի Հայոց»-ի խմբ.-ների ժամանակի որոշումը. 6-18-րդ դարեր, էջ 28:

⁶⁰⁵ **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 204:

⁶⁰⁶ Պատձեն տումարի (Է-ԺԵ դդ.), աշխ.՝ **Ջ. Էյնաթեանի և Գ. Տէր-Վարդանեանի**, էջ 180:

⁶⁰⁷ Նույն տեղում: Այլ «Պատձեններում» աղյուսակն ավարտվում է կենդանակերպների զուգադրությամբ (նույն տեղում, էջ 173) կամ հայոց ամիսները համադրված են պարսից ամիսներին (նույն տեղում, էջ 140):

11	Մարգաց	Զ	Ե	ԶՐՀՈՍ	Զ	Փայլածու	Լուսին
12	Հրոտից	Ա	Ե Ե	ԶՈՒԿՆ	Ա	Լուսին	Երեւակ
13	Աւելեաց	Գ	Զ	Մոլոր[ականք]	Գ		Լուսնթագ
			*-0.5				*ՄՄ 1999 ^{հմր} գրչ.

Առաջին հայացքից սովորական թվացող աղյուսակը միանգամայն յուրօրինակ ու խոսուն է, որը ներկայացնում է հենց Հովհաննես Սարկավազ տոմարագետի ինքնատիպությունն ու նրա կատարած տոմարական բարեփոխություններից մի քանիսը: Նախ այս աղյուսակով է նաև հաստատվում, որ «ՏԱՆՈՒՏԷՐ» տոմարական իրողությունը նրա ներմուծածն է հայոց տոմար, և այն տարբերվում է հուլյան տոմարի ՏԱՆՈՒՏԷՐ-ի համակարգից, ինչը թելադրված է մեր տոմարական տարվա առանձնահատկությամբ՝ $12 \times 30 + 5$, այն է՝ ինչպես հայոց տարին ունի 13 ամիս կամ 12 ամիս $+ 5$ օր, որոնցից 12 -ին 30 աստիճանով համապատասխանում են մեկական կենդանակերպ՝ սկսած ԽՈՅ-ից, այնպես էլ Աւելեաց 5 օրերին համապատասխանում են հինգ մոլորական⁶⁰⁸ կոչվող աստղերի անվանումները, որոնց հանդիպում ենք և՛ ՄՄ 1973^{հմր} գրչագրում, և՛ ՄՄ 1999^{հմր}-ի՝ «Պատձէնի»՝ Սամուել Անեցու խմբագրության մեջ:

Հովհաննես Սարկավազը առաջին ամիսները զուգադրել է ԽՈՅ կենդանակերպին՝ նկատի ունենալով Հայկյան պարբերաշրջանի սկիզբը, իսկ ամսանունները փորձում է բացատրել ըստ կենդանակերպների համապատասխանության՝ զարնանային օրահավասարից սկսած՝ համապատասխան Արեգ ամսին:

Սարկավազը գրում է. «Եւ ըստ այսմ ամենեցունց արեգ ամիս միայն ունի զուգութիւն, և անուն լԱրեգ – Գ. Ս.] յայտ առնէ զառաջնութիւն ժամանակին ի նմա զոլ և զաւելումն ի փիւ՝ լուսնոյ արևն ար ըստ արե՛ ի սկսաննէ՛ անրի ասացելոյ իմաստնոց իրիդ քննեսցի հաւասարապէս ճշտութիւն»⁶⁰⁹:

Վանական վարդապետը ևս, հետևելով Հովհաննեսին, հայոց ամսանունների բացատրությունը տալիս է Սարկավազադիր կարգի համաձայն⁶¹⁰:

Այդուհետև, մենք այստեղ գտնում ենք մեր այն տեսակետի հաստատումը, որ թեև Սարկավազի «Ազգաց ազնուականոններում» հայոց Նուասարդի 1-ը զուգադրված է օգոստոսի 11-ին, կամ «Ազգաց ազնուականոնները» կառուցել է հուլյան տարվա համապատասխան՝ Քաղոց $24 =$ հունվարի 1 զուգակցությամբ, սակայն նրա համար իրական-տեսական տարին երբայականն է՝ համապատասխան բնատնտեսական տարվան, որը, ըստ նրա «Ազգաց ազնուականոնների», սկսվում է Արեգ 14 – մարտի 22 զուգակցությամբ՝ ԽՈՅ

⁶⁰⁸ Սարկավազը այդ աստղերի մասին գրում է. «Եւ որպէս սովոր են ասել բազումք, ի նմա լուծանին բազումք աստեղացն, որ կոչին մոլորեալք, վասն զի չեն յայտնի» (Նորին Յոհաննու, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 241):

⁶⁰⁹ Ըստ երբայեցոց հնագիտաց և մարգարէից ոմանց... սկսվածքով, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 266:

⁶¹⁰ Լ. Խաչիկյան, Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ, Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, 1, Եր., 1941, էջ 151-169:

կենդանակերպով⁶¹¹, այն է՝ գարուն եղանակով: Ահա այդ է պատճառը, որ կազմելով հայոց կրկնակների համակարգը. նա աղյուսակում հայոց ամիսները՝ սկսած Նաւասարդից, զուգադրել է ոչ թե հուլյան տոմարի ամիսներին, այլ ՏԱՆՈՒՏԷՐ-երին, այսինքն՝ կենդանակերպ-համաստեղություններին (Նաւասարդ = ԽՈՅ), որոնք այն անշարժ հենքն են ու ժամանակացույցը, որոնց կարող են համապատասխանել տարբեր ազգերի տոմարների այս կամ այն ամիսները: Միաժամանակ ՏԱՆՈՒՏԷՐ-երի կողքին է դրել նույն կրկնակների համակարգը, որով էլ նույնացրել է հայոց ամիսներն ու ՏԱՆՈՒՏԷՐ-երը:

Հետագայում մենք այս տեսակետի արտացոլումը տեսնում ենք 532-ամյա 3-րդ շրջապտույտի հենքի վրա ստեղծված՝ «Պատձէն տոմարի»-ի 16-17-րդ դարերի խմբագիրներից Ազարիա Զուղայեցուն⁶¹² վերագրված տոմարում, որի առաջին ամսի՝ Շամսի 1-ը զուգադրված է աստղագիտական թվահաշիվ՝ գարնանային գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ը⁶¹³: Ճիշտ է՝ նրա ամիսներն ունեն բոլորովին այլ անվանումներ, սակայն այստեղ գլխավորը Սարկավագի տեսակետի փաստացի դրսևորումն է, այսինքն՝ իրական տարեսկիզբը համապատասխանում է տարվա կարևորագույն հիմնակետերից գարնանային գիշերահավասարին:

Հայոց ամիսների ու ՏԱՆՈՒՏԷՐ-երի զուգադրությամբ Սարկավագն ամրակայում է նաև, որ Հայկյան շրջանի սկիզբը ևս գարնանային օրահավասարն է կամ իր ապրած ժամանակներում ընդունված՝ «ԽՈՅ» կենդանակերպը, որին զուգադրված է Հայոց Նաւասարդ ամիսը⁶¹⁴:

Երկու գրչագրերում միմյանցից տարբերվում են աղյուսակի «Մոլորակք գոր գաւտիկք այս են» (ՄՄ 1973^{հմր}) և «Մոլորականք» (ՄՄ 1999^{հմր}) անվանված խորանները: Առաջինում բացակայում են մոլորակ աստղերի վերոհիշյալ անվանումները, և առկա են մոլորակների անուններն ու «ն[ա]ի[անջ]» նշումը: Միայն նահանջի նշումը մոլորակների շարքում և համադրումը հայոց ամիսների հետ՝ արդեն վկայություն են Սարկավագին պատկանելուն: Մյուս կողմից՝ 7 մոլորակների հետ նահանջի հիշատակությունն արտահայտում է 28-ամյակի (7 x 4) բեսիքիստոն, այն է՝ շաբաթական շաբթի կրկնության 28-ամյա պարբերաշրջանի առկայությունը, ինչպես և, մեծ հաշվով, Հայկյան շրջանի սկզբի կապը գարնանային օրահավասարի հետ և մեկ տարվա հավելումը հայոց թվականների շարքում:

⁶¹¹ **Գ. Սիմոնյան**, Հովհաննես Սարկավագի անշարժ տոմարի ուսումնասիրությունների պատմությունից, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք է, Եր., 2012, էջ 233-234:

⁶¹² **Ռ. Վարդանյան**, «Պատձէն տոմարի Հայոց»-ի խմբ.-ների ժամանակի որոշումը. 6-18-րդ դարեր, էջ 198:

⁶¹³ **Բ. Թումանյան**, Տոմարի պատմություն, Եր., 1972, էջ 123-124:

⁶¹⁴ «Պատձէն տոմարի Հայոց մեծաց»-ի աղյուսակում ուղղակիորեն զուգադրված են Նաւասարդ ամիսն ու ԽՈՅը: «Պ. Տ.», աշխ.՝ **Զ. Էյնաթյանի և Գ. Տէր-Վարդանյանի**, էջ 173:

Հատկապես վերջինի մասին ակնարկն է այս «ն[ա]լի[անջ]ը», քանի որ շաբաթվա օրերն են անվանվել այս մուրակների, Արևի ու Լուսնի անուններով:

Թեև ՄՄ 1973^{հմր} բնագրի հրատարակության մեջ բացակայում է, սակայն ՄՄ 1999^{հմր} գրչագրի «Պատձէն տոմարի Հայոց Սարկաւագիին» բնագրում պահպանվել են այն հիմքերը, այն է՝ սահմանումները, որոնցով ապացուցվում է, որ այս աղյուսակների հեղինակը հենց ինքը Սարկավագն է: Այս պատձէնի [Գործնական աստղագիտություն]⁶¹⁵ բաժնում կարդում ենք. «Եթէ կամիցիս գիւրել, եթէ Արեգակն յորում կենդանակերպի է. Կա՛լ ի գարնանային հասարակածէն մինչեւ ուր եւ, Բ (2) թուով պակաս, եւ րո՛ւր կենդանակերպիցն Լ(30)՝ ի խոյէն սկսեալ, ուր յանկի թիւն՝ անդ է: Եւ Դ (4) եղանակքն Գ (3) առնուն կենդանակերպիցն՝ ի խոյէն սկսեալ»⁶¹⁶:

Օրինակ, որոշենք, թե մայիսի 28-ին որ կենդանակերպում է Արեգակը: Գարնանային օրահավասարը, ըստ Սարկավագի, հուլյան տոմարով համապատասխանում է մարտի 20-ին, որից մինչև մայիսի 28-ը 69 օր է:

Ըստ կանոնի՝ $69 - 2 = 67 : 30 = 2$ ամիս և 7 օր = 3 ԽՈՅ, 8 ՈՒԼ, ԵԿԱԻՈՐ: Մայիսի 28-ին Արեգակը գտնվել է ԵԿԱԻՈՐ կենդանակերպի 7-րդ աստիճանում:

*«Իսկ արարչութեան ատուրցն աստեղք այս են՝ Լուծ, Եղջիրու, Ծկրաորի, Փարագնորի, Արտախոյր: Եւ գաւրիք Արեգականն այս են՝ Հրատ, Արեգակն, Լուսաբեր, Փայլածու, Լուսին, Երեւակն, Լուսնթագ»*⁶¹⁷:

Ինչպես հայտնի է, արարչության օրեր են համարվել երբայական տոմարի Աւելեաց ամսի 5 օրերը: Սարկավագը, հետևելով Անանիա Շիրակացուն, Արարչության առաջին օրը՝ Աւելեաց 1-ը, համադրել է հուլյան տոմարով մարտի 17-ին. «Ի մարտի ԺԷ (17) սկիզբն արարչութեան՝ յայնմ ատուր ասաց Աստուած «եղիցի լոյս». Եւ կիրակէ էր եւ մուր ատել ատուրցն Երբայեցոց, զի Ե (5) արն, որ յառաջ քան զլինել մարդոյն էր, այն ասի ատել ատուրք, զի ի Դ (4) արն զլուսաւորարն գամենայն ստեղծ, որ է մարտի Ի (20) եւ հասարակած: Ի մարտի ԻԱ (21)–էն ոչ փոխեցան ժամք րորնջեան եւ գիշերոյ, եւ Արեգակն ոչ եմուր ի կենդանին եւ որ ի գաւրիսն, զի չեւ էր ստեղծեալ մարդն մինչեւ ի Մարտի ԻԲ (22)»⁶¹⁸:

Այստեղից հիմնավորվում է նաև, որ «Ազգաց ազնուականոնների» երբայական Ավելյաց ամսի մոտ հայոց Արեգ ամսի 9-13-ին՝ «Արարչութեան ատուրցն աստեղքի» անվանումները զուգադրողը հաստատապես եղել է Հովհաննես Սարկավագը:

⁶¹⁵ «Պատձէն տոմարի Հայոց մեծաց»-ի աղյուսակում ուղղակիորեն զուգադրված են Նաւասարդ ամիսն ու ԽՈՅը: «Պ. Տ.», աշխ.՝ **Զ. Էյնաթանի և Գ. Տէր-Վարդանյանի**, էջ 182:

⁶¹⁶ Նույն տեղում, էջ 182: Տե՛ս նաև **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 206, որտեղ կանոնը առկա է առանց վերջին հատվածի:

⁶¹⁷ Նույն տեղում: Տե՛ս նաև **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 206, որտեղ կանոնը առկա է առանց վերջին հատվածի:

⁶¹⁸ Պատձէն տոմարի (Է-ԺԵ դդ.), աշխ.՝ **Զ. Էյնաթանի և Գ. Տէր-Վարդանյանի**, էջ 183:

Գ. Բրուտյանը, առանց ուշադրություն դարձնելու Սարկավազի «Ազգաց ազնուականոններում» կատարած մոլորական աստղերի ու երբայական տոմարի Ավելեաց ամսվա օրերի հեղինակային զուգադրությանը, անհիմն կերպով մոլորական աստղերը զուգադրել է Հայոց Սարկավազադիր տոմարի Ավելեաց ամսվա օրերին՝ «Աելեաց օրերն էլ միշտ ունեն հետեւեալ դիրքը. Աելեաց առաջին օր (Լուծ) = օգոստոս 6, Աելեաց երկրորդ օր (Եղջերու) = օգոստոս 7 ևն»⁶¹⁹:

ՄՄ 1999^{հմբ} գրչագրում կանոնված է. «Եթէ կամիցիս գիրել, եթէ Արեգակն յորում գորուոջ է. Կա՛լ ի գարնանային հասարակածէն մինչեւ ուր ես, Բ (2) թուով պակաս, եւ ե՛րթ Հ (70), Հ (70), որ խոնարհ մնա՛ սկիզբն ի Հրապէն արա՛ եւ րո՛ւր Ժ (10), Ժ (10) ի գորիսն, ուր յանկի թիւն՝ անդ է: Զայս է (7) աստիճան մոլորականս [ուղղել՝ մոլորակս], որ շրջին ընդ կենդանակերպսն եւ խաղան յեղս եւ յառաջ որպէս Արեգակն»⁶²⁰:

Ըստ կանոնի՝ Արեգակի շարժը գոտիներով պետք է սկսել մարտի 22-ից, քանի որ գարնանային հասարակածը եղել է մարտի 20-ին = Արեգ 12-ին = երբայական տոմարի Աելեաց 4-ին, իսկ Աելեաց 1-5 օրերի ընթացքում Արեգակը թափառում է մոլորական աստղերի մեջ, որից հետո Նիսանի 1-ից մտնում Հրատի գոտի: Նշանակում է, որ Արեգակի շարժը մոլորակների գոտիներով չէր կարող լինել մարտի 20 - ից, այլ՝ = մարտի 22-ից:

Հռոմեական տոմարի մարտի 22-ից և Արեգ 14-ից՝ գարնանային հասարակածից (մարտի 20 = Արեգ 12) 2 օր հետո, այն է՝ երբայական տոմարի Նիսանի 1-ից Արեգակը տասնօրյակներով սկսում է համապատասխանել մոլորակներին:

Մոլորակների համապատասխանությունը հռոմեական տոմարի ամիսամսաթվերին ներկայացնենք աղյուսակով՝ նկատի ունենալով նաև դրանց համապատասխան Սարկավազադիր և երբայական տոմարների ամիսամսաթվերը:

Հրատ	Մարտի 22- մարտի 31	Երևակ	Սեպտեմբերի 28 - հոկտեմբերի 7
Արեգակ	Ապրիլի 1- ապրիլի 10	Լուսնթագ	Հոկտեմբերի 8 - հոկտեմբերի 17
Լուսաբեր	Ապրիլի 11 - ապրիլի 20	Հրատ	Հոկտեմբերի 18 - հոկտեմբերի 27
Փայլածու	Ապրիլի 21 - ապրիլի 30	Արեգակ	Հոկտեմբերի 28 - նոյեմբերի 6
Լուսին	Մայիսի 1- մայիսի 10	Լուսաբեր	Նոյեմբերի 7 - նոյեմբերի 16
Երևակ	Մայիսի 11 - մայիսի 20	Փայլածու	Նոյեմբերի 17 - նոյեմբերի 26
Լուսնթագ	Մայիսի 21 - մայիսի 30	Լուսին	Նոյեմբերի 27 - դեկտեմբերի 6
Հրատ	Մայիսի 31- հունիսի 9	Երևակ	Դեկտեմբերի 7 - դեկտեմբերի 16
Արեգակ	Հունիսի 10 - հունիսի 19	Լուսնթագ	Դեկտեմբերի 17 - դեկտ. 26
Լուսաբեր	Հունիսի 20 - հունիսի 29	Հրատ	Դեկտեմբերի 27- հունվարի 5
Փայլածու	Հունիսի 30 - հուլիսի 9	Արեգակ	Հունվարի 6 - հունվարի 15
Լուսին	Հուլիսի 10- հուլիսի 19	Լուսաբեր	Հունվարի 16 - հունվարի 25

⁶¹⁹ Գ. Բրուտեան, Հայկական Օրացոյցը իր սկզբնատրումից մինչև մեր օրերը, Ռուբիկոն գեղարվեստական-մշակութային եռամսյա հանդես, Հայաստան, 1/2, 2000, էջ 7:

⁶²⁰ Պատձէն տումարի (Է-ԺԵ դդ.) աշխ.՝ Զ. Էյնաթեանի և Գ. Տէր-Վարդանեանի, էջ 182:

Երևակ	Հուլիսի 20 – հուլիսի 29	Փայլածու	Հունվարի 26 – փետրվարի 4
Լուսնթագ	Հուլիսի 30 – օգոստոսի 8	Լուսին	Փետրվարի 5– փետրվարի 14
Հրատ	Օգոստոսի 9– օգոստ. 18	Երևակ	Փետրվարի 15 – փետրվարի 24
Արեգակ	Օգոստոսի 19 – օգոստ. 28	Լուսնթագ	Փետրվարի 25 – մարտի 6
Լուսաբեր	Օգոս. 29 – սեպտեմբերի 7	Հրատ	Մարտի 7 – մարտի 16
Փայլածու	Սեպտ. 8 – սեպտեմբեր 17	Լուծ	Մարտի 17 = Արեգ 9 = Ա. 1 (Երբ.)
Լուսին	Սեպտ. 18– սեպտեմբ. 27	Եղջերու	Մարտի 18 = Արեգ 10 = Ա. 2 (Երբ.)
		Ծկրաւորի	Մարտի 19 = Արեգ 11 = Ա. 3 (Երբ.)
		Արտախոյր	Մարտի 20 = Արեգ 12 = Ա. 4 (Երբ.)
		Փարագնոտի	Մարտի 21 = Արեգ 13 = Ա. 5 (Երբ.)
Հրատ	Մարտի 22 = Արեգ 14 = Նիսան 1 նն:		

Վերոհիշյալը ևս Հովհաննես Սարկավագի ստեղծած կանոնն է, քանի որ նրա «Ազգաց ազնուականոնների» «Գոտիք արեգական»-ում ենք հանդիպում մոլորակների՝ Հրատ, Արեգակ, Լուսաբեր, Փայլածու, Լուսին, Երևակ, Լուսնթագ՝ սկսած մարտի 22-ից մինչև հաջորդ տարվա մարտի 16-ը, իսկ Արեգ 9-13-ը = մարտի 17-21-ը՝ 5 օր մոլորական աստղերին համապատասխանությամբ⁶²¹:

ՏԱՆՈՒՏԵՐ: Հովհաննես Սարկավագի «Պատձէն տոմարի»-ի աղյուսակին հաջորդում են ԿՐԿՆԱԿ-ի, ԿԻՍԱԿ-ի, ՏԱՆՈՒՏԵՐ-ի գործնական սահմանումները: ԿՐԿՆԱԿ-ի, ԿԻՍԱԿ-ի կանոնները նույնն են, ինչ Հայոց մեծ թվականինը, որոնք գալիս են նախորդ շրջանից, իսկ քանի որ ՏԱՆՈՒՏԵՐ-ն ինքն է ներմուծել Հայոց տոմար, ապա տվել է և՛ Մեծ թվականի՝ մի դեպքում՝ սկիզբը ԽՈՅ-ից, մյուսում՝ ԱՌՅՈՒԾ-ից, և՛ Սարկավագադիր Հայոց փոքր թվականի կտրվածքով՝ սկիզբը ԽՈՅ-ից: ՏԱՆՈՒՏԵՐ-ի գործնական սահմանումը հեղինակային է, երևում է առաջին հերթին նրանից, որ երկու կտրվածքով է տրված՝ մեկը՝ սկիզբը ԽՈՅ-ից՝ իբրև բնատնտեսական տարեսկիզբ, մյուսը՝ ԱՌՅՈՒԾ-ից, քանի որ իր «Ազգաց ազնուականոններում» Նաասարդի 1-ը համապատասխանում է ԱՌՅՈՒԾ-ին:

Սարկավագը սահմանում է. «Տանուրէր քարոյ այսպէս արա. Կա՛լ գթվականն զմեծ, Է (7) ի վերա ած և երթ ժԲ (12), ժԲ (12), որ մնա՝ զսկիզբն ի խոյէն արա և քո՛ւր կենդանակերպսն Ա (1), Ա(1), ուր թիվն սպառի, այն է քա՛նուրէր: Կամ Գ (3) ա՛ծ և զըսկիզբն յառիծէն արա⁶²²: Դարձեալ Կա՛լ զփոքր

⁶²¹ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 160-183, 185-186: Տե՛ս Գ. Սիմոնյան, Հովհաննես Սարկավագի «Ազգաց կանոնները», ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Եր., 2012, էջ 52, 54 և հեղինակի՝ Հովհաննես Սարկավագի անշարժ տոմարի ուսումնասիրությունների պատմությունից, նույն տեղում, էջ 233:

⁶²² ՄՄ 1999 ^{հմբ} գրչագրում այս հատվածն ավելի ընդարձակ է. «Կա՛լ զՀայ թուականն՝ զՄեծն, Գ ի վերայ բեր կամ Թ ի բա՛ց երթ եւ զայն ե՛րթ ժԲ, ժԲ, որ մնայ՝ սկիզբն յԱռիծէն արա՛: Այլ Կա՛լ գթուականդ եւ ե՛րթ ժԲ, ժԲ, որ ի խոնարհ մնայ սկիզբն ի խոյէն արա՛, տուր կենդանակերպիցն Ա, Ա, ուր թիւն յանկի՛ այն է» (Պատձէն տոմարի (Է-ԺԵ դդ), աշխ.՝ Զ. Էյնաթյանի և Գ. Վարդանյանի, էջ 144):

թվականն՝ թիւ մի պակաս, և ե՛րթ ժԲ (12), ժԲ (12), որ մնա՛ սկիզբն խոյէն արա, և այն է»⁶²³:

Կամ՝ «Տանուրէրք տարոյ այսպէս արա]. «Կա՛լ գթուական («զմեծն»՝ ըստ ՄՄ 1973^{հմր} տվյալների) Ե (5) թիւ ի բա՛ց երթ [կամ] Է (7) ի վերայ ած (ըստ ՄՄ 1973^{հմր} տվյալների) և զայլն ե՛րթ ժԲ (12), ժԲ (12). որ ի խոնարհ մնայ՝ սկիզբն ի խոյէն արա, ուր յանկի թիւն՝ այն է»⁶²⁴:

ՏԱՆՈՒՏԵՐ-ը Հայոց մեծ թվականով գտնելու կանոնի մեջ Սարկավագի խմբագրությունը 5 թիվ հանելն է կամ 7 թիվ գումարելը, որը համարժեք է Հայոց մեծ թվականին 551 գումարելու և ներկա թվականն ստանալու և դրանցով ևս ՏԱՆՈՒՏԵՐ-երը գտնելու կանոնին: Այսպես, ըստ Սարկավագի, Արևի խավարումը տեղի է ունեցել 562 Հայոց մեծ թվականին, որին գումարելով 7 կամ հանելով 5, ապա բաժանելով 12-ի, մնացորդում կստանանք 5, որն ԱՌՅՈՒԾ-ն է:

Սարկավագադիր 1 թվականին (ըստ զատկացուցակի), որը համարժեք է Հայոց մեծ թվականի 534 տարուն, գումարենք 7 կամ հանենք 5, բաժանենք 12-ի, ստանում ենք 1 մնացորդ, որը արձանագրված է զատկացուցակի մեջ ԽՈՅ անվամբ:

ՏԱՆՈՒՏԵՐ-ի կանոնի 2-րդ հատվածը վերաբերում է միայն Սարկավագադիր թվականին: Կատարենք գործողությունը Սարկավագադիր տոմարի 13-րդ տարվա համար՝ $(13 - 1) : 12 = 1$ ՝ ԽՈՅ:

Սարկավագի զատկացուցակներում 13-րդ տարվա ՏԱՆՈՒՏԵՐ-ը ԽՈՅ-ն է⁶²⁵:

Իր մեկնության գործնական հատվածում Սարկավագը բազմիցս անդրադառնում է հայոց թվականության համակարգերին, որոնց քննությունը կկատարենք առանձին հատվածում: Այստեղ միայն բերենք կանոնները, որոնք Սարկավագին են. «Ձամս ծնընդեան Քրիստոսի այսպէ՛ս արա. կա՛լ ՇԾԳ (553) ամ, զհայ թուականն ի վերա՛ բեր, և այն է»⁶²⁶:

Սա հայոց քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակն ստանալու կանոնն է, որ միանշանակ Սարկավագի սահմանածն է:

«Թուական այսպէ՛ս արա. Ի մեծ թվականէն ՇԼԳ (533) ի բա՛ց երթ՝ փոքր է:

Դարձեալ կալ յերեքտասանէն մարգաց ամսոյ, թուեա մինչև ցյայտնութիւն, չորեքատկեայ՝ նոր թուական է: Թէ յառաջին ամի ես՝ Գ (3) երթ, եթէ երկրորդին՝ Բ (2)»⁶²⁷:

Հայոց Շ-եակի ՇԼԲ հաստատունը ՇԼԳ է խմբագրել Հովհաննես Սարկավագը՝ 1004 թվականին Հայկյան պարբերաշրջանի 1460-ամյակի ավարտի

⁶²³ Հովհաննեսի Պատճէն տոմարի աշխ., տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 204:

⁶²⁴ Հին Հայկական Տոմարը, աշխ.՝ Զ. Էյնաթյանի, էջ 120:

⁶²⁵ Տե՛ս Հավելված 1:

⁶²⁶ Հովհաննեսի «Պատճէն տոմարի» աշխ., տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 205:

⁶²⁷ Նույն տեղերում:

հետևանքով ավելացած 1 տարին ավելացնելով, իսկ կանոնի մյուս հատվածը վերաբերում է հայոց Շ-եակի 2-րդ շրջապտույտին, երբ ամառային արևադարձի օրը համապատասխանել է Մարգաց 13-ին, և, կանոնի համաձայն, ստացել են համապատասխան թվականները:

Հաջորդ՝ «Նահանջի» և «19-ամյակի» կանոնները, թեև գալիս են նախորդ շրջանից, միանգամայն բավարարում են նաև Սարկավագադիր թվականին:

ՎԵՐԱԳԻՐ: Տոմարագիտության համար առանձնակի կարևորություն ունի «Վերադիրը», քանզի միմիայն նրա միջոցով հստակորեն կարելի է պարզել այս կամ այն տոմարի տարեսկիզբը, որովհետև այն ցույց է տալիս, թե քանի օրական է Լուսինը տարվա վերջին օրը:

«Վերադիր» վերաբերյալ «Պատճէնում» առկա են. «Վերադիր այսպէ՛ս արաւ. կա՛լ զթուականն և տես, թէ քանի նահանջ կա ի նմա կամ քանի իննև-տասներեակ, ապա բազմապարիկ արա զԱ (1) ԺԱ (11) ըստ նահանջիցն պակասեցո, ըստ իննևտասներեակացն յաւել, Ը (8) թիւ հանապազ ե՛րթ և զայն Լ (30), Լ (30), որ մնա՛ վերադիր է: Եւ եթե Փոքր թուականսն կամիսցիս առնել, զհանապազորդն ե՛րթ ԻԱ (21) »⁶²⁸ սահմանումները:

Սարկավագից վերցված՝ վերադրի կանոն է պահպանվել Հովհաննես գրչի ընդօրինակության մեջ, որտեղ նա գրում է. «Յետ այս գրեցից և գանանց նահանջիցն ըստ դրութեան մեծին Սարկաւագի, համառաւսր և դիրին գուգադրութեամբ»⁶²⁹:

«Վերադիր այսպէ՛ս արաւ. Կա՛լ զթվականդ և ե՛րթ ԺԹ (19), ԺԹ (19), մնացեալն մետրասնապարկես, Դ (4) թիւ ի բաց հան, և զայն երթ Լ (30), Լ (30). որ մնայ՛ վերադիր է: Բայց ի նահանջից նահանջ Գ (3) ե՛րթ զարակայդ: Դարձեալ կա՛լ զվերադիրն հռոճմին, Ե (5) ի վերա՛յ ած, և այն է»⁶³⁰:

Կանոնի հեղինակային պատկանելությունը ցույց տանք Շ-եակի 2-րդ պարբերաշրջանի 10-րդ՝ ապրիլի 4-ի լրման տարվա օրինակով: 2-րդ շրջապտույտի 10-րդ տարին Հայոց մեծ 543 թվականն է: Նահանջների թիվը 135 է, իսկ 19-ամյակի մնացորդը՝ 11, որը պետք է բազմապատկել 11-ով = 121. ապա՝ $543 - 135 = 408 + 121 = 529 - 8 = 521 : 30 = 11$ մն., որը հռոմայեցոց տոմարի այդ՝ ապրիլի 4-ի լրման տարվա վերադիրն է:

Հայոց տոմարով ապրիլի 4-ի լրման տարվա վերադիրը որոշելու համար, քանի որ նախորդ տարում 19-ամյակն ավարտվել է, այն վերցվել է ամբողջությամբ: Ապրիլի 4-ի լրման տարին գատկացուցակում 10-րդ տարին է: Նոր թվականով 10-րդ տարին ունի 2 նահանջ, իսկ նախորդ տարում 19-ամյակն ավարտվել էր, որի պատճառով իբրև մնացորդ վերցրել է 19: Կատարենք գործողությունը՝

⁶²⁸ Հովհաննեսի «Պատճէն տոմարի» աշխ., տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 205:

⁶²⁹ Նույն տեղում, էջ 217:

⁶³⁰ Նույն տեղում, էջ 118:

ա. $10 : 4 = 2$ մն.,

բ. $19 \times 11 = 209$,

գ. $10 - 2 = 8 + 209 = 217 - 21 = 196 : 30 = 16$, որը հայոց վերադրի արժեքն է ապրիլի 4-ի՝ Լուսնի լրման 19-ամյակի՝ 10-րդ՝ Արեգի ԺԷ-ի տարում:

Առավել մատչելի է Հովհաննես գրչի՝ Սարկավագից ընդօրինակած վերադրի կանոնը: Ստանանք Սարկավագի վերադրիների համակարգը՝ սկսելով Սարկավագադիր տոմարի 10-րդ՝ ապրիլի 4-ի Լուսնի լրման տարուց: 10-ից մինչև 18 թվականը 19-ամյակի արժեքը 0 է, իսկ 19 թվականից սկսած ճիշտ վերադրիներ ստանալու համար պետք է 4 հաստատունը փոխել 3-ի, ինչպես կանոնն է ասում, կամ 4 հաստատունով անելու դեպքում՝ ավելացնել նաև նահանջից նահանջի թիվը՝ առաջին տասնիննամյակում 1, 2-րդում՝ 2 ևն:

1. 10 թ. – ին՝ $10 + 0 = 10 \times 11 = 110 - 4 = 106 : 30 = 16$ մն.

2. 11 թ. – ին՝ $11 \times 11 = 121 - 4 = 117 : 30 = 27$ մն.

3. 12 թ. – ին՝ $12 \times 11 = 132 - 4 = 128 : 30 = 8$ մն.

4. 13 թ. – ին՝ $13 \times 11 = 143 - 4 = 139 : 30 = 19$ մն. ևն:

Սարկավագի կանոնով, որն ընդօրինակել է գրիչ Հովհաննեսը, ստացվում է վերադրիներին՝ **16, 27, 8, 19, 30, 11, 22, 3, 14, 26, 7, 18, 29, 10, 21, 2, 13, 24, 5** արժեքներով համակարգը, որն այլ սկզբնաղբյուրներում ոչ միայն նույնությամբ պահպանված է, այլև զուգադրված է Սարկավագադիր տոմարի ամիս-ամսաթվերին:

Վերադրիների համակարգը՝ զատկական լրման ամիս-ամսաթվերի զուգադրմամբ, առկա է նույն՝ ՄՄ 1973^{հմ} գրչագրում՝ աղյուսակի տեսքով, որից քաղագրել ենք միայն լրման ամիս-ամսաթվերը և վերադրիները⁶³¹.

1. Արեգի ԻԷ – ԺԶ (16), 2. Արեգի ԺԶ – ԻԷ (27), 3. Ահեկի Ե – Ը (8), 4. Արեգի ԻԴ – ԺԹ (19), 5. Արեգի ԺԶ – Լ (30), 6. Ահեկի Բ – ԺԱ (11), 7. Արեգի ԻԱ – ԻԲ (22), 8. Ահեկի Ժ – Գ (3), 9. Արեգի ԻԹ – ԺԴ (14), 10. Արեգի ԺԷ – ԻԶ (26), 11. Արեգի Զ – Է (7), 12. Արեգի ԻԵ – ԺԸ (18), 13. Արեգի ԺԴ – ԻԹ (29), 14. Ահկի Գ – Ժ (10), 15. Արեգի ԻԲ – ԻԱ (21), 16. Ահեկի ԺԱ – Բ (2), 17. Արեգի Լ – ԺԳ (13), 18. Արեգի ԺԹ – ԻԴ (24), 19. Ահկի Ը – Ե (5):

Նշված բոլոր ամսաթվերն էլ Սարկավագադիր տոմարի ամիս-ամսաթվեր են:

Հովհաննես գրչի ընդօրինակած 2-րդ կանոնն առաջարկում է վերցնել հռոմեական վերադիրը և ավելացնել 5: Ապրիլի 4-ի լրման տարուց սկսած՝ հռոմեացոց վերադիրներն են՝ 11, 22, 3, 14, 25, 6, 17, 28, 9, 21, 2, 13, 24, 5, 16, 27, 8, 19, 30:

Եվ իրապես էլ, հռոմեական տոմարի վերադիրներին 5 ավելացնելով՝ ստացվում է Սարկավագի հայոց տոմարի վերադիրների համակարգը: Այսպես, $11 + 5 = 16$, $22 + 5 = 27$ ևն:

⁶³¹ ՄՄ 1973^{հմ} գրչագիր, էջ 79 ա: Տե՛ս նաև **Ռ. Վարդանյան**, Հայոց տոնացույցը, էջ 257:

Հովհաննես Սարկավազի ՇԼԲ-ամյա զատկացուցակի հայոց շարքի 19-ամյակի վերադիրներն ունեն այս արժեքները՝ 16, 27, 8, 19, 30, 11, 22, 3, 14, 26, 7, 18, 29, 10, 21, 2, 13, 24, 5:

Այստեղ նկատենք, որ Արեգի ԻԷ (ապրիլի 4)-ից սկսվող 19-ամյակի, այսինքն՝ հաշվելու ինաստով 10-րդ տարվա վերադիրն ստացվում է 12 հավելելով՝ հայտնի պատճառով:

Կանոնի հեղինակային պատկանելությունը ցույց տանք նաև բնագրային այլ գրանցումներով: Հայոց տոմարի վերադիրների համակարգն ամբողջությամբ պահպանվել է ՄՄ 1973^{հմր} գրչագրի մի քանի հատվածներում⁶³²:

	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ճ	ԺԱ	ԺԲ	ԺԳ	ԺԴ	ԺԵ	ԺԶ	ԺԷ	ԺԸ	ԺԹ
ա	ժԶ	ԻԷ	Ը	ժԹ	Լ	ժԱ	ԻԲ	Գ	ժԴ	ԻԶ	Է	ժԸ	ԻԹ	Ճ	ԻԱ	Բ	ժԳ	ԻԴ	Ե
բ	ժԱ	ԻԲ	Գ	ժԴ	ԻԵ	Զ	ժԷ	ԻԸ	Թ	ԻԱ	Բ	ժԳ	ԻԴ	Ե	ժԶ	ԻԷ	Ը	ժԹ	Լ
գ	Բ	ժԳ	ԻԴ	Ե	ժԶ	ԻԷ	Ը	ժԹ	Լ	ժԱ	ԻԲ	Գ	ժԴ	ԻԵ	Զ	ժԷ	ԻԸ	Թ	ԻԱ
դ	Թ	Ի	Ա	ժԲ	ԻԳ	Դ	ժԵ	ԻԶ	Է	ժԹ	Լ	ժԱ	ԻԲ	Գ	ժԴ	ԻԵ	Զ	ժԷ	ԻԸ
ե	Ը	ժԹ	Լ	ժԱ	ԻԲ	Գ	ժԴ	ԻԵ	Զ	ժԸ	ԻԹ	Ճ	ԻԱ	Բ	ժԳ	ԻԴ	Ե	ժԶ	ԻԷ
զ	Դ	ժԵ	ԻԶ	Է	ժԸ	ԻԹ	Ճ	ԻԱ	Բ	ժԴ	ԻԵ	Զ	ժԷ	ԻԸ	Թ	Ի	Ա	ժԲ	ԻԳ

«Այս բոլորս վերադիր առնէ ամենայն [2] ազգաց. Կա՛լ զհայ թուականն՝ զփոքրն, թ (9) երթ և զայլն երթ ժԹ(19), ժԹ(19), որ մնայ ի կարմիր գրոյն յառաջ փոքր և այն են վերադիրք ամին: Առաջին կարգն հայոց է, բ (2)՝ հռոմոնց է, գ (3)՝ երրայեցոց, արարացոց և մակեդոնացոց, դ (4)՝ յունաց, ե (5)՝ ասորոց, զ (6)՝ եգիպտացոց, եթէնվպացոց: Բայց առաջին կարգն խորանացն է»⁶³³:

Այստեղ հստակորեն նշվում է, որ ա շարքում Հայոց փոքր թվականի, այն է՝ Սարկավազադիր տոմարի վերադիրներն են:

Նույն աղյուսակը կրկնվում է ՄՄ 1973^{հմր} գրչագրի 51 բ էջում, միայն գ և ե շարքերը տեղափոխված են:

Վերադիրն վերաբերող կարևոր նշումներից է. «Յամի իննստասներեկի ար յաելու ի վերադիրն, որ է ի մարտի ԻԵ (25)....»⁶³⁴: Մարտի 25-ին Սարկավազադիր տոմարում զուգադրված է Արեգի ժԷ (17): 11-ի փոխարեն այդ տարում վերադիրն ավելացել է 12-ով՝ ստանալով ԻԶ (26) արժեքը:

Վերադիրի կանոնն ամբողջովին հեղինակային է. Սարկավազն է Շ-եակի 2-րդ պարբերաշրջանի 10-րդ՝ ապրիլի 4-ի լրման տարվա վերադիրը խմբագրել 11՝ հռոմեացոց տոմարի համար, իսկ հայոց համար՝ 16, որը հաստատվում է վերադիրի վերոբերյալ 2 կանոններով:

⁶³² ՄՄ 1973^{հմր} գրչագիր, էջ 51 բ, 53 բ:

⁶³³ ՄՄ 1973^{հմր} գրչագիր, էջ 50 ա:

⁶³⁴ Հովհաննեսի «Պատճէն տոմարի» աշխ., տե՛ս Ա. Արրահամյան, նշվ. աշխ., էջ 219:

Քանի որ վերդիրը ցույց է տալիս Լուսնի հասակը տարվա վերջին օրը, ապա սա թույլ է տալիս հստակորեն հասկանալու և՛ թե որ օրվա պատկերն է այն, և՛ թե հաստատապես որն է Հովհաննես Սարկավագի տոմարի օրացուցային տարեմուտը:

Հռոմեական տոմարի վերադրի տեղը դեկտեմբերի 31-ն է, որը նրանց տոմարական տարվա վերջին օրն է, վերդրի արժեքը՝ 11: Դրան ավելացնելով 5՝ կստանանք ոչ միայն հայոց վերադրի արժեքը, այլև այն օրը, որտեղ դրվել է այդ արժեքը, այսինքն՝ հունվարի 5-ը = Քաղոց 28-ին, իսկ դրա հաջորդ օրը՝ հունվարի 6-ը = Քաղոց 29-ին, Քրիստոսի Ծննդեան ու Յայտնութեան օրն է, ինչից պարզ է դառնում, որ Սարկավագն այս դեպքում առաջնորդվել է հայոց եկեղեցական տարեմուտով, այսինքն՝ Սարկավագադիր օրացույցային տարեսկիզբը հայոց եկեղեցական տոնական տարվա սկիզբն է՝ հունվարի 6-ը, իսկ ըստ Սարկավագադիր տոմարի՝ Քաղոց 29-ը: Նշանակում է, որ Սարկավագը, սկսելով ապրիլի 4-ի լրման տարուց, վերադրի արժեքը՝ 16, այն դրել է Քաղոց 28-ին կամ հռոմեական տոմարով՝ հունվարի 5-ին:

Ամփոփելով ասենք՝ Սարկավագադիր տոմարում վերադիրների համակարգը ցույց է տալիս Լուսնի հասակը Քաղոց 28-ին = հռոմեական տոմարի հունվարի 5-ին, իսկ Սարկավագադիր տոմարի հայոց շարքի տարեմուտը Քաղոց 29-ն է՝ հունվարի 6-ը՝ Քրիստոսի Ծննդեան ու Յայտնութեան տոնի օրը, որը հայոց եկեղեցական տարվա սկիզբն է: Նշանակում է, որ Սարկավագադիր տոմարի տարեմուտը հունվարի 6 = Քաղոց 29-ն է, թեև հայոց տոմարի առաջին ամսի՝ Նաւասարդի 1-ը համընկել է հռոմեական տոմարի օգոստոսի 11-ին: Հասկանալի է դառնում, որ Սարկավագադիր տոմարի պայմանական տարեմուտն է Նաւասարդի 1-ը, իսկ գործնականը՝ Քրիստոսի Ծննդեան ու Յայտնութեան տոնի օրը՝ հունվարի 6-ը, որը հայոց եկեղեցական տարվա սկիզբն էր:

ՅՈՒՆԵՐՅԱԿ: Յոթներյակի մասին Սարկավագն ասում է. «*Ելից քարտւոյն պատկեր աւուրն եոթներեակ է ամենայն ազգաց*»⁶³⁵ կամ «*Ելք Աւելեացն պատկեր աւուրն է (7) երեակ է...*», ինչը նշանակում է, որ այն տարվա վերջին օրվա՝ Աւելեաց 5-ի⁶³⁶ (հուլյան ներկա տոմարով դեկտեմբերի 31-ի, Հայոց փոքրով՝ Քաղոց 28-ի) պատկերն է և ոչ թե Նաւասարդի 1-ի կամ հունվարի 1-ի: Իսկ յոթներեակը հաշվելիս Ա (1)-ն պետք է դիտել իբրև կիրակի, ոչ թե երկուշաբթի, մանավանդ որ կա հեղինակի նշումը նաև օրագրուտի կանոնում:

«Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ»-ի բնագրում ևս նա նշում է, թե որտեղ պետք է լինի յոթներյակի տեղը. «*Եւ զնոթներեակ երրայեցուցն պարտ է դնել հիմն այլոց ազգացդ: Եւ զի այլազգացդ յերոյ ժամանակաւ յոր և գրին*

⁶³⁵ Հովհաննեսի «Պատճէն տոմարի» աշխ., տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 210:

⁶³⁶ «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» բնագր., տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 225:

զարուեստը, ի նմին և սկիզբն թուականին կարգեցին. Ոմանք յամառնային ժամանակի գրարեմուտն եղին, ոմանք աշնանայինք, որպէս ասորիք և յոյնք, կէսքն ի ձմեռային, որպէս հռոմվնք և ի նմին Կրեղոջ զկթներեակն և զվերադիրն որպէս հանդիպեցալ, եղին»⁶³⁷:

Սա ցույց է տալիս, որ Սարկավագը, հավանաբար, տարեմուտ է համարում բնատնտեսական կամ տնտեսական տարվա սկիզբը՝ գարնանամուտը, գարնանային հասարակածը: Եվ յոթներյակը ցույց է տալիս երբայական տոմարի Աւելեաց 5-ի՝ տարվա վերջին օրվա շաբաթագիրը: Սակայն, քանի որ տարբեր ազգեր տարեսկիզբը տարբեր տեղերում են դրել, ապա նրանց յոթներյակները ևս կգտնվեն համապատասխան տեղերում:

Հայոց տոմարական բնագրերում յոթներյակի բազմաթիվ կանոններ կան, որոնք կան կրկնում են միմյանց, կան էլ ունեն որոշակի տարբերություններ:

Ներկայացնենք ու քննարկենք դրանցից մի քանիսը:

Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» բնագրում յոթներյակը որոշելու համար կանոնված է. 1. «Եւթներեակ այսպէ՛ս խորալ. կա՛լ գթըվականն, Գ (3) ի վերա՛յ ած կամ Դ (4) ի բա՛ց երթ և զայլն ե՛րթ Է(7), Է(7), որ մնա՛ կթներեակ է»⁶³⁸:

Յոթներյակի այս կանոնը սահմանում է՝ տարեթվին երեք ավելացնել կամ հանել 4, նոր բաժանել 7-ի:

Այստեղ հարց է առաջանում, թե որ թվականության համակարգով է Սարկավագը կատարել իր հաշվումները: Ժամանակին, հավանաբար, կիրառվել են տարբեր թվականության համակարգեր: Այդ պատճառով կփորձենք տարբեր համակարգերով որոշել խնդիրը: Այսպես, Շ-եակի 2-րդ շրջապտուտի առաջին տարին համապատասխանում է Հայոց մեծ թվականի 534-րդ տարուն, որը համապատասխանում է Սարկավագադիր 1 թվ.-ին և ներկա (մեր) 1085 թվ.-ին: Կատարենք գործողությունները Հայոց մեծ թվականով:

$$1 \text{ թվ.} = 1085 \text{ ներկա թ.} = 534 \text{ Հայոց մեծ թ.} \quad (534 + 3) : 7 = 537 : 7 = 5$$

մն., (Ե)

$$2 \text{ թվ.} = 1086 = 535 \quad (535 + 3) : 7 = 537 : 7 = \mathbf{6 \text{ մն. (Զ)}}$$

$$3 \text{ թվ.} = 1087 = 536 \quad (536 + 3) : 7 = \mathbf{7 \text{ մն. (Է)}}$$

$$4 \text{ թվ.} = 1088 = 537 \quad (537 + 3) : 7 = 540 : 7 = \mathbf{1//2 \text{ մն. (Ա /Բ)}}$$
⁶³⁹

Համապատասխան բոլոր գործողությունները Հայոց մեծ թվականով կատարելով՝ ստացանք յոթներյակների հետևյալ շարքը՝ Ե(5). Զ(6). Է (7). Ա /

⁶³⁷ «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» բնագր., տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 225:

⁶³⁸ Նույն տեղում:

⁶³⁹ Քանի որ Շ-եակի առաջին շրջապտուտից հետո՝ 532 թվ., որը նահանջ տարի էր, հայոց տարեհաշվում մեկ տարի արդեն ավելացել էր՝ այն դարձնելով 533 տարի, հայոց հաջորդ նահանջը համապատասխանում է Հայոց փոքր թվականի 4-րդ տարուն կամ 557 թ., ինչպես և ներկա (մեր) 1088 թվականին:

Բ(1/2). Գ(3). Դ(4). Ե (5). Զ /Է(6/7). Ա(1). Բ(2). Գ (3). Դ/ Ե (4/5). Զ(6). Է(7). Ա (1). Բ /Գ (2/3). Դ(4). Ե(5). Զ (6). Է/Ա(7/1). Բ(2). Գ(3). Դ (4), Ե/ Զ(5/6). Է(7). Ա(1). Բ (2). Գ /Դ(3/4), որը չի բավարարում Սարկավագի զատկացուցակի պահանջներին, քանի որ այդ թվականը Փրկչական թվական է, որը 2 տարով ավելի է, քան ներկա (մեր) թվականը:

Հայոց փոքր թվականի առաջին տարին համապատասխանում է ներկա (մեր) 1085 թվ.-ին: Կատարենք հաշվարկը՝ $(1085 + 3) : 7 = 1088 : 7 = 3$ մն., որը բավարարում է ներկա (մեր) թվականով հաշվումներին, և այն գտնում ենք մեզ հասած զատկացուցակի հուլյան շարքում (ՄՄ 1973^{հմ} գրչագիր):

Շաբաթական շարքի 28-ամյա պարբերականությունն այս կանոնով հուլյան տոմարում ունի հետևյալ պատկերը՝ **3 (Գ), 4 (Դ), 5 (Ե), 6//7 (Զ//Է), 1 (Ա), 2 (Բ), 3 (Գ), 4//5 (Դ//Ե), 6 (Զ), 7 (Է), 1 (Ա), 2//3 (Բ//Գ), 4 (Դ), 5 (Ե), 6 (Զ), 7/ 1 (Է / Ա), 2 (Բ), 3 (Գ), 4 (Դ), 5/6 (Ե/ Զ), 7 (Է), 1 (Ա), 2 (Բ), 3//4 (Գ//Դ), 5 (Ե), 6 (Զ), Է (7), 1//2 (Ա//Բ)**:

29-րդ տարուց յոթներյակի համակարգն ամբողջովին նույնությամբ կրկնվում է:

Շ-եակ զատկացուցակի 2-րդ շրջապտույտի հուլյան շարքին յոթերյակի այս համակարգը բավարարում է, ինչպես որ բավարարում էր Շ-եակի առաջին շրջապտույտի 553 թվականից սկսած մնացյալ տարիներին՝ $(553 + 3) : 7 = 3$ մն.: Այս կանոնն ստեղծվել է Շ-եակի առաջին շրջապտույտի համար և բավարարում է երկրորդին ևս:

Հովհաննես Սարկավագի յոթներյակի⁶⁴⁰ համակարգն ստանալու համար այլ կանոնի ենք հանդիպում Հովհաննես գրչի ընդօրինակության մեջ, որն ավելի ամբողջական է, քանի որ այնտեղ խոսվում է նաև նահանջ տարիներին յոթներյակը մեկով ավելացնելու մասին, առանց որի անհնար է այդ շարքի ճշգրիտ ամբողջացումը: Այս կանոնով Սարկավագն առաջնորդվում է 28-ամյա պարբերաշրջանով, քանի որ յոթներյակը նույնությամբ կրկնվում է 28 տարին մեկ: Կանոնն ասում է. «*Եթերեակ այսպէ՛ս արա. կա՛լ թուականդ, ե՛րթ ԻԸ (28), ԻԸ(28), որ ի խոնարհ մնայ՛ չորիցն, չորիցն մի մի յաւել և ե՛րթ եւթն, եւթն, որ մնայ՛ եթերեակ է. թիվ մի այլ ե՛րթ հանապագ ի հոռովմի կթներեակէն՝ Բ (2) ի բա՛ց առ կամ Ե (5) ի վերայ ա՛ծ. իսկ ի յերայեցոց կթներեակին մի (1) ած՛ հայոց է: Իսկ ի հայոյն մի (1) ի բա՛ց հան՛ երրայեցւոց է: Եւ լիւնի այդ յամասանրէն յունուարոյ մինչև ի մեքրասաներորդ աւգոստոս ամսոյ, որ է մուր նաւասարդոյ և անրի յառաջ ԺԱ թիւ ի վերադիրն յաւել և թիւ մի կթներեակն է»⁶⁴¹:*

Այստեղ նշված են յոթներյակն ստանալու 3 միջոց:

⁶⁴⁰ Գ. Բրուտյանը ևս կարծում է, որ սխալարար մինչև Սարկավագադիր 20 թվականը յոթներյակների համակարգը մեկով պակաս է, տե՛ս Գ. Բրուտյան, Օրացոյց Հայոց, էջ 119, տողատակ 38:

⁶⁴¹ Հովհաննեսի «Պատճէն տոմարի» աշխ., տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 218:

Կանոնի առաջին միջոցով նկատի է առնված ինչպես նահանջի համարը գումարելու անհրաժեշտությունը՝ «*չորիցն, չորիցն մի մի յաւել*», որը վերաբերում է մինչև հաջորդ նահանջն ընկած տարիներին, այնպես էլ ամեն նոր քառամյակում անպայման պետք է ավելացվի նոր նահանջի համարը:

Հաշվումները կատարենք ներկա (մեր) թվականի համար:

Սարկավագադիր 1 թվ. = 534 Հայոց մեծ = 1085 ներկա թ. :

Ներկա (մեր) թվ. 1085 : 28 = 21 մն. + 5 (նհնջն. թիվը) = 26 : 7 = 5 **մն.**

2 թվ. = 335 = 1086 1086 : 28 = 22 + 5 = 27 : 7 = 6 **մն.**

3 թվ. = 336 = 1087 1087 : 28 = 23 + 5 : 7 = 7 **մն.**

4 թվ. = 337 = 1088 1088 : 28 = 24 + 6 = 1/2 **մն.**

Ներկա (մեր) թվականով հաշվումները լիովին համապատասխանում են յոթներյակի առաջին կանոնի Հայոց մեծ թվականով կատարված հաշվումներին, սակայն ոչ հուլյան տոմարով հաշվումներին:

1085 թ. սկսած՝ յոթներյակի արժեքներն են՝ Ե(5). Զ(6). Է/Ա(7/1). Բ(2). Գ(3). Դ(4). Ե/Զ(5/6). Է(7). Ա(1). Բ(2). Գ/Դ(3/4). Ե(5). Զ(6). Է(7). Ա/Բ(1/2). Գ(3). Դ(4). Ե(5). Զ/Է(6/7). Ա(1). Բ(2). Գ(3). Դ/Ե(4/5), Զ(6). Է(7). Ա(1). Բ/Գ(2/3). Դ(4):

Վերոբերյալ կանոնի 2-րդ միջոցով ևս ստանանք հայոց յոթներյակները: Կանոնը պահանջում է հռոմեացոց յոթներյակից մեկ թիվ պակաս վերցնել, ապա գումարել 5 կամ հանել 2:

Քանի որ հենքը հռոմեացոց տոմարն է, ապա պետք է գտնել հռոմեացոց յոթներյակը:

Հռոմեացոց, երբայեցոց (արաբացոց, մակեդոնացոց), Սարկավագի և Ստեփանոս Մեծրկա որդու տոմարների յոթներյակի համակարգերը պահպանված են ՄՄ 1973^{հմբ} ձեռագրի մի աղյուսակում. «*Զմույր ԻԸ եակ է երեակ բողորիս այսպէ՛ս արա. Կա՛լ զհայ թուականն, Դ թիւ ի վերայ՝ քեր և ե՛րթ ԻԸ, ԻԸ. որ ի խոնարհ մնայ ի միակէն յառաջ փուր, և ուր թիւն սպառի՝ այն է խորան փարտոյն, որում իցես: Առաջին կարգն համարք խորանացս, Բ՛ է երեկ հռոմոնց, Գ՛ երբայեցոց, արաբացոց, մակեդոնացոց, Դ՛ Սարկաւագին, Ե՛ Սյրեփանոսի՝ որդու Մեծրկան, Զ՛ Հայոց մեծաց*»⁶⁴²: Բերենք այն:

Ա	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ	ԺԱ	ԺԲ	ԺԳ	ԺԴ	ԺԵ	ԺԶ	ԺԷ	ԺԸ	ԺԹ
Բ	Ե	Զ	Է	Ա.Բ	Գ	Դ	Ե	Զ.Է	Ա	Բ	Գ	Դ.Ե	Զ	Է	Ա	Բ.Գ	Դ	Ե	Զ
Գ	Ա	Բ	Գ	Դ.Ե	Զ	Է	Ա	Բ.Գ	Դ	Ե	Զ	Է.Ա	Բ	Գ	Դ	Ե.Զ	Է	Ա	Բ
Դ	Բ	Գ	Դ	Ե.Զ	Է	Ա	Բ	Գ.Դ	Ե	Զ	Է	Ա.Բ	Գ	Դ	Ե	Զ.Է	Ա	Բ	Գ
Ե	Ա	Բ	Դ	Դ.Ե	Զ	Է	Ա	Բ.Գ	Դ	Ե	Զ	Է.Ա	Բ	Գ	Դ	Ե.Զ	Է	Ա	Բ
Զ	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ա	Բ	Գ	Դ	Ե

⁶⁴² ՄՄ 1973^{հմբ} ձեռագիր, էջ 51 ա:

Թեև այս աղյուսակը յոթներյակի համակարգի համար 10 տարով պակաս է, պետք է լինեն 28 տարիների համար, սակայն այն պարունակում է 19 տարիների արժեքները: Կարևորենք, որ 19-ամյակը պետք է սկսել 5-րդ համարից, ինչպես գրված է սահմանման մեջ: Այսպես, հռոմեականը Բ շարքում սկսում է՝ Ե (5), Զ (6), Է (7), Ա.Բ (1.2), սակայն սկիզբը պետք է համարել 5-րդ համարը՝ Գ (երեքշաբթի):

Կատարենք վերոբերյալ կանոնի պահանջը՝

Ա. $5 - 1 + 5$ (կամ -2) = $9 : 7 = 2$ մն. (Բ),

Բ. $6 - 1 + 5$ (կամ -2) = $10 : 7 = 3$ մն. (Գ),

Գ. $7 - 1 + 5$ (կամ -2) = $11 : 7 = 4$ մն. (Դ),

Դ. $1/2 - 1 + 5$ (կամ -2) = $5/6$ մն. (Ե/ Զ):

Ե. $3 - 1 + 5$ (կամ -2) = 7 մն. (Է՝ շաբաթ):

Միևնույն արդյունքներն ենք ստանում նաև երրայեցոց տոմարով հաշվելիս: Հայոց տոմարի առաջին տարվա յոթներյակի արժեքը **7 (6 + 1) է:**

Ըստ աղյուսակի՝ Սարկավագադիր տոմարի յոթներյակի համակարգն սկսում է Է-ով: Այս է համակարգի պատկերն ամբողջությամբ՝ Է, Ա, Բ, Գ/Դ, Ե, Զ, Է, Ա/Բ, Գ, Դ, Ե, Զ/Է, Ա, Բ, Գ, Դ/Ե, Զ, Է, Ա, Բ/Գ, Դ, Ե, Զ, Է/Ա, Բ, Գ, Դ, Ե/Զ:

3-րդ միջոցը՝ հունվարի 1-ից մինչև օգոստոս 11-ը եղած օրերի քանակին պետք է ավելացվի 11՝ վերադրի արժեքը, իսկ «թիվ մին» պետք է հասկանալ միավոր թիվը, որն ավելացվել է օգոստոսի 11-ի շաբաթագիրը գտնելու համար:

3-րդ միջոցը կատարենք միայն առաջին տարվա համար, և նույն արժեքն ստանալու դեպքում վերջնական արժեքները նույնը կլինեն: Հունվարի 1-ից մինչև օգոստոսի 11 օրերի քանակը՝ $222 (31 + 28 + 31 + 30 + 31 + 30 + 31 + 10 + 11 + 1) = 233 : 7 = 3$ մն., այսինքն՝ օգոստոսի 11-ին եղել է երեքշաբթի, որի նախօրյակին՝ օգոստոսի 10-ին, կդրվեր յոթներյակի արժեքը՝ 2:

Բոլոր 3 միջոցներով գտանք Հայոց մեծ թվականի 2-րդ շրջապտույտի յոթներյակի արժեքները, որոնք սկսում են **Բ (2)-ով** և **Գ (3)-ով**, այսինքն՝ այս կանոնները գործել են Հովհաննես Սարկավագի ժամանակ: Քանի որ Նաուասարդի 1-ը գտնվել է 532 թվ. նահանջ տարվա առաջին հատվածում, կկիրառվեր 2 արժեքը, իսկ մյուս հատվածի համար՝ 3 արժեքը: Քանի որ Զատիկը մշտապես 2-րդ հատվածում է, այսինքն՝ նահանջի ավելացումից հետո է, ապա գործածելի է յոթներյակի 3 արժեքը:

Եթե Սարկավագադիր տոմարն սկսեր Նաուասարդ ամսից, ապա կիրառելի կլինեն Բ-ով սկսող յոթներյակի համակարգը, սակայն քանի որ Սարկավագն առաջնորդվել է հայոց եկեղեցական տարեմուտով, որը համապատասխանում է հունվարի 6-ին = Քաղոց 29-ին, ապա այս Բ-ով համակարգը ևս չի բավարարում գատկացուցակի պահանջներին և չի համընկնում աղյուսակի համակարգին:

Ըստ «Լուսնի լրման և [Արևի] խավարման» պատառիկի՝ Հայոց Սարկավագադիր 1 թվականը համադրված էլ է հռոմեական Քննիկոնի՝ Փոքր Շ-եակ թվականի 305-րդ տարուն (ապրիլի 4-ի լրման տարի) (333 - 29)⁶⁴³: Այդ տարվա յոթներյակը 304 թվականի դեկտեմբերի 31-ի շաբաթագիրն է:

Այդ իսկ պատճառով հռոմեացոց «Պատձէնում» կանոնված է. «Եւթներեակ այսպէ՛ս արա. կա՛լ թուականդ⁶⁴⁴, Ա (1), թիւ ի բա՛ց երթ, եւ զայլն ե՛րթ ԻԸ (28), ԻԸ(28), որ ի խոնարհ մնայ՝ ի Դ (4), Դ (4) թիվն Ա (1), Ա (1) յաւել եւ երթ Է (7), Է (7), որ մնայ՝ Է-երեակ է»⁶⁴⁵:

1. Վերցնենք 305 թ. - 1 = 304 թվականը, բաժանենք 28-ի, 28-ից ցածր մնացորդին, ըստ քառայակների, ավելացնենք մնացորդի նահանջների թիվը, իսկ նոր նահանջի դեպքում՝ ևս մեկ թիվ և բաժանենք 7-ի:

Ա. = 305 թ. 304 : 28 = 24 մն. + 6 (24-ի մեջ եղած քառայակների թիվը)
= 30 : 7 = **2 մն.:**

- Բ.** 306 թ. 305 : 28 = 25 մն. + 6 = 31 : 7 = 3 մն.,
- Գ.** 307 թ. 306 : 28 = 26 մն. + 6 = 32 : 7 = 4 մն.,
- Դ.** 308 թ. 307 : 28 = 27 մն. + 6 = 33 : 7 = **5 մն.:**
- Ե.** 309 թ. 308 : 28 = 28 մն. + 7 = 35 : 28 = 7 մն.,
- Զ.** 310 թ. 309 : 28 = 29 մն. + 7 = 36 : 7 = 1 մն.,
- Է.** 311 թ. 310 : 28 = 2 մն.,
- Ը.** 312 թ. 311 : 28 = 3 + 0/1 = 3 /4 մն.,
- Թ.** 313 թ. 312 : 28 = 4 մն. + 1 = 5 մն.,
- Ժ.** 314 թ. 313 : 28 = 5 մն. + 1 = 6 մն.,
- ԺԱ.** 315 թ. 314 : 28 = 6, մն. + 1 = 7 մն.,
- ԺԲ.** 316 թ. 315 : 2 = 7 մն. + 1/2 = 8/9 : 7 = 1 /2 մն.,
- ԺԳ.** 317 թ. 316 : 28 = 8 մն. + 2 = 10 : 7 = 3 մն.,
- ԺԴ.** 318 թ. 317 : 28 = 9 մն. + 2 = 11 : 7 = 4 մն.,
- ԺԵ.** 319 թ. 318 : 28 = 10 մն. + 2 = 12 : 7 = 5 մն.,
- ԺԶ.** 320 թ. 319 : 28 = 11 մն. + 2/3 = 13/14 : 7 = 6/7 մն.,
- ԺԷ.** 321 թ. 320 : 28 = 12 մն. + 3 = 15 : 7 = 1 մն.,
- ԺԸ.** 322 թ. 321 : 28 = 13 մն. + 3 = 16 : 7 = 2 մն.,
- ԺԹ.** 323 թ. 322 : 28 = 14 մն. + 3 = 17 : 7 = 3 մն.,
- Ի.** 324 թ. 323 : 28 = 15 մն. + 3/4 = 18/19 : 7 = 4/5 մն.,
- ԻԱ.** 325 թ. 324 : 28 = 16 մն. + 4 = 20 : 7 = 6 մն.,
- ԻԲ.** 326 թ. 325 : 28 = 17 մն. + 4 = 21 : 7 = 7 մն.,
- ԻԳ.** 327 թ. 326 : 28 = 18 մն. + 4 = 22 : 7 = 1 մն.,

⁶⁴³ Արևի խավարման համաժամանակյա՝ հայոց և հռոմեական Փոքր թվականների տարեթվերն են:

⁶⁴⁴ ՄՄ 3082^{հմր} ձեռագրում՝ «կա՛լ քրանիկոնն.....», էջ 384 բ:

⁶⁴⁵ ՄՄ 2001^{հմր} գրչագիր, էջ 38բ, Պատձէն տումարի (Է-ԺԵ դդ.), աշխ.՝ **Զ. Էյնաթեանի և Գ. Տէր-Վարդանեանի**, էջ 183:

- ԻԳ.** 328 թ. $327 : 28 = 19 \text{ մն.} + 4/5 = 23/24 : 7 = 2/3 \text{ մն.},$
ԻԵ. 329 թ. $328 : 28 = 20 \text{ մն.} + 5 = 25 : 7 = 4 \text{ մն.},$
ԻԶ. 330 թ. $329 : 28 = 21 \text{ մն.} + 5 = 26 : 7 = 5 \text{ մն.},$
ԻԷ. 331 թ. $330 : 28 = 22 \text{ մն.} + 5 = 27 : 7 = 6 \text{ մն.},$
ԻԸ. 332 թ. $331 : 28 = 23 \text{ մն.} + 5/6 = 28/29 : 7 = 7/1 \text{ մն.},$
ԻԹ. 333 թ. $332 : 28 = 24 \text{ մն.} + 6 = 30 : 7 = 2 \text{ մն.}:$

Հաշվումները հաստատում են, որ յոթներյակները կրկնվում են հռոմեացոց Քննիկոնի 2-րդ 28-ամյակից սկսած, որի առաջին տարին համապատասխանում է Հռոմեացոց փոքր թվականի 305-ին, ապա՝ 333-րդ = Սարկավագադիր փոքր թվականի 1 և 29-րդ տարիներին:

Ինչպես երևում է հաշվումներից, այս կանոնը ևս Սարկավագադիր տոմարի հաշվումներին չի համապատասխանում:

2001^{հմ} գրչագրի «Պատձէն տոմարի Հայոց, որ կոչի Սարկավագի» հատվածում կանոնված է. «Է երեկ այսպ(է՛ս արա). կա՛լ զքննիկոնն և ե՛րթ ԻԸ, ԻԸ, որ մնայ ամէն չորից թիւ մի յաւել և ե՛րթ Է, Է, որ մնայ Է երեկ է»⁶⁴⁶:

«Քննիկոն» ասելով նկատի են ունեցել ինչպես Հռոմեացոց փոքր թվականի տարիները, այնպես էլ Հայոց փոքր թվականի:

Կատարենք գործողությունը հայոց շարքի համար: Սարկավագադիր 29 թվականը հավասար է 1 թվականին՝ յոթներյակի առումով, այդ իսկ պատճառով՝ $29 : 28 = 1 + 0$ (նահանջ չլինելու պատճառով) = **1 մն.** կամ **Ա (կիրակի)**:

Սարկավագադիր մեկ թվականի հայոց շարքին այս արդյունքը ևս չի բավարարում, ինչը ցույց կտանք իր տեղում:

Թեև աղյուսակում բերված են յոթներյակների համակարգերի արժեքները, մեզ համար գիտական խնդիր է դարձել պարզել, թե որ թվականության համակարգով և ինչ կանոնով են ի վերջո հաշվել Սարկավագադիր հայոց անշարժ տոմարի յոթներյակները:

Մեզանում պահպանված տոմարի մեկնություններում հանդիպել ենք այլ կանոնների ևս, որոնցով հաշվումներ կատարելով՝ փորձել ենք գտնել Սարկավագադիր հայոց տոմարի յոթներյակների համակարգի արժեքները և ի վերջո հանգել ենք դրական արդյունքի: Այսպես, յոթներյակի կանոններից մեկը պահանջում է. *168/ «Դարձեալ՝ կա՛լ ՅԴ (304), զՀայ թուսկանն ի վերայ բե՛ր, Թ (9) ի բա՛ց երթ եւ զայլն երթ ԻԸ (28), ԻԸ (28), որ ի խոնարհ մնայ, Եչէն առաջ քո՛ւր, ուր դադարի այն է»*⁶⁴⁷, իսկ մյուսը՝ *«Դարձեալ՝ կա՛լ Է-երեակ Հռոմայեցուցն,Դ (4) ա՛ծ, Սարկավագինն է, Գ(3) ա՛ծ, Ստեփանոսինն է»*⁶⁴⁸:

Մեկնաբանելով կատարենք առաջին կանոնի պահանջը:

Արդեն պարզ է, որ 304 հաստատունը հայոց և հռոմոնց թվականների միջև եղած տարբերությունն է, և, սրա համաձայն, Սարկավագադիր մեկ

⁶⁴⁶ ՄՄ 2001^{հմ} գրչագիր, էջ 22 բ, ՄՄ 1999^{հմ} գրչագիր, էջ 36 ա-բ:

⁶⁴⁷ **Զ. Էյնթայնի** աշխ., Տիեզերագիտության և տոմարի մեկնություններ (Է-ԺԵ. դարեր), Եր., 2017, էջ 360:

⁶⁴⁸ Նույն տեղում, էջ 361:

թվականը հավասար կլինի 305 հռ. թվականին (304 + 1 = 305), որից պետք է հանել 9, ապա ստացված մնացորդը բաժանել 28-ի:

$305 - 9 = 296 : 28 = 16 \text{ մն.}$, և այս մնացորդը = Ե (5): 5շբթ.-ից հաշվելով շաբաթական շարքը՝ պետք է հասնենք 1-ի համարժեքին, որը կլինի 304 թվականի դեկտեմբերի 31-ի շաբաթագիրը, որը 305 թվականի յոթներյակի արժեքն է:

Այս կանոնը կիրարկենք նաև Հայոց Շ-եակ թվականի համար:

Թեև հայտնի պատճառով Հայոց Շ-եակ թվականն ավարտվեց ոչ թե 532-ին, այլ 533-ին, սակայն ավելացած մեկ տարին հաշվումներ կատարելիս պետք է հաշվի չառնել: Նշանակում է, որ Շ-եակի 2-րդ շրջապտույտի առաջին տարին թեև Հայոց մեծ թվականի 534 թ.-ն է, սակայն դրա համար հաստատունը 533-ի փոխարեն պետք է լինի 532-ը:

Կիրառելով կանոնի պահանջը Հայոց փոքր թվականի համար՝ ստանում ենք 20 մն.:

Այսպես, $(532 + 1 - 9) : 28 = 524 : 28 = 20 \text{ մն.}$:

Ինչպես երևում է հաշվումներից, հայոցով՝ մնացորդը եղել է 20, իսկ հռոմեականով՝ 16, որոնց միջև տարբերությունը 4 է: Երկու դեպքում էլ յոթներյակի հաշվումներն սկսենք Ե-ից և ավելի ակնառու լինելու համար կազմենք աղյուսակ:

Հայոց մնացորդները	Յոթներյակը հայոցով	Հռոմեացոց մնացորդները	Յոթներյակը հռոմեացոցով
20	Ե		
19	Զ		
18	Է		
17	Ա/Բ		
16	Գ	16	Ե
15	Դ	15	Զ
14	Ե	14	Է
13	Զ/Է	13	Ա/Բ
12	Ա	12	Գ
11	Բ	11	Դ
10	Գ	10	Ե
9	Դ/Ե	9	Զ/Է
8	Զ	8	Ա
7	Է	7	Բ
6	Ա	6	Գ
5	Բ/Գ	5	Դ/Ե
4	Դ	4	Զ
3	Ե	3	Է
2	Զ	2	Ա
1	Է/Ա	1	Բ/Գ

Սարկավագադիր 1 թվականի համար փաստորեն յոթներյակի արժեքը ստացել ենք՝ **Է/Ա (7)**, իսկ հռոմեականի համար՝ **Բ/Գ (2/3)**, որոնցից կիրա-

ռելի է դառնում Գ(3) արժեքը, որն օգտագործելով, յոթներյակի Բ կանոնի համաձայն, ստանում ենք նույն՝ Է (7) արժեքը ($3 + 4 = 7$): Պարզվում է նաև հռոմեական յոթներյակին 4 գումարելու պատճառը:

Վստահաբար կարող ենք ասել, եթե Սարկավագադիր ՇԼԲ-ամյա գատկացուցակի հայոց շարքի առաջին տարում յոթներյակը Է (7) է, ապա բեսեքիստոնը կունենա հետևյալ պատկերը՝ Է, Ա, Բ, Գ/Գ, Ե, Զ, Է, Ա/Բ, Գ, Գ, Ե, Զ/Է, Ա, Բ, Գ, Գ/Ե, Զ, Է, Ա, Բ /Գ, Գ, Ե, Զ, Է/Ա, Բ, Գ, Գ, Ե/Զ:

Սա լիովին համապատասխանում է վերոբերյալ աղյուսակի թերի բերված համակարգին և լիովին բավարարում է Սարկավագի ՇԼԲ-ամյա գատկացուցակի հայոց շարքին, որն էլ կիրառել ենք այն վերականգնելիս:

Ինչպես գիտենք, նահանջ տարիներին յոթներյակն ունի 2 արժեք, իսկ նահանջի տարին մշտապես առանց մնացորդի պետք է բաժանվեր 4-ի: Սակայն հայոց տոմարում մեկ տարի ավելանալու պատճառով հայոց նահանջները համընկել են կենտ տարեթվերի:

Ը. Ղրիմեցին հայոց նահանջը կենտ տարեթվի համընկնելու մասին գրում է. «Եւ յորժամ հասարակածն եմուր ի նաւասարդ, յայնմհերէ ի ֆարյ թիւն գայ մինչև յօրս և առ յապա, և ըստ այնմ՝ ֆարյ (կենտ - Գ. Ս.) թուոյն յաւելեալ թիւն»⁶⁴⁹:

Նահանջ տարիներին մեկ օր ավելանալու հետևանքով ստացվում է 2 յոթներյակ՝ մեկը հունվարի 1-ից մինչև փետրվարի 28-ը, իսկ մյուսը՝ փետրվարի 29-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած օրերի համար, իսկ Սարկավագադիր անշարժ տոմարով՝ Քաղոց 29-ից մինչև Մեհեկի 22 և Մեհեկի 23-ից մինչև Քաղոց 28 եղած օրերի համար:

Վերոբերյալ հաշվումները տարբեր թվականության համակարգերով բերում են յոթներյակների տարբեր համակարգեր, որոնք սկսում են Ա (1), 2 (Բ), Գ (3), 5 (Ե), 7 (Է) արժեքներով: Սրանցից միայն Գ (3) և Է (7) արժեքներն են ճշգրիտը, որոնցով հնարավոր է եղել կրկին ստուգելու ու վերակազմելու Հովհաննես Սարկավագի «Ազնուականոնք ՇԼԲ-ամաց՝ ըստ Հռոմեացուց տոմարի» և «Ազնուականոնք ՇԼԲ-ամաց՝ ըստ Հայոց փոքր տոմարի (Սարկավագի)» գատկացուցակները:

Հռոմեացոց յոթներյակի համակարգը մասամբ է պահպանված Սարկավագի «Ազնուականոնք ՇԼԲ-ամաց՝ ըստ Հռոմեացուց տոմարի» գատկացուցակում⁶⁵⁰, քանի որ ՄՄ 1973^{հմր} գրչագրում, որի հիման վրա Ա. Աբրահամյանը հրատարակել է այն, յոթներյակը տրված է Բ (2) արժեքով, որը պետք է ուղղել Գ (3): Այն առկա է ՄՄ 1999^{հմր} գրչագրում ևս:

Ամփոփելով ասենք, որ Հովհաննես Սարկավագի ժամանակ թեև եղել են բազմաթիվ թվականության համակարգեր, սակայն նա յոթներյակի իր

⁶⁴⁹ Ի խնդիրս հասարակաց օգտի, **Հակոբ Ղրիմեցի**, Տոմարագիտական աշխատություններ, Եր., 1987, էջ 132:

⁶⁵⁰ Հովհաննեսի ՇԼԲ աղյուսակը, տե՛ս **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 191:

հաշվումներն արել է Հռոմեացոց ու Հայոց փոքր թվականության՝ Քննիկոն համակարգերով:

Միակ կանոնը, որ հիմնավորում է նրա յոթներյակների արժեքները, այս է՝ «Դարձեալ՝ կա՛լ 3Գ (304), զՀայ թուականն ի վերայ բե՛ր, Թ՝ (9) ի բա՛ց երթ եւ զայլն երթ ԻԸ (28), ԻԸ (28), որ ի խոնարհ մնայ, Եչ-էն առաջ տո՛ւր, ուր դադարի այն է»⁶⁵¹:

Այսպիսով, Հովհաննես Սարկավագը ոչ միայն խմբագրել է նախորդ յոթներյակի կանոնը, այլև Հայոց մեծ թվականի 2-րդ շրջապտույտի և իր անշարժ տոմարի համար ստեղծել է նոր կանոններ: Իսկ այդ կանոնով ստացած յոթներյակի արժեքները տեղադրել է իր 532-ամյա զատկացուցակներում, որոնք օգտագործվել են ամսամուտը հաշվելիս և տոների օրագյուտն անելիս:

Հովհաննես Սարկավագի տոմարի մեկնության՝ «Ամսամուտի, Արագիտի, Ծնունդ Լուսնի, Աուրք Լուսնի և Լրումն Լուսնի» կանոնները գալիս են նախորդ շրջանից և հիմնական բովանդակությամբ բավարարում են նաև Սարկավագադիր թվականին:

ՕՐԱԳՅՈՒՏ: Օրագյուտի միջոցով հնարավոր է դառնում որոշելու տարվա մեջ ցանկացած օրվա շաբաթագիրը, այսինքն՝ ցանկացած տարվա ցանկացած օր շաբաթվա ինչ օր է: Շաբաթագիրը որոշելն առանձնապես կարևոր է քրիստոնեական եկեղեցական տոնացույցը կազմելու ժամանակ, քանի որ հատկապես Հիսուս Քրիստոսին նվիրված կարևորագույն տոները՝ Հարությունը, Պայծառակերպությունը ևլն, լինում են միմիայն կիրակի օրերին: Շաբաթագիրը որոշելու նպատակով սահմանել են օրագյուտի կանոնը, որը հետևյալն է. «Արագիւր այսպէ՛ս արա. կա՛լ զաւուրս ամսոյն, կրկնակ նորին և զկթնէրեակ րարոյն և ե՛րթ Է (7), Է (7)⁶⁵², որ ի խոնարհ մնա՛ այն է. թէ՛ Ա (1) մնայ՝ կիրակէ՛ է, թէ՛ Բ (2)՝ երկուշաբաթ»⁶⁵³: Կանոնի համաձայն՝ օրագյուտ անելիս պետք է նախ որոշել խնդրելի ամսվա կրկնակը, այդ ամսվա ամսաթիվը, տարվա յոթներյակը, ապա կատարել պահանջվող գործողությունը:

Որպես օրինակ որոշենք Սարկավագադիր 1 թվականի Նաւասարդի 1-ը շաբաթվա ինչ օր է եղել: Սարկավագադիր 1 թվականին հայոց տոմարով յոթներյակը 7 է, Նաւասարդը կրկնակ չունի, իսկ Նաւասարդի 1-ը կլինի կիրակի՝ Ա (1) - (7 + 0 + 1 = 8 : 7 = 1 մն.):

«Օրագյուտի» կանոնն ստուգել ենք Սարկավագի ՇԼԲ-ամյա զատկացուցակի տվյալներով, որի առաջին քառամյակը ներկայացրինք՝ համոզվելու համար յոթներյակի հեղինակային լինելու խնդրում:

Մեզ հասած՝ Սարկավագի «Ազնուականոնք ՇԼԲ-ամաց՝ ըստ Հռոմեացոց տոմարի» զատկացուցակում օրագյուտով են ներկայացված

⁶⁵¹ **Ջ. Էյնաթյանի** աշխ., Տիեզերագիտության և տոմարի մեկնություններ (Է-ԺԵ դդ.), Եր., 2017, էջ 360:

⁶⁵² Բնագրում եղել է Լ (30), Լ (30), որն ուղղել ենք Է (7), Է (7)...

⁶⁵³ Հովհաննեսի «Պատձէն տոմարի» աշխ., տե՛ս Ա. Արբահամյան, նշվ. աշխ., էջ 205:

Քրիստոսի ծննդեան ու Յայտնութեան օրը և զատկական լրման օրերը, իսկ մի քանի տոներ (Առաջավոր, Զատիկ ևն), որոնք միայն կիրակի պետք է լինեն, շաբաթագիրը՝ Ա, չի նշված:

Հոռմեացոց տոմարով 1-19 թվականներին, որտեղ հաստատապես յոթներյակներն են դրված, շաբաթագրերն ստացվում են հոռմեացիների տոմարով՝ Գ-ով, իսկ Սարկավագադիր տոմարով՝ Է-ով սկսվող շաբթով: Այսպես, հունվարի 6-ին՝ Քրիստոսի ծննդյան ու Հայտնության օրը, շաբաթագիրը եղել է՝ առաջին տարում՝ Բ (2)՝ երկուշաբթի, երկրորդ տարում՝ Գ (3)՝ երեքշաբթի, երրորդ տարում՝ Դ (4)՝ չորեքշաբթի ևն, և օրագյուտի բերված կանոնով ստացել ենք՝ Ա տարում՝ 2 շրթ. ($6 + 0 + 3 = 9 : 7 = 2$ մն.), Բ տարում՝ 3 շրթ. ($6 + 0 + 4 = 10 : 7 = 3$ մն.), Գ տարում՝ 4 շրթ. ($6 + 0 + 5 = 11 : 7 = 4$ մն.) ևն:

Շ-եակ 2-րդ շրջապտույտի առաջին տարում Զատիկը եղել է ապրիլի 20-ին, այսինքն՝ կիրակի օրը՝ Ա (1): Ճշտված յոթներյակներով ու օրագյուտի կանոնով գործողություն կատարելուց հետո ստացել ենք Ա (1)՝ կիրակի: Ա տարում՝ 1085 թ., 20 (Զատիկի տոնի ամսաթիվը) + 6 (ապրիլ ամսվա կրկնակ) + 3 (յոթներյակ) = $29 : 7 =$ մն. 1 (Ա)՝ կիրակի:

Ժ տարում՝ 1094 թ., Զատիկը եղել է ապրիլի 9-ին. $9 + 6$ (ապրիլ ամսվա կրկնակ) + 7 (յոթներյակ) = $22 : 7 =$ մն. 1՝ կիրակի:

16-րդ տարում՝ 1100 թ., Զատիկը եղել է ապրիլի 1-ին. $1 + 6$ (ապրիլ ամսվա կրկնակ) + 1 (յոթներյակ) = $8 : 7 =$ մն. 1՝ կիրակի:

Նույն հաշվումները կատարենք Սարկավագադիր տոմարով:

Քրիստոսի ծննդյան ու Հայտնության ամիս-ամսաթիվը Քաղոց ամսի 29 է մշտապես: Օրագյուտով հայոց տոմարով ևս 1 թվականի համար Քաղոց 29-ի շաբաթագիրը պետք է ստանանք երկուշաբթի: Քաղոց ամսի կրկնակը 1 է, տարվա յոթներյակը՝ 7: Կատարենք գործողությունը՝ $29 + 1$ (կրկնակ) + 7 (յոթներյակ) = $37 : 7 =$ մն. 2 (Բ)՝ երկուշաբթի:

10-րդ տարվա յոթներյակը 4 է: $29 + 1 + 4 = 34 : 7 =$ մն. 6 (Զ)՝ ուրբաթ:

16-րդ տարվա յոթներյակը 5 է: $29 + 1 + 5 = 35 : 7 =$ մն. 0 = մն. 7(Է)՝ շաբաթ:

Բոլոր տարիների շաբաթագրերը նույնական են Սարկավագի «Ազնուականոնք ՇԼԲ-ամաց՝ ըստ Հոռմեացոց տոմարի» զատկացուցակի շաբաթագրերի հետ:

Զատիկի տոնի համար մշտապես ստանում ենք կիրակի:

Սարկավագադիր հայոց տոմարով ՇԼԲ-ամյա զատկացուցակի առաջին տարում Զատիկը եղել է Ահեկան 13-ին: Ահեկան ամսի կրկնակը 2 է, յոթներյակը՝ 7: Ստանանք շաբաթագիրը՝ 1 (Ա)՝ կիրակի՝ $13 + 2 + 7 = 22 : 7 =$ մն. 1 (Ա):

2-րդ տարում Զատիկը եղել է Արեգի 28-ին, Արեգ ամսվա կրկնակը՝ 0, իսկ այդ տարվա յոթներյակը 1 է: $28 + 0 + 1 = 29 : 7 =$ մն. 1 (Ա)՝ կիրակի:

29-րդ տարում Զատիկը՝ Արեգի 29-ին, այդ տարվա յոթներյակը 7 է:

29 + 0 + 7 = 36 : 7 = մն. 1 (Ա)՝ կիրակի:

Մեր հաշված յոթներյակների նոր շարքերով, օրագյուտով ստանում ենք տարվա բոլոր օրերի շաբաթագրերը, որոնք օգտագործել ենք վերակազմված և վերականգնված «Ազնուականոնք ՇԼԲ-ամաց՝ ըստ Հռոմեացոց տոմարի» և «Ազնուականոնք ՇԼԲ -ամաց՝ ըստ Հայոց տոմարի (Սարկավագի)» գատկացուցակներում:

Սարկավագի մեկնությամբ մեզ հասած օրագյուտի կանոնը լիովին բավարարում է Սարկավագադիր հայոց տոմարին:

ԱՄՍԱՄՈՒՑ: Քանի որ օրագյուտի կանոնով է արվում ամսամուտի հաշվարկը՝ վերցնելով ամիսների առաջին օրերը, դրան առանձին չենք անդրադառնա:

Հովհաննես գրչի վկայությամբ՝ Սարկավագից է համառոտված ու դյուրինացված նաև տոմարի Պատճենի հետևյալ հատվածը՝ «Արգի ԺԲ գարնանամուտ է հանապազ: Մարգաց ԺԳ ամառնամուտ է հանապազ: Հոռի Թ աշնանամուտ է հանապազ: Քաղոց Ժ ձմեռնամուտ է և ի ԻԹ յայրնություն է: Մեհեկի Ը րեատնընդատաջ է: Տրէի Ժ յիսնականուտ է յայրնութեան: Սահմի Ա և Թշրին ԻԳ և հոկտեմբերի ի Ժ յղութիւն է Եղիսաբեթի⁶⁵⁴: Եւ երեսուն արեգ ամսոյ և յայրիլի է և նիսան ի ԺԷ անտրիք է կուսին Մարիամու: նաւասարդի Ե, յազոսարուսի ի ԺԵ՝ րան Մարիամու սարուածածնի: Հոռի Ե, սեպտեմբեր ԺԳ՝ րան սրբոյ յաւջին»⁶⁵⁵:

Սարկավագին է նաև «Ի նահանջի ամի ամիսն մեհեկանի ԼԱ լինի և յաւելու է [երեակ] թիւ մի, որպէս այլոց ազգաց»⁶⁵⁶:

Այս հատվածներն էլ, որ տեղ են գտել Հովհաննես գրչի ընդօրինակության մեջ, անկասկած եղել են Սարկավագի Հայոց «Պատճէնում»:

Սարկավագի «Պատճէնում» են եղել նաև հայոց և հռոմոնց գատկական լիալուսնի գուգադրման կանոնը, «Տանուտէրք աւուրց...»-ը, «Տանուտէրք Ժամուց»-ը, «Յամի իննետասներեկի ար յաւելու վերադիրն...»-ը⁶⁵⁷, որոնք թերևս մասամբ եղել են նաև նախորդ շրջանում:

Հայոց «Պատճէնը» ավարտվում է աստղագիտական հաշվումներով ու կանոններով, որոնք գալիս են նախորդ շրջանից:

Այսպիսով, ՄՄ 1973^{հմր} և ՄՄ 1999^{հմր} գրչագրերում առկա հայոց տոմարի «Պատճէնները», իրապես, խարսխված են Սարկավագի ստեղծած ու խմբագրած «Պատճէնների» վրա:

⁶⁵⁴ Ինչպես երևում է այս բնագրից, Եղիսաբեթի հղացման ամսաթիվը հոկտեմբերի 9-ից դարձել է հոկտեմբերի 10, ինչը հավանաբար ուշ շրջանի ընդօրինակության արդյունք է, իսկ Մարիամ Աստվածածնի և Սուրբ խաչի տոնը դրված են անշարժ ամսաթվերով՝ օգոստոսի 15-ին ու սեպտեմբերի 14-ին:

⁶⁵⁵ Հովհաննեսի «Պատճէն տոմարի» աշխ., տե՛ս նշվ. աշխ., էջ 218:

⁶⁵⁶ Նույն տեղում, էջ 219:

⁶⁵⁷ Հովհաննեսի «Պատճէն տոմարի» աշխ., տե՛ս նշվ. աշխ., էջ 219:

Ուսումնասիրողները, ըստ արժանվույն, բարձր են գնահատել Սարկավագի «Պատձէն տոմարի»-ն՝ համարելով այն «կապիտալ գործ հայկական տոմարի և նրա հետ կապված զանազան հաշվումների վերաբերյալ»⁶⁵⁸, «տոմարական կանոնների համառոտ հանրագիտարան»⁶⁵⁹ կամ «...շատ արժեքավոր յուշարձան՝ գործնական աստղագիտութեան, տարբեր ժամանակագրութիւնների առումով»⁶⁶⁰:

Ե. ԼՈՒՄՆԱՅՈՒՅՑ

Հովհաննես Սարկավագը կազմել է «**Լուսնացոյց**» և տեղադրել իր տոմարական ժողովածուի մեջ: Նրա «Լուսնացոյցը» վերականգնել է Ռ. Վարդանյանը⁶⁶¹ և հիմնավորել, որ առկա լուսնացոյցների բնագրերը Հովհաննես Սարկավագինը չեն, այլ ուշ շրջանի խմբագրություններ: Այդպիսին է նաև ՄՄ 1999^{հմբ} գրչագրի բնագիրը: Բավական է վերցնել 10 թվականին (1094 թ.-ին) առաջին անգամ հանդիպող՝ Լուսնի ծնունդի ամիս-ամսաթիվը, որը փաստագրված է «Յունուար ԺԸ»: Այն պետք է լիներ հունվար ԺԹ՝ ըստ Սարկավագի և նրա օգտագործած տոմարական կանոնների, իսկ Շիրակացու կազմածում Լուսնի ծնունդը 10 թվականին (562 թ.-ին) եղել է հունվար 21-ին: Այլ խոսքով՝ Հովհաննես Սարկավագը կազմել է «Լուսնացոյց», որը մեզ չի հասել, սակայն «Ազգաց ազնուականոնների» միջոցով անուղղակի հասել են Լուսնի ծնունդների տվյալները: Հարկ է նշել, որ ՄՄ 1999^{հմբ} գրչագրում պահպանված կանոնը բնագրային է, և Հովհաննես Սարկավագն այն հաշվել է հռոմեական փոքր թվականով:

Բերենք այն. «Զմուր Լուսնացոյցիս այպէս արա՛. կա՛լ զՓոքր թուական Հոռումին, Թ (9) երթ և զայն ե՛րթ ԺԹ (19), ԺԹ (19), որ ի խոնարհ մնայ՝ Ա (1), Ա (1), մի մի դիմակացն րո՛ւր՝ սկսեալ ի սկիզբն դորա և զքանես ի գլուխ դիմակին զվերադիր ամին և զհնգեակն, զծնունդ Լուսնին եւ զքանիքն, զրիւն եւ զգիշերն, զժամն և զմասն, զլրբմանն եւ զծննդեանն:

Նույնպէս եւ ամենայն բոլորիցդ զմնացյալն Ա (1), Ա (1) խորանացն րո՛ւր եւ զքանես ի սպառումն թուոյն զինդրելին»:

Կատարենք կանոնով նախատեսված հաշվարկը Սարկավագի՝ Արևի խավարման վերաբերյալ բնագրում արտահայտված հռոմեական փոքր թվականի տարով, այն է՝ 333 թ.-ով, որից հանենք 9, կստանանք 324, բաժանենք 19-ի՝ մնացորդում կունենանք մեկ, որն իսկապես նրա 19-ամյակի առաջին տարին է (ապրիլի 4-ի լրման տարին): Վերոհիշյալ հաշվարկը հաստատվում է Սարկավագադիր՝ Հայոց փոքր թվականով, որն այդ տարում

⁶⁵⁸ **Բ. Թումանյան**, Հայ աստղագիտության պատմություն, Գիրք 1 (Հնագույն ժամանակներից մինչև 19-րդ դարի սկիզբը), Եր., 1964, էջ 68, Գիրք 2 (19-րդ դարի սկիզբից մինչև 1920 թ.), Եր., 1968, էջ 338:

⁶⁵⁹ **Հ. Բաղայան**, Հովհաննես Իմաստասերի տոմարի շուրջ, Էջմիածին, 1970, Գ, էջ 40-46:

⁶⁶⁰ Պատձէն տոմարի (Է-ԺԵ դդ.), աշխ.՝ **Զ. Էյնաթեանի, Գ. Տէր-Վարդանեանի**, էջ 59:

⁶⁶¹ **Ռ. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 232-256:

29-ն է: Հայոց փոքր թվականի կանոնը, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքի մեջ, նույնն է, ուստի $29 - 9 = 20 : 19$ -ի՝ մնացորդում կունենանք 1:

Լուսնի ծննդյան և լրման 19-ամյա աղյուսակների մի մասը, այն է՝ հռոմեականը, առաջին անգամ հրատարակել է Ա. Աբրահամյանը. «Հովհաննես Իմաստասերի մատենագրության» մեջ և վերագրել այն⁶⁶²: Սակայն հետագայում, երբ նրան հայտնի դարձավ «Անանիա Շիրակունույ համարողի Յաղագս Թ եւ Ժ երեկաց Լուսնի» հիշատակարանը, որտեղ ասվում է. «Արդ ես՝ Անանիա Շիրակացի սարուգի քննեցի զամենայն աւուրս ընթացից եւ եղանակաց Լուսնի ըստ իրում շրջագայէ և խորանօք փակեալ արձանացուցի, զի անաշխասար զինդրողսն պահեսցէ, եւ եղի յառաջ զընծայումն Լուսնի եւ զկնի լրումն, թէ ի քանիս ամսոյ լինի, եւ թէ ի փունջեան, թէ ի գիշեր, եւ թէ յորում ժամու ...»⁶⁶³, հրաժարվեց իր նախկին տեսակետից և 19-ամյա աղյուսակները վերագրեց Ան. Շիրակացուն: Ա. Աբրահամյանի դեմ դուրս եկավ Բ. Թումանյանը՝ փորձելով ցույց տալ, որ այդ աղյուսակները Շիրակացունը չեն, և հավանական համարեց, որ դրանք կազմել է Հովհաննես Սարկավագը՝ ելնելով հետևյալ կետերից.

- ա) Հայոց շարժական տոմարի համար այդպիսի աղյուսակներ չեն կազմվել ընդհանրապես,
- բ) Շիրակացու և Սարկավագի վերադիրների համակարգերը տարբեր են, ուստի ՇԼԲ-ի համապատասխանությունը ավելի հարմար է Հովհաննես Սարկավագին, քան Անանիա Շիրակացուն:

Հայոց շարժական տոմարի համար, ինչպես ցույց է տվել Ռ. Վարդանյանը, այդպիսի աղյուսակներ կազմելը անհնարին էր, որը երևում է ՇԼԲ-ի հայոց շարքից, ուստի նրա հիշատակարանում խոսքը հռոմեական (և հույլյան տոմարի տեղական տարբերակների, այսինքն՝ սյուս 7 ժողովուրդների) շարքի՝ Լուսնի ընծայման և լրման 19-ամյա աղյուսակներ կազմելու մասին է, որոնք զուգահեռաբար գործում էին հայկական շարքի հետ: 10-րդ դարի գրչությամբ՝ Անանիա Շիրակացու մի տոմարական պատառիկ վկայում է այդ մասին:

Այդտեղ Շիրակացին գրում է, որ 19-ամյա պարբերաշրջանի՝ իր սկսած առաջին տարում վերադիրը եղել է 9, 2-րդ տարում՝ 20, և «...սպա կարգաւ մինչեւ ցվախճան ինն ու փասներեկին»⁶⁶⁴: Այդպիսով, կարելի է ասել, որ նա 19-ամյակի առաջին տարին սկսել է, երբ Լուսնի լրումը ապրիլ 4-ին էր, և վերադիրը դրվել է 9, երկրորդ տարում լրումը մարտի 24-ին էր, վերադիրը՝ 20: Ե՛վ Անանիա Շիրակացին, և՛ Հովհաննես Սարկավագը ՇԼԲ-ի առաջին տարին համարել են այն տարին, երբ Լուսնի գատկական լրումը Նիսան 14 = ապրիլի 4-ին էր: Հովհաննես Սարկավագի՝ «Ազնուականոնք ՇԼԲ ամաց՝ ըստ հռոմեացւոց տոմարի»՝ առաջին տարվա վերադիրը 11 էր:

⁶⁶² Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 99-100, 283-293:

⁶⁶³ Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու Լուսնի պարբերաշրջանները, Եր., 1962, էջ 40-44:

⁶⁶⁴ Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 310-311:

Բ. Թումանյանն սկսել է ոչ թե առաջին տարվանից՝ ապրիլի 4-ից, այլ ապրիլի 13-ից՝ 19-ամյակի 11-րդ տարուց (էասյան և հայոց հաշվելու առումով առաջին տարի), մյուս դեպքում՝ տարբեր տարիներից (էասյան և 19-ամյակի առաջին տարուց՝ ապրիլի 4-ից և բյուզանդական 19-ամյակի առաջին տարուց՝ ապրիլ 2), ուստի և հանգել է այլ հետևության:

Ակնհայտ է, որ Անանիա Շիրակացու և Հովհաննես Սարկավագի յուրաքանչյուր տարվա վերադիրների տարբերությունը 2 է, իրար հաջորդող տարիներինը՝ 11, բացառությամբ 10-րդ տարվա, որտեղ երկուսինն էլ 12 է. «...դարձեալ զի՞նչ է Թ և Ժ երեկոյթին որ յաւելու ի վերադիրն յամենայն լուսին մաս մի յաւելու, և յապրիլ Դ-իցն մինչև մարտի ԻԵ-ի լինի ձի, որ կոչի օր մի ըստ մասանց Լուսինն և թիւ մի յաւելու ի վերադիրն: Եւ յապրիլի ԺԳ են մինչև յապրիլի ԺԵ-ն յամենայն լուսին մաս մի յաւելու, քայց օր ոչ կատարի, զի դառնայ լուսինն յապրիլի Դ-իցն, և նոր սկիզբն առնու բոլորին...»⁶⁶⁵:

Փաստորեն, Ռ. Վարդանյանը ցույց է տվել, որ Անանիա Շիրակացու կազմած 19-ամյակի վրա Հովհաննես Սարկավագն ավելացրել է միայն վերադիրների իր համակարգը, որով և դրանք տարբերվում են միմյանցից: Իսկ սա նշանակում է, որ Հովհաննես Սարկավագը եղել է Շիրակացու 19-ամյակի առաջին խմբագիրը, բացի դրանից, երբ Հովհաննեսը պատկերում է հոռմեական 19-ամյա աղյուսակները, վերադիրները, տեսնում ենք, որ առաջինն իրենն է, իսկ երկրորդը՝ Անանիա Շիրակացունը⁶⁶⁶:

Հովհաննես Սարկավագն իր «Լուսնի լրման և [Արևի] խավարման մասին» գրած Թ-դրամ կիրառել է հին հնգյակների արժեքները, որոնցով հաշվել են գիշերվա ու ցերեկվա ժամերն ու մասերը: Մյուս կողմից՝ «Ազգաց ազնուականոններում» և առկա «Լուսնացույցում», ինչպես և մեկնության մեջ կիրառել է նոր հնգյակների և վեցյակների համակարգը՝ սկիզբ ընդունելով ապրիլ 4-ի լրման տարին: Այդ է պատճառը, որ Ռ. Վարդանյանը Հովհաննես Սարկավագի «Լուսնացույց»-ը վերականգնել է երկու կտրվածքով, իսկ Անանիա Շիրակացունը՝ մեկ:

Զ. ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Հովհաննես Սարկավագին վերագրվող ժամանակագրական տեքստը հրատարակել են Ա. Աբրահամյանը՝ «Հովհաննես Իմաստասերի ժամանակագրություն (Նորին Յովհաննես քահանայի)»⁶⁶⁷, Վ. Հակոբյանը՝ «Յոհաննես քահանայի»⁶⁶⁸ և Հ. Ոսկյանը՝ դրա համառոտ խմբագրությունը՝ «Սարկավագ վարդապետին է բանս»⁶⁶⁹ վերնագրերով:

Ա. Աբրահամյանը տեքստը հրատարակել է ՄՄ 1973^{հմբ} ձեռագրի հիման վրա, որն ընդօրինակել է Գրիգոր քահանան Երզնկայում 1342 թվականին:

⁶⁶⁵ Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու տիեզերագիտություն և տոմարը, Եր., 1940, էջ 78-79:

⁶⁶⁶ Ռ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 149:

⁶⁶⁷ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Եր., 1958, էջ 131-134:

⁶⁶⁸ Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. առաջին, Եր., 1951, էջ 22-26:

⁶⁶⁹ Հանդէս ամսօրեայ, 1925, էջ 238-239:

Կարծում ենք, որ վերնագրերից ոչ մեկն էլ հեղինակային չէ, այլ հավելվել են հետագա դարերում խմբագիրների կամ գրիչների կողմից:

Գ. Բրուտյանն իր աշխատություններից մեկում⁶⁷⁰ փորձել է բացահայտել Հովհաննես Սարկավագի ժամանակագրական համակարգը՝ անդրադառնալով նաև այս ժամանակագրությանը: Ասենք միայն, որ ժամանակագրության մեջ հեղինակային կարող են համարվել հատուկենտ գրառումներ:

Այդ իսկ պատճառով մենք այդ խնդրին կմոտենանք այլ տեսանկյունից՝ կքննենք ժամանակի հայտնի թվականության համակարգերից մի քանիսը, որոնք առկա են Հովհաննես Սարկավագի տոմարական ժառանգության մեջ:

Հովհաննես Սարկավագն իր «Մեկնություն տումարիս Հայկազնեսայ» տոմարական ժողովածուի առանձին հատվածներում, ինչպես և հետագայում գրած նամակներում, որտեղ մեկնել է ժողովածուում տեղ գտած շրջանավոր և իր ներդրած տոմարի խրթին հարցերը, անդրադարձել է բազմաթիվ թվականության համակարգերի, բացահայտել դրանց օրինաչափություններն ու արտացոլել կապը հայոց թվականության համակարգերի հետ: Հարկ է նշել, որ նախկին մեր հետազոտություններում գրել ենք Հովհաննես Սարկավագի կողմից ներդրված առանձին թվականների մասին: Այստեղ մեր խնդիրն է՝ քննարկել ու վերլուծել նրա օգտագործած թվականության համակարգերը և բացահայտել բերած նորությունները:

Թվականության համակարգերի քննությունն սկսենք Հայոց մեծ թվականից: Այն Սարկավագը բնորոշել է իբրև «Բուն թուական հայոց». «...գի մուր բոլորին յապրիլելի չորիցն է եւ արն երեքշաբթի, թուեա ինն խորան և ի քաս կանոնին ապրիլի չորս և արն հինգշաբթ, որ է բուն թուականին սկիզբն»⁶⁷¹: Այն Շ-եակի վրա հիմնված հայոց թվականության համակարգն է, որի հաշվելու իմաստով առաջին տարին, ըստ Զատկի տոների, 553 թվականն է՝ ապրիլի 13-ի լրման տարին, իսկ 10-ը՝ 562-ը, ապրիլի 4-ի լրման տարին:

Թվականության համակարգերի քննությունը շարունակելու համար բերենք Արեգակի խավարման մասին ականատեսի՝ Հովհաննես Սարկավագի վկայությունը. «Յայսմ խաւարման արեգականն էր թուական հռոմեացոց Փոքրն ՅԼԳ (333) և հայոցն նոյնպէս Փոքրն ԻԹ (29), երկրորդ ժամուն, ի քսաներորդ մարտի, աւուրն չորեքշաբթոջ ի սուրբ քառասնորդացն, ի հինգերորդ շաբթին խավարեցալ արեգակն: Եւ էր շինութեան քաղաքին Հռովմայ՝ ՌՊԿԷ (1867) ամ, իսկ ի Դիոկղետրիանոսէ ՊԼ (830) ամ: Եւ Անտիոք քաղաքի շինութեան՝ ՌԿԳ (1063) ամ⁶⁷²: Եւ Կիրդոս քաղաքի՝ ՌՆԻԵ (1425): Իսկ ի գալստենէ Տեսոն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ՌՃԺԵ (1115) ամ ըստ հաստատուն և

⁶⁷⁰ Գ. Բրուտեան, Յովհաննէս Սարկավագի ժամանակագրական համակարգը, Եր., 1999:

⁶⁷¹ Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 226:

⁶⁷² Անտիոք քաղաքի շինության թվականը՝ ՌԿԳ-ն պետք է սրբագրել՝ ՌՃԳԿ, որին կանդրադառնանք հետագա քննության մեջ:

ճշմարիտ համարոյ: Եւ յԱդամայ 33ԺԳ (6313) ամ ըստ եւթանասանիցն թարգմանութեան, արեգ ամսոյ ի մերասան կամ որպէս արուեստ կարգն ունի Նաւասարդի ի եթն, միով արուրբ առաջ քան զհասարակարութիւն փունջեան և գիշերոյ, ի ՆԼԳ (473) ոլոմպիադին՝ յառաջնում ամին ըստ համարոյ յունաց: Եւ էր բուն թուական հայոց ՇԿԲ (562), ի ԸՂԴ (194) ոլոմպիադին, ի չորրորդում ամին: Եվ էր ծնունդն Քրիստոսի ՅԼԳ (333) ոլոմպիադին, յառաջին ամին եղաւ թուականն հայոց:

Ի կուսական արգանդէ յայտնութեան բանին աստուծոյ մինչև ի սկիզբ հինգհարիւրեկին են ամք ՇԿԲ (562), և երկուհարիւրեկին և ի ինասունհինգեկին դրութեան՝ ինն ամ, և ի հոռոմ թուականին ի սկզբանէ յԺԳ: Ոմանք յերիս ամս անելորդ մուծանեն ի ներքս ի մեջ ամացդ՝ որք ասեն ՇԾԶ (556) ի ծննդենէն փետոն մինչ ի սկիզբն հայ թուականին. բայց ոչ այդպէս, այլ ՇԾԳ (553) ամ ի գալստենէ փրկչին մինչ ի հայոց թուական դրութիւն, ինն ամավ գկնի երկուհարիւրեկին առաքմանն, ի չորեքասան ասրիելի լրմանն»⁶⁷³:

Քանի որ Հովհաննես Սարկավագի օգտագործած որոշ թվականության համակարգերի օրինաչափություններն ու նրանց առանձնահատկությունները առավել հստակ են արտացոլված Ռ. Վարդանյանի կազմած աղյուսակում⁶⁷⁴, ներկայացնենք այն:

№	Զուգահեռ թվականները	Թվականներից ստացված մնացորդներ	19-ամյակի համապատասխան տարվա Լուսնի լրումները	19-ամյակի 1-ին տարվա Լուսնի լրումները
1	333 (Հռոմեական փոքր թ.)	10	A 4	A 13
2	29 (Հայոց փոքր թ.)	10	A 4	A 13
3	1867 (Հռոմ քաղաքի շին. թ.)	5 (-4)	A 4	A 4
4	830 (Դիոկղետիանոսի էրա)	13 (-1)	A 4	A 5 (6)
5	11163 (Անտիոքի շին. թ.)	4 (-3)	A 4	A 4
6	1423 (Կիւրդոս քաղ. շին. թ.)	19 (+1) = 1	A 4	A 4
7	1115 (քրիստ. հայկական թ.)	13 (-3)	A 4	A 13
8	6313 (Արարչութ. 70-ից թ.)	5 (-4)	A 4	A 4
9	562 (Հայոց մեծ թվ.)	11(-1)	A 4	A 13
10	1889 (473-րդ օլիմպ. 1-ին տ.)	8	A 4	A 2
11	1113 (քրիստ. ներկա թ.)	11(-1)	A 4	A 13

Արևի խավարման մասին պատմիկի տեղեկություններով ստանանք Հայոց մեծ թվականին, այն է՝ 562, ներկա թվականի համարժեքը: 562 քառասնորդաց պահի չորեքշաբթին, Նաւասարդի 27-ը (հայոց շարժական տոմարով), մարտի 19-ը (հռոմեացոց անշարժ տոմարով) եղել են 1113 ներկա թվականին: Հովհաննես Սարկավագը մեկ տարի ավելացրել է Հայոց Շ-եակի թվականի վրա, որը երևում է հայոց շարժական տոմարի Նաւասարդի

⁶⁷³ Լուսնի լրման և խավարման մասին, Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 278-279:

⁶⁷⁴ Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը, էջ 264:

27-ի ցուցումով, ինչպես և Հայոց մեծ ու Հայոց փոքր (Սարկավագադիր) թվականների տարբերությունից՝ 533 (562-29):

Նա բացատրել է այդ փոփոխությունների պատճառը. «...Որքան առնու զաւարտ ՌՆԿ (1460) ամբն, լինի դարձեալ թիւ մի յաւելուած, որ թողուլ պատշաճ է»⁶⁷⁵, ապա խմբագրել է Շ-եակի կանոնը:

Հեղինակը գրում է, որ Հայոց մեծ տոմարի 452-րդ տարում (= ՃԺԳ նահանջ տարի՝ 113 x 4)՝ 1460 տարի հետո, զարնանամուտը համապատասխանեց Նաւասարդի 1-ին, և հայոց թվականը 1-ով ավելացավ, որովհետև հայոց շարժական տոմարի տարին մշտապես ուներ 365 օր, իսկ հուլյան տոմարինը՝ յուրաքանչյուր չորրորդ՝ նահանջի տարում 1-ով ավելանում էր՝ դառնալով 366: Հայոց շարժական տոմարում 1460 տարիների նահանջների կուտակման հետևանքով (365 x 4) առաջանում էր ևս մեկ տարի, այսինքն՝ հուլյան 1460 տարին հավասար է հայոց շարժական տոմարի 1461 տարվա⁶⁷⁶: Այդ է պատճառը, որ Սարկավագը բացահայտել ու քննարկվող հատվածի մեջ ներդրել է Հայոց Շ-եակ 561 թվականը՝ դարձնելով 562: Նկատենք, որ Անանիա Շիրակացին իր կազմած գատկացուցակում ամիսներով ու ամսաթվերով (Նաւասարդ, Հռոի ևն) է ցույց տվել այդ երևույթը⁶⁷⁷, իսկ Հովհաննես Սարկավագն առաջին անգամ բարձրաձայնել է ու մեկով ավելացրել հայոց թվականը: Ասենք նաև, որ Անանիա Շիրակացու գատկացուցակի հռոմեացոց շարքի որևէ թվականից ներկա թվականն ստանալու համար միշտ գումարվում է 552 հաստատունը, իսկ հայոց շարքի այն թվերից, որոնց ամսաթվերն ընկնում են հաջորդ տարվա (Նաւասարդ ևն) ամիսների վրա, տվյալ թվականից ներկա թվականն ստանալու համար գումարվում է 551 հաստատունը, իսկ թվականը 19-ի վրա բաժանելուց հետո ստացված մնացորդից հանվում է 1:

Այսպես է նաև Հովհաննես Սարկավագի մոտ: Բերված օրինակում 1113-562 = 551, որովհետև 1 տարի ավելացրել է հայոց թվականի վրա, իսկ 562-ը բաժանելով 19-ի՝ մնացորդից հանում ենք 1, որպեսզի գտնենք ճիշտ լրման օրը: Հովհաննես Սարկավագը բազմիցս հիշեցնում է. «...Թողուլ զաւելորդն ի թուականէն զմի թինս և ուղղապէս վարիլ»⁶⁷⁸, կանոն է սահմանել, թե հայոց ավելացած մեկ տարին կա՛մ պետք է հանել Շ-եակի տարիներից՝ անկախ նրանից 1-ին թե 2-րդ շրջապտույտի համար են, կա՛մ 533 տարի հետ գնալ, որպեսզի գտնվի հայոց շարժական տոմարի, ինչպես և Շ-եակի ու իր ստեղծած անշարժ տոմարի տարին և լրման օրը: Դրա լավագույն օրինակը բերել է Արևի խավարման մասին պատառիկում, որտեղ Հայոց մեծ և փոքր թվա-

⁶⁷⁵ Նորին (Յովհաննու) Առ Սարգիս, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 263:

⁶⁷⁶ Յաղագս ամսոց հայոց եւ տանից, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 281-282:

⁶⁷⁷ Տե՛ս Շ-եակի հայոց շարքի թվերը, Լ. Սարգսյան, Ռ. Վարդանյան, Գ. Սինոնյան, Շ-եակի (շլք) կարգ (բոլորակ) հռոմեացոց և հայոց Անանիայի Շիրակացույ (Շիրակունտոյ) (վերականգնություն), ԵՊՀ աստվ. ֆակուլտետ, Տարեգիրք, Դ, Եր., 2009, էջ 43-55:

⁶⁷⁸ Նորին (Յովհաննու) Առ Սարգիս, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 263:

կանների տարբերությունը 533 (562-29) տարի է: Այնտեղ լրման օրերը համապատասխանում են Շ-եակի՝ հաշվելու իմաստով 10-րդ տարվա՝ ապրիլի 4-ի լրման տարուն՝ հաշված առաջին՝ ապրիլի 13-ի լրման տարուց:

Վերը տեսանք, որ Լուսնի լրումն ու [Արևի] խավարումը տեղի են ունեցել քրիստոնեական Դիոնիսյան կամ ներկա թվականի 1113-րդ տարում, որը, իբրև բացարձակ թվական, կասկած չի հարուցել տոմարագետների մոտ, սակայն Արևի խավարման մասին տոմարական պատառիկում գրված է քրիստոնեական երկու այլ թվականների մասին, որոնցից մեկը տրված է Արևի խավարման համար բերված մյուս համաժամանակյա թվականներին գուգահեռ. «*Իսկ ի գալստենէ Տեսոն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ՌՃԺԵ (1115) ամ ըստ հասարարուն և ճշմարիտ համարոյ*», իսկ հիշյալ և մյուս քրիստոնեական թվականը՝ հայոց մեկ և մինչև հայոց թվականի կտրվածքով. «*Ոմանք յերիս ամս ատերորդ մուծանեն ի ներքս ի մեջ ամացդ՝ որք ասեն ՇԾԶ (556) ի ծննդենէն տեսոն մինչ ի սկիզբն հայ թուականին. Բայց ոչ այդպէս, այլ ՇԾԳ (553) ամ ի գալստենէ փրկչին մինչ ի հայոց թուական դրութիւն...*»⁶⁷⁹:

Ասենք նաև, որ «Պատճէն տոմարի Հայոց»-ի խմբագրությունների մեջ հանդիպում ենք քրիստոնեական թվականներն ստանալու հետևյալ երեք կանոններին.

1. Վերցրո՛ւ 552 հաստատուն թիվը, գումարի՛ր հայոց թվականը, կստանաս քրիստոնեական թվականը՝ «Կա՛լ ՇԾԲ (552), եւ զՀայդ՝ Քրիստոսին է»⁶⁸⁰, «**Ի Քրիստոսէ մինչեւ առ մեզ կա՛լ ՇԾԲ (552), զՀայ թուականն ի վե՛րայ բեր, և այն է**»⁶⁸¹:
2. Վերցրո՛ւ 556 հաստատուն թիվը, գումարի՛ր հայոց թվականը, կստանաս քրիստոնեական թվականը:
3. Վերցրո՛ւ 553 հաստատուն թիվը, գումարի՛ր հայոց թվականը, կստանաս քրիստոնեական թվականը. «*Անտի (Փրկչի ծնունդից - Գ. Ս.) մինչև ի հայ թուականին դիր՝ ՇԾԳ (553)*»⁶⁸² կամ «*Կա՛լ ՇԾԳ (553) և զհայդ՝ կենարարին է*»⁶⁸³:

Համառոտակի ներկայացնենք հայոց մեջ քրիստոնեական երեք թվականների սկզբնավորման և օգտագործման պատկերը:

Առաջին կանոնի ստեղծողն Անանիա Շիրակացին է, որը Շ-եակ գատկացուցակ կազմեց հռոմեացոց ու հայոց շարքերով 1-550 թվականների համար՝ հռոմեացոց շարքի յուրաքանչյուր տարուն գումարելով 552 հաստատունը, որով ստանում ենք քրիստոնեական Դիոնիսյան կամ ներկա թվականի համարժեքը: Հայոց շարքի համար կրկնվում է նույն պատկերը: Բացառություն են այն տոնական կանոնները, որոնց տարին սկսում են Նաւասարդից

⁶⁷⁹ Լուսնի լրման և [Արևի] խավարման մասին, Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 279:

⁶⁸⁰ Պատճէն տոմարի..., աշխ.՝ Զ. Էյնաթեանի և Գ. Տէր-Վարդանեանի, էջ 166:

⁶⁸¹ Նույն տեղում, էջ 171:

⁶⁸² Նորին [Յոհաննու քահանայի] ժամանակագրություն, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 279:

⁶⁸³ «Մեկնութիւն տոմարիս Հայկազնեայ» աշխ., տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 215:

նն: Շ-եակի վերականգնման մեջ դրանք նշված են աստղանիշներով⁶⁸⁴, որովհետև Շ-եակի թվերը Շիրակացին չէր կարող փոխել, ուստի պետք է արտահայտեր հաջորդ տարվա ամսաթվերով:

Անանիա Շիրակացու ստեղծած հաստատունն օգտագործել են Հովհաննես Կոզեռնը և Ատողիկը, ինչպես նաև կիրառված է ուշ շրջանում ընդօրինակված պատճեններում:

2-րդ կանոնի ստեղծողն անհայտ է: Այն Ռ. Վարդանյանը գտել է Անիի Կաթողիկեի շինարարական արձանագրության համաժամանակյա թվականների վերլուծության միջոցով: Արձանագրությունը գրվել է 1009 թվականին, իսկ Անիի Կաթողիկեն ավարտել են 1002-ին, այսինքն՝ քրիստոնեական թվականի 2-րդ տարբերակի սկզբնավորումը կարելի է կապել 10-րդ դարի վերջերին-11-րդ դարի սկզբներին ստեղծված Անիի գրչության դպրոցի հետ⁶⁸⁵: Ուշագրավ է, որ Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի թղթյա հնագույն ձեռագրում⁶⁸⁶ գտնում ենք մի ժամանակագրություն՝ սկսած քրիստոնեական 1 թվականից և ավարտված քրիստոնեական 556 թվականով, որի շարունակությունն սկսվում է հայոց մեկ թվականով՝ համարժեք 556-ին, և ավարտվում Պետրոս Գետադարձի 23-րդ տարով (= 1043 թ.) և Միքայել Պոզոնատի 4/5-րդ տարով (= 1038/1039 թթ.), ուստի կարելի է ասել, որ այդ քրոնիկոնն ավարտվել է 1042 թվականից ոչ ուշ⁶⁸⁷:

Այդ բնագրում, ինչպես նշվեց, հայոց 1 թվականը համադրված է 556 քրիստոնեական թվականին, այսինքն՝ 2-րդ տարբերակի համաձայն է, որը, ինչպես տեսանք վերևում, քննադատում է Հովհաննես Մարկավագը՝ նշելով, թե իր ընդունած քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակից 3 տարի ավելի է: Հետևապես քրիստոնեական թվականի այդ տարբերակը Հովհաննես Մարկավագից առաջ գոյություն է ունեցել ու կիրառվել:

Քրիստոնեական թվականի 2-րդ տարբերակի կանոնը՝ 556 հաստատունով, դրված է «Պատճենների» հետագա ընդօրինակությունների լուսանցքում, ինչը նշանակում է, որ այն շրջանառությունից դուրս էր եկել 13-14-րդ

⁶⁸⁴ Տե՛ս Շ-եակի հայոց շարքի թվերը՝ **Լ. Սարգսյան, Ռ. Վարդանյան, Գ. Սինոնյան**, Շ-եակի (ՇԼԲ) կարգ (բոլորակ) հռոմեացուց և հայոց Անանիայի Շիրակացույ (Շիրակունույ) (վերականգնություն), ԵՊՀ աստվ. ֆակուլտետ, Տարեգիրք, Դ, Եր., 2009, էջ 43-55 և **Լ. Սարգսյան**, Հայոց տոնացույցի ծագումն ու զարգացումը, Եր., 2010, էջ 223-235:

⁶⁸⁵ **Ռ. Վարդանյան**, Անիի Կաթողիկեի արձանագրության համաժամանակյա տարեթվերը // Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 1, Եր., 2000:

⁶⁸⁶ Մատենան գիտութեան եւ հաւատոյ **Դաւթի քահանայի**, Եր., 1997, էջ 239:

⁶⁸⁷ Ըստ Մատենան գիտութեան եւ հաւատոյ **Դաւթի քահանայի** ժամանակագրության՝ Պետրոս Գետադարձի 1-ին տարին էր ՆԿԵ (465) Հայոց մեծ թվականից (= 465 + 555 = 1020 թվական՝ քր. թ. 2-րդ տարբ., 465 + 552 = 1017 թ.՝ Դիոնիսյան քր. կամ ներկա թ.) մինչև նրա 23-րդ տարին՝ 487 Հայոց մեծ թվականը (= 487 + 555 = 1042 թվական՝ քր. թ. 2-րդ տարբ., 487 + 552 = 1039՝ Դիոնիսյան քր. կամ ներկա թ.): Ինչպես Միքայել Պոզոնատի 1-ին տարով դրված Հայոց մեծ թվականի ՆՁԱ տարում, իսկ տարիները (Ա, Բ, Գ, Դ) թվարկված են **ՆՁԲ** (482) թվականից, այն է՝ ըստ հեղինակի՝ 481/2 + 555 = 1036/7 թթ.՝ քրիստոնեական թվականի 2-րդ տարբերակով, և 481/2 + 552 = 1033/4 թթ.՝ մինչև **ՆՁԵ** (485) թ. (485 + 555 = 1040 թ.) քր. թվականի 2-րդ տարբ.՝ ու, և 485 + 552 = 1037 թ.): Ներկա թվագրմամբ՝ Պետրոս Գետադարձի առաջին տարին 1020 + 22 = 1042 թ., իսկ Միքայել Պոզոնատը՝ 1034 + 4/5 = 1038/9 թթ.:

դարերում, և տիրապետող էր դարձել քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակը:

Մինչև 3-րդ տարբերակին անցնելը քննենք, անկասկած, քրիստոնեական թվականի 2-րդ տարբերակի մասին մի վկայություն, որին հանդիպում ենք Սամուել Անեցու մոտ. «Մինչև ցդիր թուականիս մերոյ ուղղեալ էր ս. վարդապետին ինոյ Գէորգայ ըսպ քննիկոնին զնահանջն եւ ասէ. տեսի ի Շ.ե.կին զգիր թուականին առաջին ամն նահանջ, ոչ գիտելով զգիարդն՝ թողլով աստի և յառաջ ըսպ գրեալսն»⁶⁸⁸:

Կասկած լինել չի կարող, որ Սամուել Անեցին իր ժամանակագրության մեջ օգտագործել է քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակը, որովհետև հայոց և քրիստոնեական թվականների տարբերությունը 553 է, չհաշված որոշ գրչական սխալներն ու ընդմիջարկությունները: Սակայն հայոց մեկ թվականի մասին գրած վերոհիշյալ հատվածում հայտնում է, որ իր վարդապետի՝ Գէորգի գրած քրոնիկոնում հայոց մեկ թվականը դրված է նահանջի տարում: Պատճէններում նահանջի կանոնը շատ հստակ է. թվականը բաժանում են 4-ի, և միայն զրո ստանալու դեպքում է նահանջի տարի: Հայոց մեկ թվականը երբեք նահանջի տարի լինել չէր կարող, ուստի իր վարդապետի քրոնիկոնում հայոց մեկ թվականին զուգահեռ դրված է եղել քրիստոնեական թվականի 2-րդ տարբերակը, այն է՝ հայոց 1 թվականին = 556 քրիստոնեական թվականը (556 : 4 = 0 մն.՝ նահանջ տարի): Ուստի Գէորգ վարդապետի քրոնիկոնը նման է եղել 11-րդ դարի 40-ական թվականների սկզբին գրված ժամանակագրությանը:

Անցնենք քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակի վերլուծությանը:

Նկատենք, որ քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակի սկզբնավորողը Հովհաննես Սարկավազն է, ով ոչ միայն Հայոց մեծ և փոքր թվականների կանոններն է սահմանել, այլև կանոնել քրիստոնեական թվականության զանազան համակարգերը և վերածել քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակի:

Շարունակենք Արևի խավարման մասին պատառիկում տեղ գտած համաժամանակյա թվականության մյուս համակարգերի քննությունը:

Վերլուծենք Հռոմեական փոքր թվականը, որը բնագրում 333 թ. է: Հռոմեական փոքր թվականի մասին Սարկավազն ունի մի քանի կանոն.

1. «Դարձեալ կա՛լ զՀայ թուականն գՆորն, ՅԴ (304) ի վերա՛յ բեր, Փոքր թուական է Հռոմի, որ կոչի Քննիկոն»⁶⁸⁹: «Կալ Յ (300)՝ ուղղել՝ ՅԴ (304)՝ և զհայդ՝ հռոմի է»⁶⁹⁰:

Ինչպես հայտնի է վերոբերյալ բնագրերից, Հայոց և Հռոմեացոց փոքր թվականների միջև կա 304 տարվա տարբերություն: Հայոց և Հռոմեացոց մեծ թվականների միջև նույնպես առկա է 304 տարվա տարբերությունը հայոց

⁶⁸⁸ Սամուել Անեցի, Հաւարմունք..., էջ 75:

⁶⁸⁹ Պատճէն տումարի..., աշխ.՝ Զ էյնաթեանի և Գ. Տէր-Վարդանեանի, էջ 151:

⁶⁹⁰ Հովհաննեսի «Պատճէն տումարի» աշխ., տե՛ս Ա. Արրահամյան, նշվ. աշխ., էջ 215:

այն տարիների համար, որոնք ավելացել են մեկ տարով, այն է՝ 1004 թվականից հետո ընկած տարիների համար, քանզի այդ թվականից Նաւասարդի 1-ը հաստեց մարտի 20-ը, և ավարտվեց Հայոց շարժական տոմարի 1460-ամյա պարբերաշրջանը, որը հայոց տոմարով հավասար էր 1461 տարվա: Սարկավագը բացատրում է նաև, թե ինչպես է առաջացել այդ հաստատունը. «Իսկ ՅԴ (304) ի վերայ թուականին դնելոյ այս է պարզառն. Զի սկզբանէ մինչև ի սկիզբն հայ թուականին ԺԶ (16) խորան, որք լինին ամք ՅԴ (304), և ի հայ թուականէն ի հոռովմ ԺԲ (12) խորան, որ է ՄԻԸ (228)»⁶⁹¹:

2. «Թուական հոռովմի այսպէս արա՛. կա՛լ երթն ամէն Փիլիպոսի կայսեր մինչև յերեսուն և չորս ամն Յուսրիանոսի կայսեր և ի ԻԴ (24)ն Խոսրովու պարսից արքայի, որ լինին ամք ՅԴ (304), զհայ թուականն վերայ բեր՛ր և երթ զշրջան ՇԼԳ (533). որ մնայ՝ թուական է հոռովմ»⁶⁹²:

3. «Եւ լինին մինչև ի յանկումն երկուհարիւրեկին՝ յերկրորդէն Փիլիպպեայ, ամք ՅԴ (304), որոյ վրայ ածելով զհայոյն թուականն, գրանի հոռովմոցն»⁶⁹³:

«Կա՛լ զհոռովմի թուականն, ՄԻԹ (229) ի վերայ՝ բեր, թուական է հայոց: Կա՛լ զհայ թուականն, ՄԻԹ (229) ի բա՛ց երթ, թուական է հոռովմ»⁶⁹⁴:

Հոռովմի 333 թվականին ավելացնելով 229-ը՝ ստանում ենք 562՝ Հայոց բուն թվականը, ինչպես և վերջինից հանելով 229-ը՝ ստանում ենք Հռոմեացոց փոքր թվականի 333-րդ տարին:

Առաջին կանոնը հիմնավորված է Լուսնի և Արևի խավարման մասին պատառիկում Հռոմեացոց ու Հայոց փոքր թվականների և 304 հաստատունի առնչակցություններով, այն է՝ $29 + 304 = 333$ և $333 - 304 = 29$:

Երկրորդ կանոնով՝ տեղ է գտել Հայոց մեծ թվականին գումարելով 304 հաստատունն ստացված թիվը, որից պետք է հանել 533 տարի, այն է՝ $562 + 304 = 866 - 533 = 333$: Նկատենք, որ 533-ը Հայոց մեծ թվականը մեկով ավելացած տարիների համար է, որի կանոնը սահմանել է Հովհաննես Սարկավագը:

Ի վերջո, երրորդ կանոնով՝ Հռոմեացոց փոքր թվականին գումարվում է 229-ը հաստատունը (նախկին 228-ի փոխարեն, որը գրանցված է առաջին կանոնի բացատրության մեջ), և ստացվում է Հայոց մեծ թվականը՝ $333 + 229 = 562$: Այստեղ Հայոց մեծ թվականին ավելացած տարին գումարվել է հաստատունին: Այս կանոնի խմբագիրը ևս Սարկավագն է:

Պատառիկում այս՝ հռոմեացոց և քրիստոնեական թվականների տարբերությունը 782 (1115 - 333) է, որը 2 տարով ավելի է Դիոնիսյան կամ ներկա թվականից քրիստոնեական թվականի առաջին տարբերակից (1113 - 333 = 780):

Այդ թվականների համարժեքությունը նկատվում է նաև՝ դրանք 19-ի բաժանելուց հետո ստացված մնացորդների 10 արժեքից ($333 : 19 =$ մն. 10 և

⁶⁹¹ «Մեկնութիւն տոմարիս Հայկազնեայ» աշխ., տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 226:

⁶⁹² Հովհաննեսի «Պատճէն տոմարի» աշխ., տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 210:

⁶⁹³ Յաղագս ըստ հռոմոց ամսոց...., տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 246:

⁶⁹⁴ Նույն տեղում:

29 : 19 = մն. 10)⁶⁹⁵: Երկու թվականների մնացորդներով էլ ստանում ենք ապրիլի 4-ի լրման տարվա համարժեքը, քանի որ 2-ում էլ 532-ամյա գատկացուցակն սկսում է հաշվելու իմաստով առաջին տարվա՝ ապրիլի 13-ի Լուսնի լրումով: Այլ խոսքով՝ Հռոմեացոց փոքր թվականից ներկա թվականն ստանալու համար պետք է ավելացնել 780 (333 + 780 = 1113), որովհետև Հռոմեացոց փոքր թվականն սկսել է 781 թվականից, այսինքն՝ 1115 թվականից պետք է հանել 2 տարի:

Հաջորդ համաժամանակյա թվականը Հայոց փոքր՝ 29 թվական է, որը 532-ամյա գատկացուցակի 2-րդ շրջապտույտի թվական է: Քանի որ 2-րդ շրջապտույտի գատկացուցակը, ինչպես կտեսնենք, կազմել է Հովհաննես Սարկավագը, ուստի նրանով ձևավորված թվականը հետագայում անվանվել է նաև Սարկավագադիր թվական:

Հայոց փոքր թվականի և քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակի միջև առկա է 2 տարվա տարբերություն (1115 - 29 = 1086 - 2), որը երկու տարվա տարբերություն ունի նաև քրիստոնեական թվականության 3-րդ տարբերակից, որից էլ պետք է հանել երկու, քանզի Հովհաննես Սարկավագի 532-ամյակն սկսում է 1085 թվականից, և հաստատուն թիվը 1084-ն է, ինչպես ցույց է տրվել⁶⁹⁶, և դրան գումարելով 29. կստանանք 1113 թվականը, որը հիմնավորվեց 29-ը 19-ի բաժանելուց հետո ստացված մնացորդով՝ 10-ով, քանի որ Հայոց փոքր թվականն էլ, ինչպես Հռոմեական փոքր թվականը, սկսում է հաշվելու իմաստով 1-ին՝ ապրիլի 13-ի լրման տարուց, իսկ ապրիլի 4-ի լրման տարին հաշվելու իմաստով 10-րդ տարին է:

Հաջորդ համաժամանակյա թվականը Հռոմի հիմնադրման՝ 1867, թվականն է, որի տարբերությունները քրիստոնեական թվականի առաջին և 3-րդ տարբերակներից՝ 754 (1867 - 1113) և 752 (1867 - 1115) տարիներ են: Հռոմի հիմնադրման տարվա մասին կան տարակարծություններ, ուստի դժվար է պնդել, թե որ տեսակետն է պաշտպանել Հովհաննես Սարկավագը: Հավանաբար նախապատվությունը տվել է 752-ին, որը 2 տարվա տարբերություն ունի քրիստոնեական ներկա թվականից:

Համաժամանակյա թվականների շարքում հաջորդը Դիոկղետիանոսի թվականով 830 թվականն է: Քրիստոնեական թվականների երկու տարբերակներով տարբերությունները (1115 - 830 = 285 և 1113 - 830 = 283) ցույց են տալիս, որ 1 տարի պետք է հանել 830-ից՝ դարձնելով 829, քանի որ Դիոկղետիանոսի թվականով տրված գատկացուցակներում հաստատուն թիվը միշտ 284-ն է, որովհետև, թեև Դիոկղետիանոսի թվականն սկսում է 284 թվականի օգոստոսի 29-ից և ավարտվում 285 թվականի օգոստոսի 28-ին, և

⁶⁹⁵ **Ռ. Վարդանյան**, Անանիա Շիրակացու հիշատակարանների մեկնության շուրջը և մի քանի տոմարական ժամանակագրական հարցեր // Պատմա-քանասիրական հանդես, Եր., 1987, թիվ 1, էջ 195-210:

⁶⁹⁶ Տե՛ս **Գ. Սիմոնյան**, Հովհաննես Սարկավագի անշարժ տոմարի ուսումնասիրությունների պատմությունից, էջ 223-224:

տարվա երկու հատվածների համար կիրառվում են երկու հաստատուններ՝ օգոստոսի 29-ից դեկտեմբերի 31՝ 283-ը և հունվարի 1-ից օգոստոսի 28-ը՝ 284-ը, սակայն զատկացուցակներում տարիներն ընկնում են 285 թվականին, ուստի հաստատունը 284-ն է: Հետևապես, Սարկավագի գրանցած 830-ը պետք է դարձնել 829 (թիվը կլորացրել է), որպեսզի իր իսկ սահմանած քրիստոնեական թվականի համար ստանանք երկու տարվա տարբերություն, այն է՝ $1115 - 829 = 286$, իսկ ներկա թվականի համար՝ $1113 - 829 = 284$: Ի վերջո, 829-ը բաժանելով 19-ի՝ մնացորդում ոսկե թվի համարը կունենանք 12, որի առաջին տարին Դիոկղետիանոսի թվականով առաջնորդվողների ընդունած 19-ամյակի առաջին՝ ապրիլի 5-ի (Իրենի 19-ամյակով), մեզանում՝ ապրիլի 6-ի լրման տարին է, իսկ Արեգակի խավարման տարին կլինի ապրիլի 4-ի լրման տարին, ինչպես մյուս համաժամանակյա տարեթվերում է: Այսպիսով, Դիոկղետիանոսի թվականը հայոց քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակից կունենա 2 տարվա տարբերություն, իսկ ներկա թվականի հետ կնույնականանա, քանզի զատկացուցակներում Դիոկղետիանոսի, այն է՝ ներկա թվականին գումարվել է 284 հաստատունը:

Քննենք հաջորդ՝ Անտիոքի շինության համաժամանակյա թվականը, որը նույն՝ Անդրեասի թվականն է, որը արձանագրվել է ՌԿԳ (= 1063), սակայն գրչական սխալով է, և պետք է սրբագրել ՌՃԿԳ (= 1163), որովհետև տոմարական բնագրերում կանոն կա սահմանված. «Կալ Ռ (600) և զհայդ՝ Անդրեասին է»⁶⁹⁷: Բնագրում փաստված «զհայդ»-ը Հայոց բուն՝ 562 թվականն է, որին գումարելով 600՝ կստանանք 1162. այն 1 տարվա տարբերություն ունի բնագրում արձանագրվածից, որը կբացատրենք քիչ հետո:

Հարկ է նշել, որ Անտիոքացոց թվականն օգտագործել է Անդրեասը իր 200-ամյա զատկացուցակը կազմելիս: Զատկացուցակի հիշատակարանում գրված է, որ այն սկսել է Անտիոքացոց 401 (= 353 ներկա թ.) և ավարտել 600 (= 552 ներկա թ.) թվականին: Անանիա Շիրակացու տեղեկության համաձայն՝ Անդրեասի զատկացուցակի ավարտից (552 թ.) հետո սկսվեց Էսայան 532-ամյա զատկացուցակը (553 թ. = Հայոց 1 -ին), որը Հայոց թվականության համակարգի հիմքը դարձավ: Դա էր պատճառը, որ տոմարագետները կանոն սահմանեցին, թե՛ վերցրո՛ւ 600 հաստատուն թիվը, գումարի՛ր հայոց թվականը, կստանաս Անտիոքացոց թվականը: Ինչպես տեսանք վերոգրյալ շարադրանքում, այսպիսի կանոն ունի Հովհաննես Սարկավագը: Այս կանոնը գործել է Շ-եակի այն տարիների համար, երբ հայոց թվականին գումարել են 552 հաստատունը, իսկ Շ-եակում հայոց թվականը մեկով ավելանալուց հետո գումարվում է 551 հաստատունը: Այս կանոնը կգործի, եթե հաստատունից՝ 600-ից, 1 հանվի կամ էլ, ավելի ձիշտ կլինի, եթե հայոց թվականից հանվի ավելացած 1 տարին: Բացատրությունից հետո անցնենք Անտիոքացոց

⁶⁹⁷ «Մեկնություն տոմարիս Հայկազնեայ» աշխատությունը, Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 217:

համաժամանակյա թվականի քննությանը: Բնագրում վկայված 1163 թվականը բաժանելով 19-ի՝ մնացորդում կունենանք 3, որը 2 տարով ավելի է, որովհետև Անտիոքացոց-Անդրեասի 19-ամյակի տարին պետք է լիներ 1, այսինքն՝ ապրիլի 4-ի լրման տարին: Անտիոքացոց-Անդրեասի թվականը, ինչպես տեսանք, բնագրում 1063 է, որը սրբագրեցինք 1163՝ հիմնվելով հայոց թվականից Անտիոքացոց թվականն ստանալու կանոնի վրա: Սակայն Անտիոքացոց թվականից Հայոց թվականը հանելով (1163 - 562)՝ ստանում ենք 601, որը մեկ տարով ավելի է, քան կանոնի 600 հաստատունը: Բացի այդ, 562 Հայոց մեծ թվականին Շ-եակի հայոց 561 թվականը դարձել էր 562, այսինքն՝ Նաւասարդը գարնանային հասարակածը հատելու հետևանքով հայոց տոմարում մեկ տարի էր ավելացել, ուստի կա՛մ 562-ից, կա՛մ 600 հաստատունից մեկ տարի պետք է հանվի՝ Անտիոքացոց ու Հայոց մեծ թվականի միջև համարժեքություն ստանալու համար, այլապես գրանցված 1163 թիվն ունի 2 տարվա տարբերություն:

Անտիոքացոց 1163 տարին քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակից՝ 1115-ից, ունի 48, իսկ Դիոնիսյան կամ ներկա թվականից՝ 50 տարվա տարբերություն: Ստացվում է, որ Անտիոքացոց թվականը առաջին դեպքում սկզբնավորվել է մ. թ. ա. 48 թվականին, իսկ 2-րդ դեպքում՝ մ. թ. ա. 50՝ ներկա թվականի: Իրականում Անտիոքացոց թվականը սկզբնավորվել է մ. թ. ա. 48 թվին, որովհետև Անդրեասի զատկացուցակի ավարտի տարին համարժեք է ներկա 552 թվականին, ըստ Անանիա Շիրակացու հաշվումների, որը բերեցինք վերևում:

Բնագրում գրանցված հաջորդ համաժամանակյա տարեթիվը 1423-ն է՝ «Կիրողոս» քաղաքի շինության թվականը, որն այժմ կոչվում է Սելևկյան թվական: Այն հայկական վաղ շրջանի բնագրերում անվանվել է Հունաց կամ Ալեքսանդրի թվական, իսկ ուշ շրջանի բնագրերում՝ ասորոց:

«Կիրողոս» քաղաքի շինության համաժամանակյա թվականը՝ 1423-ը, բաժանելով 19-ի՝ մնացորդում ստանում ենք 19, որը նշանակում է, թե նրա 1-ին տարին ապրիլի 15-ի լրման տարին է: Ապրիլի 15-ի լրման տարին՝ իբրև 19-ամյակի 1-ին տարի, ոչ մի համակարգում չի ընդունվել, հետևապես 1 տարի պետք է ավելացնենք այդ թվականին, որպեսզի թե՛ 19-ամյակի 1-ին, թե՛ այդ թվականի լրման տարիները համընկնեն ապրիլի 4-ի լրման տարուն: Այլ խոսքով՝ արձանագրված 1423-ը պետք է լիներ 1424: Կատարվել է Գ-ի և Դ-ի գրչական սովորական սխալ: Սակայն կատարենք հաշվարկը երկու թվերով էլ, որովհետև այնքան էլ հասկանալի չէ, թե որ համաժամանակյա թվականից է ստացել հեղինակը «Կիրողոս» քաղաքի շինության թվականը: Այդ թվականից՝ 1423 (1424), հանենք քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակի թիվը՝ 1115, կստանանք 308 (309), իսկ քրիստոնեական Դիոնիսյան կամ ներկա թվականը՝ 1113-ը, հանելով՝ 310 (311):

Նույն ժամանակների բնագիրներից մեկում նշված է. «Եւ յԱղեքսանդրէ մինչեւ ի Ծնունդն Քրիստոսի՝ ամբ 3Թ (309)»⁶⁹⁸, ուստի քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակի հաստատունն ընդունել են 309, հետևապես «Կիրդոս» քաղաքի շինության թվականը 1424-ն է: Այդ է վկայում Դիոնիսյան քրիստոնեական թվականի հաստատունի՝ 311-ի, ինչպես և քրիստոնեական թվականների տարբերությունը՝ հավասար 2-ի:

«Կիրդոս» քաղաքի շինության թվականի և Հայոց մեծ թվականի տարբերությունը 861 (862) է: Հայոց թվականը մեկով ավելացել է Նաւասարդը գարնանային օրահավասարից հետո ընկնելու պատճառով, ուստի հաստատուններից մեկն է ձիշտ՝ 862-ը, ինչը երևում է ներկա թվականի և հաստատունի տարբերությունից՝ (1113-862) = 551: Ասենք նաև, որ տարիների՝ Նաւասարդին նախորդող հատվածի համար հաստատունը եղել է 861, իսկ հաջորդողի համար՝ 862-ը, կամ Հայոց թվականից պետք է հանել 1, որպեսզի քննվող թվականների հաստատունը մնա անփոփոխ՝ 861: Եթե բնագրում վկայված 1423 թիվը գրանցել է Հովհաննես Սարկավագը, ապա հայոց թվականի մեջ կատարված ավելացումը նկատի չի ունեցել, որի հիմնավորողն ինքն էր:

Բնագրում հաջորդ համաժամանակյա թվականներն են՝ քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակը, Արարչության Յոթանասնիցի կամ Եվսեբիոսի, Հայոց մեծ և Օլիմպիական թվականները, որոնցից քննարկվել են քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակն ու Հայոց մեծ թվականը: Արարչության յոթանասնիցի կամ Եվսեբիոսի թվականներին կանդրադառնանք հետագա շարադրանքում, իսկ Օլիմպիական թվականի մասին նշենք հետևյալ բնորոշ իրողությունը: Օլիմպիական 1889 բաժանելով 19-ի՝ ստանում ենք 8 մնացորդ, հետևապես 1-ին տարին ընկնում է ապրիլի 2-ի լրման տարում, որը բյուզանդական 19-ամյակներից մեկի 1-ին տարին էր և Անանիա Շիրակացու վերադիրների, հնգյակների, յոթներյակների հաշվումներն սկսելու տարին:

Ինչպես նկատելի է, այս բնագրում Սարկավագն օգտագործել է միայն Արարչության յոթանասնիցի կամ Եվսեբիոսի թվականը, սակայն տոմարական ժողովածուի տարբեր հատվածներում թվարկել է արարչության բազմաթիվ թվականներ, կանոններ սահմանել դրանց համար, ինչպես և համադրել է Հայոց մեծ թվականի հետ: Այնպես որ, օգտագործելով Սարկավագի ստեղծած կանոնները, նրա բնագրերից հայտնի արարչության թվականները՝ կարող ենք վերածել ինչպես քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակի, այնպես էլ ներկա թվականի՝ հիմքում ունենալով թե՛ համաժամանակյա թվերը, թե՛ Հայոց մեծ թվականի սկզբի կտրվածքով վկայված արարչության տարիները:

Հովհաննես Սարկավագը «Մեկնութին տումարիս Հայկազնեայ» բնագրի, որն անվանել ենք «Վասն հալկալզնեան տանից տարեկանաց շրջաբե-

⁶⁹⁸ Պատճէն տումարի (Է-ԺԵ. դդ.), աշխ.՝ **Զ. Էյնաթեանի և Գ. Տէր-Վարդանեանի**, էջ 159:

րութեան տումարիս», սկզբում տվել է Արարչության մի շարք թվականներ՝ կապելով մինչև Հայոց թվականն ընկած ժամանակաշրջանի հետ:

Բերենք բնագրային վկայությունը. «...Ձի ըստ Անդրէասայ ժամանակագրութեանն լինի յԱդամայ մինչև հայ թուականն ՅՃԾԵ (6155), և ըստ կայսերական պարմութեանն՝ ԲՉԿԱ (5761) (սրբագրել՝ 5751), և ըստ Անանիա Շիրակունոյ՝ յԱդամայ մինչև Քրիստոս ՌՃՂԸ (5198), և ըստ Եպիփանոսի՝ ՅԾԳ (6053), և ըստ երբայականին՝ ՅՄՁԹ (6289)⁶⁹⁹, և ըստ հրէիցն, որով մեք վարինք, ԲՊԻԴ (5824), և ըստ շամրուացոցն՝ ԲՊԼԲ (5832), և ըստ Շ.եկին թուականին՝ ԲՁԸՁ (5976)»⁷⁰⁰:

Արարչության թվականների վերլուծությունը սկսենք Արևի խավարման մասին պատառիկում տեղ գտած յոթանասնից թվականի մասին եղած տեղեկությունից ու Եվսեբիոսի օգտագործած տարեթվի և մյուս համաժամանակյա թվականների օրինաչափությունների բացահայտման օրինակներով ցույց տանք Սարկավագի մոտեցումը այդ թվականներին:

Այս պատառիկում Արարչության յոթանասնիցի կամ Եվսեբիոսի թվականը 6313-ն է, որին համարժեք է նրա ստեղծած քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակը՝ 1115-ը, ըստ որի՝ Արարչությունից մինչև Քրիստոս ստանում ենք 5198 (6313 - 1115): Այդ դարազուլուս տարեթիվը վկայված է Անանիա Շիրակացու և Եվսեբիոսի ժամանակագրությունն օգտագործած հեղինակների մոտ, այդ թվում՝ նաև Հովհաննես Սարկավագի:

6313-ը բաժանելով 19-ի՝ ստացվում է 5 մնացորդ, որը 4 տարով ավելին է 19-ամյակի ապրիլի 4-ի լրման թվականից: Հետևապես Հովհաննես Սարկավագը, հետևելով Անանիա Շիրակացուն, արարչության՝ Եվսեբիոսի 1 թվականը փորձել է կապել 19-ամյակի 1-ին տարվա՝ ապրիլի 4-ի լրման տարուն՝ շեղվելով 4 տարի:

Ադամից հաշված Արևի խավարման տարին 6313՝ Սարկավագը համաժամանակյա է նկատել Հայոց մեծ թվականի 562 տարին, ուրեմն Ադամից մինչև Հայոց մեծ թվականը կլինի 5751 տարի, իսկ այդ տարեթվից հանելով 5198 (Ադամից Քրիստոս)՝ կստանանք 553:

Ի դեպ, Արևի խավարման պատառիկում գրված է. «Ոմանք յերիս ամսաւելորդ մուծանեն ի ներքս ի մեջ ամացոյ՝ որք ասեն ՇԾՁ (556) ի ծննդենէն տեստն մինչ ի սկիզբն հայ թուականին. Բայց ոչ այդպէս, այլ ՇԾԳ (553) ամ ի գալստենէ փրկչին մինչ ի հայոց թուականի դրութիւն...»⁷⁰¹:

Նկատենք, որ հեղինակն ընդգծում է ՇԾԳ (553) ամ (Քրիստոսից մինչև հայ թվականը): Հասկանալի է, որ «Կալ ՇԾԳ (553) և զհայդ՝ կենարարին է» կանոնը Հովհաննես Սարկավագին է: Այդ երևում է նաև քրիստոնեական

⁶⁹⁹ «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» աշխատությունը, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., ժամանակագրության մեջ՝ ՅՄՂԹ (6299), որից ստացվում է 10 մն.:

⁷⁰⁰ «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» աշխ., տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 224:

⁷⁰¹ Լուսնի լրման և [Արևի] խավարման մասին, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 278-279:

թվականության 3-րդ տարբերակի և հայոց թվականի տարեթվերի տարբերությունից՝ $1115 - 562 = 553$:

Արարչության յոթանասնիցի թվականից՝ 6313-ից, հանենք Հայոց մեծ թվականը, կստանանք արարչությունից մինչև հայոց թվականը, իսկ դրանից էլ հանենք 5200 (արարչությունից մինչև Քրիստոս ընկած ժամանակահատվածը՝ քրիստոնեական Դիոնիսյան կամ ներկա թվականից ստացված (6313 - 1113)), կստանանք 551, որը Հայոց մեծ թվականին գումարելին է այն Շ-եակ թվականների համար, որոնք մեկ տարով ավելացել էին Նաուսարդը հասարակածը հատելու հետևանքով: Իսկ մինչև Նաուսարդն ընկնող Շ-եակ թվերին պետք է գումարել 1, այն է՝ 552, որպեսզի գտնվի թե՛ ճիշտ ներկա թվականը, թե՛ 19-ամյակի լրման տարին (և՛ տվյալ տարին, և՛ առաջին տարին), որովհետև զատկացուցակի կտրվածքով հայոց 1 թվականը համարժեք է հռոմեացոց շարքի 1 թվականին, որը հավասար է 553 թվականին, իսկ տարբերությունը՝ 552 (553 - 1):

Հարկ է նշել, որ Ադամից մինչև հայ թվականը բերված ժամանակահատվածի համար Կայսերական պատմության ԲՉԿԱ (5761) թիվը պետք է սրբագրել ԲՉԾԱ (5751), որովհետև այն Արարչության 70-իցի կամ Եվսեբիոսի թվականն է, որը վերլուծեցինք Արևի խավարման մասին պատառիկի թվերի քննարկման ժամանակ: Տարբերությունը միայն այն է, որ այստեղ արարչության այդ թիվը Սարկավագը կապել է մինչև հայոց թվականն ընկած ժամանակահատվածի հետ և բնորոշել Կայսերական պատմության մեջ վկայված ժամանակով (= 5751 տարի), իսկ Արևի խավարման մասին պատառիկում՝ իբրև Արարչության 70-իցի կամ Եվսեբիոսի թվականի կոնկրետ դրսևորում 6313 (5751 + 562) տարի:

Ինչ վերաբերում է Անանիա Շիրակացու տված թվին՝ 5198-ին, ապա այն վերցված է, իսկապես, նրա «Ժամանակական կանոնից», և այն Ադամից մինչև Քրիստոս ժամանակահատվածն է, ուստի պետք է վերականգնել «յԱդամայ մինչև Քրիստոսը»:

Այժմ անցնենք «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» գլխագրով պահպանված բնագրի վկայությունների վերլուծությանը:

Բնագրում, վկայակոչելով Անդրեասի ժամանակագրությունը, Ադամից մինչև Հայոց մեծ թվականը գրանցված է 6155 տարի: Հարկ է նշել, որ Անդրեասի ժամանակագրությունը մեզ է հասել Անանիա Շիրակացու «Ժամանակական կանոնի» միջնորդությամբ, որտեղ արարչությունից մինչև Քրիստոսի ծնունդը 5502 տարի է⁷⁰², իսկ մինչև հայոց թվականը կլինի 6054 (5502 + 552), որն ակնհայտորեն տարբերվում է բերված՝ 6155 թվից: Հետևապես, Սարկավագն այստեղ Անդրեասի ժամանակագրություն ասելով հաս-

⁷⁰² Ռ. Վարդանյան, Լ. Սարգսյան, Գ. Սիմոնյան, «Ժամանակական կանոնի» Արարչության թվականության համակարգերի և Ա. Շիրակացու հաշվելու սկզբունքների փոխառնչությունները, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Զ, Եր., 2011, էջ 26-27:

կացել է մեկ այլ ժամանակագրություն, որը վերագրվել է Անդրեասին: Այդ ժամանակագրությունը մեզ է հասել թղթյա հնագույն ձեռագրի մեջ: Այն սկսվում է Քրիստոսի 1 թվականից և հասցնում մինչև 11-րդ դարի 40-ական թվականների սկիզբները: Այդ ժամանակագրության անանուն հեղինակը Ադամից մինչև հայոց թվականի 1-ին տարին գրանցել է 6156 տարի՝ համադրելով 556 քրիստոնեական թվականության 2-րդ տարբերակի հետ. «Ադամայ ցնոր թուականս ամք 8ՃԾԶ (6156). Դարձեալ սկիզբն արար ի նոր թուականիս Լ և Դ (34) ամէս Յուստինիանոսի կայսեր ի ՅԴ (304) էր Հոռոմի թուականս»⁷⁰³:

Հովհաննես Սարկավազի և անանուն ժամանակագրի տեղեկությունները՝ Ադամից մինչև հայոց թվական, համարժեք են (= 6155 և 6156)՝ չհաշված մեկ տարվա տարբերությունը, որն առաջացել է հայոց մեկ թվականն էլ հաշվի առնելով: Որպեսզի հստակ երևա այդ տարբերությունը և պարզվի, թե հաշվարկման ինչ համակարգ են օգտագործել երկու հեղինակներն էլ, Արարչության այդ թվականները վերածենք Ադամից մինչև Արեգակի խավարման տարին եղած ժամանակի և կստանանք՝ $6155 + 562 = 6717$ և $6156 + 562 = 6718$, իսկ ստացված տարեթվերը բաժանելով 19-ի՝ կստանանք 10 և 11 (-1) տարի: Հստակ է, որ 19-ամյակի առաջին տարին ապրիլի 13-ի լրման տարին է, իսկ Արևի խավարման տարին՝ ապրիլի 4-ինը: Երկու հեղինակներն էլ Արարչության թվականը հաշվարկել են Շ-եակի հաշվելու իմաստով առաջին տարով, հետևապես Ադամից մինչև հայոց 1 թվականը պետք է լիներ 6157, որպեսզի հայոց 1 թվականը համարժեք լինի 19-ամյակի՝ հաշվելու իմաստով 1-ին տարուն, որն էլ ներկա թվականով համապատասխանում է 553 թվականին, քրիստոնեական թվականի 2-րդ և 3-րդ տարբերակներով՝ 556 և 554 թվականներին, իսկ Ադամից Քրիստոս քրիստոնեական թվականի առաջին, 2-րդ և 3-րդ տարբերակներով՝ 5604, 5603, 5601, մինչդեռ 2-րդ և 3-րդ տարբերակների առկա թվերով ստացվում են 5600 ($6156 - 556$) և 5602 ($6155 - 553$)՝ դրսևորելով 1 տարվա սխալ:

Հովհաննես Սարկավազի բերած՝ Արարչության հաջորդ թվականը՝ Ադամից մինչև հայոց թվականը 6053 - ն է, որը վերագրվել է Եպիփան Կիպրացուն: Այն ևս արտահայտենք Արևի խավարման տարվա կտրվածքով՝ $6053 + 562 = 6615$, որը բաժանելով 19-ի՝ կստանանք 3 մնացորդ: Այն 2 տարով ավելին է արարչության առաջին՝ ապրիլի 4-ի լրման տարուց: Պարզ է, որ արարչության 1 թվականը փորձել է կապել 19-ամյակի 1-ին տարվա լրման օրվան՝ երկու տարվա շեղումով, իսկ 6053-ը կապել է հաշվելու իմաստով 1-ին տարվա՝ ապրիլի 13-ի հետ ($6053 : 19 =$ մն. 11)՝ մեկ տարվա շեղումով, որովհետև ապրիլի 13-ի լրման տարուց մինչև ապրիլի 4-ի տարին, այն է՝ հայոց թվականի 10-րդ տարին, 10 տարի է: 6615-ից հանենք քրիստոնեական

⁷⁰³ Մանր ժամանակագրություններ, աշխ.՝ Վ. Հակոբյանի, հ. 2, Եր., 1956, էջ 17:

թվականի 3-րդ տարբերակի տարին, կստանանք Ադամից մինչև Քրիստոս ընկած տարիները՝ 5500 (6615 – 1115), իսկ 6053-ից հանելով 5500՝ կստանանք 553, որը Սարկավագի հաստատունն է՝ ավելացրած Քրիստոսից մինչև հայոց թվականը: Քրիստոնեական թվականի առաջին և 3-րդ տարբերակների տարբերությունը 2 տարի է, որը երևում է նաև Ադամից մինչև Քրիստոս ընկած տարիների հաշվով՝ 6615 – 1115 և 1113 = 5500 և 5502, ուստի՝ 5502 – 5500 = 2:

Ադամից մինչև Արևի խավարման տարի պետք է լիներ 6613-ը, որպեսզի արարչության քննարկվող թվականի առաջին տարին համապատասխաներ ապրիլի 4-ի լրման տարուն (6613 : 19 = մն. 1), իսկ Ադամից մինչև հայոց թվականը՝ 6052, մեկ տարվա տարբերությամբ, որ հաշվելու իմաստով առաջին և 10-րդ տարվա հետ ունենար 10 մնացորդ (6052 : 19), այսինքն՝ հաշվելու իմաստով առաջին տարին արտահայտեր 10-րդ տարվա լրման տարին՝ ապրիլի 4-ը, որը հավասար է արարչության առաջին տարվա լրմանը՝ արտահայտված Հայոց մեծ թվականով:

Ըստ եբրայական հաշվարկի՝ Հովհաննես Սարկավագն Ադամից մինչև հայոց թվականը գրանցել է 6289: Արարչության այս թիվն արտահայտենք Արևի խավարման տարով՝ $6289 + 562 = 6851$ ՝ ըստ Հայոց մեծ թվականի: Այն բաժանելով 19-ի՝ կստանանք 11 մնացորդ, որը 1 տարվա սխալ ունի, որովհետև Արևի խավարումը եղել է ապրիլի 4-ի լրման տարուն, իսկ հայոց թվականի հաշվարկով պետք է լիներ 10-րդ տարուն: Արարչության 6289 տարին բաժանելով 19-ի՝ կստանանք 19 մնացորդ, որին պետք է գումարել 1 տարի՝ ստանալու համար հաշվելու իմաստով 1-ին՝ ապրիլի 13-ի լրման տարին: Առկա հաշվարկներով արարչությունից մինչև Քրիստոս համարժեք են 5736 (6851 – 1115) և 5738 (6851 – 1113) տարիները, սակայն իրականում պետք է գրվեր 6850 տարի, որպեսզի լրման տարին դառնար ապրիլի 4-ը, իսկ հաշվելու իմաստով առաջին՝ ապրիլի 13-ի լրման տարին: Այդ 1 տարվա ավելացումը կապված է հայոց Շ-եակ թվականը մեկով ավելանալու իրողության հետ: Ինչ վերաբերում է 6289-ին, ապա այն 1 տարով պակաս է, քանզի համապատասխան գործողությունից հետո պետք է մնացորդը լիներ 1 և ոչ թե 19-ը՝ ձիշտ լրման տարուն համապատասխանելու համար: Այնուհետև առկա 6859-ից հանենք Արևի խավարման տարվա քրիստոնեական թվականության համակարգի 1-ին և 3-րդ տարբերակները, կստանանք՝ 5736 (6851 – 1115) և 5738 (6851 – 1113), սակայն պետք է լիներ՝ 5737, իսկ արարչությունից մինչև հայոց թվական ոչ թե 6289 է, այլ՝ 6290, որպեսզի 19-ամյակի հաշվելու իմաստով առաջին և 19-ամյակի 1-ին տարիների մնացորդներ համարենք մեկը: Այս հաշվարկում, ակնհայտորեն, Ադամի 1-ին տարին դրվել է հաշվելու իմաստով 1-ին տարվա, այն է՝ ապրիլի 13-ի լրման տարվա վրա, որը համարժեք է դիտվել արարչության առաջին տարուն: Հասկանալի է, որ Հովհաննես Սարկավագը հաշվարկը համապատասխանեցրել է հայոց 1 թվականի լրման տարուն, թեև տվել է «ըստ եբրայականի», ինչն էլ, Անանիա Շիրա-

կացու համաձայն, համարժեք էր ապրիլի 4-ի լրման՝ 19-ամյակի առաջին տարվան:

Հովհաննես Սարկավագը «և ըստ հրէիցն, որով մեք վարինք, ԲՊԻԴ (5824)» տարի է հաշվել Ադամից մինչև հայ թվականը և կանոն է սահմանել. «Թուական երբայեցոց այսպէս արա՛. կալ ԲՊԻԴ (5824), զհայ թուականն ի վերայ բեր, և ե՛րթ զշրջանս ՇԼԳ (533), ՇԼԳ (533). որ մնայ՝ թուական է երբայեցոց»⁷⁰⁴:

Արևի խավարման տարում այդ հաշվարկը կհամապատասխանի 6386 (5824 + 562) տարվա: Հիշյալ թվերը բաժանելով 19-ի՝ մնացորդում կստանանք 10 և 2: Վերջինս 1 տարով ավելի է, քանի որ հայոց թվականը հայտնի պատճառով 1-ով ավելացել է: Այս՝ արարչության թվականի 1-ին տարին, իսկապես, ապրիլի 4-ի լրման տարին է, իսկ Ադամից մինչև հայոց թվականն արտահայտված է հայոց 1 թվականի հաշվարկով, քանի որ 5824-ը 19-ի բաժանելիս մնացորդը 10 է: Հովհաննես Սարկավագն այս հաշվարկով հետևել է Անանիա Շիրակացուն, այսինքն՝ արարչության առաջին տարին ընդունել է Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջանի ապրիլի 4-ի լրման տարին:

Հովհաննես Սարկավագն արարչությունից մինչև հայոց թվականը, «ըստ շամրտացոցն՝ ԲՊԼԲ (5832)» է համարում, որը կհամապատասխանի 6394 (5832 + 562)-ի Արևի խավարման տարում: Այս տարեթվերը 19-ի բաժանելիս ստանում ենք 18 (+2 - 19 = 1) և 10, ինչը ցույց է տալիս, որ հեղինակը 2 տարվա սխալ է թույլ տվել առաջին դեպքում՝ Ադամից մինչև հայոց 1 թվականը, իսկ երկրորդ դեպքում, քանի որ մնացորդը 10 է, ապա այն եղել է ապրիլի 4-ի լրման տարի, իսկ հաշվելու իմաստով առաջին տարին ապրիլի 13-ի տարին էր, և այն ճիշտ է: Այս հաշվարկը նույնպես նա հարմարեցրել է Շ-եակի առաջին ու 10-րդ տարիներին և վերոնշյալ բոլոր տարիների համար արված սկզբունքներին:

Ի վերջո, Հովհաննես Սարկավագը «ըստ Շ.եկին թուականին՝ ԲՁԸԶ (5976)»-ն է համարել Ադամից մինչև Հայոց մեծ թվականը՝ հետևելով նախորդ շրջանում ստեղծված կանոններին՝ հավանաբար ստեղծված Անանիա Շիրակացու կողմից: Իսկ Արևի խավարման տարում արարչության քննարկվող թվականը կլիներ 6538 (5976 + 562)-ը, որոնք 19-ի բաժանելուց հետո մնացորդները կլինեն 10 և 1, այսինքն՝ այս դեպքում, հստակորեն, արարչության առաջին տարին կլինի ապրիլի 4-ի լրման տարին, ինչպես որ կարգել էր Անանիա Շիրակացին: Հարկ է նշել, որ մնացորդները բացարձակորեն համապատասխանում են հաշվելու իմաստով Շ-եակի հայոց 1 և 10 թվականներին, որտեղ Հովհաննես Սարկավագը չի հաշվառել հայոց տոմարում ավելացած մեկ տարին, ուստի, որպեսզի այս թվերը համարժեք դառնան, կան Շ-եակ 5976-ից, կան 562 հաստատունից պետք է 1 հանել, որովհետև 5976-ը համապատասխանում է 552 թվականին: Այդ երևում է արարչության ու

⁷⁰⁴ Հովհաննեսի «Պատճէն տունարի» աշխ., տե՛ս Ա. Արրահամյան, նշվ. աշխ., էջ 214:

քրիստոնեական թվականների տարբերությունից՝ 6538 – 1115 = 5423 և 6538 – 1113 = 5425: Իրականում, արարչությունից մինչև Քրիստոս պետք է լիներ 5424, քանի որ արարչության Շ-եակ 1 թվականը համարժեք է 5977 –րդ տարուն (5977 – 553 = 5424):

Այսպիսով, Հովհաննես Սարկավազը տարբեր ազգերի՝ ժամանակի հայտնի արարչության թվականներն արտահայտել է հայոց Շ-եակի՝ հաշվելու իմաստով 1-ին՝ ապրիլի 13-ի լրման, և 10-րդ՝ ապրիլի 4-ի լրման տարիներով՝ արարչագործության կիրառական թվականների առաջին տարիները համապատասխանեցնելով այդ սկզբունքին:

Արարչության՝ քննարկված թվականների մի մասը գալիս է վաղ շրջանից, իսկ մյուս մասը տեղայնացած թվականներ են, որոնք կիրառվել են մեզանում՝ համապատասխանեցվելով հայոց Շ-եակի երկու սկիզբներին:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Քրիստոսի ծննդյան թվականի հարցը: Քրիստոսի ծնունդը տարբեր քրիստոնեական եկեղեցիներ սկսում են տարբեր տարիներից: Այս թվականը հիշատակում է նաև Սարկավազը՝ նրա տոնի ամիս-ամսաթիվը նշելով, որով էլ հնարավորություն է ստեղծում հաշվարկել, թե ներկա որ թվականին է համապատասխանում իր ընդունած Քրիստոսի ծննդյան թվականը: Այսպես, իր «Ազգաց ազնուականոններում» Սարկավազը գրում է. «Յունուարի 6 = Քաղոց 29-ին – Յայտնութիւն Քրիստոսի ի մեծի հոռի ԺԱ, արն՝ Ե-շբ. և Մկրտութեան արն՝ կիրակի»⁷⁰⁵:

Քրիստոսի ծննդյան թվականի խնդիրը մենք քննել ենք «Քրիստոսի Հայտնության տոնը և նրա Ծննդյան թվականը» հոդվածում⁷⁰⁶: Քրիստոսի Հայտնության ամիս-ամսաթվի՝ հունվարի 6-ը = Հոռի 11-ին, ու շաբաթագրերի՝ հինգշաբթի (ուրբաթ) և կիրակի, վերլուծությամբ եկել ենք այն եզրակացության, որ Քրիստոսի ծնունդը եղել է մ.թ.ա. 1 թվականին, օրը՝ հինգշաբթի, իսկ մ.թ. 1 թվականին եղել է մեկ տարեկան⁷⁰⁷:

Է. «ԱԶԳԱՅ ԱԶՆՈՒԱԿԱՆՈՆՆԵՐ»

Հովհաննես Սարկավազի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուի կարևորագույն մասերից է «**Ազգաց կանոնները**»⁷⁰⁸ կամ «**Ազգաց ազնուականոնները**», ինչի մասին վկայել է հեղինակը ինչպես «Յաղագս ամսոց հայոց և տօնից և յաղագս ԴԺ-աներորդաց լուսնոյ զատկի»⁷⁰⁹ բնագրում (1116 թ.), այնպես էլ ժողովածուի կազմավորումից հետո գրած այլ Թղթերում:

⁷⁰⁵ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 160-161:

⁷⁰⁶ Գ. Սիմոնյան, Քրիստոսի Հայտնության տոնը և նրա ծննդյան թվականը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, հ. ԺԱ, Եր., 2016, էջ 7-15:

⁷⁰⁷ Նույն տեղում, էջ 12-13:

⁷⁰⁸ Տե՛ս նաև Գ. Սիմոնյան, Հովհաննես Սարկավազի «Ազգաց կանոնները», ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, հ. Է, Եր., 2012, էջ 49-57:

⁷⁰⁹ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 67:

«Յաղագս ամսոց հայոց և տօնից և յաղագս ԴԺ-աներորդաց լուսնոյ գատկի» բնագրում գրում է. «Յայամհեպէ ոչ փոխանցեալ լինին եղանակք աւուրց, վասն զի կանովնեցաք համրնթաց այլոց ազգաց ամսոց և մերոցն ունել կարգ շարժմանց ամսոց...»⁷¹⁰: Հեղինակը անվերապահորեն հիշատակում է իր «Ազգաց ազնուականոնների» աղյուսակները:

Գ. Զարբհանայլանն օգտագործել է Մխիթար Այրիվանեցու վկայությունը Սարկավագի տոմարական բարեփոխության վերաբերյալ, ինչը ևս փաստում է, որ Սարկավագն ստեղծել է «Ազգաց ազնուականոններ»։ «ՇԼԴ. Սկիզբն նոր թուականին, որ կարգեցաւ ի Յոհաննէս վարդապետէ Հաբարեցոյ, որ Սարկավագ կոչեցաւ: Սա արար անշարժ փոմար ըստ այլոց ազգաց»⁷¹¹:

«Առ Սարգիս» վերնագիրը կրող նամակում (1110 թ.) կարդում ենք. «...կայջի՛ր զազնուականսն՝ որ անմոյր ունի զամենայն սահմանեալսն վասն փանի և յեղանակաց փարոյ, և լրմանց լուսնոյ զարկաց, վերադրաց, և կթներեկաց, և զառաջաւորաց պահոց և զայլոցն ամենեցունց: Ապա եթէ վասն զայդ գիտելոյ և ունելոյ ամենեցունց ո՛չ կամիցես փանել այսմ հոգ և ջան, քեզ և այդ մի՛ եղէց խորհրդակից, այլ թողուլ զաւելորդն ի թուականէն զմի թին և ուղղապէս վարիլ»⁷¹²: Վերոհիշյալ հատվածում Հովհաննես Սարկավագը «զազնուականոնսն» ասելով նկատի է ունեցել ոչ միայն Շ-եակ գատկացուցակը, ինչպես կարծել է Ա. Աբրահամյանը⁷¹³, այլև «Ազգաց կանոնները»: Այդ երևում է նամակի բովանդակությունից: Ազնվականոններից մեկն ունի «զամենայն սահմանեալսն վասն տանի և յեղանակաց տարոյ» հիշատակումը: «Ազգաց կանոններում» առկա են տարվա եղանակները, տոներից հատկապես անշարժները և որոշ շարժականներ: Հետևապես, *ազնվականոն* ասելով հեղինակը նկատի է ունեցել ինչպես Շ-եակ գատկացուցակները, այնպես էլ «Ազգաց կանոնները», ինչը քիչ հետո կներկայացնենք հաջորդ նամակի տվյալներով ու բովանդակությամբ: Ինչ վերաբերում է ազնվականոններից մյուսին՝ Շ-եակ գատկացուցակներին (հուլյան և հայոց անշարժ տոմարներով), ապա դրանց է վերաբերում բովանդակության հաջորդ մասը. «...լրմանց լուսնոյ զարկաց, վերադրաց, և կթներեկաց, և զառաջաւորաց պահոց և զայլոցն ամենեցունց»⁷¹⁴: Շ-եակ գատկացուցակներում կան թվարկածները և հատկապես առաջավորաց պահքերը՝ տարիների և 19-ամյակի կտրվածքով, որը բացակայում է «Ազգաց կանոններում»: Հետևությունը պարզ է. վերոհիշյալ տեղեկության մեջ Հովհաննես Սարկավագն ազնվականոններ ասելով հասկացել է թե՛ «Ազգաց կանոնների» աղյուսակները և թե՛ Շ-եակ գատկացուցակների մեջ եղած խորանները: Սարկավագն ստեղծել է երկու ՇԼԴ-ամյա գատկացուցակներ՝ հուլյան և հայոց տոմարներով: Վերջինի խմ-

⁷¹⁰ Նույն տեղում:

⁷¹¹ Գ. Զարբհանայլան, Հայ հին դպրության պատմություն, էջ 607:

⁷¹² Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 263:

⁷¹³ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 87:

⁷¹⁴ Նույն տեղում, էջ 263:

բագրված բնագիրը վերականգնել ենք մենք⁷¹⁵, իսկ վերակազմված նախնական բնագիրը ներկայացնում ենք մեր գրքի չորրորդ գլխում:

1116 թ.-ին գրած նամակում Հովհաննես Սարկավագը, ի միջի այլոց, պարզաբանում է Ազնվականոններից մեկի անունը՝ «ի զուգաւորութեան **ազգաց կանոնս**»⁷¹⁶ արտահայտությամբ, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ «Ազգաց կանոնները», որովհետև տարբեր ժողովուրդների, այդ թվում՝ նաև նրա հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթվերը բերված են այդ աղյուսակներում: Դեռ ավելին, Ա. Աբրահամյանի հրատարակած «Ազգաց կանոնների»⁷¹⁷ փետրվարի խորանում գրանցված է «Ամիսք Հայոց Սարկաւագին» ձևով, իսկ մյուս ամիսների համար ընդհանրացված ձևով՝ «Ամիսք հայոց»: ՄՄ 1999^{հմբ} բնագրի բոլոր ամիսների 4-5-րդ խորանում գրանցված է՝ «Սարկաւագի»:

Այլ խոսքով՝ Հովհաննես Սարկավագի՝ տոմարի մեկնության այդ մասի վերնագիրը կարելի է ընդունել «Ազգաց կանոններ» կամ «Ազգաց ազնուականոններ»:

Հովհաննես Սարկավագի կազմած «Ազգաց ազնուականոնները» հետագայում խմբագրվել են՝ թե՛ ընդարձակելով և թե՛ համառոտելով, միաժամանակ վերանվանվել են նաև «Խառնախորան»⁷¹⁸, որը բարձր է գնահատվել ուսումնասիրողների կողմից⁷¹⁹:

«Ազգաց ազնուականոնները» հայտնի են Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի մի շարք ձեռագրերով՝ ՄՄ 1971^{հմբ}, ՄՄ 1973^{հմբ}, ՄՄ 6731^{հմբ}, ՄՄ 817^{հմբ}, ՄՄ 1999^{հմբ}, ՄՄ 2068^{հմբ}, ՄՄ 2001^{հմբ} և այլն, որոնից լավագույնները՝ ՄՄ 817^{հմբ} և ՄՄ 2068^{հմբ}, 15-րդ դարի ընդօրինակություններ են⁷²⁰:

ՄՄ 1999^{հմբ} գրչագրի «Ազգաց կանոնների» բնագրի քննությունը տրված է մեր հոդվածում⁷²¹: Բնագրից ակնհայտ երևում է, որ համառոտված է: Այսպես, Եգիպտացոց խորանի մեջ չի գրված հունվարի 26-ին համարժեք Մեքիր (1) ամսանունը, դրա փոխարեն տրված է «Եթէովպացոց Եմքաթիթ ես» այլն ձևակերպումով, մինչդեռ մյուս ազգերի «Պատձէնների» լուսանցքներում այս խմբի ամսանուններն ավելացնողը Սարկավագն է:

ՄՄ 2068^{հմբ} գրչագրի «Ազգաց կանոնները», որը հրատարակել է Ա. Աբրահամյանը, բնագրի ընդարձակ տարբերակն է: Ամիսների նախնական տեքստը ճիշտ վերականգնելու համար հեղինակն օգտագործել է նաև ՄՄ 817^{հմբ} և 2001^{հմբ} ձեռագիր ընդօրինակությունները⁷²²:

⁷¹⁵ Տե՛ս **Գ. Սիմոնյան**, Հովհաննես Սարկավագի ՇԼԲ (532)-ամյա Զատկացուցակները, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք Զ, էջ 58-85:

⁷¹⁶ **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 281:

⁷¹⁷ Նույն տեղում, էջ 160-183:

⁷¹⁸ **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 68:

⁷¹⁹ **Ը. Բաղայան**, Հայոց տոմարի պատմություն, էջ 59:

⁷²⁰ Նույն տեղում, էջ 67-75:

⁷²¹ **Գ. Սիմոնյան**, Հովհաննես Սարկավագի «Ազգաց կանոնները», էջ 51:

⁷²² **Ը. Բաղայան**, սշվ. աշխ., էջ 71-72:

Ա. Աբրահամյանն այն հրատարակել է հարազատ մնալով բնագրին՝ միայն որոշ դեպքերում ընտրելով միևնույն խորանին տրված տարբեր վերնագրերից ամենահարմարը և որոշ գրչական սխալներ ուղղելով, ինչպես նշում է ծանոթագրության բաժնում⁷²³: Սակայն նշենք, որ նույն ծանոթագրության մեջ, որտեղ ամբողջովին ներկայացնում է «Գոտիք արեգական»-ը, գոտիների ժամանակը գրանցելիս թույլ են տրված սխալներ: Այսպես, «Արեգակը – ապրիլի 1-ից՝ մարտի (ուղղել՝ ապրիլի) 10-ը և Լուսաբերը – ապրիլի 11-ից՝ մարտի⁷²⁴ (ուղղել՝ ապրիլի) 20-ը»: Այս խորանն ամբողջովին ճշտել ենք գրքի՝ Սարկավազի տոմարական ժողովածուի տեսական-մեկնողական մասին նվիրված հատվածում և առանձին հոդվածում⁷²⁵:

ՄՄ 2068^{հմբ} գրչագրի «Ազգաց կանոններն» ունեն հետևյալ խորանները՝ **«Վերադիր Հոռոմոց», «Կիսակք Լուսնի», «Է-երեակ Հոռոմոց», «Շաբաթագիր», «Հոռոմոց և իւրոց», «Եբրայեցոց և իւրոց», «Եգիպտացոց և իւրոց», «Ամիսք Հայոց (Սարկավազին),» «Ամիսք Պարսից»,** որտեղ տրված են միայն ամսաթվերը:

«Ազգաց կանոններում» վերադիրները ամսվա կտրվածքներով միանգամայն համապատասխանում են Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջանի վերադիրների համակարգին, իսկ 1094 թվականի՝ ապրիլի 4-ի լրման տարում այն 11 է:

Այսպես, 11 վերադրի դիմաց, որը Սարկավազի 19-ամյակի 1-ին տարվա վերադիրն է, Լուսնի ծնունդը դրված է հունվարի 19-ին, հետայդու՝ փետրվարի 18-ին, մարտի 19-ին, ապրիլի 18-ին, մայիսի 17-ին, հունիսի 16-ին, հուլիսի 15-ին, օգոստոսի 14-ին, սեպտեմբերի 12-ին, հոկտեմբերի 12-ին, նոյեմբերի 10-ին և դեկտեմբերի 10-ին, որոնք առաջին անգամ եղել են 1094 թ., ինչը երևում է նրա ՇԼԲ-ամյա գատկացուցակներից:

Կիսակները տրված են օրական արժեքներով՝ **ա**-ից **ժ**. ունեն քառօրյակում 1-ով աճելու օրինաչափություն՝ հունվարի 1-ին՝ **ա** (1), 4-ին՝ **բ** (2), 28-ին՝ **ժ** (10), 31-ին՝ **ա** (1):

Է (7)-երյակն այստեղ ունի **Է** (7) արժեքը, այսինքն՝ շաբաթ: Յոթներյակը տրված է նաև օրական կտրվածքով՝ Է-ից Ա՝ նվազման կարգով, և այս կարգը շարունակվում է անընդհատորեն՝ հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31: Օրական կտրվածքում յոթներյակները օրագրուտի կանոնով բոլորը ցույց են տալիս, թե տվյալ ամսվա ամսամուտը շաբաթվա ինչ օր է եղել: Սակայն ողջ տարվա կտրվածքով հիմնական յոթներյակը Է-ն է, որով ստանում ենք ամսամուտների շաբաթագիրը: Հունվարի 1-ն ամսամուտի կանոնով՝ $7 + 1 + 0 = 8 : 7 = 1$ մն.՝ Ա, կիրակի:

⁷²³ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 184-185:

⁷²⁴ Նույն տեղում, էջ 185:

⁷²⁵ Գ. Սիմոնյան, Հովհաննես Սարկավազի «Ազգաց կանոններ», ԵՊՀ աստվ. ֆակ., Տարեգիրք, հ. է, Եր., 2012, էջ 217-235:

«Ազգաց կանոնների» խորանների «իւրոց» արտահայտությունները ներկայացված են կանոնների դիմացի էջում, որտեղ տրված են այս կամ այն խմբի բոլոր ազգերի անունները. առաջին խումբ՝ հռոմոնց, յունաց, ասորոց, 2-րդ խումբ՝ եբրայեցոց, արաբացոց, մակեդոնացոց, 3-րդ խումբ՝ եգիպտացոց, եթեոպացոց, արթենացոց, բիթանացոց, կապադոկացոց, վրաց, ադուանից: Առանձին են ներկայացված պարսից⁷²⁶ ու հայոց ամիսները: Սարկավագը համադրել է 15 ազգերի տոմարները՝ Շիրակացու համադրած 8 ազգերի փոխարեն: Մինչև վերջերս, ինչպես ցույց է տալիս քննությունը, որոշ ուսումնասիրողներ շփոթել են այս երկուսի «ազգաց կանոնները» և «Խառնախորանը» վերագրել են Անանիա Շիրակացուն: Այսպես, Ա. Շիրակացու մատենագրության մեջ կազմողները ներառել են մի բնագիր, որը խմբագրվել է 12-րդ դարից հետո, թեև այնտեղ շատ հստակ խոսվում է, որ Շիրակացու մոտ եղել է 8 խորան, սակայն նշված են 14 ազգերի անուններ, որոնցից 6-ը այնտեղ կարող էին ներառվել միայն Հովհաննես Սարկավագի «ազգաց» ազնվականոնների ստեղծումից հետո: Այսպես, բնագրում գրված է. «1. Խորանքս միավորեալ՝ ունին յինքեանս **ո՛ւր ազգաց** (ընդգծումը մերն է – Գ. Ս.) զորքանություն աուրց ամսոյն: 3. Շարէ զյունացն, զհռոմոնցն, եւ զասորոցն՝ ի մի՛: 4. Զեբրայեցոց, զարաբացոց, եւ զմակեդոնացոցն՝ ի մի՛: 5. Զեգիպտացոց, զեթուպացոց (այսքանը վերաբերում է հենց Ա. Շիրակացուն – Գ. Ս.), զարթենացոց, զբիթանացոց, կապադոկեցոց, վրաց, եւ զադուանիցն՝ ի մի՛: 6. Իսկ հայուն՝ ամենայնի՛ւ առանձին գոլով»⁷²⁷:

Բնագրում միայն պակասում է Սարկավագի մոտ առկա պարսից անունը: Կենսագրական տեղեկությունները վկայում են, որ պարսից ամիսները ևս ինքը պետք է գուգադրեր մյուս ազգերի ամիսներին:

Տարբեր ազգերի ամիս-ամսաթվերին հաջորդում են «**Տանուտէրք աուրց շարաթու**», «**Այբուբենքն արեգական**», «**Գիր աստիճանաց արեգականն**», «**Գօտիք արեգականն**» խորանները⁷²⁸: Վերջին խորանն ուսումնասիրելիս նկատվեց, որ այստեղ թերություն կա⁷²⁹, որը Սարկավագի սահմանած կանոններով վերահաշվարկել և ուղղել ենք՝ տեղադրելով «Ազգաց ազնուականոնների» մեր վերակազմության մեջ⁷³⁰:

Հետագայում Սարկավագի այս հաշվումները գործնական կիրառություն են ստացել, որը հստակորեն երևում է 18-րդ դարում հրատարակված

⁷²⁶ Թեև Մելիքշահի պահանջով 1079 թվականին արդեն Օմար Խայամը բարեփոխել էր պարսից տոմարը, սակայն այն դեռևս չէր գործածվում, այդ իսկ պատճառով Հովհաննես Սարկավագի «Ազգաց կանոններում» մենք տեսնում ենք պարսից հին տոմարի պատկերը:

⁷²⁷ **Անանիայի Շիրակացույ՝** Սակա խորանացն, Մատենագիրք հայոց, հ. Դ, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 687:

⁷²⁸ Այս և հաջորդող խորանների բնութագրումները տե՛ս **Գ. Սիմոնյան**, Հովհաննես Սարկավագի «Ազգաց կանոնները», էջ 54-55:

⁷²⁹ **Գ. Սիմոնյան**, Հովհաննես Սարկավագի «Ազգաց կանոնները», էջ 52:

⁷³⁰ Տե՛ս Սույն գրքի 4-րդ գլխի Բ միավորը:

«Էֆիմերտէ» գրքույկից⁷³¹, որտեղ մոլորակները դրված են 28-ամյա պարբերաշրջանի մեջ, և 28-ամյակում մոլորակների կրկնման պարբերաշրջանը նույնն է, որովհետև շաբաթվա օրերը բաշխված են ըստ անգեն աչքով տեսանելի հինգ մոլորակների ու Արևի ու Լուսնի:

Թեև մոլորակների բերված անվանացանկից պարզ երևում է, որ հրատարակողը տոմարագետ չէ, ով ոչ միայն 28-ամյակի 6-րդ տարում Հրատի⁷³² փոխարեն սխալաբար նշել է Փայլածու, այլև գրել է մի քանիսի արաբերեն անվանումներ. հավանաբար չիմանալով դրանց ստույգ հայերեն համարժեքները, սակայն այստեղ կարևորը 28-ամյակն է:

Այսպես, Փայլածուն 28-ամյակում տանուտեր է դառնում (մտնում է ԽՈՅ կենդանակերպ) **5 անգամ (ուղղել՝ 4), Լուսաբերը՝ 3 (+1), Երևակը՝ 3 (+1), Արեգակը՝ 4, Լուսինը՝ 4, Լուսնթագը՝ 1 [+3], Հրատը՝ 3 (+1)**. ըստ միջնադարյան մանրանկարների՝ Մուշթարին նույնացվում է Լուսնթագի, Զաւհալը՝ Լուսաբերի կամ Երեւակի, Մառէխը՝ Հրատի հետ⁷³³:

Մոլորակների 28-ամյա պարբերաշրջանի սեղմ պատկերը, փաստորեն, Սարկավագը ներկայացրել էր «Պատձէն տոմարի հայոց»-ի՝ ներկայացված առաջին աղյուսակում:

«Ազգաց ազնուականոնների» մյուս խորաններն են՝ **«Աստիճան արեգականն» «Հոլովք արեգականն», «Ասպարէզը⁷³⁴ արեգականն», «Տիւ (Ժամբլ) տունջեան և մասունք), գիշեր (Ժամք գիշերոյ և մասունք)»:**

Հոլովք արեգականն – ձմեռային արևադարձի օրը՝ դեկտեմբերի 16-ին՝ 270 հոլով, ապա օրական մեկական հոլով ավելանալով՝ բարձրակետին է հասնում հունիսի 19-ին՝ 450 հոլով, ու նույն օրինաչափությամբ վերադառնում էլման կետ: Ձմեռային արևադարձից մինչև ամառային արևադարձ 180 օրվա կամ 6 ամսվա ընթացքում 180 հոլով է կատարում:

Ասպարէզք արեգականն – ձմեռային արևադարձի օրը՝ դեկտեմբերի 16-ին՝ 135000 ասպարեզ, հաջորդ օրվանից 500-ական ասպարեզով աճում է մինչև հունիսի 19-ը՝ հասնելով 225000 ասպարեզի, նույն օրինաչափությամբ վերադառնում էլման կետ: 180 օր կամ 6 ամիս երկրագունդը հեռանում է արեգակից, ապա նույնքան ժամանակի ընթացքում մոտենում:

⁷³¹ Գրքույկ, որ կոչի Էֆիմերտէ, Եր., 1992, էջ 21-49:

⁷³² «Էֆիմերտէի» 28-ամյակի 6-րդ տարին 1757 թվականն է, որը, ըստ կենդանակերպների, ԽՈՅ-ի տանուտերության տարի է (1757-4 = 1753 : 12 = 1 մն.՝ ԽՈՅ), իսկ այդպիսին էր Հովհաննես Սարկավագի ՇԼԲ-ամյա գատկացուցակի առաջին տարին՝ 1085 թվականը: «Ազգաց կանոնները», որոնք ևս տրված են 1085 թվականի կտրվածքով, տարեկազմին, ինչպես դեկտեմբերի 26-ից հունվարի 4-ը, այնպես էլ մարտի 22-31-ի տասնօրյակներում Հրատն է կառավարում, նշանակում է 6-րդ տարվա տանուտերը Հրատն է:

⁷³³ **Հ. Բաղայան**, Օրացույցի պատմություն, էջ 144-145:

⁷³⁴ Օդաչափության երկարության միավոր՝ Պտղոմեոս-Պապուսի կողմից ստեղծված, որից օգտվել է Անանիա Շիրակացին, ապա՝ Սարկավագը: Ասպարեզը = 208-216 մ, իսկ ասպարիզաց ասպարեզը՝ 225-231,75 մ (**Ռ. Վարդանյան**, Հայաստանի չափերն ու կշիռները, Եր., 1989, էջ 134):

Տի (Ժամ[ք] տունջեան և մասունք), գիշեր (Ժամք գիշերոյ և մասունք)՝ տարվա կտրվածքով՝ օր առ օր տրված են ցերեկվա ու գիշերվա ժամերն ու մասունքները:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում մարտ ամսվա աղյուսակը, որի ուսումնասիրությունը մեզ բերել է այն հետևության, որ Սարկավագի համար բնական, իրական տարեսկիզբը կապված է գարուն եղանակի և «ԽՈՅ» կենդանակերպի հետ, և ինքն առանձնակի ուշադրություն է դարձրել բնատնտեսական տարեսկզբին: Աղյուսակն այնպես է կառուցված, որ ամսակարգով տարեվերջը ներկայացնող Աելեաց ամիս ունեցող տոմարներից (Եբրայեցոց և իւրոց, Եգիպտացոց, Հայոց Սարկավագի, Պարսից) միայն Եբրայեցոց և իւրոց տոմարն է, որ առնչվում է տարվա կարևորագույն հիմնակետերից մեկին՝ գարնանային օրահավասարին, և հենց այս դիրքում Սարկավագն առանձնացրել է Աելեաց օրերի համապատասխանությունը 5 մոլորական աստղերին, որոնք ներկայացված են իրենց յուրահատուկ անուններով, որ բնորոշ է միայն հայոց տոմարին: Այսպես.

Եբր. տոմարի անվանումը	5 մոլորակ աստղերի անվանումներ	Հայոց տոմարի (Սարկավագի) անվանումը	Հուլյան տոմարի անվանումը	Եգիպտաց տոմարի անվանումը	Պարսկ. տոմարի անվանումը
Աելեաց 1	Լուծ	Արեգ Թ	Մարտի ԺԷ	Պարմութի ԻԱ	Ասպանդատ ԺԴ
Աելեաց 2	Եղջերու	Արեգ Ժ	Մարտի ԺԸ	Պարմութի ԻԲ	Ասպանդատ ԺԵ
Աելեաց 3	Ծկրավորի	Արեգ ԺԱ	Մարտի ԺԹ	Պարմութի ԻԳ	Ասպանդատ ԺԶ
Աելեաց 4	Արտախոյր	Արեգ ԺԲ	Մարտի Ի	Պարմութի ԻԴ	Ասպանդատ ԺԷ
Աելեաց 5	Փարագնտի	Արեգ ԺԳ	Մարտի ԻԱ	Պարմութի ԻԵ	Ասպանդատ ԺԸ

Այս 5 մոլորական աստղերը, ինչպես կենդանակերպները, անշարժ են, և դրանք տեղափոխել ու աելեաց օրերի անվանումները ցանկացած տեղ դնել անշարժ տոմարով անհնարին են, թեև նրա կազմած համապատասխանության մեջ հայոց տոմարի Աելեացի օրերը հայտնվել են օգոստոսի 6-10-ի հատվածում:

Հիշենք նաև, որ Սարկավագի համար Հայկյան պարբերաշրջանի սկիզբը՝ Նաւասարդի 1-ը, ևս կապված է գարնանային օրահավասարի հետ, և դրանք վերջին անգամ զուգադիպել էին 1004/7 թթ. քառամյակում (Նաւասարդի 1-ը = մարտի 20-ին):

«Ազգաց ազնուականոնների» աջ էջերի վրա, հունվարից մինչև դեկտեմբեր ներառյալ, տրված են 15 ժողովուրդների ամսանունները և նրանց զուգահեռ՝ համարժեք ամսաթվային կարգը, որոնց գլխագիրը հուլյան տոմարով է՝ «Յունվար, Փետրուար, Մարտ և այլն», ինչը վկայում է, որ Սարկավագի

վազը ձևականորեն առաջնորդվել է հուլյան տոմարի կառուցվածքով, թեև իր տոմարի սկիզբը հունվարի 6-ն է:

«Ազգաց ազնուականոնների» ամսանունների հատվածում եղել են որոշ թերություններ, որոնք շտկել ենք: Ամիսների համարակալումը կատարվել է իրենց ընդունած տարեսկզբից սկսած, ոչ թե ամսակարգով՝ «Յունաց Դիստրոս ամիս Ե»⁷³⁵, «Հոռոմոց փետրվար ամիս՝ երկրորդ, յունաց՝ քսանթիկոս, ամիս Զ, ասորոց շբաթ՝ ամիս Ե»⁷³⁶, կամ էլ բացակայել են, որը մենք ենք դրել՝ «Եբրայեցոց՝ ադար, արաբացոց՝ եղգոգ, մակեդոնացոց՝ պիսիդոն: [[Ամիսք ԺԲ]]»⁷³⁷:

Այս հատվածում համապատասխան օրերի դիմաց տրված են ինչպես արևային տարվա հիմնակետերը՝ եղանակային դրսևորումները՝ **գարնանամուտ** հասարակած՝ մարտի Ի = Արեգ ԺԲ, թեև հրատարակված տեքստում Սարկավագի ժամանակի համար 2 օրվա սխալով է գրանցված՝ մարտի ԻԲ = Արեգ ԺԴ⁷³⁸, **ամառնամուտ**՝ հուլիսի ԺԹ = մարգաց ԺԳ, **աշնանամուտ** հասարակած՝ սեպտեմբերի ԺԸ = Հոռի Թ, **ձմեռնամուտ**՝ դեկտեմբերի ԺԸ = մարգաց Ժ, այնպես էլ՝ աստղագիտական տեղեկություններ, որոնք երկու կարգի են: Մեկը՝ ամիս-ամսաթվերի համապատասխանությունը կենդանակերպներին, մյուսը՝ որոշակի աստղերի մասին տեղեկություններ՝ «Յունվար ԺԶ = Շբաթ Ա = Արաց Թ-Արեգակն ի **ջրհոսն** է», «փետրվար ԺԵ = ադար Ա = Մեհեկի Թ - Արեգակն՝ ի **ձուկն** և շողք անկանի ի ջուրն» (սրանք հեղինակային են, քանզի, ինչպես արդեն ասվել է, ՏԱՆՈՒՏԷՐը նրա խմբագրության արդյունք է) և **Անկաստեղ**՝ ապրիլի ԺԴ = Ահկի է, **Ելաստեղ**՝ մայիսի ԻԴ = Մարերի ԺԷ:

Տրված են նաև տոնական տարվա անշարժ տոները (Յայտնութիւն՝ հունվարի Զ = Քաղոց ԻԹ, Տեառնընդառաջ՝ փետրվարի ԺԳ = Մեհեկի է, Աւետումն՝ ապրիլի 4-ին, որը հավանաբար տպագրական սխալ է, քանի որ Հայ առաքելական ս. եկեղեցու հայրերը այն կանոնել են ապրիլի 6-ին = Սարկավագադիր տոմարի Արեգ ԻԹ-ին, հետագայում՝ ապրիլի 7-ին, որը մենք ուղղել ենք վերակազմության ժամանակ: Երևումն խաչին՝ մայիսի է = Ահեկան Լ):

Անշարժ ամսաթվով է տրված նաև Հովհաննես Մկրտչի ծննդյան տոնի ամսաթիվը, ստույգ՝ Քրիստոսի ծնունդից 6 ամիս առաջ՝ հուլիսի 10-ին, այն դեպքում, երբ Գրիգոր Վկայասերն իր համաժամանակյա Տօնանամակում այն դրել է հունիսի 24-ին⁷³⁹, այսինքն՝ հոռոմադիր կարգի համաձայն, որից հաշված՝ դեկտեմբերի 25-ին է լինում Քրիստոսի Ծնունդը: Փոխումն Սուրբ Աստուածածնի տոնը դրված է օգոստոսի 14-ի = Նաւ. 4 ամսաթվով, որը վկայում է, որ արդեն անշարժ ամսաթվից՝ օգոստոսի 15-ից, անցում է կատարվել 15 ± 3, կիրակի, շարժական ամսաթվի, ինչպես կարծում է նաև Ռ.

⁷³⁵ Հովհաննեսի կազմած խառնախորանը, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 161:

⁷³⁶ Նույն տեղում, էջ 163:

⁷³⁷ Նույն տեղում:

⁷³⁸ Մարտի ԻԲ = Արեգ ԺԴ = Նիսանի 1-ը մարդու արարման ամիս-ամսաթիվն է և տարեսկիզբը:

⁷³⁹ Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը, էջ 275:

Վարդանյանը⁷⁴⁰: Կարելի է ենթադրել, թե այդ փոփոխությունը կատարվել է հետագայում ընդօրինակության ժամանակ, քանի որ մեկ այլ բնագրում էլ հիշատակվում է անշարժ՝ օգոստոսի 15-ը:

«Ազգաց ազնուականոնների» առավել հետաքրքիր տեղեկություններից է տարբեր ազգերի մոտ նահանջի ժամանակը գրանցելու փաստը: Այսպես, «Հոռոմոց և իւրոց» խմբի համար ոչ մի գրանցում արված չէ: Կարծում ենք՝ հուլյան տոմարի նահանջի օրը փետրվարի 29-ին գրանցելն այնքան տարածված ու ամրակայված է եղել, որ Սարկավագն այս խմբի համար հատուկ նշում չի կատարել: Սակայն նահանջի օրվա մասին գրանցում կա «Պատձէն տոմարի»-ում՝ «Հոռոմք ի փետրուարի ամիս արկանեն»⁷⁴¹:

Նահանջն առաջինը հիշատակվում է փետրվար ամսվա խորանում՝ «Պարսիկք **գար նահանջին** աստ դնեն»⁷⁴²՝ մարտի Գ = ադար ԺԷ = պարմութի Է = Մեհեկի ԻԵ = մեհրան Լ:

2-րդը հայոց համար հիշատակությունն է, սակայն մի փոքր այլ խմբագրությամբ՝ «Հայք **գաւելորդ նահանջին** աստ դնեն»⁷⁴³՝ մարտի Է = ադար ԻԱ = պեմենովթ ԺԱ = Մեհեկի ԻԹ = ասպանդատ Ա:

Գ. Բրուտյանը Սարկավագադիր տոմարի նահանջի օրվա մասին գրում է. «... Հայր Սարկաւագի րոմարական աշխարտութիւնների, Սարկաւագադիր կարգում նահանջի օրը դրել է Մարտի 8-ի դիմաց՝ Հայոց Մեհեկան եւ Արեգ ամիսների միջեւ (որ նոյն է, թէ Մեհեկանը դառնար 31 օր)»⁷⁴⁴:

Ինչպես նկատելի է մեր կատարած բնագրային մեջբերումից, մարտի 7-ի առջև է կատարվել գրանցումը, և չի գրված **գար նահանջի**, որը նշանակում է, որ թեև այդ ավելացումը կատարվում է, սակայն այն նահանջի օրը չէ, այլ նշված է Մեհեկի ամիսը, որ դարձել է 31 օր: Իսկ հայոց նահանջի օրը համապատասխանում է փետրվարի 29-ին համապատասխան Մեհեկի 23-ին:

3-րդը եբրայեցիների համար նշումն է՝ «Եբրայեցիք **գար նահանջին** աստ դնեն»⁷⁴⁵՝ մարտի ԺԵ = ադար ԻԹ = պեմենովթ ԺԹ = Արեգ Է = ասպանդատ ԺԲ:

Վերջինը՝ եգիպտացվոց համար նշումը, հունվարի փոխարեն դրված է փետրվարին: Ասենք, որ եգիպտացիները նահանջ էին համարում ոչ թե քառամյակի չորրորդ, այլ երրորդ տարին⁷⁴⁶: Եգիպտացիների ու եթովպացիների նահանջի ամսվա մասին նշում կա «Պատձէն տոմարի»-ում. «Իսկ եգիպտացիք, եթովպացիք ի վեցերորդ ամիսն արկանեն և առնեն Լ (30) ար և ապա

⁷⁴⁰ Նույն տեղում, էջ 537:

⁷⁴¹ **Հովհաննեսի** Պատձէն տոմարի աշխ., տե՛ս **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 216:

⁷⁴² **Հովհաննեսի** կազմած խառնախորանը, տե՛ս **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 165:

⁷⁴³ Նույն տեղում:

⁷⁴⁴ **Գ. Բրուտեան**, Հայկական օրացոյցը իր սկզբնաւորումից մինչև մեր օրերը, Ռուբիկոն, 1/2/-2000, էջ 7:

⁷⁴⁵ **Հովհաննեսի** կազմած խառնախորանը, տե՛ս **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 165:

⁷⁴⁶ **Հ. Բաղայան**, Հայոց տոմարի պատմություն, էջ 62:

սկսանին զպեմենովթ և զգըմիթ»⁷⁴⁷: Այսինքն՝ այս խմբին պատկանող ժողովուրդները նահանջն ավելացրել են հունվարին համապատասխանող մեքիր և եմբաթիթ և մյուս ազգերի համապատասխան ամիսներին: Նշանակում է, որ այս հատվածում՝ հունվարի ԻԵ = մեքիր Լ-ի դիմաց պետք է ավելացնել՝ «Եգիպտացիք **զաւր նահանջին** աստ դնեն»:

«Խառնախորանում» բնատնտեսական տարվա համար կարևոր տեղեկություն կարելի է դիտել փետրվար ամսի Է = Մեհեկի Ա-ին Արեգակի շողերի ընկնելն օդի մեջ, փետրվարի ԺԵ-ն = Մեհեկի Թ-ին՝ ջրի մեջ, իսկ փետրվարի ԻԳ-ն = Մեհեկի ԺԷ-ին՝ գեանին⁷⁴⁸ հողին: Սա վկայում է, որ փետրվարի 7-ից արդեն եղանակային փոփոխություններ են կատարվում, այսինքն՝ աստիճանաբար սկսում է տաքանալ նախ օդը, ապա՝ ջուրը, հետո՝ հողը:

Ը. Բաղայանը «Խառնախորան» ընդարձակ աղյուսակը դասում է հայոց տոմարի փայլուն աշխատությունների շարքին: Ճիշտ է նկատում, որ այդ 15 ազգերը ներկայացված են 5 խմբով, որոնցում օրացույցների ամիսների անունները ըստ հերթական կարգի չեն փոփոխվում, սակայն տարբեր են նրանց տարեմուտները:

Այսպես, առաջին խմբի՝ «հռոմոնց» և իւրոց, տարեմուտը հունվարի 1-ն է, յունաց՝ դիւստրոս, ասորոց՝ քանուն խրա ամիսների 1-ը: 2-րդինը՝ եբրայեցոց և իւրոց, մարտի 22-ը՝ եբրայեցոց, արաբացոց Նիսան 1-ը, մակեդոնացոց՝ գեմեդիոն 1-ը: 3-րդինը՝ եգիպտացոց և իւրոց, օգոստոս 29-ը, եգիպտացոց՝ թովթ, եթէոպացոց՝ մաքարամ, աթենացոց՝ մենեքիոն, բիթանիացոց՝ դէսոս, կապադոկիացոց՝ արտանա, վրաց՝ ախլածելի, աղուանից՝ նաւասարդիոն ամիսների 1-ը»:

4-րդ՝ հայկականինը, ըստ ավանդության, օգոստոս 11-ին = Նաւասարդի 1-ին և 5-րդ՝ պարսկականինը՝ օգոստոս 5-ը = փարւարտին 1-ին:⁷⁴⁹

Մենք հայոց Սարկավագադիր տոմարի տարեմուտին հանգամանորեն անդրադարձել ենք մեր գրքի տարբեր մասերում: Միայն ասենք, որ հայոց տոմարի շարժականության հետևանքով է հայոց առաջին ամիսը հայտնվել այդ դիրքում, և առաջացել օգոստոս 11 = Նաւասարդի 1 զուգավորությունը: Հովհաննես Սարկավագի տոմարի գործնական, օրացուցային տարեմուտը Քրիստոսի ծննդյան ու Հայտնության տոնի օրն է՝ հունվարի 6-ը = Քաղոց 29-ին, որի համապատասխան էլ նա ստեղծել է Հայոց անշարժ տոմարի վերադիրների ու յոթներյակների համակարգերը:

Ա. Աբրահամյանը վերոհիշյալ «Խառնախորանը» համարում է Հովհաննես Սարկավագի կազմածի նախնական տարբերակը, սակայն չի հիմնավորում: Մենք համաձայն ենք, որ հրատարակած «Ազգաց կանոնները» նախնականն է՝ որոշ հավելումներով: Ահա թե ինչու վերադիրներին զուգահեռ

⁷⁴⁷ Պատճէն տոմարի, տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 216:

⁷⁴⁸ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 163:

⁷⁴⁹ Հ. Ս. Բաղայան, Հայոց տոմարի պատմություն, էջ 61:

գրված են Լուսնի ծնունդի ամսաթվերի զուգահեռները, որոնք Սարկավագի կազմած լուսնացույցի Լուսնի ծնունդներին են համապատասխանում և հիմնավորվում են տոմարական կանոններով, ինչպես ներկայացրինք սկզբի հատվածում:

Հովհաննես Սարկավագի «Ազգաց կանոնները» հետագայում որոշակի խմբագրումների են ենթարկվել: Դրանցից կարելի է հիշատակել «Սուրբ Գեորգայ բարեկենդանը» և «Տաւն Վարագա խաչի»։ դրանք դրված են Խաչվերացից հետո ընկնող շաբաթվա կանոնով և այստեղ են տեղափոխվել 14-րդ դարի ընթացքում, իսկ Սարկավագի ժամանակ եղել են Փոխումն Աստվածածնից հետո եկող շաբաթվա շաբաթ և կիրակի օրերին⁷⁵⁰:

Հովհաննես Սարկավագի կազմած «Ազգաց ազնուականոնները», որ կոչվել է նաև «Խառնախորան», նրա «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուի կարևորագույն մասերից է, որի որոշ բաղադրիչներ՝ ՎԵՐԱԴԻՐ, ամիս-ամսաթիվ ևն, օգտագործվել են նաև ՇԼԲ-ամյա գատկացուցակների համար: «Ազգաց կանոնները» տրված են 1094 թ.-ի կամ Հայոց փոքր թվականի 10-րդ, այն է՝ ապրիլի 4-ի լրման տարվա կտրվածքով: Մեզ է հասել ուշ շրջանի ընդօրինակություններով, իսկ ՄՄ 1999^{հմբ} գրչագիրը նրա համառոտված տարբերակն է:

Ը. ՍԱՐԿԱՎԱԳԻ ՇԼԲ (532)–ԱՄՅԱ ԶԱՏԿԱԳՈՒԳԱԿՆԵՐԸ

Հայոց ՇԼԲ-ամյա գատկացուցակների առաջացման պատմությանն անդրադարձել ենք նախ մեր հոդվածներից մեկում⁷⁵¹:

Հայ իրականության մեջ Անանիա Շիրակացին էր, որ հուլյան անշարժ ու Հայոց շարժական տոմարի օրինաչափություններով առաջինն ստեղծեց ու գործադրության մեջ դրեց ՇԼԲ (532)–ամյա (Շ–եակ) գատկացուցակներ, սակայն 550 տարվա համար՝ լիովին համապատասխան էսայանների սկզբունքներին, որով էլ հիմք դրվեց Հայոց մեծ թվականության համակարգին, որի Ա տարին համապատասխանեց հուլյան տոմարի 552 թվականի հուլիսի 11-ից մինչև 553 թվականի հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածին:

Առաջին Շ–եակի ավարտից հետո Շ–եակի 2-րդ պարբերաշրջանի համար, սակայն արդեն Հայոց անշարժ տոմարին համապատասխան, առաջին ՇԼԲ-ամյա գատկացուցակները՝ հուլյան և Հայոց անշարժ տոմարներով, ստեղծեց Հովհաննես Սարկավագը: Նախկինում ուսումնասիրողները կարծել են, որ Սարկավագն ստեղծել է ՇԼԲ-ամյա գատկացուցակ միայն հռոմեացոց տոմարով: Է. Աղայանը, խոսելով Շ–եակ գատկացուցակի մասին, նկատում է, որ Հովհ. Իմաստասերը այն կազմել է միմիայն հուլյան տոմարով («Սարկավագը հայոց ամիս-ամսաթվերով գատկացուցակ չունի»⁷⁵²): Սակայն

⁷⁵⁰ **Ռ. Վարդանյան**, Հայոց տոնացույցը (4–18-րդ դդ.), էջ 265:

⁷⁵¹ **Գ. Սիմոնյան**, Հովհաննես Սարկավագի ՇԼԲ (532)–ամյա Զատկացուցակները, ԵՊՀ աստ. ֆակ., Տարեգիրք, Խ. Զ, Եր., 2011, էջ 48–85:

⁷⁵² **Է. Աղայան**, Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Եր., 1986, էջ 183:

տոմարական որոշ բնագրեր մեզ թույլ են տվել համոզվել, որ եղել է նաև ՇԼԲ-ամյա զատկացուցակ՝ հայոց Սարկավագադիր անշարժ տոմարի ամիս-ամսաթվերով: Այսպես, ՄՄ 1973^{հմ} գրչագրում (էջ 53 բ, ինչպես նաև 79 ա)⁷⁵³, պահպանվել է Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջանի մի աղյուսակ, որտեղ տրված են Առաջավորը, Բուն Բարեկենդանը, վերադիրները և Լուսնի լրման օրերը, որոնց ամսաթվերը ցույց են տալիս, որ Հովհաննես Սարկավագի կազմած 19-ամյակն է: Այն սկսում է ապրիլի 4-ի = Արեգի ԻԷ-ի լրման տարով և ավարտվում ապրիլի 15-ի = Ահեկի Ը-ի տարով: Իսկ ամենակարևորը՝ այստեղ տրված են նաև հայոց վերադիրները:

19-ամյակի տարին	Առաջավորը	Բուն Բարեկենդան	Վերադիր	Լրումները
1	Արաց ԺԷ	Մեհեկի Ը	ԺԶ	Արեգի ԻԷ – ապրիլի 4
2	Արաց Զ	Արաց ԻԷ	ԻԷ	Արեգի ԺԶ – մարտի 24
3	Արաց ԻԵ	Մեհեկի ԺԶ	Ը	Ահկի Ե – ապրիլի 12
4	Արաց ԺԴ	Մեհեկի Ե	ԺԹ	Արեգի ԻԴ – ապրիլի 1
5	Արաց Գ	Արաց ԻԴ	Լ	Արեգի ԺԳ – մարտի 22
6	Արաց ԻԲ	Մեհեկի ԺԳ	ԺԱ	Ահկի Բ – ապրիլի 9
7	Արաց ԺԱ	Մեհեկի Բ	ԻԲ	Արեգի ԻԱ – մարտի 29
8	Արաց Լ	Մեհեկի ԻԱ	Գ	Ահկի Ժ – ապրիլի 17
9	Արաց ԺԹ	Մեհեկի Ժ	ԺԴ	Արեգի ԻԹ – ապրիլի 6
10	Արաց Է	Արաց ԻԸ	ԻԶ	Արեգի ԺԷ – մարտի 25
11	Արաց ԻԶ	Մեհեկի ԺԷ	Է	Ահեկի Զ – ապրիլի 13
12	Արաց ԺԵ	Մեհեկի Զ	ԺԸ	Արեգի ԻԵ – ապրիլի 2
13	Արաց Դ	Արաց ԻԵ	ԻԹ	Արեգի ԺԴ – մարտի 22
14	Արաց ԻԳ	Մեհեկի ԺԴ	Ժ	Ահեկի Գ – ապրիլի 10
15	Արաց ԺԲ	Մեհեկի Գ	ԻԱ	Արեգի ԻԲ – մարտի 30
16	Մեհեկի Ա	Մեհեկի ԻԲ	Բ	Ահկի ԺԱ – ապրիլի 18
17	Արաց Ի	Մեհեկի ԺԱ	ԺԳ	Արեգի Լ – ապրիլի 7
18	Արաց Թ	Արաց Լ	ԻԴ	Արեգի ԺԹ – մարտի 27
19	Արաց ԻԸ	Մեհեկի ԺԹ	Ե	Ահկի Ը – ապրիլի 15

Ինչպես երևում է աղյուսակից, Արեգի ԻԷ – ապրիլի 4-ի լրման տարում վերադիրը 16 է, այսինքն՝ Սարկավագը Հայոց փոքր թվականի համար հռոմեական տոմարի 11 արժեքին ավելացրել է 5, ինչպես կանոնել է: Այդպես է նաև 19-ամյակի բոլոր տարիներին, բացի Արեգի ԺԷ – մարտի 25-ի լրման տարուց, որտեղ դրանց տարբերությունը 6 է: Լուսնի լրման 19-ամյակի բոլոր տարիներին վերադիրների տարբերությունը 11 է, իսկ վերջին տարվանը՝ Արեգի ԺԷ – մարտի 25-ինը՝ 12, ինչպես հռոմեական տոմարում:

⁷⁵³ Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը (4-18-րդ դդ.), էջ 257:

Հայոց փոքր թվականի (հայոց ամիս-ամսաթվերով) վերադիրները մենք ստացել ենք նաև տոմարական կանոններով՝ մեր աշխատության համապատասխան մասում:

Լուսնի լրման այս 19-ամյա պարբերաշրջանի, բեսիքիստոնի՝ Արևի փոքր շրջանի, այն է՝ 28-ամյա պարբերաշրջանի ու «Ազգաց ազնուականոնների» հենքի վրա վերադիրների ու յոթներյականների սարկավագադիր շարքերով է ստեղծել հեղինակն իր ՇԼԲ-ամյա գատկացուցակները, որոնք մենք կրկին վերակազմել ենք, քանի որ մեր առաջին վերականգնումը⁷⁵⁴ վերաբերում է ոչ թե Սարկավագի նախնական բնագրին, այլ դրա խմբագրված տարբերակին:

ՇԼԲ-ամյա գատկացուցակները վերականգնել ենք դարձյալ հաշվումների երկու սկզբով⁷⁵⁵՝ մեկը հաշվելու իմաստով առաջին տարին (= 1085 թ. = ապրիլի 13-ի Լուսնի լրման տարի), մյուսը՝ 19-ամյակի (= 1094 թ. = ապրիլի 4-ի Լուսնի լրման տարի): Հովհաննես Սարկավագի ստեղծած ՇԼԲ-ամյա գատկացուցակների հիման վրա էլ առաջացավ Հայոց փոքր կամ Սարկավագադիր թվականը, որի Ա (I) տարին ներկա **1085** թվականն է և ավարտվում է Հայոց փոքր թվականի ՇԼԲ (532)՝ ներկա **1616** թվականին:

Հովհաննես Սարկավագի «Մեկնութին տումարիս Հայկազնեայ» ժողովածուի կարևորագույն մասերից են նրա կազմած Շ-եակ աղյուսակները, որոնցից մեկի վերնագիրը վերականգնում ենք **«Ազնուականոնք ՇԼԲ ամաց՝ ըստ հռոմեացոց տումարի»**, իսկ մյուսը՝ **«Ազնուականոնք ՇԼԲ ամաց՝ ըստ Հայոց անշարժ տումարի (Սարկավագի)»**⁷⁵⁶, ինչին կանդրադառնանք հետագա շարադրանքում:

ՇԼԲ-ամյա ազնվականոն գատկացուցակներից մեկը՝ հռոմեական տոմարովը, գտնում ենք ՄՄ 1999^{հմր} և ՄՄ 1973^{հմր} գրչագրերում, որոնք Հովհաննես Սարկավագի գատկացուցակի խմբագրություններն են՝ հիմնված Անանիա Շիրակացու Շ-եակի վրա, որը ևս մասամբ խմբագրված է հետագա ժամանակներում:

Սակայն մյուսը՝ հայոց ամիս-ամսաթվերովը, առկա է ՄՄ 1973^{հմր} գրչագրում՝ միայն 19-ամյակի կտրվածքով, որի օգնությամբ վերականգնվում է հայոց ամիս-ամսաթվերով Շ-եակը, որովհետև այն 19-ի և 28-ի արտադրյալի թիվն է:

Հովհաննես Սարկավագի խմբագրած Շ-եակի պատկանելության խնդիրը լուծվում է նրա և Անանիա Շիրակացու կազմած Շ-եակների հուլյան շարքի համադրությունից:

Եթե Ա. Շիրակացու մոտ ապրիլ 4-ի լրման տարվա, այսինքն՝ 10 թվականի վերադիրը 9 է, ապա Սարկավագի մոտ՝ 11 (հայոցում՝ 16): Այս փաստը

⁷⁵⁴ Տե՛ս Գ. Սիմոնյան, Հովհաննես Սարկավագի ՇԼԲ (532)-ամյա Զատկացուցակները:

⁷⁵⁵ Նույն տեղում, էջ 231-232:

⁷⁵⁶ Գ. Սիմոնյան, Ռ. Վարդանյան, Հովհաննես Սարկավագի «Մեկնութին տումարի Հայկազնեայ» տոմարական ժողովածուն, էջ 80-82:

միայն բավարար է, որ քննվող Շ-եակը համարենք Սարկավագինը: Այլ կերպ ասած՝ Ա. Շիրակացու և Հովհաննես Սարկավագի վերադիրների համակարգերը տարբեր են:

Անանիա Շիրակացին կարգավորել է Շ-եակի առաջին շրջապտույտի տոմարական իրողությունները, իսկ Սարկավագը՝ երկրորդինը:

Ա. Շիրակացու⁷⁵⁷ և Հովհաննես Սարկավագի⁷⁵⁸ հուլյան շարքի Շ-եակների համեմատական քննությունը, ըստ Ա. Աբրահամյանի և Ջ. Էյնաթյանի հրատարակությունների, մանրամասն ներկայացված է մեր հոդվածներում⁷⁵⁹:

Միայն նշենք, որ Սարկավագն իր գատկացուցակներում հավելել է «**ՏԱՆՈՒՏԷՐ**», «**Առաջաուր**» և «**Քանիք**», «**Պենտեկոստ**» և «**Քանիք**», ինչպես և «**Վաղավառ**» և «**Քանիք**» խորանները: «Առաջաուրը» սահմանված է Զատկից հետո հաշված 70-րդ օրը, Հոգեգալուստը՝ Զատկի կիրակիից հաշված 50-րդ, իսկ Վարդավառը՝ Հոգեգալուստից հաշված 50-րդ օրը:

Հովհաննես Սարկավագի հուլյան տոմարով գատկացուցակն ունեցել է երկու հրատարակություն՝ երկու տարբեր գրչագրերի հիման վրա: Առաջինը հրատարակել է Ա. Աբրահամյանը⁷⁶⁰՝ հիմք ունենալով ՄՄ 1973^{հմր} գրչագիրը, որին որոշ («Վերադիր», «Յոթներեակ», «ՏԱՆՈՒՏԷՐ») ավելացումներ է կատարել ՄՄ 1999^{հմր} գրչագրից:

Ինչպես նշում է Ա. Աբրահամյանը, ՇԼԲ-ամյա գատկացուցակը բազմաթիվ ընդօրինակություններից ոչ մեկում հեղինակային վերնագիր չունի, ու կարծում է, որ Հովհաննեսի ՇԼԲ աղյուսակը կոչվել է «ազնվականոն»՝ հիմնվելով նրա «Առ Սարգիս» նամակի վրա. «... վասն ստուգի լինելոյ առ ի յինէն իրաւացի պարճառաւ, կայջիր զազնուականոնսն, որ աննոյար ունի զամենայն սահմանեալսն վասն քանի և յեղանակաց քարոյ, և լրմանց լուսնոյ, զարկաց, վերադրաց և կթներեակաց և զառաջաուրաց պահոց և զայլոցն ամենեցուն»⁷⁶¹:

Սակայն նկատենք, որ թեև գատկացուցակներում իրոք կան վերոհիշյալ տոմարական իրողությունների անուններով շարքեր, սակայն դրանցում տեղակայված են տոմարական մի շարք հասկացությունների, ինչպես նաև՝ միայն Քրիստոսի Հայտնության ու Հարության և նրանով պայմանավորված մի քանի տոների ու տոմարական կանոնների հիման վրա ստացած տոների համապատասխան թվային արժեքներն ու ամսաթվերը: Այս դեպքում այն նեղ

⁷⁵⁷ **Անանիա Շիրակացու** մատենագրությունը (աշխ.՝ **Ա. Աբրահամյանի**), Եր., 1944: Ա. Շիրակացու Շ-եակը՝ հռոմեական և Հայոց շարժական տոմարներով, վերջին անգամ վերականգնել է՝ **Լ. Սարգսյան**, Հայոց տոնացույցի ծագումն ու զարգացումը (4-18-րդ դդ.), Եր., 2010:

⁷⁵⁸ **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 191-200:

⁷⁵⁹ **Գ. Սիմոնյան**, **Ռ. Վարդանյան**, Հովհաննես Սարկավագի «Մեկնություն տոմարի Հայկազնեայ» տոմարական ժողովածուն, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ Տարեգիրք, Եր., 2006, էջ 80-82, **Գ. Սիմոնյան**, Հովհաննես Սարկավագի ՇԼԲ (532)-ամյա Զատկացուցակները, էջ 49-50:

⁷⁶⁰ **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 191-199:

⁷⁶¹ Նույն տեղում, էջ 87:

առումով կարելի է համարել *ազնվականոն*: Սակայն միայն այս զատկացուցակը համարել Հովհաննես Սարկավագի ազնվականոնները միանգամայն կնեղացնել դրանց ընդգրկողությունը, քանզի ազնվականոն բառը նա –գործածել է իր բոլոր տոմարական հաշվումների համար՝ «...վասն ստուգիւ լինելոյ»:

Իսկ ազնվականոն բառն ինքնին հուշում է, որ դրանք ճշգրիտ, անխախտ, ստույգ կանոններ են, որոնց միջոցով ստացվում են այս կամ այն տոմարական հասկացության արժեքներն ու տոների ամիս–ամսաթվերը կամ տարբեր ազգերի ամիսների ու տարվա եղանակների, աստղագիտական երևույթների՝ ժամանակային առումով անխախտ տոմարական համարժեքները, և ազնվականոններ ասելով պետք է հասկանալ բոլորը՝ ՇԼԲ–ամյա զատկացուցակները, «Ազգաց կանոնները», իր խմբագրած «Պատձէնները» և այլն: Այդ իսկ պատճառով Հովհաննես Սարկավագի՝ միայն ազգաց կանոններն անվանել ազնվականոն, ընդունելի չէ:

Հովհաննես Սարկավագի Շ–եակ զատկացուցակը, ըստ հռոմեացոց տոմարի, երկրորդ անգամ հրատարակվել է Զ. Էյնաթյանի և Գ. Վարդանյանի աշխատասիրությամբ՝ ՄՄ 1999^{հմր} գրչագրի հիման վրա⁷⁶²:

Զ. Էյնաթյանը զատկացուցակի վերնագիրը վերականգնել է «Աղիւսակ ՇԼԲ ամաց», որը մեր կարծիքով թերի է ⁷⁶³:

Հուլյան տոմարով սարկավագադիր զատկացուցակը՝ իբրև ստույգ ու անփոփոխ ամիս–ամսաթվերով ու թվային արժեքներով ստեղծված աղյուսակ, մենք անվանել ենք **«Ազնուականոնք ՇԼԲ ամաց՝ ըստ հռոմեացոց տոմարի»**, և քանի որ դրան զուգահեռ Հովհաննես Սարկավագն ստեղծել է նաև զատկացուցակ՝ Հայոց անշարժ տոմարի ամիս–ամսաթվերով, ապա այն մենք վերականգնել, վերակազմել ու անվանել ենք **«Ազնուականոնք ՇԼԲ ամաց՝ ըստ հայոց անշարժ տոմարի (Սարկավագի)»**⁷⁶⁴:

2–րդ հրատարակության աշխատասիրողը (Զ. Էյնաթյան) աղյուսակի տվյալները օժանդակ նյութով և տոմարական հաշվումներով կրկին հաշվարկել է և բազմաթիվ ուղղումներ կատարել⁷⁶⁵, որից հետո ճշտված տվյալներից շատերը համապատասխանում են ՄՄ 1973^{հմր} գրչագրի տվյալներին: Սակայն ասենք, որ աշխատասիրողը ևս չի խուսափել վրիպումներից, որոնք ուղղվել են մեր ուսումնասիրության մեջ:

Հովհաննես Սարկավագի ՇԼԲ–ամյա զատկացուցակները կազմելու և հայոց շարքը առաջին անգամ վերականգնելու համար մենք հիմք ենք ընդունել ՄՄ 1999^{հմր} գրչագրի հիման վրա Զ. Էյնաթյանի և Գ. Տեր–Վարդանյանի

⁷⁶² Քննություն եւ բնագրեր, Պատձէն տոմարի (Է–ԺԵ դդ.), աշխ.՝ Զ. Էյնաթեանի և Գ. Տեր–Վարդանեանի, էջ 220–247:

⁷⁶³ Նույն տեղում, էջ 220:

⁷⁶⁴ Գ. Սիմոնյան, Ռ. Վարդանյան, Հովհաննես Սարկավագի «Մեկնություն տոմարի Հայկազնեայ» տոմարական ժողովածուն, էջ 80–82:

⁷⁶⁵ Նույն տեղում, էջ 97:

կատարած հրատարակությունը՝ համեմատելով ՄՄ 1973^{հմր} գրչագրի հետ և ուղղելով նկատված վրիպումները:

Սակայն ուսումնասիրությունը մեզ բերել է այն համոզման, որ ՄՄ 1999^{հմր} և ՄՄ 1973^{հմր} գրչագրերով մեզ է հասել ոչ թե նախնական բնագիրը, այլ արդեն խմբագրված տարբերակը:

Խմբագրված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համակարգը՝ 20 թվականից սկսած, որի հիման վրա Ջ. Էյնսթայնը 1-19 տարիների յոթներեակներն ուղղել է և սկսել Գ-երեքշաբթի օրից: Բ-երկուշաբթի՝ յոթներյակը ձիշտ կլիներ, եթե Սարկավազադի տոմարի տարեմուտը լիներ օգոստոսի 11-ին, և Սարկավազադի տոմարի տարին բաշխված լիներ հռոմեական տոմարի երկու տարիների՝ 1084/1085 թթ. վրա:

Բացահայտելով այն թվականության համակարգերը (Քննիկոն), որով Հովհաննես Սարկավազը հաշվել է յոթներյակները՝ վերականգնել ենք Սարկավազադի տոմարի յոթներյակները՝ 28-ամյա պարբերականությամբ, և տեղադրել ՇԼԲ-ամյա զատկացուցակներում՝ Հռոմեացոց և Հայոց անշարժ տոմարներով:

Սարկավազի ՅՈՒՆԵՍԿՕ-ի համակարգը, ինչպես ցույց ենք տվել գրքի համապատասխան մասում, համընկնում է Անանիա Շիրակացու համակարգին հուլյան շաբթում, իսկ Հայոցում ունի հետևյալ արժեքները՝ Է, Ա, Բ, Գ/Դ, Ե, Ջ, Է, Ա/Բ, Գ, Դ, Ե, Ջ/Է, Ա, Բ, Գ, Դ/Ե, Ջ, Է, Ա, Բ/Գ, Դ, Ե, Ջ, Է/Ա, Բ, Գ, Դ, Ե/Ջ (սկսած ապրիլի 13-ի լրման տարուց):

28-ամյա պարբերականություն ունեցող յոթներյակները, որը հաստատապես Սարկավազի համակարգն է, պետք է վերականգնել Շ-եակ զատկացուցակներում, այլապես նրա սկզբունքները կխախտվեն օրացյուտ անելիս:

Յոթներյակի խնդրին առավել մանրամասն անդրադարձել ենք իր տեղում:

Մեր կողմից վերականգնված զատկացուցակներում տեղ են գտել հետևյալ խորանները՝

1. «Նահանջ», որոնք հրատարակության մեջ նշվել են յուրաքանչյուր 4-րդ տարում՝ նինջ կամ նահ. համառոտագրությամբ, որոնց փոխարեն մենք նահանջները համարակալել ենք և համապատասխան թվային արժեքով գրել՝ Ա, Բ Գ և Ն, և «ԻԸ- երեակների» (բեսեքիստոն կամ Արևի փոքր շրջան) մասին նշումները, որոնց համարակալման մեջ էլ են հանդիպել սխալներ, ուղղված են:
2. Մենք հավելել ենք **Հայոց մեծ թվականի** տարեթվերը: Ակնառու է, որ Հայոց փոքր թվականից այն մեծ է 533 տարով (534-1), իսկ Սարկավազի և ներկա թվականի տարբերությունը 1084 տարի է:
3. «Թուական»՝ Սարկավազի Հայոց անշարժ տոմարով:
4. «Թվականը (ներկա)»՝ մենք ենք դրել, որի 1-ին տարին 1085 թվականն է:

5. «**Վերադիր**»: Հովհաննես Սարկավագի ՇԼԲ-ամյա զատկացուցակը վերականգնելիս հայոց շարքում վերականգնել ենք հայոց Սարկավագադիր տոմարի վերադիրների համակարգը:
6. «**Է-երեակ**»: 28-ամյա պարբերականությամբ տեղադրված է յոթներյակների համակարգը, որը 4-ով ավելի է հռոմեականից:
7. «**ՏԱՆՈՒՏԷՐ**»: Սկսում է «ԽՈՅ»-ով ու ավարտվում «ՁԿՆԵՐ»-ով: Այն ունի 12-ամյա պարբերականություն:
8. «**Ար Յայտնութեան**», որտեղ նշված է միայն «Քրիստոսի ծննդեան ու Յայտնութեան» տոնի շաբաթագիրը, իսկ քանի որ ամիս-ամսաթիվը հուլյան տոմարով մշտապես եղել է հունվարի 6-ին, իսկ Սարկավագադիր տոմարով՝ Քաղոց 29-ին, չի նշվել: Սարկավագը շաբաթագիրը որոշել է Հայոց փոքր (Քննիկոն) թվականով, քանի որ հայոց թվականը մեկով աճել էր, և օրագյուտ անելիս հուլյան և հայոց արժեքների մեջ մշտապես 1-ի տարբերություն կա: Այսպես, հռոմեական տոմարով 1-ին տարվա յոթներյակը 3 է, հունվարը կրկնակ չունի: Օրագյուտի կանոնով՝
 - Ա. (1085 թ.). $3 + 0 + 6 = 9 - 7 = 2$ մն.՝ երկուշաբթի, ինչպես զատկացուցակում Բ (2) է՝ երկուշաբթի:
 - Բ. (1086 թ.). $4 + 0 + 6 = 10 - 7 = 3$ մն.՝ երեքշաբթի է,
 - Գ. (1087 թ.). $5 + 0 + 6 = 11 - 7 = 4$ մն.՝ չորեքշաբթի,
 - Դ. (1088 թ.). $6 + 0 + 6 = 12 - 7 = 5$ մն. շբթ.: Նահանջի տարում, մինչև փետրվարի 28-ը ներառյալ օգտագործել է առաջին 5 արժեքը, փետրվարի 29-ից սկսած՝ մեկով ավելի՝ 6 -ը:

Իսկ Սարկավագադիր տոմարում նույն՝ 1 թվականի յոթներյակը 7 է, Քաղոց ամսվա կրկնակը՝ 1, Քրիստոսի ծնունդն ու Յայտնութիւնը՝ 29-ին: $7 + 1 + 29 = 37 : 7 = 2$ մն. (երկուշաբթի), 2 թվ.՝ $1 + 1 + 29 = 31 : 7 =$ մն. 3 (երեքշբթ.) ևլն:
- 8-9. «**Առաջադոր**» և «**Քանիք**»՝ տրված է Առաջավորի ամիս-ամսաթիվը, որից մինչև Բուն Բարեկենդան ներառյալ 21 օր է:
- 10-11. «**Բուն Բարեկենդան**» և «**Քանիք**»՝ Բ. Բրեկենդանի ամիս-ամսաթիվն է գրանցված, որից մինչև Զատիկի տոն 49 օր է: Զատիկի օրը ներառյալ՝ 50 օր:
12. «**Միջոց**»: Նույնությամբ դրել ենք 2-րդ հրատարակության մեջ տեղ գտած արժեքները, որոնք ուղղել է Ջ. Էյնաթյանը:
- 13-14. «**Լրումն**» և «**Քանիք**»՝ զատկական կամ Ավագ լրման ամիս-ամսաթվերն են:
15. «**Ար լրման**»՝ ավագ լրման օրերի շաբաթագրերն են:
- 16-17. «**Զատիկ**» և «**Քանիք**»՝ նշված են Զատիկի օրվա ամիս-ամսաթվերը:

18. «**Լ. Լրումն**»՝ ԺԲ կամ ԺԳ լուսնային տարիները. լուսնային տարին 12 լուսնային ամսի՞ց է (354 օր), թե՞ 13 (384 օր):
- 19–20. «**Պենտեկոստէ**» և «**Քանիք**»՝ Հոգեգալուստի տոնի ամիս–ամսաթվերը՝ Զատիկի օրից հաշված 50–րդ օրը (կամ 49 օր հետո):
- 21–22. «**Վարդավառ**» և «**Քանիք**»՝ Վարդավառի կամ Քրիստոսի Պայծառակերպության տոնի ամիս–ամսաթվերը՝ Հոգեգալուստի օրից սկսած 50–րդ օրը (կամ 49 օր հետո):
23. «**Միջոց**»՝ Նույնությամբ դրել ենք 2–րդ հրատարակության մեջ տեղ գտած արժեքները:

Աղյուսակից դուրս՝ աջ կողմում՝ Լուսնի լրման ապրիլի ԺԳ–ի տարուց (Ա. Սարկավագադիր տարի) հաշված յուրաքանչյուր 19–րդ տարվա դիմաց նշված է ԺԹ, իսկ Ժ թվականից՝ Լուսնի լրման ապրիլի 4–ի տարուց սկսած՝ հեղինակը՝ Հովհաննես Սարկավագը, առանձնացրել, կարևորել ու նշել է իր ընտրած՝ Լուսնի լրման 19–ամյակները՝ «ԹԺ Լուսին է» նշումով, ինչը վկայում է, որ հետևել է էսայաններին ու Անանիա Շիրակացուն, ինչպես ասացինք վերևում: Հենց ապրիլի 4–ի լրման տարուց է սկսել իր տոմարական որոշ հաշվումները՝ հոռոմոց տոմարի վերդիրը՝ **ԺԱ (11) և հայոց տոմարինը՝ ԺԶ (16)**, իսկ հոռոմոց տոմարի յոթներյակը՝ **Գ (3) և հայոց տոմարինը՝ Է (7)** սկսել է ապրիլի 13–ի լրման տարուց են:

Երկու տասնիննամյակների առանձնացումը (**1 և 10** թվականներով սկսվող) վկայում է, որ Հովհաննես Սարկավագը ևս ՇԼԲ–ամյա զատկացուցակների համար ընդունում է երկու սկիզբ՝ ապրիլի 13–ի և ապրիլի 4–ի Լուսնի լրման տարիները, որոնցից առաջինը հաշվելու, իսկ երկրորդը՝ 19–ամյակի իմաստով է առաջին տարի:

ՄՄ 1999^{հմ} գրչագրում, ինչպես և 2–րդ հրատարակության մեջ առանձին 19–ամյակների աղյուսակների տակ բերված են յուրօրինակ տեղեկություններ⁷⁶⁶: Այսպես՝

1. «**ՃՀԳ (174) – Այս խորան ստեղծումն է Ադամայ**»:
Փաստորեն այս գրառում կատարողը հեղինակն է, ով Ադամի ստեղծումը կապում է մարտի 22–ի լրման տարվա հետ: **Սա բխում է էսայանների սկզբունքներից, այն է՝ 19 – ամյակի ապրիլի 4–ի լրման՝ առաջին տարուց, ըստ որի՝** Արարչության առաջին օրը համապատասխանել է մարտի 17–ին և մարդու արարումը՝ արարչության 6–րդ օրվան՝ Նիսան 1 = մարտ 22–ին:
2. «**ՃԶ (180) Աստ բոլորի Լուսինն եւ այլ ոչ փլէ**»:
Սա Լուսնի լրման **մարտի 25–ի տարի է՝** ապրիլի 4–ով սկսվող 19–ամյակի 10–րդ կամ ապրիլի 13–ով սկսվող 19–ամյակի 19–րդ տարին է, որից հետո Լուսնի լրման պարբերաշրջանը նույնությամբ կրկնվում է:

⁷⁶⁶ Տե՛ս **Գ. Միմոնյան**, Հովհաննես Սարկավագի ՇԼԲ (532)–ամյա Զատկացուցակները, էջ 55–56:

3. **«ՃՂ (190) – Ըստ թուոյ եւ հոլովման Արեգական եւ Լուսնի եւ աստ բոլորումն Լուսնի, որ այլ ոչ փլէ յաւիտեան: ՇԾԲ ամ աւելի կալ, քան զամսն ի սկզբանէ, զի պակաս էր, յԱպրիլի Դ(4) իցն սկսիր»:**
Սա ևս Լուսնի լրման մարտի 25-ի, այսինքն՝ ապրիլի 4-ով սկսվող 19-ամյակի 9-րդ տարին է, ինչի մասին հստակ ասված է հետգրության մեջ:
4. **«ՆԻԱ (421)– Ի նշանախորանն Յայտնութիւն Ա.(1)ար յԱռաջ[տր]»:**
Սարկավագադիր 421 թվականի Յայտնութիւնը՝ հունվարի 6-ը, եղել է երկուշաբթի: Հայտնության ութօրեքի 7-րդ օրն ու Առաջավորի առաջին օրը համընկել են հունվարի 12-ին՝ կիրակի (տե՛ս հռոմեական տոմարով գատկացուցակը):
5. **«ՆՁԱ (481) – Յայսմ ամ Ծնունդն Քրիստոսի»:**
Հռոմեական տոմարով գատկացուցակի՝ «Յայսմ ամ Ծնունդն Քրիստոսի» գրառման հեղինակը Քրիստոսի ծնունդը կապում է **ապրիլի 18-ի** լրման տարվա հետ: Այս լրման տարին –6 (16) տարվա տարբերություն ունի Սարկավագի ստեղծած թվականության համակարգից, որի առաջին տարին ապրիլի 4-ի լրման տարին է:
6. **«ՆՁԹ (489) – Ի նշանախորանն Յայտնութիւն Բ (2) ար յԱռաջ[տր]»:**
Սարկավագադիր 489 թվականի Յայտնութիւնը եղել է՝ Բ ար՝ երկուշաբթի օրը, իսկ հունվարի 11-ին՝ Հայտնության ութօրեքի 7-րդ օրը համընկել է Առաջավորին (տե՛ս գատկացուցակը):
7. **«[ՇԺԳ] Այս ամ Խաչելութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ»:**
ՇԺԳ-ն մարտի 25-ի լրման տարի է, հայկական գատկացուցակների՝ հաշվելու իմաստով 19-րդ, իսկ 19-ամյակի առումով՝ 9-րդ տարի: Այս տարին համընկնում է ավանդական արևմտյան ավանդույթի հետ, որին հետևում էր Դիոնիսիոս Կրտսերը, ով Խաչելությունը տեղադրում էր մարտի 25-ի լրման տարում՝ Ալեքսանդրիայի գատկացուցակի համաձայն: Այն պահպանվում է միայն մ.թ.12, 259, 354 և 449 թթ.⁷⁶⁷:
Ըստ Անդրեասի 200-ամյակի՝ 353 թ. է եղել ապրիլի 4-ի լրման տարի:
Սակայն նշենք, որ Քրիստոսի Խաչելության տարին ինչպես Ա. Շիրակացին, այնպես էլ Հովհաննես Սարկավագը⁷⁶⁸ համարել են ապրիլի 4-ի լրման, այսինքն՝ հաշվելու իմաստով 10-րդ տարին:
8. **«[ՇԼԲ] Յադամայ աստ ամբ ՅՇԸ (6508), միւս շրջանս լինի ամբ Ի եւ Խ (7040)»:**

⁷⁶⁷ Кузенков П., Христианские хронологические системы, История леточисления в сбятоотеческой и восточнохристианской традиции, М., 2015, с. 261–273.

⁷⁶⁸ Ա. Արքահամյան, նշվ. աշխ., էջ 225–227:

Ըստ Հովհաննես Սարկավազի տեղեկության՝ «.....յԱդամայ մինչև հայ թուականն ըստ Շ.եկին թուականին՝ **ԲԶԸԶ (5976)**»⁷⁶⁹:

ՅՇԸ (6508)-ն Ադամից սկսած Շ-եակ՝ 5976 թվականն է՝ ավելացրած մեկ ՇԼԲ պարբերաշրջան (5976 + 532 = 6508), մյուս շրջանը կլինի՝ **Ի (7000) և Խ (40)** (6508 + 532 = 7040):

Եվ սա գրող հեղինակը 1084 թվականն է համադրել՝ Ադամից սկսած Շ-եակ թվականի 5976 տարուն և երկու պարբերաշրջան գումարելով՝ ստացել համապատասխան տարիները, այն է՝ 5976 = 1084, ՅՇԸ-ն 6508 = 5976 + 532 = 1616 թ. (1084+532՝ ներկա թվական) կամ Սարկավազադիր 532 թվականը, իսկ Ի և Խ (7040 = 1616 + 532) = 2148 ներկա թվականն է:

Այսպիսով, Հովհաննես Սարկավազի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» ժողովածուի նախնական բնագրում եղել է երկու Շ-եակ զատկացուցակ, որոնց համար հիմք է ծառայել Անանիա Շիրակացու հռոմեացոց տոմարով կազմած Շ-եակը, որն էլ խմբագրել է Հովհաննես Սարկավազը և դրան համապատասխան ստեղծել երկու զատկացուցակ՝ մեկը՝ հռոմեական Քննիկոն տոմարով, որը որոշ խմբագրումներով պահպանված ենք գտնում ՄՄ 1973^{հմր} և ՄՄ 1999^{հմր} և այլ գրչագրերում, մյուսը՝ Հայոց անշարժ տոմարով, որը չի պահպանվել ամբողջությամբ, այլ միայն մեկ 19-ամյակի կտրվածքով, և այն մենք ենք վերականգնել: Դրանցից առաջինը մենք վերնագրում ենք **«Ազնուականոնք ՇԼԲ ամաց՝ ըստ հռոմեացոց տոմարի»**, իսկ երկրորդը՝ **«Ազնուականոնք ՇԼԲ ամաց՝ ըստ հայոց անշարժ տոմարի (Սարկավազի)»**: Վերակազմված ՇԼԲ-ամյա զատկացուցակները ներկայացված են մեր գրքի չորրորդ գլխի Ա մասում:

⁷⁶⁹ Նույն տեղում, էջ 224:

ԳԼՈՒԽ Դ

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ԱԶՆՎԱԿԱՆՈՆՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆԵՐ**

**Ա. ԱԶՆՈՒԱԿԱՆՈՆՔ ՇԼԲ-ԱՄԱՅ՝ ԸՍՏ ՀՌՈՄԵԱՑԻՈՑ ՏՈՄԱՐԻ ԵՎ
ԱԶՆՈՒԱԿԱՆՈՆՔ ՇԼԲ-ԱՄԱՅ՝ ԸՍՏ ՀԱՅՈՑ ԱՆՇԱՐԺ ՏՈՄԱՐԻ
(ՍԱՐԿԱՎԱԳԻ)**

Լստիանց	Հայոց մեծ թվ	Սարկավազի թվ.	Թվական (ներկա)	Վերադիր	Է-էրեսակ	Տանտանր	Այրն Ցայտն.	Սուսջատր	Քանիքն	Բ. Բարեկենդան	Քանիքից]	Միջոց	Լրումն	Քանիք	Ա. լրմն.	Չաստիկն	Քիանիքն	Լ. Լրումն.	Պենտերտատ	Քանիք	Վարդավառ	Քանիք	Միջոց
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24
	534	Ա	1085	Բ	Գ	Խոյ	Բ	Փոտր	Թ	Մրտ	Բ	Ը.Ձ	Ապր	ԺԳ	Ա	Ապր	Ի	ԺԳ	Յնս	Ը	Յյս	ԻԷ	Գ
	535	Բ	1086	ԺԳ	Դ	Յուկ	Գ	Յն	ԻԵ	Փոտր	ԺԵ	Ե.Ձ	Ապր	Բ	Ե	Ապր	Ե	ԺԲ	Մյս	ԻԴ	Յյս	ԺԲ	Ե
	536	Գ	1087	ԻԴ	Ե	Եկ	Դ	Յն	ԺԷ	Փոտր	Դ	Դ.Ե	Մրտ	ԻԲ	Բ	Մրտ	ԻԸ	ԺԲ	Մյս	ԺՁ	Յյս	Դ	Ձ
Ա. ԻԸ	537	Դ	1088	Ե	Ձ/Է	Խցգ	Ե	Փոտր	Ձ	Փոտր	ԻԷ	Է.Դ	Ապր	Ժ	Բ	Ապր	ԺՁ	ԺԳ	Յնս	Դ	Յյս	ԻԳ	Գ
	538	Ե	1089	ԺՁ	Ա	Աոձ	Է	Յն	ԻԱ	Փոտր	ԺԱ	Ե.Բ	Մրտ	Լ	Ձ	Ապր	Ա	ԺԲ	Մյս	Ի	Յյս	Ը	Ե
	539	Ձ	1090	ԻԷ	Բ	Կյս	Ա	Փոտր	Ժ	Մրտ	Գ	Ը.Ա	Ապր	ԺԸ	Ե	Ապր	ԻԱ	ԺԳ	Յնս	Թ	Յյս	ԻԸ	Գ
	540	Է	1091	Ը	Գ	Կշո	Բ	Փոտր	Բ	Փոտր	ԻԳ	Է	Ապր	Է	Բ	Ապր	ԺԳ	ԺԲ	Յնս	Ա	Յյս	Ի	Դ
Բ	541	Ը	1092	ԺԹ	Դ/Ե	Կրճ	Գ	Յն	ԺԸ	Փոտր	Ը	Դ.Ձ	Մրտ	ԻԷ	Է	Մրտ	ԻԸ	ԺԲ	Մյս	ԺՁ	Յյս	Դ	Ձ
	542	Թ	1093	Լ	Ձ	Աղղ	Ե	Փոտր	Ձ	Փոտր	ԻԷ	Ե.Դ	Ապր	ԺԵ	Ձ	Ապր	ԺԷ	ԺԳ	Յնս	Ե	Յյս	ԻԴ	Գ
	543	Ժ	1094	ԺԱ	Է	Այժ	Ձ	Յն	ԻԹ	Փոտր	ԺԹ	Ձ.Գ	Ապր	Դ	Գ	Ապր	Թ	ԺԲ	Մյս	ԻԸ	Յյս	ԺՁ	Դ
	544	ԺԱ	1095	ԻԲ	Ա	Ջրհ	Է	Յն	ԺԴ	Փոտր	Դ	Դ.Բ	Մրտ	ԻԴ	Է	Մրտ	ԻԵ	ԺԲ	Մյս	ԺԳ	Յյս	Ա	Ձ
Գ	545	ԺԲ	1096	Գ	Բ/Գ	Ձկն	Ա	Փոտր	Գ	Փոտր	ԻԴ	Է.Ա	Ապր	ԺԲ	Է	Ապր	ԺԳ	ԺԳ	Յնս	Ա	Յյս	Ի	Գ.Դ
	546	ԺԳ	1097	ԺԴ	Դ	Խոյ	Գ	Յն	ԻԵ	Փոտր	ԺԵ	Ե.Ձ	Ապր	Ա	Դ	Ապր	Ե	ԺԲ	Մյս	ԻԴ	Յյս	ԺԲ	Ե
	547	ԺԴ	1098	ԻԵ	Ե	Յուկ	Դ	Յն	ԺԷ	Փոտր	Է	Դ.Ե	Մրտ	ԻԱ	Ա	Մրտ	ԻԸ	ԺԲ	Մյս	ԺՁ	Յյս	Դ	Ձ
	548	ԺԵ	1099	Ձ	Ձ	Եկ	Ե	Յն	Լ	Փոտր	Ի	Ձ.Դ	Ապր	Թ	Է	Ապր	Ժ	ԺԳ	Մյս	ԻԹ	Յյս	ԺԷ	Դ
Դ	549	ԺՁ	1100	ԺԷ	Է/Ա	Խցգ	Ձ	Յն	ԻԲ	Փոտր	ԺԲ	Ե.Գ	Մրտ	ԻԹ	Ե	Ապր	Ա	ԺԳ[ԺԲ]	Մյս	Ի	Յյս	Ը	Ե
	550	ԺԷ	1101	ԻԸ	Բ	Աոձ	Ա	Փոտր	Ժ	Մրտ	Գ	Ը.Ա	Ապր	ԺԷ	Դ	Ապր	ԻԱ	ԺԳ	Յնս	Թ	Յյս	ԻԸ	Գ
	551	ԺԸ	1102	Թ	Գ	Կյս	Բ	Փոտր	Բ	Փոտր	ԻԳ	Է	Ապր	Ձ	Ա	Ապր	ԺԳ	ԺԲ	Յնս	Ա	Յյս	Ի	Դ
	552	ԺԹ	1103	ԻԱ	Դ	Կշո	Գ	Յն	ԺԸ	Փոտր	Ը	Դ.Ձ	Մրտ	ԻԵ	Դ	Մրտ	ԻԹ	ԺԲ	Մյս	ԺԷ	Յյս	Ե	Ձ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24
Ե	553	Ի	1104	Բ	Ե/Ձ	Կրճ	Դ	Փոտր	Է	Փոտր	ԻԸ	Է.Ե	Ապր	ԺԳ	Դ	Ապր	ԺԷ	ԺԳ	Յնս	Ե	Յյս	ԻԴ	Գ
	554	ԻԱ	1105	ԺԳ	Է	Աղղ	Ձ	Յն	ԻԹ	Փոտր	ԺԹ	Ձ.Գ	Ապր	Բ	Ա	Ապր	Թ	ԺԲ	Մյս	ԻԸ	Յյս	ԺՁ	Դ
	555	ԻԲ	1106	ԻԴ	Ա	Այժ	Է	Յն	ԺԴ	Փոտր	Դ	Դ.Բ	Մրտ	ԻԲ	Ե	Մրտ	ԻԵ	ԺԲ	Մյս	ԺԳ	Յյս	Ա	Ձ
	556	ԻԳ	1107	Ե	Բ	Ջրհ	Ա	Փոտր	Գ	Փոտր	ԻԴ	Է.Ա	Ապր	Ժ	Դ	Ապր	ԺԴ	ԺԳ	Յնս	Բ	Յյս	ԻԱ	Դ
Ձ	557	ԻԴ	1108	ԺՁ	Գ/Դ	Ձկն	Բ	Յն	ԻՁ	Փոտր	ԺՁ	Ձ	Մրտ	Լ	Բ	Ապր	Ե	ԺԲ	Մյս	ԻԴ	Յյս	ԺԲ	Ե
	558	ԻԵ	1109	ԻԷ	Ե	Խոյ	Դ	Փոտր	ԺԴ	Մրտ	Է	Ը.Ե	Ապր	ԺԸ	Ա	Ապր	ԻԵ	ԺԳ	Յնս	ԺԳ	Ազ	Ա	Բ
	559	ԻՁ	1110	Ը	Ձ	Յուկ	Ե	Յն	Լ	Փոտր	Ի	Ձ.Գ/Դ	Ապր	Է	Ե	Ապր	Ժ	ԺԲ	Մյս	ԻԹ	Յյս	ԺԷ	Դ
	560	ԻԷ	1111	ԺԹ	Է	Եկ	Ձ	Յն	ԻԲ	Փոտր	ԺԲ	Ե.Գ	Մրտ	ԻԷ	Բ	Ապր	Բ	ԺԲ	Մյս	ԻԱ	Յյս	Թ	Ե
Է	561	ԻԸ	1112	Լ	Ա/Բ	Խցգ	Է	Փոտր	ԺԱ	Մրտ	Գ	Ը.Բ[Ա]	Ապր	ԺԵ	Բ	Ապր	ԻԱ	ԺԳ	Յնս	Թ	Յյս	ԻԸ	Գ
	562	ԻԹ	1113	ԺԱ	Գ	Աոձ	Բ	Յն	ԻՁ	Փոտր	ԺՁ	Ձ	Ապր	Դ	Ձ	Ապր	Ձ	ԺԲ	Մյս	ԻԵ	Յյս	ԺԳ	ԷԵ
	563	Լ	1114	ԻԲ	Դ	Կյս	Գ	Յն	ԺԸ	Փոտր	Ը	Դ.Ձ	Մրտ	ԻԴ	Գ	[Մրտ	ԻԹ	ԺԲ	Մյս	ԺԷ	Յյս	Ե	Ձ
	564	ԼԱ	1115	Գ	Ե	Կշո	Դ	Փոտր	Է	Փոտր	ԻԸ	Է.Ե	Ապր	ԺԲ	Բ	Ապր	ԺԸ	ԺԳ	Յնս	Ձ	Յյս	ԻԵ	Գ
Ը	565	ԼԲ	1116	ԺԴ	Ձ/Է	Կրճ	Ե	Յն	ԻԳ	Փոտր	ԺԳ	Ե.Դ	Ապր	Ա	Է	Ապր	Բ	ԺԲ	Մյս	ԻԱ	Յյս	Թ	Ե
Բ. ԻԸ	566	ԼԳ	1117	ԻԵ	Ա	Աղղ	Է	Յն	ԺԴ	Փոտր	Դ	Դ.Բ	Մրտ	ԻԱ	Դ	Մրտ	ԻԵ	ԺԲ	Մյս	ԺԳ	Յյս	Ա	Ձ
	567	ԼԴ	1118	Ձ	Բ	Այժ	Ա	Փոտր	Գ	Փոտր	ԻԴ	Է.Ա	Ապր	Թ	Գ	Ապր	ԺԴ	ԺԳ	Յնս	Բ	Յյս	ԻԱ	Դ
	568	ԼԵ	1119	ԺԷ	Գ	Ջրհ	Բ	Յն	ԺԹ	Փոտր	Թ	Ե	Մրտ	ԻԹ	Է	Մրտ	Լ	ԺԲ	Մյս	ԺՁ	Յյս	Ձ	Ձ
Թ	569	ԼՁ	1120	ԻԸ	Դ/Ե	Ձկն	Գ	Փոտր	Ը	Փոտր	ԻԹ	Է.Ձ	Ապր	ԺԷ	Է	Ապր	ԺԸ	ԺԳ	Յնս	Ձ	Յյս	ԻԵ	Գ
	570	ԼԷ	1121	Թ	Ձ	Խոյ	Ե	Յն	Լ	Փոտր	Ի	Ձ.Գ/Դ	Ապր	Ձ	Դ	Ապր	Ժ	ԺԲ	Մյս	ԻԹ	Յյս	ԺԷ	Դ
	571	ԼԸ	1122	ԻԱ	Է	Յուկ	Ձ	Յն	ԺԵ	Փոտր	Ե	Դ.Գ	Մրտ	ԻԵ	Է	Մրտ	ԻՁ	ԺԲ	Մյս	ԺԴ	Յյս	Բ	Ձ

Նահանգ	Հայոց մեծ թվ	Սարկավազի թվ	Թվական (ներկա)	Վերադիր	Է-դրեակ	Տարևադարձ	Արև Ֆայտն.	Առաջատար	Քանիքն	Բ. Բարեկենդան	Քանիքն	Միջոց	Լրումն	Քանիք	Ա լումն.	Չափանքն	Քանիքն	Լ. Լրումն	Պենտեկոստ	Քանիք	Վարդավառ	Քանիք	Միջոց
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	
	ՇԼԴ	Ա	ՌՁԵ	Է	Է	Խոյ	Բ	Միկ	Գ	Միկ	ԻԴ	Ը.Ձ	Աիկ	Ձ	Ա	Աիկ	ԺԳ	ԺԳ	Մրգ	Բ	Հրտ	ԻԱ	Գ
	ՇԼԵ	Բ	ՌՁԶ	ԺԸ	Ա	Ցուկ	Գ	Արց	ԺԸ	Միկ	Թ	Ե.Ձ	Արգ	ԻԵ	Ե	Արգ	ԻԸ	ԺԲ	Մրր	ԺԷ	Հրտ	Ձ	Ե
	ՇԼԶ	Գ	ՌՁԷ	ԻԹ	Բ	Եկւ	Դ	Արց	Ժ	Միկ	Ա	Դ.Ե	Արգ	ԺԴ	Բ	Արգ	Ի	ԺԲ	Մրր	Թ	Մրգ	ԻԸ	Ձ
Ա	ՇԼԷ	Դ	ՌՁԸ	Ժ	Գ/Դ	Խոց	Ե	Արց	Լ	Միկ	ԻԱ	Է.Դ	Աիկ	Գ	Բ	Աիկ	Թ	ԺԳ	Մրր	ԻԸ	Հրտ	ԺԷ	Գ
	ՇԼԸ	Ե	ՌՁԹ	ԻԱ	Ե	Առծ	Է	Արց	ԺԴ	Միկ	Ե	Ե.Բ	Արգ	ԻԲ	Ձ	Արգ	ԻԴ	ԺԲ	Մրր	ԺԳ	Հրտ	Բ	Ե
Ա ԻԸ	ՇԼԹ	Ձ	ՌԴ	Բ	Ձ	Կյս	Ա	Միկ	Դ	Միկ	ԻԵ	Ը.Ա	Աիկ	ԺԱ	Ե	Աիկ	ԺԴ	ԺԳ	Մրգ	Գ	Հրտ	ԻԲ	Գ
